Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

Վ.Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ա.Պ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ

2002

Տպագրվում է «ԱԶՊԱԹ–ՎԵՏԵՐԱՆ» Դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 941(479.25)(07)
ԳՄԴ 63.3(2Հ)ց73
Վ 301

Խմբագիր՝ Ա. Պ. Թադևոսյան
ՀՀ իրավաբանական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ.Մ. (պատմ. գիտութ. դոկտոր–պրոֆեսոր)
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Ա.Պ. (պատմ. գիտութ. թեկնածու, պրոֆեսոր)
Վ 301 **ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:** (սկզբից մինչև մեր օրերը): **Համառոտ ձեռնարկ.**— Եր.: Զանգակ–97, 2002.—128 էջ:

«Հայոց պատմություն» համառոտ ձեռնարկը նախատեսված է ուսումնական հաստատությունների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև հանրապետության բուհեր ընդունվել ցանկացողների, հայ ժողովրդի պատմությամբ հետաքրքրվողների համար:

Վ $\frac{0503020913}{0003(01)\text{-}2002}$ 2002

ԳՄԴ 63.3(2Հ)ց73

ISBN 99930–2–481–3

© Վարդանյան Վ.Մ. 2002
Թադևոսյան Ա.Պ.
© «Զանգակ–97» հրատ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԸ

Հայ ժողովրդի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը սարահարթերի, լեռների մի ամբողջություն է, որն ավելի բարձրադիր է, քան Հարևան Իրանը և Փոքրասիական երկրները: Այն հյուսիսում և արևմուտքում եզերվում է Պոնտական և Փոքր Կովկասի, արևմուտքում՝ Անտիտավրոս, Հարավ–արևելքում՝ Հայկական Տավրոս լեռներով: Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր կետը Մեծ Մասիս (Արարատ) լեռն է (5156 մ), որի անվան հետ նույնական է Հայաստանի կենտրոնական նահանգ Այրարատի անունը: Հայաստանի նշանավոր լեռնագագաթներն են՝ Սիփանը (4434 մ), Արագածը (4090 մ), Փոքր Մասիսը (3925 մ), Կապուտջուղը (3906 մ), Բյուրակնը (բինգյոլ)՝ 3650 մ բարձրությամբ և այլն: Արարատ լեռից սկսվող Հայկական պար լեռնաշղթան ձգվում է մինչև Արևմտյան Եփրատ գետը, Հայաստանի տարածքը բաժանելով հյուսիսային և հարավային մասերի:

Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում մի շարք գետեր՝ Եփրատը (որի 2700 կմ երկարության 600 կմ բաժին է ընկնում Հայաստանին), Տիգրիսը (1950 կմ երկարության 540 կմ ձգվում է Հայաստանով), Արաքսը (1072 կմ երկարությամբ) Կուրը, Ճորոխը և այլն: Հայաստանի գետերը (հատկապես Արաքսը) մեծ նշանակություն են ունեցել երկրի ոռոգման համակարգում: Հայաստանի առավել խոշոր լճերն են՝ Սևանա (1416 քառակուսի կմ մակերեսով), Վանա (3733 քառակուսի կմ) և Ուրմիա (5775 քառակուսի կմ/լճերը, որոնք նավարկելի են: Երկրի տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունեին Արարատյան, Մուշի, Ալաշկերտի, Երզնկայի, Շիրակի, Խարբերդի դաշտերը: Հայկական լեռնաշխարհի կլիման ցամաքային է, որոշ շրջաններում՝ բարեխառն: Տեղումների անհավասարաչափ բաշխման պատճառով երկրագործության զարգացումը հնարավոր է դարձել արհեստական ոռոգման շնորհիվ: Այդ նպատակով անց են կացվել ջրանցքներ, առուներ:

Հայկական լեռնաշխարհը ընդգրկում էր Մեծ Հայք (310 հազար քառ. կմ) և Փոքր Հայք (մոտ 69 հազար քառ. կմ) կազմավորումները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհը բնակեցվել է մարդկության պատմության արշալույսին՝ հին քարի դարաշրջանում (պալեոլիթ), որն սկսվել է մեզանից մոտ 1 միլիոն 800 հազար տարի առաջ և շարունակվել է մինչև մ. թ. ա. X հազարամյակ: Հին քարեդարյան բնակատեղեր, քարից, օբսիդիանից, («սատանի եղունգ») կերտած գործիքներ (հատիչներ) են հայտնաբերվել Թալինի շրջանի Արտին լեռան լանջին, Արցախի Ազոխ գյուղում, Սասունում և այլուր: Հին քարի դարում Հայկական լեռնաշխարհի բնիկները զբաղվել են բնության պատրաստի բարիքների հավաքչությամբ, բրչային երկրագործությամբ, որսորդությամբ: Վայրի գազաններից պաշտպանվելու, տաքանալու, միս եփելու համար օգտվել են կրակից: Հին քարի դարի վերջում մարդը հնարեց նիզակ, տեգ, պարսատիկ, նետ ու աղեղ: Վտանգից զերծ մնալու համար մարդիկ բնակվում էին քարանձավներում, ծառերի վրա: Բնական և այլ արհավիրքներից պաշտպանվելու նպատակով նրանք միավորվում էին՝ կազմելով տոհմական համայնքներ, ապա ցեղեր և ցեղային միավորումներ՝ իրենց ուրույն լեզվով և հավատալիքներով: Տոհմերի, ցեղերի ձևավորումը տեղի է ունեցել նոր քարի դարաշրջանում (մ. թ. ա. X հազարամյակից մինչև V հազարամյակ): Նոր քարեդարյան բնակավայրեր են հայտնաբերվել Էջմիածնի շրջանում (Վերին Խաթունախ գյուղ), Վանա և Ուրմիա լճերի մոտ, Շենգավիթում (Երևան), Նախիջևանի մոտ և այլուր:

Հայաստանի տարածքը հարուստ է մետաղահանքերով (երկաթ, պղինձ, կապար), ինչը հնարավորություն տվեց պատրաստել մետաղյա գործիքներ, զենքեր բրոնզի դարաշրջանում (մ. թ. ա. IV հազարամյակի վերջ – մ. թ. ա. XII դար): Շենգավիթում և այլ հնավայրերում գտնվել են բրոնզից ձուլված կացիններ, մանգաղներ, նիզակներ, դաշույններ, և այլն: Սևանա լճի ցամաքած մասում՝ Լճաշենում հայտնաբերվել են երկանիվ և քառանիվ սայլեր: Մետաղամշակման շնորհիվ զարգացան արհեստները՝ ոսկերչությունը, դարբնությունը, զինագործությունը, ինչպես նաև բրուտագործությունը: Մեծամոր գետի ափին հայտնաբերվել են աշխարհի հնագույն մետաղաձուլական արհեստանոցների մնացորդներ: Արհեստագործության և երկրագործության մեջ հույժ կարևոր էր երկաթի գյուտը (մ. թ. ա. XIV–XII դդ.): Բրոնզի դարաշրջանում սկսվեց նախնադարյան համակարգի քայքայումը: Հին նահապետական ընտանեկան համայնքը տեղը զիջեց նստակեցության անցած բնակչության բնատարածքային (գյուղական) համայնքին: Արյունակցական կապերին փոխարինեցին դրացիական, տարածքային առնչությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հայ ժողովուրդը կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում, հայկական տարբեր ցեղերի, ցեղամիավորումների միաձուլվելու, մեկ ընդհանրության վերածվելու շնորհիվ: Այդ գործընթացը տևել է երկարատև ժամանակաշրջան և ավարտել մ. թ. ա. VII–VI դդ.: Գիտական–համեմատական լեզվաբանությունն ապացուցել է, որ հայերը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին, որի մեջ մտնող ժողովուրդները բնակվել են Հնդկաստանից մինչև Եվրոպայի ծայր արևմուտքն ընդգրկող շրջաններում: Նրանք ծագել են միևնույն լեզվով խոսող մեկ միասնական ժողովրդից, որի նախահայրենիքը, այժմյան գիտնականների մի մասի կարծիքով, գտնվել է Հայաստանի և Իրանի տարածքներում: Հայերը բառային փոխառություններ են կատարել ոչ միայն հնդեվրոպական, այլև իրենց հարևան ոչ հնդեվրոպական ժողովուրդներից: Օրինակ մ. թ. ա. V հազարամյակից մինչև մ. թ. ա. II հազարամյակ ընկած ժամանակներում Հարավային Միջագետքում բնակվող շումերների լեզվից հայերենին են անցել մոտ 200 բառ:

Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ գոյություն ունեն մի քանի առասպելներ՝ հայերեն և այլ լեզուներով: Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքում բերված է Հայկի և Բելի առասպելը, որի համաձայն հայերի նախնի Հայկը ապստամբում է Բաբելոնի տիրակալ Բելի դեմ և հեռանալով Բաբելոնից դեպի Հայկական լեռնաշխարհ, իր գերդաստանով հաստատվում է այնտեղ: Այդ երկիրը Հայկի անունով կոչվում է Հայք, իսկ նրա ժառանգները՝ հայեր: Հույն մատենագիր Ստրաբոնի (մ. թ. ա. 64–մ. թ. 23 թթ.) «Աշխարհագրություն» երկում տեղ գտած առասպելի համաձայն, հայերի նախնի Արմենոսը նախապես բնակվում էր Հունաս-

տանի Արմենիոն քաղաքում, ապա Արգոնավորդների հետ եկավ Կովկաս, բնակություն հաստատեց Հայաստանում, որը նրա անունով կոչվեց Արմենիա: XI դարի վրաց պատմագիր Լեոնտիոս Մռովելու «Վրաց թագավորների պատմությունը» գրքում հայերը սերած են համարվում Հայկ նահապետից, վրացիները՝ նրա եղբայր Քարթլոսից: Իրական պատմական հիմք ունի Հայկի մասին Խորենացու բերած առասպելը:

Հայ ժողովրդի կազմավորման համար անհրաժեշտ էր, որ հայկական ցեղերը միավորվեին: Այդ գործում վճռական դեր են խաղացել հայկական հնագույն ցեղերն ու ցեղային միությունները: Մ. թ. ա. III–I հազարամյակներում հայկական լեռնաշխարհն ուներ բազմացեղ հայ բնակչություն: Մ. թ. ա. XIV–XII դդ. նրա հարավային և հարավարևմտյան մասում կային հայկական զորեղ կազմավորումներ, որոնք կոչվում էին թագավորություններ: Դրանցից նշանավոր էր Հայասա պետությունը, Կումմախա (Անի–Կամախ) մայրաքաղաքով: Նրան հարևան էր Խեթական թագավորությունը (այժմյան Թուրքիայի տարածքում): Խեթերը ևս հնդեվրոպական ժողովուրդ էին: Նրանց թողած արձանագրություններում հիշվում են նաև հայասները («հայեր»–ի խեթական ձևը) և հայերի երկիրը՝ Հայասան (Հայաստանը): Վերջինիս բարձր դիրքի պատճառով խեթերն այն անվանում էին «բարձր երկիր»: Հայասայի արքաները պատերազմում էին խեթական պետության դեմ, դիվանագիտական կապերի մեջ մտնում նրա թագավորների հետ, որոնք երբեմն կարողանում էին ներխուժել Հայասա, կողոպուտի մատնել, ավերել այն, գերեվարել նրա բնակչությունը: Մ. թ. ա. XIV դարից Հայասայի արքաները մի շարք հաղթանակներ տարան խեթական պետության դեմ: Հայասան ուներ իր դիցարանը: Մ. թ. ա. 1190 թ. հետո խեթական արձանագրությունները ընդհատվում են, ուստի Հայասան այլևս չի հիշատակվում:

Հայասային հարևան էր հայկական մեկ այլ միավորում՝ Թոգարման, որը հետագայի հայկական աղբյուրներում հիշվում է «Թորգոմի տուն» անունով: Թորգոմը, ըստ Մովսես Խորենացու, հայերի նախնի Հայկ նահապետի հայրն էր, հետևաբար, նա հայերի նախահայրն էր:

Հայկական Նաիրի ցեղային միությունը հարևան Ասորեստանի թագավորների մ. թ. ա. XIII դ. թողած սեպագիր արձանագրություններում հիշվում է որպես «ընդարձակ, անհնազանդ և անծանոթ երկիր», որն ուներ հետևազորից, հեծելազորից կազմված զորք: Ասորեստանը երբեմն հարձակվում էր Նաիրիի վրա, ավերում այն, մատնում կողոպուտի գերեվարման: Նաիրին միասնական պետություն չէր, այլ հիշվում է որպես 23 «թագավորների» (ցեղապետների) միություն, որը կազմվել էր Ասորեստանի հարձակումներից պաշտպանվելու համար: Նաիրիի մեջ էր մտնում նաև Բիայնա երկիրը՝ Տուշպա (հետագայում՝ Վան) կենտրոնով:

Ասորեստանյան աղբյուրները հաղորդում են որ մ. թ. ա. XII դ. սկզբին հայկական ցեղերը՝ մուշկերը և ուրումեացիները օգտվելով Ասորեստանի թուլացումից, հայկական լեռնաշխարհի արևմտյան կողմերից (Հայասայից) շարժվեցին դեպի արևելք և ազատագրեցին Ասորեստանի ենթակա իրենց ցեղակիցներին՝ Շուբարտու կամ Շուբրիա (հետագայի Սասունի տարածքում) և Ալզի (հետագայում Աղձնիք) երկրները և հարևան այլ շրջաններ: Հայկական այս ցեղերը հետզհետե իրենց գերիշխանությանը ենթարկեցին հայկական լեռնաշխարհի իրենց ցեղակիցներին: Դա արտացոլվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ՝ Հայկի և Բելի պատերազմի մասին առասպելում, որը պատմական հիմքով համընկնում է ասորեստանյան աղբյուրների հետ: Ըստ այդ ղրույցի՝ հայկական լեռնաշխարհում (հետագայի Հարք, ապա նաև Տարոն գավառներում) հաստատված Հայկի ժառանգները շարժվել են հյուսիս–արևելք և մտնելով Արայի (Արարատյան) դաշտ, այնտեղ հիմնել են հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը: Այստեղից Հայկի ժառանգները, որոնց Խորենացին անվանում է «Թորգոմի տան սերունդներ», Արամի գլխավորությամբ շարժվել են արևելք, հասել Ատրպատական, ապա Կորդուք, որտեղից նրանք ուղղվել են դեպի արևմուտք, հասնելով Մաժաք (Կեսարիա) քաղաք: Այդպիսով մ. թ. ա. մոտ II հազարամյակի վերջերին նրանք տարածվել են գրեթե ամբողջ հայկական լեռնաշխարհում, իրենցից կախման մեջ դնելով մյուս հայկական ցեղերին: Այդ գործընթացը հիմքեր է ստեղծել հայ ժողովրդի կազմավորման ավարտի համար: Պատահական չէ, որ Մովսես Խորենացին «հայ» անունը առաջացած է համարում Հայկի, իսկ օտարներից հայերին տրված «Արմեն» անվանումը՝ Արամի անուններից: Հայկն անձնավորում էր Հայասա–Հայաստանը, իսկ Արամը՝ Ուրումե (Արմե) կազմավորումը, որի անունից է առաջացել հայերի «Արմեն» ցեղանունը:

Մ. թ. ա. IX դ. Վան քաղաքի շրջանն ընդգրկող Բիաինիլի ցեղային միավորումը ստեղծեց պետություն, որը կոչվեց նրա անունով: Ասորեստանյան արքաների թողած արձանագրություններում այն կոչվում է Ուրարտու ձևով, որն իր մայրաքաղաք Վանի (Տուշպայի) անունով կոչվել է նաև Վանի թագավորություն: Վերջինիս ընդարձակման համար անհրաժեշտ էր, որպեսզի այն հնազանդեցներ իրեն շրջապատող հայկական ցեղերին ու պետական կազմավորումներին: Դա խիստ դժվարին խնդիր էր, հատկապես Ուրարտուի առաջին թագավոր Արամեի և նրա ժառանգորդների օրոք, երբ հարևան հզոր Ասորեստանի դեմ մղվող պայքարը կլանում էր Ուրարտուի բոլոր ուժերը: Միայն այն ժամանակ, երբ Վանի թագավորությունը նեղեց իր գլխավոր ախոյան Ասորեստանին, այն սկսեց իրար հետևից հնազանդեցնել հայկական ցեղերին, որոնք ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս: Վանի թագավորության նվաճումներն սկսվեցին

Մենուա I-ի (մ. թ. ա. 810–786 թթ.) օրոք և շարունակվեցին մոտ կես դար: Մենուան գրավեց հայկական ցեղերով բնակեցված՝ Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած երկրամասերը, ինչպես նաև Եփրատ գետի աջակողմյան շրջանները, որտեղ նա կառուցել տվել նոր քաղաքներ, բերդեր, պալատներ, տաճարներ, անցկացրեց ջրանցքներ: Վան մայրաքաղաքի մերձակայքում Մենուայի անցկացրած ջրանցքն ուներ 80 կմ երկարություն, 4,5 մետր լայնություն, 1,5 մետր խորություն: Նրանից ճյուղավորվում էին բազմաթիվ ջրանցքներ: Մենուայի անցկացրած ջրանցքն այժմ էլ պահպանվում է (սխալմամբ նրա անցկացումը վերագրվել է Ասորեստանի Շամիրամ թագուհուն):

Մենուայի որդու՝ Արգիշտի I-ի (մ. թ. ա. 786–764 թթ.) օրոք Վանի թագավորության զորքերը ներխուժեցին Արարատյան դաշտ, որտեղ մ. թ. ա. 782 թ. Արգիշտին հիմնադրեց Էրեբունի (հետագայում՝ Երևան) բերդաքաղաքը, մ. թ. ա. 776 թ. Արգիշտիխինիլի (Արմավիր) քաղաքը: Ապա նոր թափով շարունակեց հայկական ցեղերի ու ցեղային միավորումների հնազանդեցումը: Համառ դիմադրություն ցույց տվին Ալզի (Աղձնիք), Կուլմերի (Սասուն), Ուրմե կամ Արմե (Տարոն) և այլ շրջանների հայկական ցեղերը: Ամենից կատաղի դիմադրություն ցույց տվողը Ուրմե (Արմե) երկիրն էր, որը բուն Ուրարտուի (Վանա լճի ավազանի) հարևանն էր, ուստի առավել-վտանգավոր էր նրա համար: Մենուան, Արգիշտի I-ը, նրա հաջորդ Սարդուր II-ը (մ. թ. ա. 764–735 թթ.) բազմիցս հարձակվեցին Արմեի վրա, ավերեցին այն, գերեվարեցին նրա բնակչությանը, բայց այդ երկիրը մնաց անմնաց (զուր չէր, որ հայկական այս քաջարի ցեղամիավորման անունով օտարները հայերին անվանեցին արմեններ): Հայասան, Նաիրին, Թոգարման ևս Ուրարտուի վտանգավոր թշնամիներն էին, որոնց նա ջանում էր ծնկի բերել: Սակայն, չնայած կեսդարյա հաջող արշավանքներին, Վանի թագավորությանը չհաջողվեց հնազանդեցնել նրանց: Ավելին՝ հայկական պետական կազմավորումների դիմադրությունը խիստ թուլացրեց նրան: Մ. թ. ա. VIII դարի կեսից Վանի թագավորության տիրակալները սկսում են պարտություններ կրել հայկական պետական կազմավորումներից: Մ. թ. ա. 585 թ. Վանի թագավորությունը վերացավ Հյուսիսային Կովկասից հայկական լեռնաշխարհ խուժած սկյութական քոչվոր ցեղերի, Մարաստանի հարձակումների հետևանքով (փոքր ինչ առաջ, մ. թ. ա. 605 թ. մարերը կործանել էին նաև Ասորեստանը): Դա նպաստավոր պայմաններ ստեղծեց հայկական միասնական պետության ստեղծման համար: Թեև Վանի թագավորությունը կործանեցին սկյութներն ու մարերը, սակայն նրա տարածքում մ. թ. ա. VI դարի սկզբներին ստեղծվեց ոչ թե այն կործանողների, այլ տեղաբնիկների՝ հայերի (Երվանդունիների) պետությունը, որը մ, թ. ա. 521 թ. պարսից Աքեմենյան թագավոր Դարեհ I-ի

կողմից Բեհիստուն ժայռի վրա թողած արձանագրության մեջ հիշվում է Արմինա անունով (Արմենիայի հին պարսկերեն ձևը): Հայկական միասնական պետության ստեղծման ընթացքը անցավ խաղաղ պայմաններում, քանի որ Հայկական լեռնաշխարհում ամենուրեք գերիշխող էին Հայկական ցեղերը: Միասնական Հայկական պետության գոյության պայմաններում վերջնականապես ավարտվեց Հայ ժողովրդի կազմավորումը:

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ

Վանի թագավորության անկումից հետո մ. թ. ա. մոտ 570 թ. Հայկական լեռնաշխարհի հիմնական մասում՝ Մեծ Հայքում առաջացավ թագավորություն՝ Երվանդունիների գլխավորությամբ: Այդ պետության կենտրոնը Արմավիր քաղաքն էր՝ Արարատյան դաշտում: Թագավորության սահմանները տարածվում էին Մարաստանից (Ատրպատական) մինչև Փոքր Հայք:

Երվանդունի առաջին թագավորը Երվանդ I Սակավակյացն էր (մ. թ. ա. մոտ 570–560-ական թթ.), որին հիշում են մ. թ. ա. V դարի հույն պատմագիր Քսենոփոնը և Մովսես Խորենացին: Մարաստանի Աստիագես (Աժդահակ) թագավորի դեմ մղված կռվում պարտվելով, Երվանդ I-ը ընդունեց նրա գերիշխանությունը՝ տալով տարեկան 50 տաղանդ (մոտ 200 հազար ոսկի) հարկ և զորք: Բայց Երվանդի որդի Տիգրանը Մարաստանի զորքերի հրամանատար Կյուրոս Աքեմենյանի օգնությամբ ապստամբեց և, սպանելով Աժդահակին, ազատագրեց Հայաստանը: Տիգրանն ուներ 40 հազար հետևակ և 8 հազար հեծյալ զորք: Մ. թ. ա. 550 թ. Մարաստանի թագավորության վերացումից հետո Երվանդունիները կախման մեջ ընկան Իրանում գահակալող Աքեմենյան տոհմի արքաներից: Հայերը մի քանի անգամ փորձեցին ապստամբությամբ թոթափել Աքեմենյաններից ունեցած կախումը: Այս մասին հիշատակվում է Աքեմենյան Դարեհ I արքայի կողմից մ. թ. ա. 521 թ. Բեհիստուն ժայռի վրա թողած արձանագրության մեջ: Դարեհի օրոք Իրանը բաժանվեց 20 մարզերի (հունարեն՝ սատրապություններ) որոնցից երկուսը՝ 13-րդը և 18-րդը ընդգրկում էին Հայաստանը: Աքեմենյանների օրոք Երվանդունիները շարունակեցին գերիշխել Հայաստանի մի մասում՝ 13-րդ սատրապությունում՝ Վան կենտրոնով: Բայց Երվանդ II-ի օրոք մ. թ. ա. V դ. վերջերից նրանք իշխեցին գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհում, որպես սատրապներ (կառավարիչներ): Երվանդունիների օրոք Հայաստանը հարուստ և բարգավաճ երկիր էր՝ զարգացած երկրագործությամբ, անասնապահությամբ և

արհեստագործությամբ, որոնք արդյունք էին բազմադարյան աշխատանքային փորձի և հմտությունների: Հայաստանը առևտրական կապերի մեջ էր Բաբելոնիայի և ուրիշ երկրների հետ: Դրան էապես նպաստեց Դարեհ I-ի հիմնած արքայական ճանապարհը, որի մի հատվածը (մոտ 350 կմ) անցնում էր Հայաստանով:

Մ. թ. ա. 333 թ. Աքեմենյան պետությունը կործանվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, որի ստեղծած կայսրությունը ձգվում էր Հունաստանից մինչև Հնդկաստան, Եգիպտոս: Ալեքսանդրի մահվանից (մ. թ. ա. 323 թ.) հետո նրա, կայսրությունը բաժանվեց իր զորապետների միջև: Ասիական երկրները (Փոքր Ասիա, Իրան, Հնդկաստան) անցան զորապետ Սելևկոսի գերիշխանության տակ, որի անունով էլ կոչվեց այդ պետությունը:

Ալեքսանդր Մակեդոնացու զորքը Հայաստան չմտավ: Երվանդունիները օգտվեցին դրանից և Աքեմենյան թագավորության վերացումից հետո, մ. թ. ա. 333 թ. վերականգնեցին իրենց թագավորությունը Մեծ Հայքում: Նրանց մի ճյուղը հռչակեց Ծոփքի Հայոց թագավորությունը: Մ. թ. ա. 330 թ. անկախ թագավորություն ստեղծվեց նաև Փոքր Հայքում: Այս շրջանում հույժ մեծացավ Երվանդունիների մայրաքաղաք Արմավիրի նշանակությունը: Աստվածաշնչում Մեծ Հայքի Երվանդունիների պետությունը հիշվում է «Արարատյան թագավորություն» անունով: Երվանդ III-ի օրոք մ. թ. ա. IV դ. վերջին Հայկական թագավորության սահմանները ձգվում էին Եփրատից մինչև Կուր և Տիգրիսից մինչև Պոնտոսի լեռները: Երվանդ III-ը գործուն մասնակցություն է ունեցել առաջավոր Ասիայի երկրների քաղաքական կյանքում: Սակայն մ. թ. ա. III դարի սկզբներին Սելևկյան պետության դավերի հետևանքով Երվանդունիների թագավորությունը մասնատվեց՝ ամփոփվելով Մեծ Հայքի կենտրոնական և արևելյան մասերում:

Արմավիրի մոտից Արաքսի հունի հեռացման հետևանքով Արաքսի և Ախուրյանի միախառնման մոտ Երվանդ IV-ը մ. թ. ա. III դ. վերջին հիմնեց նոր մայրաքաղաք՝ Երվանդաշատը, իսկ փոքր-ինչ հյուսիսում, Ախուրյանի ափին կառուցեց Երվանդակերտ, Բագարան քաղաքները և Երվանդավան (հետագայում Շիրակաշատ) ավանը: Ըստ Մովսես Խորենացու, Երվանդ IV Արմավիրից Երվանդաշատ տեղափոխվեց Հայոց հեթանոսական աստվածների արձանները և քրմապետ նշանակեց իր եղբայր Երվազին: Բագարանի մերձակայքում Երվանդը տնկել տվեց «Ծննդոց» անունով անտառը:

Մ. թ. ա. IV դ. վերջից Հայաստանում տարածվեց հելլենիստական մշակույթը, որը հունական (հելլենական) և Արևելքի ժողովուրդների մշակույթների փոխհարստացումն էր: Երվանդունիների արքայական դիվանի (գրասենյակի) գործերը վարում էին հունարեն լեզվով: Երվանդունիները

օժանդակում էին հելլենիստական մշակույթի արմատավորմանը Մեծ Հայքում և Ծոփքում: Սակայն Սելևկյան պետության թագավոր Անտիոքոս Մեծը մ. թ. ա. 201 թ. պարտության մատնեց Մեծ Հայքի և Ծոփքի Երվանդունիներին և Մեծ Հայքում կառավարիչ նշանակեց Արտաշեսին, իսկ Ծոփքում՝ Զարեհին: Արտաշեսի հրամանով Երվանդաշատում մ. թ. ա. 201 թվին սպանվեց Երվանդ IV–ը, որով և վերացավ մոտ 370 տարի գոյատևած Երվանդունիների Հայոց թագավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԱՐՏԱՇԵՍ Ի–Ի ԿՈՂՄԻՑ

Հայաստանը երկար չմնաց Սելևկյանների գերիշխանության տակ: Մ. թ. ա. 190 թ. Փոքր Ասիա ներխուժած Հռոմեացիները Մագնեսիա քաղաքի մոտ պարտության մատնեցին Սելևկյաններին, որոնք կորցրեցին գրեթե ամբողջ Փոքր Ասիան: Հայաստանի կառավարիչներ Արտաշեսն ու Զարեհը հակվեցին Հռոմի կողմը և Հայաստանը հռչակեցին անկախ: Արտաշեսը դարձավ Մեծ Հայքի, Զարեհը՝ Ծոփքի թագավոր: Արտաշես Ի–ի ժամանակ (մ. թ. ա. 189–մոտ 160) Հայկական բոլոր երկրամասերը, բացի Ծոփք նահանգից, միավորվեցին Մեծ Հայքի թագավորության մեջ: Իր պետությունը ամրապնդելու, հզորացնելու նպատակով Արտաշեսն անցկացրեց բարեփոխություններ: Նա Հայաստանը բաժանեց 120 վարչական միավորների: Զինված ուժերը կազմակերպեց ելնելով երկրի չորս կողմերը ապահով դարձնելու նկատառումներից: Երկրի սահմանային նահանգներում հիմնեց չորս զինվորական իշխանություններ՝ բդեշխություններ (Աղձնիքում, Կորդուքում Նոր Շիրականում (Պարսկահայք) և Գուգարքում): Ըստ Մովսես Խորենացու՝ Արտաշեսը կարգավորեց գետերի, լճերի վրա կատարվող նավագնացությունը, հոգ տարավ գիտությունների ու արվեստների զարգացման մասին: Նա կազմակերպեց նաև արքունի գործակալություններ՝ սպարապետություն, հազարապետություն, թագադիր իշխանություն և այլն: Երկրում վճռական դեր ուներ նաև քրմապետը:

Մ. թ. ա. 185 թ. Արտաշեսն իր պետության սրտում՝ Այրարատում, Արաքսի ձախ ափին հիմնեց նոր մայրաքաղաք (Երվանդաշատից հետո), որը կոչեց իր անունով՝ Արտաշատ («Արտաշեսի ուրախություն»): Քաղաքը երեք կողմից շրջապատված էր Արաքս և Մեծամոր գետերով, չորրորդ կողմից՝ ջրով լցված խրամափոսով: Քաղաքը պաշտպանում էին նաև հզոր բերդապարիսպները: Արտաշատը դարձավ արհեստագործության և միջազգային (տարանցիկ) առևտրի խոշորագույն կենտրոն, որը հայտնի էր նաև Եվրոպայում:

Արտաշեսի անցկացրած հողային բարեփոխությամբ որոշվեցին գյուղերի, ինչպես նաև առանձին հողաբաժինների սահմանները, որոնց վրա կանգնեցվեցին սահմանաքարեր (պահպանվել են դրանցից մի քանիսը): Իր կյանքի վերջին տարիներին Արտաշես I–ը կռիվներ մղեց Հյուսիսային Կովկասից Հայաստան ներխուժած ցեղերի՝ ալանների (այժմյան օսերի նախնիները), ինչպես նաև Սելևկյան պետության դեմ՝ ապահովելով իր թագավորության անվտանգությունը:

Արտաշեսի մահվանից հետո գահակալեցին նախ նրա ավագ որդի Արտավազդ I–ը, ապա կրտսեր որդին՝ Տիգրան (Տիրան) I–ը, որը պատերազմեց Պարթևական թագավորության՝ Իրանի դեմ: Սակայն պատերազմը անհաջող ելք ունեցավ Հայաստանի համար, ուստի Տիգրան I–ն իր անդրանիկ որդի Տիգրանին պատանդ թողեց պարթևների արքունիքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԺԱՄԱՆԱԿ

Մ. թ. ա. 95 թ. 45–ամյա Տիգրանն ազատվեց տասնամյա պատանդությունից, Իրանում թագավորող պարթև Արշակունիներին զիջելով Իրանի սահմանագլխի Հայկական 70 հովիտներ և բազմեց հայոց գահին: Այդ ժամանակ Արևմուտքում՝ Փոքր Ասիայում հաստատված հռոմեական զորագնդերը սպառնալիք էին թե՛ Հայաստանի և թե՛ հարևան պետությունների համար: Այդ սպառնալիքին դիմադրելու նպատակով մ. թ. ա. 93 թ. Տիգրան Մեծը դաշինք կնքեց հարևան Պոնտոսի թագավոր Միհրդատ VI–ի հետ: Դաշինքն ամրապնդվեց Միհրդատի դստեր՝ Կլեոպատրայի հետ Տիգրանի ամուսնությամբ: Նույն թվին Տիգրանը Հայաստանին միացրեց Մոփքը՝ վերացնելով նրա թագավորությունը: Փոքր Հայքը հնարավոր չեղավ միավորել Հայաստանի հետ, քանի որ այն արդեն միացվել էր Պոնտոսին: Մ. թ. ա. 87 թ. Տիգրանը արշավեց Պարթևստան և գրավեց Ատրպատականը: Ահաբեկված պարթև Արշակունի թագավորը հրաժարվեց «արքայից արքա» տիտղոսից, հօգուտ Տիգրան Մեծի:

Հայաստանի անվտանգությունը հարավից ապահովելու նպատակով Տիգրանը իրար ետևից գրավեց Սելևկյանների ազդեցության ոլորտում գտնվող երկրները՝ Ադիաբենեն (հին Ասորեստանի տարածքում), Միգդոնիան (Արվաստան) ՝ Մծբին կենտրոնով, Օսրոենեն՝ Եդեսիա (Ուռհա) մայրաքաղաքով: Այս երկրներում կար հոծ հայ բնակչություն: Մ. թ. ա. 83 թ. Տիգրանը թուլացած Սելևկյաններից գրավեց Ասորիքը (Սիրիա) վերացնելով նրանց թագավորությունը: Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը Տիգրանը դարձրեց իր երկրորդ մայրաքաղաքը: Ապա նա գրավեց

Սելևկյանների մյուս տիրույթները՝ Փյունիկիան (այժմյան Լիբանանը), դաշտային Կիլիկիան, ինչպես և սրա Հարևան Կոմմագենեի թագավորության տարածքը (այստեղ ևս կար մեծաթիվ Հայ բնակչություն), կախման մեջ դրեց Հրեաստանի թագավորությունը: Հայաստանի սահմանները հասան Միջերկրական ծով: Սակայն Տիգրանը չհասցրեց այդտեղ սեփական նավատորմ ստեղծել: Նվաճված երկրների մոտ կես միլիոն բնակիչներ վերաբնակեցվեցին Հայաստանում: Տիգրան Մեծը իր նվաճած երկրներին և նրանց քաղաքներին շնորհեց ինքնավար իրավունքներ:

Մ. թ. ա. 80-ական թթ. վերջերին Տիգրան Մեծը իր բազմազգ և ընդարձակ թագավորության կենտրոնում՝ Հայաստանի Աղձնիք նահանգում հիմնեց նոր մայրաքաղաք, որը կոչվեց իր անունով, Տիգրանակերտ: Այն մոտ հարյուր հազար բնակչությամբ հոյակառույց և հարուստ քաղաք էր՝ հզոր միջնաբերդով, 25 մետր բարձրություն ունեցող լայնանիստ պարիսպներով:

Տիգրան Մեծի օրոք Հայաստանում ավելի տարածվեց հելլենիզմը, որին էապես նպաստեց նաև այն, որ Հայաստանի պետական, պաշտոնական լեզուն հունարենն էր: Արտաշատում, Տիգրանակերտում հիմնվեցին թատրոններ, ուր բեմադրվում էին հին հունական և Տիգրանի ավագ որդու՝ Արտավազդի (Հոր Հաջորդի) գրած ողբերգությունները: Մ. թ. ա. 88 թ. Հայաստանի դաշնակից Պոնտոսը ներքաշվեց Հզորազոր Հռոմի դեմ երկարատև պատերազմի մեջ, որն անհաջող վերջացավ Պոնտոսի համար: Պարտված Միհրդատ VI-ն ստիպված փախավ Հայաստան: Հռոմեական զորապետ Լուկուլլոսը Տիգրանից պահանջեց հանձնել Միհրդատին, բայց մերժում ստացավ:

Հռոմեա-պոնտական պատերազմների ժամանակ Տիգրան Մեծը չեզոք մնաց: Սակայն Պոնտոսի դեմ տարած հաղթանակից հղփացած Լուկուլլոսը մ. թ. ա. 69 թ. դարնանը առանց պատերազմ հայտարարելու ներխուժեց Հայաստան և քաղաքանապես այն գլխատելու համար սրընթաց շարժվեց դեպի Տիգրանակերտ, որի կայազորը վեց ամիս հերոսաբար դիմադրեց թշնամուն, մինչև որ տեղ հասավ Հայոց ութսուն հազարանոց բանակը՝ Տիգրան Մեծի գլխավորությամբ: Մ. թ. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Տիգրանակերտի ճակատամարտը: Քաղաքի օտար բնակիչները հռոմեացիների առջև բացեցին դարպասները, և Լուկուլլոսին հաջողվեց հեշտությամբ գրավել այն: Հայերը տվեցին մոտ 5 հազար զոհ: Հայաստանից անջատվեցին Տիգրանի նվաճած երկրները: Տիգրանը չվհատվեց և շարունակեց պատերազմը հռոմեացիների դեմ: Նրան օգնում էին Ատրպատականը, Իբերիան (Վրաստան) և Աղվանքը: Տիգրանը դեսպաններ ուղարկեց նաև պարթևների արքայի մոտ և ապահովեց նրա չեզոքությունը: Տիգրանին հաջողվեց կազմակերպվել մարտերում կոփված հարյուր հա-

զարանոց բանակ և մ. թ. ա. 68 թ. սեպտեմբերին Արածանի գետի ափին ջախջախեց դեպի Արտաշատ շարժվող Լուկուլլոսին, որն ստիպված հեռացավ Հայաստանից: Տիգրանը ետ գրավեց Հռոմեացիների նվաճած այն երկրները, որոնք Հայաստանին էին միացվել մինչև Հռոմեա–Հայկական պատերազմը:

Միհրդատ VI–ը, օգտվելով Տիգրանի հաջողություններից, ետ գրավեց իր կորցրած տիրույթները և վերստին թագավորեց Պոնտոսում: Տիգրան Մեծին հաջողվեց վիժեցնել իր դեմ երկու որդիների նյութած դավադրությունը (որդիները գլխատվեցին): Երրորդ որդին՝ Տիգրան կրտսերը, դավադրության անհաջող փորձից հետո փախավ Իրան և կնության առավ պարթևների արքայադստերը, ապա պարթևական զորքով արշավեց Հայաստան՝ հորից գահը խլելու նպատակով, բայց Արտաշատի մոտ պարտվեց Տիգրան Մեծից և փախավ պապի՝ Միհրդատի մոտ, որն օժանդակեց նրան: Ուստի Տիգրան Մեծը խզեց հարաբերությունները Միհրդատի հետ: Մ. թ. ա. 66 թ. Արևելք եկած Հռոմեական նոր զորապետ Պոմպեոսը Միհրդատ VI–ին հաղթելուց հետո խուժեց Հայաստան և շարժվեց դեպի Արտաշատ, որտեղ շտապեց կրտսեր Տիգրանը՝ հույս ունենալով Պոմպեոսի աջակցությամբ հորից խլել գահը: Տիգրան Մեծը ծանր կացության մեջ ընկավ: Հռոմին դիմադրելը դարձավ անհեռանկար, պարտվել էր Պոնտոսը, իսկ Իրանը դաշինք էր կնքել Հռոմի հետ, վերջինիս հետ միանալ էր ջանում Տիգրան կրտսերը: Հայաստանի անկախությունը փրկելու հույսով Տիգրան Մեծը մեկնեց Պոմպեոսի մոտ, և մ. թ. ա. 66 թ. Արտաշատում կնքվեց Հայ–Հռոմեական դաշինք, որով Հայաստանը հռչակվեց Հռոմի «բարեկամն ու դաշնակիցը»: Հայաստանից անջատվեցին բոլոր նվաճված երկրամասերը, Տիգրան Մեծի իշխանության տակ մնաց միայն բուն Հայաստանը: Տիգրան կրտսերը թեև հաստատվեց Ծոփքի թագավոր (կռիվների ժամանակ Ծոփքը օգնել էր Հռոմեացիներին), բայց երբ ծառացավ հոր և Պոմպեոսի դեմ, վերջինս գերեց նրան և տարավ Հռոմ: Տիգրան Մեծը վախճանվեց մ. թ. ա. 55 թ. 85 տարեկան հասակում:

Հայաստանի թուլացման հետևանքով հզորացավ Իրանը: Վերջինիս և Հռոմեական կայսրության միջև ընկած էր Հայաստանը: Այդ երկու հզոր ախոյանները ամեն կերպ ջանում էին իրենց ազդեցության տակ պահել Հայաստանը և այնտեղ ստեղծել իրենց կողմնակից խմբակցություններ: Հայաստանում ձևավորվեցին հռոմեասեր և պարթևասեր կուսակցություններ, որոնց միջև ընթացող մրցապայքարը երկար դարեր ալեկոծեց Հայաստանի ներքաղաքական կյանքը՝ ջլատելով նրա ուժերը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՎԱԶԴ II-Ի ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ

Տիգրան Մեծին հաջորդեց որդին՝ Արտավազդ II-ը (մ. թ. ա. 55–34), որի ժամանակ Հայաստանը պահպանեց իր հզորությունը: Բայց նրա վրա ծանրացած էր Հռոմին դաշնակցելու պարտավորությունը: Հռոմեական հանրապետությունը շարունակում էր «բարեկամ» և «դաշնակից» Հայաստանի զորությունը պատերազմներում օգտագործելու քաղաքականությունը: Հայաստանը պետք է դաշնակցեր Հռոմին, ընդդեմ իր հարևանների, ինչը հակասում էր երկրի շահերին: Արտավազդը խելացիորեն հասկացավ, գնահատեց իրավիճակը և հրաժարվեց դաշնակցել Հռոմին, հարևան Իրանի դեմ նրա մղած պատերազմների ընթացքում: Ավելին, երբ մ. թ. ա. 53 թ. հռոմեական փառամոլ զորապետ Կրասոսը պատերազմեց Իրանի դեմ, Արտավազդը դաշնակցեց պարթևների արքայի հետ, նրա որդուն կնության տալով իր քրոջը: Այս հանգամանքը վճռական ազդեցություն ունեցավ հռոմեա-պարթևական պատերազմի ելքի վրա: Մ. թ. ա. 53 թ. մայիսի 6-ին Միջագետքի Խառան քաղաքի մոտ պարթևների զորավար Սուրենը հեծելազորի հմուտ զորաշարժերով շրջապատեց և ջախջախեց Կրասոսի 45 հազարանոց բանակը: Սպանված Կրասոսի գլուխն ուղարկվեց Արտաշատ, որտեղ հայոց և պարթևների թագավորները դիտում էին Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը: Հանդիսատեսների բուռն ցնծության տակ հույն դերասանը զորապետի գլուխը նետեց բեմահարթակի վրա: Այնուհետև պարթևները հայոց զորքի աջակցությամբ գրավեցին Ասորիքը:

Արտավազդ II-ը ջանաց չեզոքություն պահպանել մ. թ. ա. 36 թ. պարթևների դեմ Անտոնիոսի գլխավորած հռոմեական 100 հազարանոց զորքի արշավանքի ժամանակ, թեև վերջինիս ռազմուղին անցնում էր Հայաստանով: Այս հանգամանքը Արտավազդին թույլ չտվեց դաշնակցել պարթևների հետ: Այդուհանդերձ հռոմեական զորքը պարտություն կրեց: Հռոմեական սենատի առջև արդարանալու նպատակով Անտոնիոսը պարտության մեղքը բարդեց Արտավազդի վրա, որին պատժելու համար մ. թ. ա. 35 թ. արշավեց Հայաստան, հասավ Արտաշատ, նենգությամբ գերեց Արտավազդին և նրա ընտանիքին, որոնց տարավ Եգիպտոս, իր սիրուհու՝ Կլեոպատրա թագուհու մոտ: Ալեքսանդրիայում զինվորական հանդեսի ժամանակ Արտավազդը և իր կինը հրաժարվեցին գլուխ խոնարհել Կլեոպատրայի առջև, ուստի բանտ նետվեցին (մ. թ. ա. 31 թ. Կլեոպատրան դլխատել տվեց Արտավազդին):

Մ. թ. ա. 30 թ. պարթևների աջակցությամբ հայոց թագավոր դարձավ Արտավազդի որդին՝ Արտաշես II-ը (մ. թ. ա. 30–20 թթ.): Արտաշեսի դա-

հակալության տարում Հռոմում հաստատվեց Օկտավիանոսի (Օգոստոսի) միանձնյա իշխանությունը, և վերացվեց հանրապետությունը: Հայերը ավելի ևս հակվեցին դեպի հարևան պարթևները, որոնք հանդուրժում էին հայոց ինքնուրույն պետականությունը և բարքերով, սովորություններով, կրոնով ավելի մոտ էին հայերին: Բայց Հռոմը չէր հրաժարվում Արևելքում հենարան ունենալու մտքից, ի դեմս «դաշնակից» ու «բարեկամ» Հայաստանի: Նա կազմակերպեց Արտաշես II-ի սպանությունը, զորք մտցրեց Հայաստան և հայոց թագավորի գահին բազմեցրեց Արտաշես II-ի եղբորը՝ Տիգրան III-ին (մ. թ. ա. 20–8 թթ.), որը երկար ժամանակ պատանդ էր եղել Հռոմում և դարձավ վերջինիս հլու գործիքը: Հայ իշխաններն ապստամբեցին և մ. թ. ա. 8 թ. հայոց թագավոր հռչակեցին Տիգրան IV -ին, որն իշխեց քրոջ՝ Էրատոյի հետ: Բայց մ. թ. 1 թ. Կովկասի լեռնականների դեմ մղած կռիվներում սպանվեց Տիգրան IV-ը: Նույն թվին Էրատոն հրաժարվեց գահից:

Այդպիսով մ. թ. 1 թվականին վերացավ հայոց Արտաշեսյան թագավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ Մ. Թ. Ա. VI – I ԴԴ

Հին Հայաստանի տնտեսության հիմքը երկրագործությունն էր, որի շնորհիվ էր զարգանում երկրի հասարակական կյանքը: Հիմնական արտադրողը՝ ազատ գեղջուկ գյուղացին, շինականն էր, որն ապրում էր շեներում (գյուղերում), որից էլ՝ նրա անվանումը: Հայաստանում աճեցվում էին հացահատիկային, ձիթատու մշակաբույսեր, խաղողի, պտղատու այգիներ, բանջարեղենի տարբեր տեսակներ: Զարգացած էր նաև անասնապահությունը: Հայտնի էին արհեստագործության տարբեր ճյուղերը՝ մետաղամշակությունը, որը գործիքներ էր մատակարարում գյուղատնտեսությանը, զենքեր՝ բանակին: Կարևոր արհեստներից էր ոսկերչությունը, որի արտադրանքը իրացվում էր բարձր խավի կողմից: Ոսկե և արծաթե իրեր են գտնվել Գառնիի և Արտաշատի պեղումների ժամանակ: Պղնձագործության բնագավառի արհեստավորները պատրաստում էին զենքեր, գործիքներ, զարդեղեն, զանազան տեսակի ամանեղեն: Երկրի տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունեցող արհեստներից էին նաև բրուտագործությունը, ջուլհակությունը, կաշվեգործությունը, փայտամշակությունը, քարգործությունը և ապակեգործությունը: Արհեստների զարգացումը նպաստեց քաղաքների աճին: Երկրի տնտեսական կյանքում կարևոր էր հատկապես Արտաշատի դերը որպես միջազգային առևտրական

ուղիների հանգուցակետի: Վերելք ապրեցին Վանը, Արմավիրը, Երվանդաշատը: Արտաշեսյանների օրոք առաջացան նոր քաղաքներ՝ Արտաշատը, Տիգրանակերտը, Զարեհավանը, Զարիշատը և այլն: Քաղաքներին կից կային գյուղեր, հողակտորներ, որոնք մշակում էին քաղաքաբնակները: Ուրեմն քաղաքները ոչ միայն արհեստագործության և առևտրի, այլև երկրագործության կենտրոններ էին: Հելլենիստական դարաշրջանում, սկսած մ. թ. ա. IV դ. վերջից, Հայաստանում զարդացավ նաև առևտուրը: Դրան մեծապես նպաստեց այն, որ Հայաստանով էր անցնում Եվրոպայից Արևելք տանող միջազգային առևտրական ուղին, որի միջոցով Հայաստանը կապվեց Հնդկաստանի, Չինաստանի և այլ երկրների հետ՝ միջազգային առևտրին մասնակցելով նաև սեփական արտադրանքով: Շրջանառության մեջ էին Տիգրան II-ի և նրա հետնորդների, ինչպես նաև Ծոփքի թագավորների թողարկած արծաթե և պղնձե դրամները:

Հայաստանն իր պետական կառուցվածքով հելլենիստական տիպի պետություն էր: Երկրում գերիշխող էին հողատեր նախարարները: Նահապետական ստրկատիրության պայմաններում մասնատիրական հողերում՝ դաստակերտներում, ագարակներում գործադրվում էր նաև ստրուկների աշխատանքը: Սակայն ստրուկի (որին Հայաստանում կոչում էին «ծառա») դերը չնչին էր, վճռականը ազատ գյուղացու աշխատանքն էր: Ի տարբերություն Հռոմի, որտեղ ստրուկը ոչ թե անձ, այլ իր էր համարվում, Հայաստանում նա դիտվում էր որպես տիրոջ և պետության հանդեպ որոշակի պարտականություններ և իրավունքներ ունեցող անձ, որը նաև կարող էր ունենալ ընտանիք: Բայց հայ գյուղացին անձնապես ազատ էր, մինչդեռ ստրուկը զուրկ էր նման ազատությունից:

Հայոց թագավորն օժտված էր բացարձակ և ոչնչով չսահմանափակվող ժառանգական իշխանությամբ: Նա էր երկրի գերագույն կառավարիչը, զորքերի գլխավոր հրամանատարը, նոր օրենքների սահմանողը և գերագույն դատավորը: Նա էր լուծում պատերազմի և խաղաղության հարցերը, հիմնում նոր քաղաքներ: Թագավորից հետո ամենաազդեցիկը երկրի հոգևոր առաջնորդը՝ քրմապետն էր: Հայաստանը վարչականորեն բաժանված էր նահանգների ու գավառների, որոնք կառավարում էին նախարարական տոհմերը: Արտաշեսյանների օրոք ստեղծվեց մոտ 100 հազարանոց բանակ, որի միջուկը այրուձին՝ հեծելազորն էր: Զորքն ուներ պարսպահար, քարանետ մեքենաներ, մարտակառքեր, զենքերի տարբեր տեսակներ՝ սուր, թուր, նիզակ (փայտյա երկարակոթ սրածայր զենք), ասպար (վահան), տեգ (նիզակի կարճ տեսակը), սակր (կացնաձև զենք), պարսատիկ (քար նետելու ձեռքի զենք) և այլն: Ռազմիկները կրում էին զրահազգեստ և սաղավարտ (գլուխն ու ծոծրակը պատող մետաղյա գլխարկ):

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արտաշեսյանների անկումից հետո Հայաստանը պահպանում էր Հռոմի հանդեպ «բարեկամությունն» ու դաշինքը: Հռոմեական պետությունն իր դրածո թագավորների միջոցով Հայաստանում հաստատեց գերիշխանություն, որը հայ ժողովուրդը չհանդուրժեց՝ վռնդելով Հռոմի կամակատար թագավորներին: Ստեղծված վիճակից դուրս գալու համար հայ ավագանին դերադասեց դաշնակցել պարթևներին՝ ընդդեմ Հռոմի, որը սպառնում էր նաև նրանց: Պարթևները ևս կամենում էին Հայաստանը պահել իրենց ազդեցության ոլորտում, որպես զորեղ հակակշիռ ընդդեմ հզոր ախոյանի՝ Հռոմի: Հայաստանը համարվում էր հին աշխարհի երրորդ պետությունը (Հռոմից և Իրանից հետո) և էականորեն կարող էր ներգործել հռոմեա-պարթևական հարաբերությունների վրա: Այն իր ազդեցության տակ դցելու նպատակով պարթև Արշակունիների Վաղարշ I թագավորը 52 թ. իր եղբայր Տրդատին զորքով ուղարկեց Հայաստան՝ հայ նախարարների համաձայնությամբ նրան հռչակելով հայոց թագավոր: Սակայն դա պատերազմի առիթ դարձավ Հռոմի դեմ, որը շարունակում էր Հայաստանը համարել իր «բարեկամն» ու «դաշնակիցը»: 58 թ. հռոմեական զորքերը Կորբուլոնի գլխավորությամբ խուժեցին Հայաստան, գրավեցին և ավերեցին Արտաշատը, 60 թ. հայոց թագավոր կարգեցին Հրեաստանի թագավոր Հերովդես I-ի թոռանը՝ Տիգրան VI-ին (60-61 թթ.): Բայց հայ-պարթևական ուժերի ճնշման տակ 62 թ. հռոմեացիներն ստիպված ճանաչեցին Տրդատի թագավորությունը՝ գահընկեց անելով Տիգրան VI-ին: Ներոն կայսրը չհանդուրժեց դա և 62 թ. զորք ուղարկեց Հայաստան: Հռանդեա (Եռանդ) վայրում 63 թ. տեղի ունեցած ճակատամարտում հռոմեական զորքը ծանր պարտություն կրեց, անձնատուր եղավ՝ ծնկաչոք անցնելով հայ զինվորների նիզակների տակով: Ապա հայերն ու պարթևները դեսպանություն ուղարկեցին Հռոմ, առաջարկելով հաշտություն կնքել և Տրդատին ճանաչել հայոց թագավոր: Քանի որ Հռոմը պարտված կողմ էր, ստիպված ընդունեց առաջարկը, պայմանով, որ Տրդատն անձամբ մեկներ Հռոմ և թագն ստանար Ներոնից, որն այդպիսով կամենում էր վերացնել հռոմեական զորքի կրած պարտության բացասական ազդեցությունը և փրկել իր հեղինակությունը: Այդ նպատակով կայսրը 64 թ. մեծաթիվ զորքով կրկին Հայաստան ուղարկեց Կորբուլոնին, որը պետք է վերացներ խայտառակ պարտության հետևանքները, ձեռք բերեր պատվավոր հաշտություն: Այն կնքվեց Հռանդեայում 64 թ.: Այդ հաշտությամբ Տրդատը ճանաչվեց հայոց թագավոր, բայց անձամբ պետք է մեկներ Հռոմ՝ Ներոնից թագ ստանալու համար: 66 թ. Տրդատը երեք հազա-

բանոց շքախմբով մեկնեց Հռոմ և թագադրվեց կայսեր կողմից, որը նրան պարգևեց մեծ գումար՝ Արտաշատը վերակառուցելու համար: Տրդատն իշխեց մինչև 88 թ.: Նա վերականգնեց Արտաշատը, կառուցեց Գառնիի ամրոցը և հեթանոսական տաճարը: Նրա օրոք հիմնականում վերականգնվեց Մեծ Հայքի տարածքը, ընդմիշտ վերացավ Մոփքի թագավորությունը (այն միացվեց Մեծ Հայքին): Հռոմեական զորքը դուրս բերվեց Հայաստանից, որն այդպիսով ձեռք բերեց անկախություն՝ Տրդատի և Հայ նախարարների գլխավորությամբ: Տրդատը ստեղծեց ուժեղ բանակ, հաստատեց Հայ նախարարների ժառանգական իրավունքները, հաջողությամբ կասեցրեց Հյուսիսի լեռնական ցեղերի (ալանների) հարձակումները:

Տրդատի հաջորդները ձգտում էին վերացնել Իրանից և Հռոմից ունեցած կախումը, իրենց թագավորությունը դարձնել ժառանգական և ինքնուրույն:

Հռոմը պահպանում էր Հայաստանի հանդեպ իր հովանավորությունը՝ հաստատելով նրա թագավորներին: Բայց դա ձևական բնույթ էր կրում, որը չհանդուրժելով հռոմեական կայսր Տրայանոսը 115 թ. գրավեց Հայաստանը՝ այն հռչակելով Հռոմի մարզ (պրովինցիա): Հայ ժողովուրդը չհանդուրժեց դա, ուստի Տրայանոսի հաջորդները ճանաչեցին Հայաստանի անկախությունը, և 117 թ. Հայոց թագավոր դարձավ Վաղարշ I-ը (117–140), որը հիմնեց նոր մայրաքաղաք՝ այն կոչելով իր անունով՝ Վաղարշապատ (այժմ Էջմիածին): Իհարկե, Հռոմը չէր հրաժարվում Հայաստանն իր ազդեցության ոլորտում պահելու մտքից, ուստի 144 թ. Կոմմագենեի Երվանդունիների արքայատոհմից Հայոց թագավոր կարգեց Սոհեմոսին, որը տապալվեց 161 թ. Հայերի ու պարթևների կողմից: Բայց Հռոմը 164 թ. զորք ուղարկեց Հայաստան, գրավեց այն և Հայոց թագավորի գահին վերահաստատեց պարթևների կողմից գահընկեց արված իր դրածո Սոհեմոսին: Հռոմում այնքան մեծ նշանակություն տվեցին դրան, որ ի պատիվ ձեռք բերված հաղթության, 164 թ. այնտեղ կառուցվեց շքեղակերտ կոթող, որն այժմ էլ պահպանվում է: Կոթողի վրա նշված է, որ այն կանգնեցվել է «Հայերին, պարթևներին և գերմանացիներին հաղթելուց հետո»: Հռոմի կամակատար Սոհեմոսի օրոք մոտ 20 տարի Վաղարշապատում տեղակայված էին Հռոմեական կայազորներ, որոնք Հայաստանից դուրս քշվեցին նրա հաջորդի՝ Վաղարշ II-ի ժամանակ՝ 186 թ.:

Վաղարշ II-ը խելացի և շրջահայաց քաղաքականությամբ խաղաղ հարաբերություններ հաստատեց թե՛ Հռոմի, թե՛ պարթևների հետ: Սակայն 224 թ. Պարսկաստանում հաստատվեց Սասանյան տոհմի թագավորությունը, որը թշնամական քաղաքականություն էր վարում իր ախոյանների՝ Արշակունիների նկատմամբ: Սասանյանները ձգտում էին վերականգնել Աքեմենյան Իրանի սահմանները, գրավել Փոքր Ասիան, որին արդեն տի-

բում էր Հռոմը: Հայաստանն ընկած էր Սասանյանների առաջխաղացման ճանապարհին: Ուստի հայերը հակվեցին դեպի Հռոմը, որպես մի ուժի, որը կարող էր զսպել Սասանյաններին: Ստեղծված պայմաններում Հռոմը շահագրգռված էր Մեծ Հայաստանի գոյությամբ, մինչդեռ Սասանյանները ցանկանում էին փոքրացնել, թուլացնել և իրենց լիակատար ազդեցության տակ գցել նրան: Սկսած 230-ական թվերից, հայ Արշակունի թագավորները (հատկապես Տրդատ II-ը) համառ և անհավասար պայքար էին մղում Սասանյան Իրանի դեմ: Այդ պայքարին Հռոմը չէր կարող միջամտել, քանի որ զբաղված էր արևմուտքում մղվող կռիվներով: Միայն 280-ական թթ. նա եռանդուն կերպով զբաղվեց Արևելքի գործերով և հայերի օգնությամբ վճռական հաղթանակ տարավ Սասանյանների դեմ, որոնք ստիպված եղան 298 թ. Միջագետքի Մծբին քաղաքում Հռոմի հետ կնքել 40-ամյա հաշտության պայմանագիր՝ Տրդատ III Արշակունուն ճանաչելով հայոց թագավոր (298-330): Տրդատի դահանիստը մնաց Վաղարշապատը: Մեծ Հայքի թագավորությունը ճանաչեց Հռոմի հովանավորությունը:

Տրդատի օրոք, 301 թ. հայերը պաշտոնապես պետական կրոն ընդունեցին քրիստոնեությունը, որն այնտեղ տարածվել էր դեռևս I դ. 40-ական թվականներից, Քրիստոսի աշակերտներ Թադեոսի և Բարդուղիմեոսի կողմից: Բայց հայոց թագավորները և նախարարները մերժում էին այն՝ հալածելով քրիստոնյաներին: Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների անունով հայոց եկեղեցին կոչվում է առաքելական: III դ. վերջերին քրիստոնեության տարածման համար հայաստանում բուռն գործունեություն ծավալեց Գրիգոր Լուսավորիչը, որը 301 թ. դարձավ հայոց առաջին եպիսկոպոսապետը (կաթողիկոսը): 302 թ. Վաղարշապատում հիմնվեց հայոց մայր վանքը՝ Էջմիածինը: Քրիստոնեությունը նպաստեց հայոց թագավորության ամրապնդմանը, երկրի անկախության պահպանմանը, մշակույթի զարգացմանը, ժողովրդի համախմբմանն ու մտավոր զարթոնքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(Մ. Թ. Ա. VI – մ. թ. IV ԴԴ)

Երվանդունիների ժամանակ, հատկապես հելլենիստական դարաշրջանում, զարգացավ նաև հայ մշակույթը: Ստեղծվեցին հայ ժողովրդական առասպելներ, վեպեր, ասքեր, որոնց հիմնական բովանդակությունը հայ ժողովրդի պայքարն էր անկախության համար: Տարածված էին Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Տորք Անգեղի մասին առասպելները, որոնք տեղ են գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկում: Մ. թ. ա. III դարից հետո ստեղծված վեպերում, ասքերում արտացոլված

են պատմական դեպքերի, նշանավոր գործիչների՝ Երվանդի, Տիգրան Երվանդյանի, Արտաշեսի, Տիգրան Մեծի և ուրիշների մասին ավանդությունները: Հին հայերը հեթանոսներ էին, պաշտում էին մի քանի աստվածների, որոնք մարմնավորում էին ոչ միայն բնության ուժերը, այլև մարդու բանականությունը: Վահագնը անձնավորում էր բնության ուժերը, ծնվել էր հողի ու ջրի (ծովի) երկունքից: Նա ոչ միայն կայծակի, այլև մարդկային հատկությունների՝ քաջության, ուժի, ռազմի աստվածն էր: Հայկական հեթանոսական աստվածների Հայրն էր համարվում Արամազդը՝ երկնքի ու երկրի ստեղծողը, լիությունն, արիությունն պարգևողը: Հայաստանում ամենքից առավել պաշտվում էր Անահիտը՝ մայրության, պտղաբերության աստվածուհին, հայ ազգի բարերարը և պահապանը: Աստղիկը լույսի, սիրո, գեղեցկության, ինչպես և ջրի դիցուհին էր, որին էր նվիրված Վարդավառի տոնը: Միհրը արևի ու կրակի աստվածն էր, Տիրը՝ իմաստության, ուսման, գիտության ու երաժշտության: Ամանորը Նոր տարվա աստվածն էր: Վանատուրը հյուրընկալության (օթևան («վան») տվող) աստվածն էր: Նանեն՝ Անահիտի քույրը ողջախոհության, մայրության դիցուհին էր և տան օջախի պահապանը: Աստվածներն ունեին իրենց մեհյանները (կռատները) ՝ հեթանոսական տաճարները:

Տիգրան Մեծի արքունիքում ապաստան էին գտել հույն գրողներ, փիլիսոփաներ: Մ. թ. I–II դդ. Դարանաղի գավառի Անի (Կամախ) բերդաքաղաքի քուրմ Ողյումպը գրել է Երվանդի, Արտաշես I–ի պատմությունը, իսկ II դ. ասորի մատենագիր Մար Աբաս Կատինան՝ հայոց հնագույն պատմությունը (այս երկու պատմիչների գործերից օգտվել է Մովսես Խորենացին): Մեկ այլ ասորի մտավորական՝ Բարդածան Եդեսացին III դ. սկզբին եկավ Հայաստան և հայոց «Մեհենական պատմություն» երկը թարգմանեց ասորերենի: Տիգրան Մեծը Արտաշատում և Տիգրանակերտում հիմնեց թատրոններ: Զարգացում ապրեց նաև ճարտարապետությունը: Հոյակերտ կոթողներ էին Գառնիի ամրոցն ու հեթանոսական տաճարը, որոնք կառուցվել են I դարում, Տրդատ I–ի կողմից:

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (III–IV ԴԱՐԵՐ)

Արշակունիների օրոք՝ IV դ. Հայաստանում ձևավորվում են ֆեոդալական (ավատատիրական) հարաբերությունները: Ֆեոդ (հայերեն՝ ավատ) բառը ծագում է լատիներեն «ֆեոդում» բառից, որն ունի կալվածք, ունեցվածք իմաստը: Ֆեոդը այն հողատիրույթն էր, որ թագավորը կամ մեծ իշխանը պարգևում էր իր ծառա (վասալ) ֆեոդալին, որպես ժառան-

գական սեփականություն: Արտադրության հիմնական միջոցը՝ հողը, ավատատերերի սեփականությունն էր: Հայ ֆեոդալները՝ նախարարները, համարվում էին ազատ, ի տարբերություն անազատների՝ քաղաքի արհեստավորների, առևտրականների և շինականների (գյուղացիների): Վերջիններս անվանվում էին ռամիկ, գեղջուկ: Գյուղացին հողն ստանում էր ֆեոդալներից՝ ըստ շնչերի: Ազատները զբաղվում էին միայն «ազնիվ» ՝ զինվորական ծառայությամբ Հայոց այրուձիում: Հայաստանում կային ֆեոդալական հողատիրության երեք ձևեր: Դրանցից ամենաազդեցիկը «Հայրենիք» կոչված հողատիրությունն էր, որին ազատը տիրում էր ժառանգաբար: Հողատիրության մյուս ձևը «պարգևականքն» էր, որը տրվում էր որպես պարգև ծառայության դիմաց: Փողով դնված հողերը կոչվում էին «քսակագինք» (հողակալության այս ձևը քիչ էր տարածված): Վանքերը, եկեղեցիները նույնպես տիրում էին խոշոր կալվածքների: Ֆեոդալների և եկեղեցիների, վանքերի հողերը մշակում էին շինականները: Քաղաքի և գյուղի ստորին խավերից վերցվում էր ծխահարկ, անասնահարկ, աշխատունակ տղամարդկանցից՝ նաև գլխահարկ: Գյուղացիները եկեղեցուն վճարում էին «տասանորդ» կոչված հարկը և կամավոր նվերներ՝ «պտղնի» և այլն: Ով հող ուներ, օժտված էր իշխանությամբ: Ուստի ֆեոդալ–հողատերը նաև իրեն ենթակա գավառի իշխանն էր: Ամեն մի խոշոր հողատիրույթ ինքնուրույն իշխանություն էր և հաճախ հակադրվում էր Արշակունի արքունիքին: Ցուրաքանչյուր խոշոր ֆեոդալ (նախարար) արքունիքում ուներ իր տեղը՝ բարձը, ըստ իր դիրքի, որը որոշվում էր թագավորին նրա տված հեծյալների թվով: Ֆեոդալների այդ իրավունքը հաստատվում էր նախարարների հատուկ ցուցակով՝ «գահնամակով»: Արքունիքին նախարարների տված այրուձիի թիվը նշված է հետագայում կազմված «Զորանամակ» անունով փաստաթղթում (բոլոր նախարարների տված այրուձիի թիվը 84 հազարի էր հասնում):

Հայոց Արշակունի թագավորը պետությունը կառավարում էր հատուկ պաշտոնյաների՝ «գործակալների» միջոցով, որոնք պաշտոնը վարում էին ժառանգաբար: Հազարապետության գործակալությունը Ամատունի տոհմի գլխավորությամբ տնօրինում էր երկրի հասարակական, տնտեսական գործերը, հարկերը, տուրքերը, պետական պարհակները՝ պարտադիր աշխատանքները, որոնք կատարվում էին բերդեր, ճանապարհներ, ջրանցքներ, կամուրջներ կառուցելիս: Սպարապետության գործակալությունը սպարապետի (հիմնականում Մամիկոնյան տոհմից) գլխավորությամբ տնօրինում էր երկրի զինված ուժերը: Մարդպետության գործակալությունը Մարդպետների գլխավորությամբ տնօրինում էր արքունի կալվածները, եկամուտները: Մարդպետը նաև Արշակունի թագավորի խորհրդատուն էր: Մաղխազությունը (Խորխոռունիներ) գլխավորում էր թագա-

վորի թիկնազորը: Մեծ դատավարությունը ուներ օրենսդիր և դատական իշխանություն: Այն գլխավորում էր քրմապետը, 301 թ. հետո՝ Հայոց կաթողիկոսը: Թագադիր ասպետությունը Բագրատունի տոհմի (ավագը կրում էր «ասպետ» տիտղոսը) մենաշնորհն էր: Վերջիններս թագադրում էին Արշակունի Հայոց թագավորին, ունեին նրա գլխին թագ դնելու և արքայական պատվանշանը (ժապավենը) կապելու իրավունք: Կային նաև արքունի այլ պաշտոններ (սենեկապետ, դրոշակակիր, զինակիր և այլն): Պետական զինանշանը (գերբը) արծիվն էր, իսկ դրոշը՝ ծիրանագույն, վրան նախշագործված ոսկե արծիվ: Կարևոր հարցերը քննվում էին աշխարհաժողովներում, որոնք 301 թ. հետո դարձան եկեղեցաժողովներ: Վերջիններս ունեին օրենսդրական իշխանություն: Մշակված օրենքները՝ եկեղեցական կանոնները շոշափում էին ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքացիական և քրեական խնդիրներ:

Ֆեոդալիզմի ձևավորման պայմաններում արհեստների և առևտրի կենտրոնների իրենց դերը պահպանեցին Հայաստանի քաղաքները՝ Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Վանը, Կարինը, Նախիջևանը, Զարեհավանը և այլն: Քաղաքներն ունեին տարատեսակ բնակչություն: Նրանցում բնակվում էին արհեստավորներ, առևտրականներ, եկեղեցականներ, ինչպես նաև ֆեոդալներ:

ՊԱՑՔԱՐ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Տրդատ III-ին հաջորդեց որդին՝ Խոսրով III Կոտակը («կարճահասակ»), որի օրոք Հայաստանը կարճ ժամանակ վայելեց խաղաղություն, թագավորը ձեռնամուխ եղավ երկրի բարեկարգմանը: Նա գցել տվեց արհեստական անտառ, որը Գառնիից տարածվելով, Մեծամոր և Ազատ գետերի ափերով հասնում էր մինչև Դվին: Անտառը լցվեց վայրի կենդանիներով, պարսպապատվեց և վերածվեց արքայական որսատեղի (անտառի մի մասը այժմ էլ մնում է Արարատի մարզում): Արաքսի հունը փոխվելու պատճառով Արտաշատի մոտ գոյացած ճահիճները քաղաքի օդը դարձրեցին անառողջ, ուստի Խոսրով III-ը հիմնեց նոր մայրաքաղաք՝ Դվինը, որի օդը նորատունկ անտառի շնորհիվ դարձավ դովասուն և առողջարար: Դվինը և շրջակա բնակավայրերը ջրով ապահովվելու համար Ազատ գետից անցկացվեց ջրանցք:

Սակայն խաղաղությունը երկար չտևեց: 335 թ. պարսից Շապուհ II արքայի դրդմամբ անդրկասպյան քոչվոր ցեղերը՝ մազքութները Սանեսան թագավորի գլխավորությամբ մեծ զորքով հարձակվեցին Հայաստանի

վրա և մեկ տարի այն մատնեցին ավերածության, գերեվարման: Հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը 336 թ. Օշականի մոտ գլխովին ջախջախեց մազքութներին՝ սպանելով Սանեսանին:

Խոսրովը Վաչե սպարապետի հետ միասին դաժան հաշվեհարդար տեսավ ապստամբ նախարարների հետ՝ բնաջնջելով նրանց (Բզնունիների և Աղձնիքի բդեշխի) տոհմերը: Հայաստանի վիճակը ծանրացավ նաև 338 թ. վերսկսած հռոմեա-պարսկական կռիվների հետևանքով: Պարսից զորքը նույն թվին խուժեց Հայաստան, բայց Վանա լճի ափին, Առեստ ավանում հայոց զորքը Վաչե Մամիկոնյանի գլխավորությամբ ջարդեց Շապուհ II-ի բանակը: Մարտերից մեկում զոհվեց Վաչեն:

Հայաստանի ներքաղաքական կյանքը ալեկոծվեց նաև Խոսրովի որդու՝ Տիրանի (338-344) գահակալման տարիներին: Տիրանի դեմ ծառացան Արծրունի և Ռշտունի նախարարական տոհմերը, և Հուսիկ, ապա Դանիել կաթողիկոսները (վերջիններս սպանվեցին արքայի հրամանով, իսկ ապստամբ տոհմերը բնաջնջվեցին): Ի լրումն դրա, 344 թ. վերսկսված պարսկա-հռոմեական կռիվների ժամանակ պարսից զորքը ներխուժեց Հայաստան, գերեց Տիրանին, որը Շապուհ II-ի հրամանով կուրացվեց: Սակայն 345 թ. Հռոմը հայերի օգնությամբ հաղթեց պարսիկներին: Կուրացած Տիրանը թեև ազատ արձակվեց, բայց կառավարել չէր կարող, ուստի նրան փոխարինեց որդին՝ Արշակ II-ը (345-368):

Արշակը խելացի և շրջահայաց կերպով ամրապնդեց հայ-հռոմեական դաշինքը, որը նշանավորվեց նրա և Հռոմի Կոստանդ կայսեր մեռած եղբոր նշանած Օլիմպիայի ամուսնությամբ: Որպեսզի նախարարներին իր շուրջը համախմբի, Արշակը վերահաստատեց նրանց ժառանգական իրավունքները:

354 թ. Տարոն գավառի Աշտիշատ ավանում ներսես կաթողիկոսը և Արշակ II-ը գումարեցին հայոց առաջին եկեղեցաժողովը, որը իշխաններին հորդորում էր ծառաներին չնեղել ծանր հարկերով, իսկ հասարակ ժողովրդին պատվիրում էր հնազանդ լինել տերերին: Ժողովը բարձր հոգևորականներին արգելեց ամուսնանալ, որպեսզի նրանց կալվածքները չմասնատվեն ժառանգների կողմից: Արգելվեցին հեթանոսական սովորությունները՝ մեռելների վրա սուգը՝ ինքնախոշտանգմամբ (երեսը ճանկռելով և այլն), պարելով և երաժշտությամբ, մեռելոտի (լեշ ու արյուն) ուտելը, մերձավորների ամուսնությունը, հարբեցողությունը, բազմակնությունը: Ժողովի որոշմամբ հիմնվեցին վանքեր, բարեգործական հիմնարկներ՝ հիվանդանոցներ ուրկանոցներ (բորոտների տներ), աղքատանոցներ, դպրոցներ, իջևանատներ:

Իր իշխանությունն ամրապնդելու նպատակով Արշակ II-ը Կոգովիտ գավառում առևտրական բանուկ ճանապարհների վրա հիմնեց նոր քա-

դաք, որը կոչեց իր անունով՝ Արշակավան: Այն դառնալու էր հենարան խռովարար ֆեոդալների դեմ: Կարճ ժամանակվա ընթացքում քաղաքը դարձավ բազմամարդ (ուներ մոտ 20 հազար տուն բնակիչ), քանի որ այնտեղ բնակվողներին թագավորը ազատեց հարկերից, ամեն տեսակ հետապնդումներից: Արշակավանում բնակվեցին շատ գյուղացիներ, ինչից դժգոհեցին ֆեոդալները, որոնք զրկվում էին աշխատող ձեռքերից, եկամուտներից: Ուստի Արշակի բացակայության ժամանակ նախարարները միացյալ ուժերով մոտ 358 թ. կործանեցին Արշակավանը՝ չխնայելով նրա բնակիչներին: Արշակի հարաբերությունները վատացան նաև Ներսես կաթողիկոսի հետ: Դրա սկզբնառիթը Արշակի կողմից իր եղբորորդի Գնելի սպանությունն էր (վերջինիս այրուն՝ Փառանձեմին Արշակը կնության առավ):

361 թ. վերսկսվեց պատերազմը Հռոմի և Պարսկաստանի միջև: Դրա մեջ ներքաշվեց նաև Հայաստանը, որպես Հռոմի դաշնակից: Սակայն Հռոմեացիները պարտվեցին և 363 թ. պարսիկների հետ կնքեցին «ամոթալի» կոչված պայմանագիր, որով Հռոմի Հովիանոս կայսրը պարտավորվեց այլևս չօգնել դաշնակից Հայաստանին: Շապուհ II-ը հարձակվեց Հայաստանի վրա, բայց Վասակ Մամիկոնյանին հաջողվեց ջախջախել Այրարատ խուժած պարսից զորքին: Շապուհ II-ը Արշակի դեմ հանեց Մերուժան Արծրունուն՝ նրան խոստանալով թագ: Բայց դա էլ ցանկալի արդյունք չտվեց: 368 թ. Շապուհը նենգությամբ իր մոտ կանչեց Արշակին և Վասակ սպարապետին, իբր պետական կարևոր հարցեր լուծելու, բայց Արշակին նետեց Անհուշ բերդի բանտը՝ մորթազերծ անելով Վասակին:

Հայաստանը ընկավ ծանր ու օրհասական դրության մեջ: Նախարարները, ժողովուրդը Փառանձեմ թագուհու գլխավորությամբ ամրացան Արտագերս ամրոցում (Արաքսի ափին) և 14 ամիս հերոսաբար դիմադրեցին Շապուհի գերակշիռ ուժերին: Շապուհ II-ը ավերեց Հայաստանի քաղաքները, գերելով բազմահազար բնակիչների: Գերվեց և սպանվեց Փառանձեմ թագուհին:

Դեռևս Արտագերսի պաշարման ժամանակ Փառանձեմը Հռոմի Վաղես կայսրից խնդրել էր Հայաստան ուղարկել Հռոմի կողմերում գտնվող իր որդի Պապին: Արտագերսի անկումից հետո երիտասարդ և եռանդուն Պապը Մուշեղ սպարապետի (Վասակի որդու) հետ համախմբեցին հայրենասեր ուժերին: Վաղես կայսրը զորք ուղարկեց Հայաստան, Պապին թագավորեցնելու համար: 369 թ. Պապը հռչակվեց Հայոց թագավոր (369–374), ապա երկիրը մաքրեց պարսից զորքից, ետ գրավեց Հայաստանից նվաճված շրջանները:

371 թ. Շապուհ II-ը կայսրից պահանջեց զորքը դուրս հանել Հաայաստանից: Մերժում ստանալով՝ նա պարսից զորքը շարժեց Հայաստան, բայց

Նպատ լեռան մոտ, Ձիրավ դաշտում ծանր պարտություն կրեց Հայ–Հռոմեական ուժերից, որոնց գլխավորում էր Մուշեղ սպարապետը:

Պապ թագավորը երկրում անցկացրեց բարեփոխումներ: Վերակազմեց բանակը, որի թվակազմը հասցվեց 90 հազարի: Ներսես կաթողիկոսի մահվանից (373 թ.) հետո Պապը վերացրեց հայոց կաթողիկոսին Կեսարիայում ձեռնադրելու կարգը՝ այն վերապահելով հայոց թագավորին: Վերացվեցին վանքերի մի մասը և կրոնական այլ հաստատություններ, որոնք վերածվել էին ծուլերի, պորտաբույծների հանգրվանների: Պապը, հօգուտ պետության, գրավեց վանական, եկեղեցական ընդարձակ կալվածքների մեծ մասը (7 բաժին հողատիրույթից եկեղեցուն թողնելով 2–ը): Հոգևորականների թիվը կրճատվեց, թեթևացվեցին եկեղեցուն տրվող հարկերը: Բարեփոխումների շնորհիվ հարստացավ պետական գանձարանը, հզորացավ բանակը, ամրապնդվեց թագավորի իշխանությունը: Պապը ինքնուրույն քաղաքականություն էր վարում. նա բարիդրացիական հարաբերություններ հաստատեց Պարսկաստանի հետ, ինչը հարուցեց հռոմեական կայսեր դժգոհությունը: Վերջինիս հրամանով Հայաստանում հռոմեական զորքի հրամանատար Տերենտիոսը 374 թ. նենգադրժորեն Պապին հրավիրեց Կեսարիա քաղաք ճաշկերույթի և սրախողխող անել տվեց նրան՝ հարուցելով հայերի բուռն դժգոհությունը:

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Պապին հաջորդեց Վարազդատ Արշակունին (374–378), որը մեծացել էր Հռոմում, աչքի ընկել այնտեղ անցկացվող ըմբշամարտերի խաղերում: Հռոմի կողմից նշանակվելով հայոց թագավոր՝ Վարազդատը չդարձավ նրա հլու կամակատարը, փորձեց անկախ լինել, նույնիսկ հակվեց պարսից Շապուհ II արքայի կողմը: Այս հողի վրա սրվեցին հայոց թագավորի և Մուշեղ սպարապետի հարաբերությունները:

Մուշեղը կամենում էր բարեկամական կապեր պահպանել Հռոմի հետ և այդ կերպ ամրապնդել Հայաստանի անվտանգությունը: Վարազդատը և իր կողմնակիցները Մուշեղին մեղադրեցին Պապի սպանության մեջ և ճաշկերույթի ժամանակ գլխատեցին նրան: Սակայն Մուշեղի հորեղբայրը՝ Մանվել Մամիկոնյանը, 378 թվին ազատվելով պարսից գերությունից, իր շուրջը համախմբեց հայոց թագավորից դժգոհ նախարարներին, պարտության մատնեց և Հայաստանից հեռացրեց Վարազդատին՝ դառնալով երկրի փաստացի կառավարիչը: Մանվելը թագավոր դարձրեց Պապի մանկահասակ որդիներ Արշակ III–ին ու Վաղարշակին, ջախջախեց Հայաստան արշաված պարսից զորքին, ապահովեց երկրի խաղաղությունը: Բայց

նրա մահից հետո (384 թ.) հայ նախարարները հրաժարվեցին Արշակ III–ին թագավոր ճանաչելուց և պարսից արքայից խնդրեցին հայոց թագավոր նշանակել Խոսրով IV Արշակունուն: Արշակ III–ն ստիպված հեռացավ հռոմեական տիրապետության սահմանները՝ Եկեղյաց գավառ, որն իր տիրույթն էր: Հռոմը փորձեց զորք ուղարկել Հայաստան և Արշակ III–ին վերահաստատել հայոց թագավոր: Պարսից արքան պատրաստվեց զորքով պաշտպանել Խոսրով IV Արշակունու իրավունքները: Բայց այս անգամ Հռոմը թույլ էր, ուստի գերադասեց չկռվել դարերից ի վեր կռվախնձոր դարձած Հայաստանի համար, այլ խաղաղությամբ այն բաժանել միմյանց միջև: 387 թ. կատարվեց Հայաստանի առաջին բաժանումը, որի հետևանքով Հայաստանի մեծ մասը (Հռոմեական բաժնից 4 անգամ ավելի) անցավ Պարսկաստանին:

Պարսից բաժնում էին հայոց մայրաքաղաքները և կաթողիկոսությունը: Հայաստանից անջատվեցին Գուգարք (միացվեց Վրաստանին), Արցախ, Փայտակարան, Ուտիք (տրվեցին Աղվանքին), Աղձնիք, Կորճեք և Նոր–Շիրական նահանգները (միացվեցին Իրանին), որպեսզի Հայաստանը մեկընդմիշտ թուլացվի և զրկվի անկախությունը վերականգնելու հնարավորությունից: Այդպիսով Մեծ Հայքը որպես ինքնուրույն և միասնական պետություն հոշոտվեց և դադարեց գոյություն ունենալուց:

387 թ. տենդից վախճանվեց Արշակ III–ը, և Հռոմեական կայսրը իր բաժնում վերացրեց հայոց թագավորությունը, այնտեղ նշանակելով հռոմեական կառավարիչ–իշխանների՝ կոմեսների: Պարսից արքան գերադասեց իր բաժնում պահպանել հայոց թագավորությունը, որպեսզի հայ նախարարներին սիրաշահի և կտրի հավատակից Հռոմից: Վռամշապուհ Արշակունու (388–414 թթ.) ժամանակ՝ 395 թ. հռոմեական կայսրությունը մասնատվեց արևմտյան (Հռոմ կենտրոնով) և արևելյան մասերի: Վերջինս կոչվեց Բյուզանդիա՝ իր մայրաքաղաք Բյուզանդիոնի (330 թվականից հետո կոչվել է Կոստանդնուպոլիս) անունով:

Վռամշապուհի մահվանը հաջորդած շրջանում հայ նախարարների խնդրանքով պարսից Վռամ արքան հայոց թագավոր նշանակեց Վռամշապուհի 18 ամյա որդուն՝ Արտաշեսին (422–428 թթ.), որն անշրջահայաց կերպով ավելի թուլացրեց կենտրոնական իշխանությունը: Հայ նախարարները պարսից արքայից խնդրեցին գահընկեց անել Արտաշեսին և Հայաստանի կառավարիչ նշանակել պարսիկի: Պարսից արքան սիրով ընդառաջեց հայ նախարարներին և նրանց պահանջը օրինական հիմքերի վրա դնելու նպատակով իր մայրաքաղաք Տիզբոնում դատ կազմակերպեց, որտեղ նախարարների պահանջով գահընկեց արվեցին Արտաշեսը և Սահակ կաթողիկոսը: Այդպիսով 428 թ. վերացավ հայոց Արշակունիների թագավորությունը նաև պարսկական բաժնում, որը վերածվեց պարսկական

մարզի (մարզպանության), պարսիկ մարզպանի գլխավորությամբ: Բայց քանի որ Հայ նախարարները պահպանեցին իրենց կալվածքները, ժառանգական իրավունքները, ուստի Հայաստանը չդարձավ պարսկական սովորական մարզերից մեկը և մնաց որպես կիսանկախ երկիր: Հայաստանի առաջին մարզպանը Վեհմիհրշապուհն էր (430–438), որին հաջորդեց Վասակ Սյունեցին (438–451):

450–451 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Թեև Հայաստանը հարկ և զորք էր տալիս սասանյան արքունիքին, բայց դա չբավարարեց պարսից Հազկերտ II թագավորին, որը կամենում էր Հայաստանը դարձնել Պարսկաստանի մի մասը ոչ միայն քաղաքական, վարչական առումով, այլև կրոնով ու լեզվով: Հայերին ձուլելուն խանգարում էր քրիստոնեական հավատը: Եկեղեցին թուլացնելու նպատակով այն հարկատու դարձվեց, զրկվեց դատական իշխանությունից, որը տրվեց պարսիկ հոգևորականի՝ մոգպետի: Խիստ ծանրացվեցին բնակչության հարկերն ու տուրքերը: 449 թ. Հազկերտը հատուկ նամակով հայ, վրաց և աղվանից նախարարներից պահանջեց հավատափոխ լինել, ընդունել Պարսկաստանի պաշտոնական կրոնը՝ զրադաշտականությունը (կրակապաշտությունը): Հազկերտի պահանջը քննելու նպատակով հայ նախարարները և հոգևորականները Արտաշատում ժողով գումարեցին, որտեղ միաձայն մերժեցին հավատափոխ լինելու առաջարկը: Հազկերտն իր մայրաքաղաք Տիզբոն կանչեց հայ նախարարներին, հայերին դավանակից վրաց և աղվանից իշխաններին: 450 թ. Տիզբոն մեկնած հայ նախարարները ստիպված առերես, կեղծ կերպով ընդունեցին պարսից կրոնը և փրկվեցին մահապատժից: Հազկերտը նախարարներին (այդ թվում նաև Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցուն և հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանին) 700 մոգերի հետ ուղարկեց Հայաստան՝ կրակապաշտություն տարածելու: Հասնելով Հայաստանի սիրտը՝ Այրարատ նահանգ, Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքում մոգերը սկսեցին քանդել եկեղեցիները, հիմնել կրակապաշտական աղոթատեղեր: Բայց Ղևոնդ քահանան և ուրիշ հոգևորականներ իրենց կրակոտ ելույթներով ոտքի հանեցին ժողովրդին, որը ջարդ տվեց մոգերին: Կեղծուրաց հայ նախարարներն անցան ապստամբած ժողովրդի կողմը: Ապստամբները Այրարատը և մյուս շրջանները մաքրեցին պարսից կայազորներից: Վասակ մարզպանը ապստամբության հաջողությունը տեսնում էր Բյուզանդիայի օգնու-

թյան մեջ: Բայց վերջինս հրաժարվեց հայերին օգնելուց, քանի որ Պարսկաստանի հետ կնքված պայմանագրով պարտավորվել էր չմիջամտել Հայաստանի գործերին: Ուստի Վասակը անհեռանկար համարեց ապստամբությունը և կես ճանապարհից ետ դարձավ, ջանալով սիրաշահել պարսիկներին, որոնց հորդորով աշխատեց ժողովրդին ետ պահել ապստամբությունից: Բայց ապստամբները, Վարդանի գլխավորությամբ, շարունակեցին պայքարը:

Վարդանը զորքով օգնության հասավ ապստամբ աղվաններին և Խաղխաղ քաղաքի մոտ ջարդեց պարսիկ զորքին, ապա վերադարձավ Հայաստան: Վասակն այդ ընթացքում Այրարատից հեռացրեց հայոց զորքը և փոխարենը տեղակայեց պարսից կայազորներ: Սակայն Վարդանը ցրեց դրանք, հալածեց Վասակին և նրա կողմնակիցներին, կազմեց նոր կառավարություն՝ իր գլխավորությամբ: Ժողովուրդը պառակտվեց երկու մասի՝ Վարդանի կողմնակիցների (Վարդանանք) և Վասակի կողմնակիցների:

Հայերին վերջնականապես ծնկի բերելու և բռնի ուժով կրոնափոխ անելու համար 451 թ. ապրիլին Հազկերտը մեծ (ավելի քան 100 հազարանոց) զորք ուղարկեց Հայաստան: Վարդանն իր կողմնակից նախարարների զորամասերը (մոտ 60 հազար) հավաքեց Արտաշատում, որտեղ զորատես անցկացրեց, հայ ռազմիկներին կոչ արեց աներկյուղ մարտի մեկնել, պատվավոր մահը դերադասել անվայել, ստոր կյանքից: Պարսից և հայոց զորքերը միմյանց հանդիպեցին Վասպուրականի Արտազ գավառում, Տղմուտ գետի ափին, Ավարայրի դաշտում, որտեղ հայոց զորքը սովորականի պես բաժանվեց երեք մասի՝ կենտրոնի, աջ և ձախ զորաթևերի: 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը: Վարդանը հայոց այրուձիով դրոհեց պարսից զորքի կենտրոնի վրա, ետ շպրտեց նրան՝ մխրճվելով թշնամու զորաշարքերի մեջ: Բայց պարսիկներին հաջողվեց գերակշռող ուժերով (որոնք ունեին 13 մարտական փիղ) շրջապատել Վարդանին, որը կռվեց մինչև վերջին շունչը և հերոսաբար զոհվեց: Ավարայրի հայ նահատակները սրբացվեցին հայոց եկեղեցու կողմից, որն ամեն տարի փետրվարին նշում է Վարդանանց հերոսների տոնը:

Ավարայրում պարսից զորքը թանկ վճարեց հաղթանակի համար՝ կորցնելով 3544 մարդ (հայերից զոհվեցին 1036 ռազմիկ): Հօդս ցնդեցին հայերին կրոնափոխ անելու, Հայաստանը ինքնավարությունից զրկելու ծրագրերը: Պարսից արքունիքը ստիպված եղավ վերականգնել հայ նախարարների ինքնավար իրավունքները, հանդուրժել քրիստոնեությունը:

ՀԱՅԵՐԻ 481–484 ԹԹ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Սակայն վաղանցուկ էր Սասանյան արքաների հանդուրժող վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: 470-ական թվերին նրանք վերստին որդեգրեցին Հայաստանի ինքնավարությունը վերացնելու, հայերին հավատափոխ անելու և ձուլելու քաղաքականությունը: Հայ նախարարների հզորության հիմքը՝ հողատիրությունը, քայքայելու նպատակադրումով պարսից արքունիքը նախարարական տոհմերի կրտսեր անդամներին՝ սեպուհներին արտոնեց հողեր ժառանգելու իրավունքը: Առաջ քաշվեցին ուրացողներն ու պարսից պաշտոնյաներին քծնողները: Երկրի հայրենասեր ուժերի իրավունքները ոտնահարվեցին: Ստեղծված պայմաններում հայերը ջերմորեն արձագանքեցին 481 թ. Վրաստանում պարսիկների դեմ բռնկված ապստամբությանը և Վահան Մամիկոնյանի (Ավարայրի հերոս Վարդանի եղբոր որդին) գլխավորությամբ ոտքի ելան իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանելու: Հայ ապստամբները առաջին հարվածն ուղղեցին Դվինին, որտեղ նստում էր Հայաստանի պարսիկ մարզպանը: Սրընթաց հարձակումով Վահանը ջախջախեց Դվինի պարսից զորքին, մարզպանը փախուստով ազատվեց: Ապստամբների դեմ զորք ուղարկվեց, որը 481 թ. Մասիսի ստորոտում, Ակոռի գյուղի մոտ պարտություն կրեց: Ապստամբները կազմեցին կառավարություն՝ Սահակ Բագրատունու գլխավորությամբ, սպարապետ դարձավ Վահանը: 482 թ. պարսից արքան նոր զորք ուղարկեց ապստամբների դեմ: Սակայն Ներսեհապատ գյուղի մոտ (Արտազ գավառում) Վահանը փայլուն հաղթանակ տարավ: Նույն թվին վրաց Վախթանգ I թագավորի խնդրանքով հայոց զորքը Վահանի և Սահակ Բագրատունու գլխավորությամբ մեկնեց Վրաստան՝ ապստամբներին օգնելու: Բայց վրաց իշխանների մի մասը գործակցում էր պարսիկներին, ուստի Քռի ճահճուտներում՝ Ճարմանայնի վայրում հայ-վրացական միացյալ զորքերը պարտվեցին: Մարտում սպանվեցին Սահակ Բագրատունին և ուրիշներ: Վերադառնալով Հայաստան՝ Վահանը 483 թ. դիմադրավեց պարսից զորքի նոր հարձակմանը, պարտության մատնեց նրան և շարունակեց պարտիզանական կռիվներ մղել պարսիկների դերակշիռ ուժերի դեմ (հիմնականում Բյուզանդիային սահմանակից իր տիրույթ Տայք նահանգում):

484 թ. պարսից զորքը ծանր պարտություն կրեց Միջին Ասիայում հոնական ցեղերի (Հեփթաղների) դեմ մղած կռիվներում, սպանվեց նաև պարսից Պերոզ արքան, որին փոխարինած Վաղարշը փոխեց քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: 484 թ. Նվարսակ գյուղում (Հայ-պարսկական սահմանագլխին) կնքված պայմանագրով Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնավարությունը, քրիստոնեական հավատը

ազատ դավանելու իրավունքը, վերականգնվեցին նախարարների ժառանգական իրավունքները: 485 թ. Հայաստանի մարզպան դարձավ Վահան Մամիկոնյանը:

ՀԱՅԵՐԻ 539 ԵՎ 548 ԹԹ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

451 թ. Քաղկեդոն քաղաքում (Կ. Պոլսի մոտ) կայացած քրիստոնեական եկեղեցիների 4-րդ տիեզերաժողովում որոշում ընդունվեց Քրիստոսի երկու բնության մասին: Հայոց և Արևելքի մյուս եկեղեցիները չընդունեցին այդ ժողովի որոշումը և պահպանեցին նախկին դավանանքը՝ միաբնակությունը, ըստ որի Քրիստոսն ունի մեկ՝ աստվածային բնություն: Քաղկեդոնի ժողովի որոշումների հետևանքով քրիստոնեական եկեղեցին պառակտվեց: Այդ որոշումների հետևորդները կոչվեցին քաղկեդոնականներ կամ երկաբնակներ, հակառակորդները՝ միաբնակներ: 506 թ. Դվինի եկեղեցաժողովում միաբնակությունը պաշտոնապես ճանաչվեց որպես Հայոց եկեղեցու դավանանք: Բյուզանդական եկեղեցին Հուստինիանոս I կայսեր օրոք (527–565 թթ.) վերջնականապես ընդունեց քաղկեդոնականությունը և հալածանքներ սկսեց Հայոց եկեղեցու դեմ, ջանալով փոխել նրա դավանանքը և զրկել ինքնուրույնությունից:

Հայաստանի Բյուզանդական մասում 528 և 535 թթ. մտցրած օրենքներով վերացվեցին Հայ նախարարների ինքնավար իրավունքները, ծանրացվեցին հարկերը, սաստկացավ դավանական խտրականությունը: Հայերը չհանդուրժեցին և 539 թ. ապստամբեցին, սպանելով Հայաստանի բյուզանդական մասի կառավարչին: Ապստամբների դեմ զորք ուղարկվեց, բայց հայերը հաղթանակ տարան, սպանելով նաև բյուզանդական զորքերի հրամանատարին:

548 թ. կայսրության մայրաքաղաքում ազդեցիկ հայ Արշակունիները՝ Արտավանը և Հովհաննեսը մահափորձ ձեռնարկեցին կայսեր դեմ, բայց ձերբակալվեցին և պատժվեցին: Հայերը շարունակեցին ծառանալ կայսրության հայահալած քաղաքականության դեմ, որն ավելի ու ավելի էր զգալ տալիս իրեն: Հատկապես ուժեղացան դավանական հալածանքները: Դրանց հակահարված տալու համար 554 թ. Դվինում հրավիրվեց նոր եկեղեցաժողով, որին մասնակցում էին Հայաստանի բոլոր խավերի ներկայացուցիչները: Ժողովը դատապարտեց Բյուզանդիայի պաշտոնական դավանանքը՝ քաղկեդոնականությունը և ավելի ամրապնդեց Հայոց եկեղեցու դավանական ինքնուրույնությունը:

571–572 թթ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ

560-ական թվականներին սասանյան արքաները խստացրին իրենց քաղաքականությունը Հայաստանում. ծանրացվեցին հարկերը, վերստին փորձեր արվեցին կրոնափոխ անել հայերին: Հայաստանի պարսիկ մարզպան Սուրենը ավերեց եկեղեցիները, Դվինում հիմնեց կրակատուն, հալածեց հայրենասեր ուժերին: Այդ ամենը լցրեց հայերի համբերության բաժակը: 571 թ. Վարդան Մամիկոնյանի («Կարմիր» մականունով) գլխավորությամբ հայերը ոտքի ելան: Ապստամբներին մեծ օժանդակություն ցույց տվեց Հայոց կաթողիկոս Հովհաննես II-ը: 572 թ. փետրվարին Վարդանը ապստամբների 20 հազարանոց զորքով ջախջախեց պարսից բանակին, սպանեց Սուրեն մարզպանին: Պարսից թագավորը նոր զորք ուղարկեց ապստամբների դեմ, սակայն այս անգամ ևս Վարդանը հաղթանակ տարավ: Հայերին օգնում էին բյուզանդացիները: Դա առիթ դարձավ պարսկա-բյուզանդական նոր պատերազմի, որը շարունակվեց 20 տարի: Հայերին օգնում էին նաև դավանակից վրացիները, աղվանները, աբխազները: Հայաստանը խիստ տուժեց պատերազմից: Ստեղծված ծանր պայմաններում Բյուզանդիան շարունակեց դավանական հալածանքները դաշնակից հայերի դեմ:

590 թ. պարսից արքայի դեմ վերջինիս զորապետ Վահրամ Չուբինի ապստամբության հետևանքով Բյուզանդիան տիրացավ Հայաստանի մեծ մասին: 591 թ. կնքված հաշտությամբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց երկու զորեղ հարևանների միջև: Այս անգամ պարսկական բաժնում մնացին միայն Հայաստանի Սյունիք, Վասպուրական, Մոկք նահանգները և Այրարատի Ոստան. Հայոց դավառը՝ Դվին քաղաքով, որտեղ էր կաթողիկոսարանը: Բյուզանդացիները հիմնեցին հակաթոռ՝ քաղկեդոնական կաթողիկոսություն, որի նստավայրը դարձավ Ավան գյուղաքաղաքում կառուցված եկեղեցին (այժմ կիսականգուն): Բայց Հայ ժողովուրդը չընդունեց հակաթոռ Հովհան կաթողիկոսին, որը ստիպված հեռացավ Կարին: Մի քանի տարի հետո VII դ. սկզբին պարսից Խոսրով II արքան վերադրավեց Հայաստանի կորցրած երկրամասերը: Հայ և բյուզանդական եկեղեցիների միջև եղած դավանական տարաձայնությունները դրականապես ազդեցին Հայաստանի, Հայոց եկեղեցու հանդեպ Սասանյանների վարած քաղաքականության վրա: Խոսրով II-ը որոշ արտոնություններ շնորհեց հայ նախարարներին և եկեղեցուն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

630–ական թվականներին Արաբական թերակղզու ցեղերը միավորվեցին Մուհամմեդ մարգարեի քարոզչությամբ առաջացած նոր կրոնի՝ իսլամի դրոշի ներքո, ստեղծեցին զորեղ պետություն՝ Արաբական խալիֆայությունը: Նվաճումների միջոցով կարճ ժամանակում այն վերածվեց աշխարհակալ տերության, որի հարվածների տակ 637 թ. ընկավ նաև Պարսկաստանը: 640 թ. արաբական զորագնդերը առաջին անգամ մտան Հայաստան (Միջագետքից), գրավեցին Դվինը, երկիրը մատնեցին ավարառության, շատերին գերեվարեցին: 643 թ. արաբները երկրորդ անգամ (Ատրպատականից) մտան Հայաստան՝ հասնելով Այրարատ նահանգ: Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին պարտության մատնեց արաբական մի զորաջոկատի: Թե՛ այս և թե՛ երրորդ արշավանքի ժամանակ, որ կատարվեց 650 թ. , դարձյալ Ատրպատականից, արաբները չհաստատվեցին Հայաստանում: Նրանք միայն հետախուզական, ավարառական նպատակներ էին հետապնդում:

Արաբական զորապետների հետ հայ նախարարների կնքած պայմանագրերով վերջիններս պահպանեցին իրենց հողատիրական իրավունքները և իշխանությունը:

652 թ. Թեոդորոս Ռշտունին արաբների հետ կնքեց պայմանագիր, որով Հայաստանը պարտավորվում էր հարկ և զորք տալ արաբներին: Փոխարենը նրանք Հայաստանում չպետք է զորք տեղակայեին: Հայ հոգևորականությունը Ներսես III կաթողիկոսի գլխավորությամբ դեմ էր մահմեդական արաբներին մերձենալուն, մինչդեռ հայ նախարարները, որոնց ձեռքում էր երկրի ռազմուժը և քաղաքական իշխանությունը, կողմ էին արաբների հետ դաշինքին, քանի որ Բյուզանդիան Հայաստանին չէր օգնում: Բյուզանդիայի կայսրը հայերից պահանջեց հրաժարվել այդ պայմանագրից: Մերժում ստանալով, նա 100 հազարանոց զորքով արշավեց Հայաստան և հասավ Դվին: Արաբական օժանդակ զորամասի և հայոց այրուձիի միջոցով Թեոդորոս Ռշտունին բյուզանդացիներից մաքրեց Հայաստանի մեծ մասը:

655 թ. հայ նախարարներն օգտվեցին Արաբական խալիֆայությունում բռնկված ապստամբությունից, Հայաստանից արաբական զորքերի հեռացումից և խզեցին կապերը արաբների հետ: Բյուզանդիայի դիտությամբ հայոց իշխան հռչակվեց Համազասպ Մամիկոնյանը: Բայց սրա եղբոր՝ հայոց իշխան Գրիգորի օրոք 660–ական թթ. հայերը հակվեցին արաբների կողմը:

Արաբները վերջնականապես Հայաստանը նվաճեցին 701 թվականին: Նրանք Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը միավորեցին մեկ վարչա-

միավորի մեջ և այն կոչեցին Արմինիա, որի կենտրոնը սկզբում Դվինն էր, ապա նաև Պարտավը: Արմինիան կառավարում էր արաբ ոստիկանը, իսկ բուն Հայաստանը՝ հայոց իշխանը՝ հայ նախարարներից: Հայ իշխանները պահպանեցին իրենց կալվածքները, ժառանգական իրավունքները, որոնք սակայն խլվում էին ապստամբության ժամանակ: Որպեսզի հենարան ստեղծեն Հայաստանում, արաբներն այնտեղ դաղթեցրին մահմեդական ցեղերի՝ ութմանիկներին, կայսիկներին և ուրիշների: Այս ցեղերը Վանա լճին հարող գավառներում և այլ երկրամասերում ստեղծեցին իշխանություններ (ամիրայություններ)՝ մեծապես վտանգելով Հայաստանի քաղաքական միասնությանը, հայ բնակչության միատարրությանը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Արմինիայի առաջին ոստիկանը ծանրացրեց Հայաստանի հարկերը՝ հողահարկը և գլխահարկը, ջանաց սահմանափակել հայ նախարարների իրավունքները: Ի պատասխան նրա գործադրած բռնությունների, 703 թ. հայ նախարարները սպարապետ Սմբատ Բագրատունու գլխավորությամբ ապստամբեցին և Արաքսի ափին, Վարդանակերտ ավանում (այժմ Արմավիրի մարզի Մարգարա գյուղ) ջարդեցին իրենց դեմ ուղարկված պատժիչ զորամասին: 705 թ. ոստիկանի փոխանորդը դաժան հաշվեհարդար տեսավ հայ նախարարների նկատմամբ և խաբեությամբ նրանց հավաքելով Նախիջևանի ու մոտակա Խրամ ավանի եկեղեցիներում, մոտ 800 հոգու ողջակիզեց: Մանր հարկերի, կրոնական հալածանքների պատճառով 748 թ. հայերը վերստին ապստամբեցին՝ Գրիգոր և Մուշեղ Մամիկոնյանների գլխավորությամբ, բայց արաբներին հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը:

Ավելի հուժկու և համաժողովրդական բնույթ ուներ հայերի 774–775 թվականների ապստամբությունը, որը ևս ուղղված էր խալիֆայության բռնացումների, ծանր հարկերի և կրոնական հալածանքների դեմ: Շարժումն սկսվեց Կումայրի ավանից (այժմ Գյումրի), Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանների գլխավորությամբ: Ապստամբները մի քանի հաղթանակներ տարան, որից ոգևորված՝ էլ ավելի մեծ թափով ծավալեցին շարժումը: Սակայն ապստամբների ուժերը գործում էին ոչ միասնաբար: Նրանց մի մասը հարձակվեց Կարին քաղաքի արաբական զորքերի վրա, իսկ մյուսը՝ Արծրունիների գլխավորությամբ շարժվեց Վանա լճի ափին գտնվող Արճեշ քաղաքի արաբական կայազորի դեմ: 775 թ. ապրիլի 15-ին Արճեշի ճակատամարտում արաբների գերակշռող ուժերը պարտության մատնեցին հայերին, որոնք կորցրին 1500 մարդ (արաբների կորուստներն

ավելի էին): Հաջորդ հարվածը արաբները հասցրին Կարինը պաշարած Հայ ապստամբներին, որոնք լսելով որ արաբների զորքը շարժվում է իրենց դեմ, թողեցին Կարինի պաշարումը և ուղղվեցին այդ զորքի դեմ, որին հանդիպեցին Արածանի գետի ափին, Բագրևանդ գավառում: 775 թ. ապրիլի 24-ին Արձնի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայերը սկզբում ետ շպրտեցին արաբական զորամասերին, բայց մեծ համալրումներ ստանալով, արաբները կարողացան հաղթանակ տանել: Հայերը կորցրին 3 հազար հոգի (մեծ մասը շինականներ):

Հայաստանում նոր և հուժկու ապստամբություն բռնկվեց 850 թ., երբ թուլացած խալիֆայությունը ճիգեր էր գործադրում իր նվաճած երկրների, այդ թվում նաև Հայաստանի վրա գերիշխանություն պահպանելու համար: Այդ նպատակով խալիֆան 850 թ. զորքով Հայաստան ուղարկեց Ցուսուֆ զորապետին, որը խաբեությամբ գերեց հայոց իշխան Բագարատ Բագրատունուն, բռնություններ գործադրեց խաղաղ բնակչության նկատմամբ: Նրա դեմ ոտքի ելան Խութ և Հարևան Սասուն գավառների լեռնցիները՝ խութեցի Հովնանի գլխավորությամբ: Հայ ապստամբները ջախջախեցին խալիֆայի զորքը՝ սպանելով Ցուսուֆին: Սակայն խալիֆան չհրաժարվեց Հայաստանը ծնկի բերելու մտքից և 851 թ. այնտեղ ուղարկեց ազդությամբ թուրք Բուղա զորապետին՝ 100 հազարանոց թուրքական վարձկան զորքով: Բուղան դաժանորեն պատժեց ապստամբներին՝ արյամբ ողողելով Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Հյուսիսային Կովկասը: Նրան հերոսական դիմադրություն ցույց տվեցին Արցախը, Վասպուրականը: Բուղային հաջողվեց ձերբակալել Հայ նախարարների մեծ մասին և աքսորել Արաբիա: Բայց 855 թ. նա ստիպված հեռացավ Հայաստանից, որտեղ շարունակեցին իշխել Հայ նախարարները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ V–VIII ԴԱՐԵՐՈՒՄ

V դարը հայ մշակույթի պատմության ոսկեդարն է: Մեսրոպ Մաշտոցը հղացավ հայերեն գրեր ստեղծելու գաղափարը, որին հաղորդակից դարձրեց Վռամշապուհ արքային և Սահակ կաթողիկոսին: Նրանք ըստ ամենայնի օժանդակեցին Մաշտոցին և մի քանի աշակերտների հետ ուղարկեցին Միջագետքի Եդեսիա քաղաք (որը նշանավոր կրթական կենտրոն էր) ՝ հայերեն գրեր ստեղծելու համար: Եդեսիայում հայերեն գրեր հնարելով, Մաշտոցն անցավ բյուզանդական սահմաններում գտնվող Սամոսատ քաղաք, որտեղ հույն դեղագրի օգնությամբ վերջնական տեսքի բերեց հայերեն (թվով 36) տառերը, դրանց անուններ տվեց՝ դասավորելով հունական այբուբենի ձևով: Ըստ Մաշտոցի կենսագիր Կոր-

յունի՝ հայերեն գրերի գյուտը կատարվեց Մաշտոցի մահվանից (440 թ.) 35 տարի առաջ, այսինքն 405 թ.: Վերադառնալով հայրենիք, Մաշտոցը դպրոցներ բացեց Հայաստանի տարբեր շրջաններում:

Մեսրոպ Մաշտոցը թաղված է Աշտարակի շրջանի Օշական գյուղում, որտեղ այժմ էլ պահպանվում է նրա դերեզմանը:

Հայերեն գրերի ստեղծումից հետո զարկ տրվեց ինքնուրույն և թարգմանչական գրականությանը: Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևն առաջին անգամ թարգմանեցին Աստվածաշունչը, որը դարձավ նաև առաջին հայերեն դասագիրքը:

V դարում բուռն զարգացում ապրեց նաև հայ պատմագրությունը, որն արտացոլեց օտար տիրապետության դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը և պետական կենսունակությունը: Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունը գրեց «Վարք Մաշտոցի» գործը, որտեղ տրված է Մաշտոցի գործունեության, գրերի գյուտի պատմությունը: Նույն դարի պատմագիր Ագաթանգեղոսը «Պատմություն Հայոց» երկում շարադրեց Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությունը: Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» գրքում արտացոլված է Հայաստանի 330–387 թթ. պատմությունը:

Հայ պատմագիտական միտքը նոր աստիճանի հասցրեց պատմահայր Մովսես Խորենացին, որը ծնվել է մոտ 410 թ. Տարոն գավառի Խորոնք գյուղում: Մաշտոցին և Սահակին աշակերտելուց հետո նա ուղարկվեց Ալեքսանդրիա ուսանելու: 440 թ. վերադարձավ Հայաստան և զբաղվեց գիտական և լուսավորչական գործունեությամբ: Նրա «Հայոց պատմություն» երկում շարադրված է Հայոց պատմությունը սկսած Հնագույն ժամանակներից մինչև 440 թ.: Խորենացին ստեղծեց կուռ և ամբողջական ժամանակագրություն: Նրա «Հայոց պատմությունը» երկար դարեր Հայաստանի դպրոցներում օգտագործվել է որպես դասագիրք:

Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գրքում հյութեղ լեզվով պատմվում է հայերի 450–451 թթ. ազատագրական պատերազմի մասին: Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց» գործում շարադրված է Հայոց պատմությունը՝ սկսած 387 թվականից մինչև 484 թ.: VII դ. պատմագիր Սեբեոսի «Պատմություն» երկասիրության մեջ տրված է Հայաստանի մարզպանական շրջանի և արաբական առաջին արշավանքների՝ մինչև 661 թ. ընդգրկող պատմությունը: Նույն դարի մատենագիր Մովսես Կաղանկատվացին «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում շարադրել է հայկական Աղվանքի, այսինքն Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգների («աշխարհների») պատմությունը: VIII դ. պատմագիր Ղևոնդը իր «Պատմություն» երկում ներկայացրել է 620–ից մինչև 780–ական թվականներն ընդգրկող հայոց պատմությունը:

Նշանավոր գիտնական Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքումը») աշխատության մեջ ոչնչացնող քննադատության ենթարկեց զրադաշտական կրոնը: V–VI դարերի փիլիսոփա Դավիթ Անհաղթը «Սահմանք իմաստասիրության» («Փիլիսոփայության սահմանումները») և մյուս աշխատությունների մեջ փիլիսոփայության նպատակը, բացի աշխարհի ճանաչողությունից, համարում է նաև մարդկության բարոյական մաքրագործումը:

VII դարում է ապրել նշանավոր գիտնական Անանիա Շիրակացին, որը զբաղվում էր նաև մանկավարժական գործունեությամբ: Նա Հայաստանում առաջինը զարգացրեց ճշգրիտ գիտությունները (աշխարհում մեզ հասած թվաբանության ամենահին դասագիրքը Շիրակացու կազմածն է): Գրել է մաթեմատիկական, տիեզերագիտական, տոմարագիտական, չափագիտությանը, աշխարհագրությանը և պատմությանը վերաբերող գործեր: Շիրակացին մեծ տեղ էր հատկացնում փորձին: Նա հետևում էր երկրի գնդաձևության մասին հին աշխարհի մեծ մտածող Արիստոտելի տեսությանը, գտնելով, որ երկիրն ու մյուս մոլորակները պտտվում են իրենց առանցքի շուրջը և ունեն ձգողական ուժ: Նա որոշեց նաև տիեզերական մարմինների հեռավորությունը, արեգակի և լուսնի խավարումները և այլն: Նրա «Աշխարհացույց» երկում նկարագրված են հին Հայաստանի 15 նահանգները («աշխարհները»)՝ իրենց գավառներով, բնական ու կենդանական աշխարհով:

Զարգացավ նաև հայ ճարտարապետությունը: Կառուցվեցին շքեղ պալատներ, դղյակներ, պաշտամունքային կառույցներ՝ վանքեր, եկեղեցիներ: IV–V դարերի հայկական եկեղեցիներն ունեին պարզ հորինվածք: Նրանց հատակագիծը երկայնակի էր և քառանկյուն: Ներսում ունեին երկշարք սյուներ (երբեմն առանց սյուների էին): Այդ եկեղեցիներն ունեին հարթ տանիք՝ առանց գմբեթի: V դ. վերջից եկեղեցիներն սկսեցին կառուցել խաչաձև հիմքով և գմբեթներով: Այդպիսին էր 480-ական թթ. Վահան Մամիկոնյանի կողմից Էջմիածնի Մայր տաճարի տեղում կառուցած եկեղեցին, VII դ. կառուցված Հռիփսիմե և Գայանե եկեղեցիները Էջմիածնում: VII դարում կառուցվեցին նաև կլոր հիմքերով եկեղեցիներ: Դրանցից նշանավորը Զվարթնոցի եռահարկ եկեղեցին էր (Էջմիածնի մոտ): Նույնատիպ հորինվածք ունեին նաև Գառնիի, Եղվարդի և այլ եկեղեցիները: Վանական, եկեղեցական կառույցներն ունեին ճոխ զարդաքանդակներ, որմնանկարներ: V–VI դարերում սկզբնավորվեց հայ մանրանկարչությունը: Նկարազարդվեցին դրքերը (պահպանվել են VI–VII դարերի 4 մանրանկարներ, որոնք փակցվել են 989 թ. գրված՝ Էջմիածնի Ավետարանի փղոսկրե կազմին, իբրև պահպանակ):

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՑՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

850–851 թթ. Հայաստանում բռնկված ժողովրդական ապստամբությունից հետո թուլացած խալիֆայությունը քիչ էր խառնվում Հայաստանի ներքին գործերին: Օգտվելով դրանից՝ հայ նախարարները ընդլայնեցին իրենց իրավունքները: Հատկապես մեծ դեր սկսեցին խաղալ Բագրատունի, Սյունյաց և Արծրունի տոհմերը: Աշոտ Բագրատունին միավորեց հայ նախարարներին և դարձավ երկրի գերիշխան տերը: 855 թ. խալիֆան նրան ճանաչեց Հայոց սպարապետ, 862-ին՝ Հայաստանի իշխանաց իշխան, նրան վերապահելով հարկեր հավաքելու իրավունքը: Աշոտի եղբայր Աբասը կարգվեց Հայոց սպարապետ: Հայաստանում արաբ ոստիկանի իշխանությունը դարձավ ձևական և 875 թ. լրիվ վերացվեց: Աշոտ Բագրատունին փաստորեն դարձավ Հայոց անթագակիր արքան: 885 թ. նրան թագ ուղարկեց արաբական խալիֆան, ապա Աշոտին Հայոց թագավոր ճանաչեց նաև Բյուզանդիայի կայսրը: Այդպիսով Բագրատունիները վերականգնեցին 428 թ. ընդհատված Հայոց պետականությունը:

Աշոտ I-ը (885–890 թթ.) իր թագավորության մեջ միավորեց հայկական հողերը: Նրա նստավայրն էր Բագարան ավանը (Արաքսի մեջ Ախուրյանի թափվելու տեղում, հին Երվանդաշատի մոտ): Աշոտին էին ենթարկվում նաև Հայաստանի (Մանազկերտի, Ապահունիքի, Բերկրիի) արաբական ամիրաները: Նրա գերիշխանությունն ընդունեցին նաև վրաց և աղվանից իշխանները: Աշոտն ստեղծեց հզոր բանակ, պետական կառավարման համակարգ՝ հիմնականում շարունակելով Արշակունիների թագավորության ավանդները: Վերականգնվեցին նախարարական տոհմերի ժառանգական արտոնությունները, զսպվեցին կենտրոնախույս ուժերը, բարելավվեցին հարևան պետությունների հետ ունեցած հարաբերությունները: Աշոտ I-ի քաղաքական ուղեգիծը շարունակեց որդին՝ Սմբատ I-ը (890–913 թթ.): Արաբական խալիֆան թեև թագ ուղարկեց նրան, բայց միաժամանակ Ատրպատականի ամիրա Ափշինին իրավունք տվեց հավաքել Հայաստանի հարկերը: Դա խիստ սրեց Հայաստանի ու Ատրպատականի միջև եղած հարաբերությունները: Ափշինը պատրվակ դարձնելով Բյուզանդիայի հետ Հայաստանի կնքած դաշնագիրը, փորձեց զենքի ուժով իրականացնել հարկահանությունը: Սակայն Ափշինի զորքը 894 թ. Դողս գյուղում (Էջմիածնի մոտ) ծանր պարտություն կրեց և հեռացավ Հայաստանից: Խալիֆան չդադարեց Սմբատից հարկ պահանջել: Հայաստանի վիճակը հատկապես ծանրացավ 901 թ-ից հետո, երբ Ատրպատականի ամիրա դարձավ Ցուսուֆը, որը կարողացավ իր կողմը գրավել Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունուն և, նրան ճանաչելով Վասպուրականի թագավոր (908 թ.), հաջորդ տարի ներխուժեց Հայաստան: Ցուսուֆին օգնեց Գագիկ Արծրունին, որը սակայն ուշացումով զգաց իր սխալը և զենքն ուղղեց նրա դեմ: Որոշ

թուլամորթ հայ նախարարներ (որոնց թվում նաև Սմբատ I-ի հորեղբոր՝ Շապուհ սպարապետի որդի Աշոտը) հարեցին Ցուսուֆին, խիստ ծանրացնելով հայոց թագավորի դրությունը: Այն հուսահատական դարձավ հատկապես 910 թ. , Նիդ գավառի (Ապարանի շրջան) Ձկնավաճառ վայրում Սմբատի որդիներ Աշոտի և Մուշեղի գլխավորած հայոց զորքի պարտությունից հետո: Ցուսուֆն սկսեց անխնա ասպատակել երկիրը: Սմբատ I-ը ստիպված հանձնվեց Ցուսուֆին, որը նրան ենթարկեց դաժան խոշտանգումների, ապա սպանել տվեց (914 թ.)՝ մարմինը խաչելով Դվինի դարպասներից մեկի վրա:

Ցուսուֆի վայրագությունները լցրեցին հայերի համբերության բաժակը: Ժողովուրդը ոտքի ելավ իր պատիվն ու հայրենիքը պաշտպանելու համար: Թշնամիների սարսափը դարձավ Սմբատ I-ի որդին՝ Աշոտը, որը մանր զորախմբերով սրընթաց հարձակումներ գործելով, Հայաստանի զգալի մասը մաքրեց թշնամի հրոսախմբերից: Իր քաջության և մեծ կամքի համար Աշոտն ստացավ «Երկաթ» պատվանունը: Աշոտ Երկաթը թագավորեց 914–929 թթ., մայրաքաղաք դարձրեց Երազգավորս (Շիրակավան) գյուղաքաղաքը, Ախուրյանի աջ ափին (Գյումրիից ոչ հեռու): Սակայն Ցուսուֆը կարողացավ նրա դեմ հանել Աշոտ Շապուհյանին, նրան ճանաչելով հայոց թագավոր: Աշոտ II-ի դեմ ապստամբեց նաև իր աները՝ Գարդման գավառի տեր Սահակ Սնադան, որը ճնշվեց և կուրացվեց: Ապստամբեց նաև Ուտիքի իշխան Ցլիկ Ամրամը: Աշոտ II-ի դեմ թշնամական գործողություններ ձեռնարկեցին նաև Հայաստանում հաստատված արաբ զորապետներ Բեշիրը և Նասրը, որոնք ավարի մատնեցին Սևանա լճի ափամերձ շրջանները, սակայն պարտություն կրեցին տեղացի հայ իշխան Գևորգ Մարզպետունու կողմից: Դրանից հետո նրանք փորձեցին գրավել Սևանա կղզին և գերի վերցնել Աշոտ II-ին, որը սակայն լաստանավերով մի բուռն քաջերի հետ ափ ելավ և ջախջախեց թշնամուն: Աշոտ II-ին հաջողվեց նորից միավորել երկիրը, որը մաքրեց թշնամիներից և ձեռք բերեց լիակատար անկախություն: Նա չճանաչեց Ատրպատականի տիրոջ և խալիֆայի գերիշխանությունը և այլևս հարկագումար չմուծեց նրանց: Երկրում հաստատված խաղաղությունը շարունակեց նաև Աշոտ II-ի եղբոր՝ Աբասի (929–953) թագավորության տարիներին, երբ Հայաստանի մայրաքաղաք դարձավ անառիկ Կարս բերդաքաղաքը: Կարսում Աբասը կառուցեց Առաքելոց եկեղեցին (այժմ վերածվել է մզկիթի): Նրա հաջորդ Աշոտ III Ողորմածի (953–977) ժամանակ Բագրատունյաց թագավորությունը բուռն վերելք ապրեց: Անհրաժեշտ դարձավ հիմնել մշտական մայրաքաղաք: 961 թ. Անին հռչակվեց Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք: 963 թ. այն պարսպապատվեց: Կարճ ժամանակամիջոցում Անիում վեր խոյացան շքեղակառույց շինություններ:

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով տնտեսապես զորացած հայ նախարարները ավելի ինքնուրույնացան՝ ստեղծելով տեղական թագավորություններ Վանանդ գավառում՝ Կարս կենտրոնով (962 թ.), Գուգարքում՝ Լոռե մայրաքաղաքով (973 թ.), Սյունիքում՝ Կապան մայրաքաղաքով (987 թ.): Այս թագավորությունները թեև ընդունում էին Բագրատունի թագավորների գերիշխանությունը, բայց հաճախ նաև խախտում էին երկրի միասնությունը:

Գագիկ I-ին (990–1020) հաջողվեց վերականգնել Հայաստանի միասնությունը: Նրա օրոք Բագրատունյաց թագավորության հզորությունը խիստ աճեց: Դրանում մեծ ջանքեր ներդրեց Գագիկի կողմից սպարապետ նշանակված Վահրամ Պահլավունին: Երկրի սահմանները ընդարձակվեցին, ոչ մի թշնամի չէր հանդգնում ձեռք բարձրացնել Հայաստանի վրա: Գագիկը Տայք նահանգի զորաջոկատի օգնությամբ 998 թ. Ծումբ գյուղի մերձակայքում (Վանա լճի մոտ) ջախջախեց Ատրպատականի զորքին: Տևական խաղաղության շնորհիվ երկիրը բարգավաճեց, Անիում կառուցվեցին հոյակերտ շենքեր, Անիի մայր տաճարը (ավարտվեց 1001 թ.) և այլ եկեղեցիներ, ինչպես նաև իշխանատներ, կամուրջներ և այլն: Սակայն Գագիկ I-ի մահվանից հետո դրությունը փոխվեց: 1021 թ. Բյուզանդիան տիրացավ Վասպուրականի թագավորության հողերին: Գագիկ I-ին հաջորդեց ավագ որդին՝ Հովհաննես-Սմբատը (1020–1041 թթ.), որը վախենալով Բյուզանդիայի դավերից, կազմեց մի կտակ, ըստ որի՝ իր մահից հետո Անին և հարակից շրջանները հանձնվելու էին Բյուզանդիային: 1022 թ. Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձը այդ կտակը հանձնեց Տրապիզոն ժամանած Վասիլ II կայսրին:

Հովհաննես-Սմբատի մահվանից (1041 թ.) հետո բյուզանդասեր հայ մեծամեծերը որոնք իրենց շահերը վեր էին դասում երկրի ու ժողովրդի շահերից, կաթողիկոսի և Վեստ Սարգիս իշխանի գլխավորությամբ եռանդուն գործունեություն ծավալեցին Անին Բյուզանդիային հանձնելու համար: Հայրենասեր ուժերը համախմբվեցին Վահրամ Պահլավունի սպարապետի շուրջը և ջախջախեցին Անիի վրա հարձակված բյուզանդական 100 հազարանոց բանակին: 1042 թ. Վահրամը հայոց թագավոր հռչակեց Հովհաննես-Սմբատի եղբորորդի 18-ամյա Գագիկ II-ին (1042–1045 թթ.), որը 1043 թ. Բջնի ամրոցի մոտ ջախջախեց Հայաստան թափանցած թյուրքական ցեղերին, սանձեց բյուզանդասեր տարրերին: 1044 թ. բյուզանդական զորքերը վերստին հարձակվեցին Անիի վրա, սակայն Վահրամ սպարապետը և Գագիկ II-ը պարտության մատնեցին նրանց: Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մոնոմաքոսը Վեստ Սարգսի խորհրդով Գագիկ II-ին հրավիրեց Կ. Պոլիս, իբր իր հետ բանակցելու համար: Գագիկը հրաժարվեց գնալ, բայց, ի վերջո, կաթողիկոսի և Վեստ Սարգսի խորհրդով մեկնեց կայսեր

մոտ, Անիի դարպասների բանալիները և իշխանությունը վստահելով կաթողիկոսին և Վեստ–Սարգսին, որոնք սակայն բանալիներն ուղարկեցին կայսրին: Վերջինս Գագիկին համոզեց Անին զիջել իրեն և փոխարենը կալվածքներ ստանալ Բյուզանդիայում: Գագիկը քանիցս մերժեց կայսրին, բայց, ի վերջո, ստիպված եղավ համաձայնել: Անիի պաշտպանները դրանից խիստ հուսաբեկված՝ 1045 թ. առանց դիմադրության Անին հանձնեցին Բյուզանդիային: Այդպիսով դադարեց գոյություն ունենալուց Հայոց Բագրատունիների թագավորությունը: Հայաստանը ընկավ Բյուզանդիայի գերիշխանության տակ, որը թյուրք–սելջուկյան ցեղերի վերահաս արշավանքների նախօրյակին անհեռատես կերպով Հայաստանից դուրս հանեց ռազմիկ տարրը, երկիրը՝ թուլացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ IX–XI ԴԱՐԵՐՈՒՄ

Բագրատունյաց թագավորության ժամանակ ձեռք բերված խաղաղության պայմաններում Հայաստանը տնտեսական վերելք ապրեց, զարգացան գյուղատնտեսությունը, անասնապահությունը, արհեստները և առևտուրը, յուրացվեցին նոր հողեր, որոնք կոչվում էին «նորք» («նոր» բառից), փորվեցին ջրանցքներ: Ստեղծված բարենպաստ պայմաններում աճեց երկրի բնակչությունը, հասնելով մոտ 5 միլիոնի: Հողագործության մեջ գործադրվում էր եռադաշտային եղանակը, երբ հողը բաժանում էին 3 մասի, մեկը ցանում էին, երկրորդը՝ հերկում և թողնում որպես ցել, երրորդ հողակտորը մնում էր անմշակ վիճակում, որպեսզի հողը ուժ առնի, բարձրացվի բերրիությունը: Հողերը հերկելիս կիրառվում էր գութանը:

Նոր պայմաններում զարգացավ նաև ֆեոդալական հողատիրությունը: Նախարարական տոհմի անդամները՝ սեպուհները դարձան հողատեր, որի հետևանքով նախարարական հողատիրությունը բաժանվեց տոհմի անդամների միջև և առաջացան ֆեոդալական նոր իշխանություններ: Վերջիններս տնտեսապես անկախ էին և միայն անձնական, քաղաքական կախում ունեին մեծ (գահերեց) իշխանից: Ավելի մեծացավ ժառանգական տիրությունների (հայրենիք) թիվը: Հայրենատեր իշխանների զորությունը կազմվում էր մանր ազատներից, որոնք ծառայության դիմաց ստանում էին «պարգևականք» տիպի հողեր («խոստակ») ՝ առանց այն վաճառելու իրավունքի: Վանքերը, եկեղեցիները ընդլայնեցին հայրենիք համարվող իրենց կալվածքները՝ իշխանների կատարած նվիրատվությունների շնորհիվ: Ֆեոդալները, վանքերը իրենց հողերը նախկինի պես բաժանում էին շինականներին: Վերջիններս մշակում էին այն, փոխարենը վճարելով հարկեր, տուրքեր, որոնք

կազմում էին ֆեոդալների եկամուտի աղբյուրը: Գյուղացիներից վերցվող հիմնական հարկատեսակներն էին հողահարկը և գլխահարկը: Եկեղեցուն տրվում էր տասանորդ հարկ:

Զարգացավ նաև արհեստագործությունը թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում: Արհեստավորները ապահովված էին տեղական հումքով (հանքանյութերով, բրդով, կաշվով, ներկերով, փայտեղենով, կավով և այլն): Զարգացած արհեստներից էին՝ դարբնությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը, քարագործությունը, կավագործությունը, փայտամշակությունը, ոստայնանկությունը (ջուլհակություն), գորգագործությունը և այլն: Արհեստավորները կազմում էին համքարություններ («եղբայրություններ»), որոնք միավորում էին միևնույն արհեստով զբաղվողներին և նպատակ ունեին նրանց ապահովել շուկայով, հումքով, օգնել կարիքավոր արհեստավորներին: Արհեստների, քաղաքային կյանքի զարգացման շնորհիվ ընդլայնվեց ներքին և արտաքին առևտուրը: Դրան նպաստեցին Հայաստանով անցնող միջազգային տարանցիկ առևտրաուղիները, որոնց միջոցով առևտրական քարավանները Հնդկաստանից, Չինաստանից, Ցեյլոնից, Եգիպտոսից, Իրաքից և այլուստ բերում էին զանազան ապրանքներ՝ թանկարժեք քարեր, համեմունքներ, բամբակ և այլն: Հայաստանը արտահանում էր մետաղ, գորգեր, ցորեն, գինի, մեղր, ձեթ, չիր և այլն: Ռուսիայից Դերբենդի վրայով Հայաստան էին ներմուծում մորթեղեն, հագուստ, վուշ (կտավատ): Հայ բագրատունիները սեփական դրամ չհատեցին: Հայաստանում շրջանառության մեջ էին արաբական և բյուզանդական արծաթե, պղնձե դրամները, որոնք միջազգային լայն գործածություն ունեին և պահպանում էին իրենց արժեքը (վերջինս որոշվում էր դրամի պարունակած թանկարժեք մետաղի քաշով):

Հայաստանի առավել զարգացած, տնտեսապես բարգավաճող և առևտրաուղիներին հարող շրջաններում ծաղկում ապրեցին հին քաղաքները և առաջացան նորերը:

Արհեստների, առևտրի կենտրոններ էին՝ Դվինը, Անին, Կարսը, Կարինը (Էրզրում), Արծնը, Երզնկան, Վանը, Մուշը, Մանազկերտը, Բերկրին, Բաղեշը (Բիթլիս), Նախիջևանը և այլն: Իր ճոխությամբ, շքեղաշուք կառույցներով, բազմամարդությամբ՝ աչքի էր ընկնում Անի մայրաքաղաքը (ուներ երկու քառ. կիլոմետրից ավելի տարածություն), ուր կառուցվեցին 100-ից ավելի եկեղեցիներ, ինչպես նաև շքեղակառույց շենքեր, հյուրատներ, առանձնատներ, պանդոկներ, շուկաներ, արհեստավորական շարքեր, ջրմուղ, բաղնիքներ և այլն:

Երկրի ինքնակալ տերը Հայոց թագավորն էր: Պետական կարևոր պաշտոններ էին՝ սպարապետությունը, իշխանաց իշխանի, մարզպանի և դատավարության գործակալությունները: Սպարապետը վարում էր երկրի

զինված ուժերը, իշխանաց իշխանը գլխավորում էր նախարարներին, կարգավորում հայոց թագավորի հետ նրանց փոխհարաբերությունները, մարզպանը զբաղվում էր արտաքին հարաբերություններով, դատավարության գործակալությունը հայոց կաթողիկոսի ղեկավարությամբ զբաղվում էր օրենսդրությամբ (կանոններ սահմանելով), դատական գործերով: Կաթողիկոսը նաև թագադրում էր բագրատունյաց արքային: Հայոց Բագրատունիները ստեղծեցին 100 հազարանոց մարտունակ բանակ, որի միջուկը այրուձին էր:

ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջին Ասիայում Սիր-Դարյա գետի ավազանում բնակվող թյուրքական ցեղերը՝ օղուզները X դ. իրենց առաջնորդ Սելջուկի կողմից միավորվեցին և դարձան զորեղ ուժ: 960-ական թթ. նրանք ընդունեցին իսլամ: Սելջուկի անունով այդ ցեղերը կոչվեցին սելջուկ-թյուրքեր: Պարսկաստանի զգալի մասը գրավելուց հետո 1048 թ. այդ հորդաները Ատրպատականից ներխուժեցին Հայաստան, 1049 թ. նույն ռազմուղիով երկրորդ անգամ մտան Հայաստան, որը Բյուզանդիայի գերիշխանության տակ էր, ուստի վերջինս փորձեց այն պաշտպանել: 1049 թ. Բասենի դաշտում բյուզանդական զորքերը հայերի և վրացիների աջակցությամբ մարտի մեջ մտան սելջուկ-թյուրքերի դեմ, սակայն բյուզանդական զորքի մի մասը հեռացավ մարտադաշտից, որի հետևանքով թշնամին հաղթանակ տարավ: 1054 թ. սելջուկները վերստին արշավեցին Հայաստան՝ Տուղրիլի գլխավորությամբ: Այս անգամ հայերը Կարին, Կարս և Մանազկերտ քաղաքների մոտ դիմադրավեցին նրանց և ստիպեցին հեռանալ Հայաստանից: Սակայն 10 տարի հետո սելջուկ-թյուրքական զորքերը Ալփ-Արսլանի գլխավորությամբ վերստին արշավեցին Հայաստան, գրավեցին Անին, կոտորելով նրա բնակչությանը, տիրելով Հայաստանի մեծ մասին, որտեղ հաստատվեցին եկվոր թյուրքական ցեղերը: Կարսի, Լոռիի, Սյունիքի Հայկական թագավորություններն ընդունեցին Ալփ-Արսլանի գերիշխանությունը: Բյուզանդիան ուշացումով զգաց, թե ինչպիսի մահացու վտանգ է կախված իր գլխին: 1068 թ. Ռոմանոս կայսրը մեծ զորքով հարձակվեց սելջուկ-թյուրքերի վրա, նրանց քշելով Եփրատից այն կողմ: Սակայն 1071 թ. նա ծանր պարտություն կրեց Մանազկերտի ճակատամարտում, իր բանակի կենտրոնական զորաբաժնի (որը կազմված էր թյուրք վարձկաններից) դավաճանության պատճառով: Դրանից հետո սելջուկ-թյուրքերը գրավեցին Փոքր Ասիան:

Հայաստանում սելջուկ-թյուրքական ցեղերը ստեղծեցին իրենց իշխա-

նությունները՝ Դվինում, Անիում, Խլաթում, Մանազկերտում և այլուր: Իրենց կիսանկախ վիճակը պահպանեցին Լոռիի, Սյունիքի թագավորությունները և Արցախի, Սասունի, Վասպուրականի որոշ մասի, Մոկքի հայկական իշխանությունները:

Սելջուկ-թյուրքական ցեղերը լինելով քոչվոր անասնապահներ՝ ոչնչացնում էին հայ գյուղացիների ցանքսերը, այգիները: Հայերի հողաբաժինները բաժանվեցին սելջուկ-թյուրքական զինվորներին՝ ծառայության դիմաց: Բնիկ հայ բնակչությունը մշակում էր այդ հողերը՝ օտար և այլակրոն հողատերերին վճարելով հարկեր: Ամենածանր հարկատեսակներն էին հողահարկը և գլխահարկը (ջիզիե): Վերջինս գանձվում էր միայն ոչ մահմեդական բնակչությունից:

XII դ. մասնատված սելջուկ-թյուրքական պետության դեմ պայքար ծավալեց Վրաստանը, որը կարողացավ թոթափել նրա լուծը և վերականգնել վրաց Բագրատունիների թագավորությունը: Վրաց թագավոր Դավիթ Շինարարը (1089–1125 թթ.) համալրեց իր զորքը հայ իշխանական տների մարտիկներով:

Հայ-վրացական զինակցությունը ավելի ուժեղացավ Թամար թագուհու (1184–1213 թթ.) օրոք: 1185 թ. վրաց զորքի գլխավոր հրամանատար (ամիրսպասալար) նշանակվեց Զաքարյան հայկական տոհմից Սարգիսը, որը ժառանգական տիրույթ ստացավ Լոռին: 1192 թ. վրաց զորքերի գլխավոր հրամանատար նշանակված Զաքարեն (Սարգսի ավագ որդին) հայ-վրացական զորքերով փայլուն հաղթանակներ տարավ թյուրքական ամիրայությունների դեմ: Զաքարեի եղբայր Իվանեն նշանակվեց վրաց թագուհու առաջին խորհրդական (աթաբեկ): Հայ-վրացական զորքերը Զաքարեի առաջնորդությամբ 1196 թ. ազատագրեցին Արցախը, Սյունիքը, Սևանա լճի ավազանը, 1199 թ.՝ Անին: 1203 Այրարատի ազատագրումից հետո Զաքարեն զորքը շարժեց Փոքր Ասիայի հզորագույն թյուրքական իշխանության՝ Իկոնիայի (Ռումի) սուլթանության դեմ և 1204 թ. ջախջախեց նրան: 1210 թ. նա պարտության մատնեց Խլաթի ամիրայությանը, գրավեց Կարսը և այլ շրջաններ, հասնելով Վանա լճի ափերին: Ազատագրվեցին Բագրևանդը, Վասպուրականի և Տուրուբերանի զգալի մասը: Զաքարեն ստիպված հարձակումը դադարեցրեց Արճեշի տակ եղբոր՝ Իվանեի անդգուշաբար գերի ընկնելու պատճառով:

Զաքարեն վախճանվեց 1212 թ.: Նրան փոխարինեց Իվանեն (եղբայրը):

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIII դարի սկզբին Հյուսիսարևելյան Հայաստանի ազատագրված գավառներում ստեղծվեց Զաքարյանների տոհմի իշխանությունը՝ Անի կենտրոնով: Այն ընդգրկում էր Լոռիի մեծ մասը, Այրարատը, Սևանի ավազանը, Սյունիքի Հյուսիս–արևելքը, Տավուշը, Արցախը և Ուտիքը: Այդ իշխանության շնորհիվ նախկին Բագրատունյաց (Անիի) թագավորության մեծ մասում վերականգնվեց հայ պետականությունը: Զաքարյանները շարունակեցին Բագրատունիների պետական ավանդները՝ յուրացնելով նաև նրանց «շահնշահ» պատվատիտղոսը: Զաքարյան իշխանության գլուխ կանգնած Զաքարե զորավարը իրեն համարում էր Բագրատունի, կամենալով շեշտել, որ ինքն այդ տոհմի գործի շարունակողն է: Ժամանակակիցները նրան կոչում էին «Հայոց թագավոր»: Զաքարյան իշխանությունը չէր մտնում Վրաց թագավորության կազմի մեջ: Նրա իշխանապետները վրաց թագավորներին հարկ չէին վճարում և, միայն ելնելով փոխադարձ շահերից, զորք էին տալիս և հենց իրենք էլ գլխավորում էին հայ–վրացական զորքերը: Զաքարյան իշխանությունը բաղկացած էր երեք խոշոր վարչական միավորներից: Նրա արևմտյան մասը (մինչև Բասեն գավառ) ՝ Անի կենտրոնով, Զաքարե զորապետի բուն իշխանությունն էր: Արևելյան շրջանները Զաքարեի եղբոր՝ Իվանե աթաբեկի իրավասության տակ էին՝ Դվին (ապա Բջնի) կենտրոնով, իսկ Հյուսիս–արևելքը՝ Զաքարեի և Իվանեի հորեղբոր՝ Վահրամի որդի՝ Զաքարեի (Վահրամյանների) իշխանությունն էր, որի կենտրոնը Գագ ամրոցն էր՝ Տավուշի Հյուսիսում: Այս երեք մասերը կազմում էին մեկ ամբողջություն՝ Զաքարեի և նրա ժառանգների գերիշխանության տակ:

Զաքարյան իշխանության մեջ վերականգնվեցին որոշ հայ իշխանական տներ՝ Պահլավունիներ, Մամիկոնյաններ, Արծրունիներ և այլն, ստեղծվեցին նորերը՝ Խաղբակյաններ (Պռոշյաններ), Վաչուտյաններ, Օրբելյաններ, Դոփյաններ և ուրիշներ: Այս իշխանությունները Զաքարյաններից վասալական կախման մեջ էին:

Զաքարյան իշխանության շնորհիվ XIII–XIV դարերում տնտեսական բարգավաճում ապրեց Հյուսիսարևելյան Հայաստանը, զարգացավ ֆեոդալական հողատիրությունը, արհեստագործությունը: Ընդլայնվեց առևտուրը, քաղաքները նոր վերելք ապրեցին, հիմնվեցին նոր վանքեր, եկեղեցիներ, զարգացավ մշակույթը:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կիլիկիան գտնվում է Միջերկրական ծովի Հյուսիսարևելյան կողմում: Այն բաժանված է դաշտային (ծովամերձ շրջանները) և լեռնային

(արևմտյան հատվածը) մասերի: Կիլիկիայում հայերը հաստատվել են դեռևս մ. թ. ա. II դ. Տիգրան Մեծի ժամանակ, երբ Դաշտային Կիլիկիան միացվեց Հայաստանին: Բյուզանդիան տիրանալով Հայաստանին (XI դ.)՝ հայ ռազմուժը հայրենիքից դաղթեցրեց Բյուզանդիա: Հայերը բնակություն հաստատեցին նաև Կիլիկիայում, որտեղ նրանց թիվը խիստ մեծացավ սելջուկ-թյուրքերի կողմից Հայաստանը գրավելուց հետո: Քանի որ Կիլիկիայում հայերը կազմեցին մեծամասնություն, ուստի հնարավոր դարձավ այնտեղ ստեղծել հայկական իշխանություն, որը հիմնվեց 1080 թ. Ռուբենի (Գագիկ II-ի զինակիցներից) կողմից, Լեռնային Կիլիկիայում: Իշխանությունը հիմնադրի անունով կոչվեց Ռուբինյան: Քանի որ Կիլիկիան մտնում էր Բյուզանդիայի կազմի մեջ, ուստի վերջինս չհանդուրժեց այնտեղ հայկական անկախ իշխանության գոյությունը և փորձեց վերացնել այն: Սակայն Ռուբենի հաջորդները 1130-ական թթ. հակահարված տալով բյուզանդացիներին, տիրացան նաև Դաշտային Կիլիկիայի մի մասին: Բյուզանդիան շարունակեց հարձակումները, գրավեց Կիլիկիայի մեծ մասը, բայց Թորոս II իշխանը (1145–1169) վերագրավեց այն. ամրապնդեց իշխանությունը: Նրան հաջորդած եղբայրը՝ Մլեհը (1169–1175) դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ, պարտության մատնեց Բյուզանդիային, գրավեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, մայրաքաղաքը Վահկա ամրոցից տեղափոխվեց Կիլիկիայի կենտրոն՝ Սիս քաղաք: Սակայն Հալեպի ամիրայի հետ Մլեհի դաշինքից դժգոհ հայ իշխանները սպանեցին նրան: Մլեհի հաջորդ Ռուբեն II-ը (1175–1187) դաշինք կնքելով Հարևան Իկոնիայի սելջուկյան սուլթանի հետ, Կիլիկիան լիովին մաքրեց բյուզանդացիներից, որոնք ստիպված ճանաչեցին նրա իշխանությունը:

Կիլիկյան հայկական իշխանությունը իր հզորության գագաթնակետին հասավ Լևոն II-ի օրոք (1187–1219), երբ օրակարգի հարց դարձավ Կիլիկիայի իշխանությունը թագավորության վերածելու խնդիրը: 1189 թ. խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ Լևոն II-ը պարենով օգնեց խաչակիրներին, որոնք խոստացան ճանաչել նրան հայոց թագավոր: 1196 թ. Գերմանիայի Հենրիխ VI կայսրը թագ ուղարկեց Լևոնին, որը թագ ստացավ նաև Բյուզանդիայի կայսրից, Բաղդադի խալիֆայից և Հռոմի պապից: 1198 թ. Տարսոն քաղաքում Լևոնը հայոց կաթողիկոսի և Հռոմի պապի ներկայացուցչի կողմից օծվեց հայոց թագավոր, որով իսկ Կիլիկիայի իշխանությունը վերածվեց հայոց թագավորության:

Լևոնը ստեղծեց 80 հազարանոց բանակ, առևտրական նավատորմ, թողարկեց ոսկե և արծաթե դրամներ, կարգի բերեց ճանապարհները, նավահանգիստները, վանքերին կից բացել տվեց դպրոցներ, Վենետիկի ու Ջենովայի հետ կնքվեցին պայմանագրեր: Լևոնը պարտության մատնեց Իկո-

նիայի թյուրքական սուլթանությանը, ընդարձակեց երկրի սահմանները՝ հասցնելով մոտ 40 հազար քառ. կմ-ի: Աճեց երկրի բնակչությունը՝ հասնելով մոտ 1 միլիոնի: Վերականգնվեցին Կիլիկիայի քաղաքները՝ Սիսը, Այասը, Ադանան, Մամեստիան, բերդերը՝ Լամբրոնը, Բարձրաբերդը, Կապանը, Կոռիկոսը, Հռոմկլան, Պապեռոնը, Վահկան, Բերդուսը և այլն: Լևոն II-ի ժամանակ Կիլիկիայի թագավորությունը Միջերկրական ծովում ուներ մոտ 500 կմ երկարությամբ ձգվող ծովափ:

Լևոնը կազմակերպեց գործակալություններ, որոնց ղեկավարները ժառանգական չէին, նշանակվում էին թագավորի կողմից: Կարևոր գործակալություններն էին՝ սպարապետությունը (զինված ուժերի հրամանատար), խնամակալությունը (պայլություն) ՝ թագավորի խորհրդականը և դահը ժառանգելու հետ առնչվող հարցերը լուծողը: Մարաջախտը բանակին զինամթերք, հանդերձանք էր մատակարարում, կանցլերը վարում էր արտաքին գործերը: Լևոնը զսպեց մի քանի կենտրոնախույս խոշոր ֆեոդալների, որոնք Կիլիկիայում կոչվում էին բերդատեր պարոններ, ի տարբերություն մանր ազատների («ձիավորների»): Նա կախման մեջ դրեց Անտիոքի դքսությանը:

Լևոնը արու ժառանգ չուներ, ուստի իր մահվանից քիչ առաջ թագաժառանգ նշանակեց իր մանկահասակ դստերը՝ Զաբելին, նրան խնամակալ կարգելով Կոստանդին իշխանին, որը Լևոնի մահվանից հետո կառավարեց երկիրը: 1226 թ. Կոստանդինը իր 13 ամյա որդուն՝ Հեթումին ամուսնացրեց Զաբելի հետ և հռչակեց հայոց թագավոր, որով իսկ հիմք դրվեց թագավորական նոր՝ Հեթումյան դինաստիային: Հեթում I-ը (1226–1270) իր ավագ եղբորը՝ Սմբատին կարգեց սպարապետ, մյուս եղբայրներին նշանակեց պետական կարևոր պաշտոններում:

1243 Կիլիկիային մոտեցան մոնղոլ-թաթարական նվաճողները: Երկիրը նրանց հարձակումից փրկելու համար Հեթում I-ը պատվիրակություն ուղարկեց մոնղոլ զորապետի մոտ, որի հետ կնքված դաշինքի շնորհիվ մոնղոլները չմտան Կիլիկիա: 1246 թ. Սմբատ սպարապետը մեկնեց մոնղոլական մեծ խանի մոտ: Դաշինքն ամրապնդվեց 1254 թ., երբ Հեթումը Հայաստանի վրայով մեկնեց Մոնղոլիա՝ մեծ խանի մոտ, որը ճանաչեց Կիլիկյան թագավորության անկախությունը՝ վերջինիս կողմից հարկ ու զորք տալու պայմանով: Սակայն Հեթանոս մոնղոլների պատերազմները Եգիպտոսի, Իկոնիայի դեմ մղվում էին դաշնակից Կիլիկիայի օգնությամբ, ինչը թշնամանք էր առաջացնում նրա և մահմեդական զորեղ հարևանների միջև: Դա ծանր հետևանք ունեցավ Կիլիկյան թագավորության համար: Հետզհետե մոնղոլները թուլացան, և Կիլիկիայի հետ նրանց դաշինքը դարձավ ձևական, մինչդեռ Եգիպտոսն ու նրա դաշնակիցները ավելի ու ավելի էին ուժեղացնում ճնշումը Կիլիկիայի վրա: 1266 թ. Եգիպտոսը ծանր պարտու-

թյան մատնեց Հայոց զորքին, գրավեց Սիսը և այլ շրջաններ: 1268 թ. Եգիպտոսի հետ կնքվեց հաշտություն:

Միայնակ մնալով հզոր թշնամիների դեմ՝ կիլիկահայ վերնախավն ստիպված ապավինեց Եվրոպային՝ հույս ունենալով օգնություն ստանալ այնտեղից: Հռոմի պապին, եվրոպական թագավորներին հայերի դիմումները ավելի խորացրին Եգիպտոսի և Իկոնիայի հետ թշնամանքը: Եգիպտոսը խախտեց 1268 թ. կնքված պայմանագիրը և հարձակվեց Կիլիկիայի վրա: Հայերը նորից դիմումներ հղեցին Եվրոպա: Հռոմի պապը խոստացավ օգնել, եթե հայերը ընդունեին կաթոլիկություն: 1307 թ. Լևոն IV–ը Սիսում գումարեց ժողով, որտեղ, հակառակ ժողովրդի կամքին, ընդունվեց պապի առաջարկը: Կիլիկիայում առաջացան երկու՝ միմյանց հակադիր խմբավորումներ՝ ունիթոռներ (լատիներեն ունիա՝ միություն բառից), որոնք կողմ էին Հռոմի հետ միությանը, և հակաունիթոռներ, որոնք դեմ էին կաթոլիկություն ընդունելուն: Այս հոսանքների միջև ընթացող սուր պայքարը ալեկոծեց երկիրը, ավելի վատթարացնելով նրա վիճակը: Եգիպտոսը 1321 թ. վերստին հարձակվեց Կիլիկիայի վրա, ծանր պարտության մատնելով նրան: Եգիպտոսի հետ 1337 թ. կնքված նոր և խիստ ծանր պայմանագրով Կիլիկյան թագավորությունը կորցրեց Կիլիկիայի մեծ մասը, ինչը հույժ թուլացրեց նրան:

1342 թ. վախճանվեց Հեթումյան արքայատոհմի վերջին թագավորը՝ Լևոն V–ը (1320–1342), որը արու զավակ չուներ, ուստի ունիթոռները Կիպրոս կղզուց հրավիրեցին Լուսինյան տոհմից Գվիդոնին (ծագումով ֆրանսիացի, մոր կողմից հայ), որը 1343 թ. ժամանեց Կիլիկիա և օծվեց Հայոց թագավոր՝ Կոստանդին III անունով, սակայն 1345 թ. հայ իշխանները չհանդուրժելով նրա հալածանքները, ապստամբեցին և սպանեցին թե՛ իրեն և թե՛ նրա համախոհներին՝ գահը հանձնելով Հեթումյանների ազգական, Ճկեր գավառի Նղիր բերդի տեր Կոստանդին IV–ին (1345–1363), որի ժամանակ Կիլիկիայի դրությունն ավելի ծանրացավ Եգիպտոսի, Հալեպի ամիրայի և Իկոնիայի սուլթանության հարձակումների հետևանքով: Չնայած հայոց զորքերի հերոսական դիմադրությանը, երկիրը կորցրեց ամբողջ Դաշտային Կիլիկիան և այլ շրջաններ: Հայոց թագավոր Կոստանդին V–ի իրավասության տակ մնաց միայն Սիսը իրեն հարող տարածքով: 1369 թ. Եգիպտոսի զորքը պաշարեց Սիսը, որը հերոսաբար պաշտպանվեց, զոհվեցին Լիպարիտ սպարապետը և ուրիշներ: 1373 թ. ունիթոռները սպանեցին Կոստանդին V–ին, (որը կամենում էր հաշտություն կնքել Եգիպտոսի հետ) և թագավոր հռչակեցին Լևոն VI Լուսինյանին, որը 1373 թ. սեպտեմբերին ժամանեց Սիս, սակայն 1375 թ. հունվարին Եգիպտոսի և Հալեպի ամիրայության զորքերը պաշարեցին Սիսը: Չնայած հայ մարտիկների և բնակչության հերոսական դիմադրությանը,

1375 թ. ապրիլի 22-ին Սիսը գրավվեց թշնամիների կողմից: Այդպիսով վերացավ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Կիլիկիայի հայոց վերջին թագավոր Լևոն VI-ը գերվեց և տարվեց Եգիպտոս, որտեղից ազատվեց յոթ տարի հետո և մեկնեց Ֆրանսիա՝ Փարիզ (որտեղ և վախճանվեց 1393 թ.):

Հայ իշխանական տոհմերի մի մասը հեռացավ Բյուզանդիա, եվրոպական երկրներ, մյուս մասը հաստատվեց Կիլիկիայի լեռնային շրջաններում՝ Զեյթունում, Հաճընում, Մարաշում և այլուր, մինչև XIX դ. 2-րդ կեսը մնալով կիսանկախ վիճակում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ IX–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

IX դարի 2-րդ կեսից ձեռք բերված խաղաղության շնորհիվ ծաղկում ապրեց հայ մշակույթը: Հայաստանում բացվեցին բազմաթիվ դպրոցներ, որտեղ ուսուցանում էին աստվածաբանություն, փիլիսոփայություն, պատմություն, թվաբանություն, աստղաբաշխություն, երաժշտություն և այլ առարկաներ: X–XIII դդ. կրթական խոշորագույն կենտրոն էր Անի քաղաքը, որտեղ գործում էր բարձրագույն դպրոց՝ վարդապետարան: Հայտնի էին նաև Կարսի, Սանահինի, Նարեկավանքի, Գեղարդավանքի, Հաղարծին և Նոր Գետիկ (Գոշավանք) վանքերում գործող դպրոցները: Նշանավոր էր հատկապես Գլաձորի համալսարանը, որը գործեց 1291–1340 թթ. (Վայոց ձորում) և ժամանակակիցների կողմից անվանվում էր «երկրորդ Աթենք»: Այն հիմնեց Եսայի Նչեցին: Գլաձորի համալսարանի ավանդները շարունակեց XIV դ. գործող Տաթևի համալսարանը: Կիլիկիայում նշանավոր էին Սիս քաղաքի համալսարանը և Ակներ, Դրազարկ վանքերին կից գործող դպրոցները:

Վերելք ապրեց նաև գրականությունը: Գրիգոր Նարեկացին (X դար) գրեց «Մատյան ողբերգության» հանճարեղ պոեմը, ուր արտացոլված են իր գարաշրջանի կյանքը, ժողովրդին հուզող խնդիրները: Նրա տաղերում (բանաստեղծություններում) տրված է իրական մարդը՝ իր խոհերով, ապրումներով: Ֆրիկը (XIII–XIV դդ.) իր քնարաշունչ տաղերում դատապարտում է տիրող անարդարությունները: Ներսես Շնորհալին XII դ. գրել է «Ողբ Եդեսիո» պատմական պոեմը և շատ տաղեր, հանելուկներ: XIII դ. Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին ստեղծեցին առակների գրքեր: X դ. խոշոր պատմիչներ էին Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը), XI դ.՝ Արիստակես Լաստիվերտցին, XII–XIII դդ.՝ Մատթեոս Ուռհայեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Վարդան Արևելցին, Սմբատ Սպարապետը:

XII դ. վերջին Մխիթար Գոշն ստեղծեց «Հայոց դատաստանագիրքը»:

Զարգացում ապրեց նաև հայ փիլիսոփայական միտքը: Ականավոր փիլիսոփաներ էին Գրիգոր Մագիստրոսը (XI դ.), Հովհաննես Իմաստասերը (Սարկավագ, XII դ.), Տաթևի համալսարանի հիմնադիր Հովհան Որոտնեցին (XIV դ.), Գրիգոր Տաթևացին (XIV դ.): Զարգացավ նաև բժշկագիտությունը: Մխիթար Հերացին XII դ. Կիլիկիայում գրեց «Ջերմանց մխիթարություն», երկը, ուր տրված են տենդերի (ջերմերի) բուժման միջոցները:

Մեծ կատարելության հասավ ճարտարապետությունը: 920-ական թվականներին Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին Վանա լճի Աղթամար կղզում կառուցել տվեց պալատ և Ս. Խաչ եկեղեցին (այժմ էլ կանգուն է), որոնց հեղինակը Մանվել ճարտարապետն էր: X դարում կառուցվեցին Սանահինի, Հաղպատի, Տաթևի, Մարմաշենի վանքերը, Կարսի Կաթողիկե (մայր) եկեղեցին և բերդը: Անիում X–XI դդ. վեր խոյացան բազմաթիվ եկեղեցիներ, քաղաքացիական շենքեր: Անիում շինարարական աշխատանքները գլխավորում էր հանճարեղ Տրդատ ճարտարապետը: X դարում կառուցվեց նաև Հաղարծին վանքի (Դիլիջանի շրջան) գլխավոր եկեղեցին: XIII դ. կառուցվեցին Հառիճ գյուղի (Արթիկի մոտ) վանքի գլխավոր եկեղեցին (վանքի հին եկեղեցին կառուցվել է VII դ.), Կեչառիսի վանքի (Մաղկաձոր ավանում) եկեղեցիները: XIII դ. կանգնեցվեցին նաև Գեղարդավանքը (Այրիվանք), Նոր Գետիկի վանքը (Գոշավանք՝ Իջևանի շրջանում) Մակարավանքը (Իջևանի շրջանում), Հովհաննավանքի (Աշտարակի շրջան) գլխավոր եկեղեցին (որի հնագույն եկեղեցին V դարի է), Գանձասարը (Արցախում), Նորավանքի (Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղի մոտ) գլխավոր եկեղեցին և այլն: Շքեղ զարդանախշեր ունեն IX և հետագա դարերից մեզ հասած խաչքարերը, որոնք կանգնեցվել են որևէ հաղթանակի կամ նշանավոր շինության ավարտի առթիվ, ավելի հաճախ իբրև դամբանաքարեր:

IX–XIV դարերում ծաղկում ապրեցին նաև գրչության արվեստը և նրա հետ կապված մանրանկարչությունը: Կիլիկիայում էին ստեղծագործում մանրանկարիչներ Թորոս Ռոսլինը (XIII դար) և Սարգիս Պիծակը (XIII–XIV դդ.), Սյունիքում հայտնի էր մանրանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկը (XIII–XIV դդ.):

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԱԽՄԲԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

XIII դ. սկզբին մոնղոլների առաջնորդ Չինգիզ խանը Չինաստանի հյուսիսը նվաճելուց հետո գրավեց Միջին Ասիան, Իրանը: Մոնղոլ-թաթարական մի զորախումբ 1221 թ. ներխուժեց Անդրկովկաս: Միջին Ասի-

այի Խորեզմ պետության թագաժառանգ Ջելալեդդինը նահանջելով մոնղոլների առջևից, զորքով 1225 թ. մտավ Հայաստան և յոթը տարի ավերածության, կոտորածների ենթարկեց այն: 1236 թ. մոնղոլական զորքերը Չարմաղանի գլխավորությամբ գրավեցին Աղվանքը, Հյուսիսային Հայաստանը: Զաքարյան իշխանության, Սյունիքի և Արցախի տերերը ստիպված ընդունեցին մոնղոլների գերիշխանությունը՝ պահպանելով իրենց կիսանկախ վիճակը: Յոթ տարվա ընդմիջումից հետո մոնղոլ-թաթարները 1243 թ. վերստին արշավեցին Հայաստան՝ կոտորածի և ավերածության ենթարկելով այն: Նրանք Հայաստանի հարավային և արևմտյան նահանգներից կազմեցին «Մեծ Հայք» վարչական միավորը (վիլայեթը) ՝ Կարին կենտրոնով: Սասունի, Մոկքի և Ռշտունիքի Հայ իշխանությունների մնացորդները պահպանեցին իրենց կիսանկախ վիճակը: Մոնղոլները ճանաչեցին Հայոց եկեղեցու իրավունքները (ապահարկությունը, կալվածները և այլն): Հայոց եկեղեցին մեծ արտոնություններով օժտվեց մոնղոլների օրոք: Ավերվում էին Հայ ֆեոդալների ամրոցները, դղյակները, բայց կանգուն էին մնում եկեղեցիները, վանքերը: Հաճախ Հայոց եկեղեցու հովանու տակ մտնելով՝ Հայ աշխարհիկ ֆեոդալները պահպանում էին իրենց հողերը, իրավունքները: Մոնղոլների ժամանակ Հայ բնակչությունը ենթարկվեց ծանր հարկահանության, որն ուժեղացավ հատկապես 1254 թ. աշխարհագրից հետո: Հարկային և այլ կամայականությունները սահման չունեին: Գանձում էին 16 տեսակ հարկ, որոնցից ամենածանրը հողահարկն էր (խարաջ): Այն կազմում էր ողջ եկամտի կեսից ավելին: Ծանր հարկատեսակ էր նաև գլխահարկը, որը վերցվում էր դրամով, 15–60 տարեկան արու բնակչությունից: Հաճախ միևնույն հարկը վերցնում էին երեք անգամ: Անվճարունակ հարկատուից խլում էին տունուտեղը, երեխան: Բնակչությունը ստիպված հեռանում էր օտար երկրներ, անմշակ էին մնում ցանքսերը, այգիները: Հետզհետե նստակյաց դարձած քոչվոր ցեղերը տիրացան բերրի հողերին, Հայ բնակչությանը քշելով լեռնային շրջանները:

1256 թ. մոնղոլ զորապետ Հուլավուն ստեղծեց մի պետություն (թավրիզ կենտրոնով), որն ընդգրկում էր Իրանը, Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Միջագետքը և Փոքր Ասիայի մի մասը: Հայաստանի դրությունն ավելի ծանրացավ XIV դ. սկզբին, երբ մոնղոլական Ղազան խանը մահմեդականությունը դարձրեց պետական կրոն:

1330–40-ական թվականներին մոնղոլական պետությունը մասնատվեց: Դրանից օգտվեցին Հայաստան և հարևան երկրներ թափանցած թուրքմենական ցեղերը՝ Կարա-կոյունլուները («սև ոչխարավորներ»), որոնք այդպես էին կոչվում սև ոչխարների հոտեր պահելու պատճառով: Նրանք 1378 թ. իրենց տիրապետությունը հաստատեցին Հայաստանում և

Հարևան երկրներում: Կարա–կոյունլուների իշխանությունը վերացրեց Լենկթեմուրը, որը 1386 թ. արշավեց Հայաստան, ամենուրեք մահ ու ավերածություն սփռելով: Լենկթեմուրի հաջորդ արշավանքներից ևս Հայաստանը շատ տուժեց: Նրա մահվանից (1405 թ.) հետո կարա–կոյունլուները Հայաստանում, Վրաստանում, Ատրպատականում վերահաստատեցին իրենց իշխանությունը, պատերազմելով Լենկթեմուրի հետնորդների և թուրքմենական մեկ այլ ցեղախմբի՝ ակ–կոյունլուների («սպիտակ ոչխարավորների») դեմ: Այդ կռիվներից ալեկոծվեց Հայաստանը: Երկիրը որոշ խաղաղություն ձեռք բերեց կարա–կոյունլու Ջահանշահի տիրակալության (1437–1467 թթ.) ժամանակ, երբ Երևանը դարձավ Հյուսիս–արևելյան Հայաստանի մայրաքաղաք, և խիստ մեծացավ նրա դերը տնտեսական, մշակութային կյանքում: Ջահանշահը աշխատում էր Հայերին իր կողմը գրավել: Նրա օրոք՝ 1441 թ. Հայոց կաթողիկոսությունը Կիլիկիայից (Սիս քաղաքից) տեղափոխվեց Էջմիածին, ձերբազերծվելով կաթողիկ եկեղեցու հավակնություններից: Դա հույժ կարևոր նշանակություն ունեցավ Հայ ժողովրդի գոյատևման, համախմբման համար:

1467 թ. ակ–կոյունլուները հաղթեցին կարա–կոյունլուներին և իրենց գերիշխանությունը տարածեցին Հայաստանում և հարևան երկրներում: Հայաստանը տուժեց Օսմանյան Թուրքիայի դեմ ակ–կոյունլուների մղած պատերազմներից: 1502 թ. Պարսկաստանի (Սեֆյան տոհմից) շահ Իսմայիլը վերջ դրեց ակ–կոյունլուների տիրապետությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶ

XVI դ. սկզբից Հայաստանը, չլինելով պատերազմող կողմ, դարձավ երկու հզոր նվաճողների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև մղվող երկարատև ու ավերասփյուռ պատերազմների թատերաբեմ՝ ենթարկվելով բռնի տեղահանությունների, կոտորածների:

Թուրքական պետությունը ստեղծվել էր 1299 թ., Օսմանի կողմից (որի անվամբ կոչվեց): Հետզհետե նվաճումների շնորհիվ այն ընդարձակվեց՝ տիրանալով Փոքր Ասիայի մեծ մասին: 1502 թ. Պարսկաստանում ստեղծվեց զորեղ պետություն՝ Սեֆյան տոհմի գլխավորությամբ: Պարսից շահ Իսմայիլը (1502–1524) ակ–կոյունլուներից գրավեց նաև Հայաստանը, հարևան դառնալով Թուրքիային, որը նոր երկրներ զավթելու նպատակով 1514 թ. հարձակվեց Պարսկաստանի վրա: Պարսից զորքը պարտվեց, քանի որ չուներ հրետանի (թուրքերն այն ունեին), և թուրքերին ղիջեց Հայաստանը, Կիլիկիան, Միջագետքը, Ատրպատականի դգալի մասը: Պատե-

բազմն ընդհատումներով շարունակվեց մինչև 1555 թ. , երբ Ամասիա քաղաքում կնքվեց հաշտություն, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև: Հայկական պար լեռնաշղթայից հյուսիս ընկած գավառները մնացին պարսից տիրապետության տակ, իսկ հարավային շրջաններն անցան Թուրքիային: Սակայն Թուրքիան դրանով չգոհացավ: Նա նպատակադրվել էր շարունակել պատերազմը, միանալ Կովկասի թաթարներին (այժմյան ադրբեջանցիներին), Միջին Ասիայի թուրքերին և համատեղ ոչնչացնել Պարսկաստանը: 1578 թ. Թուրքիան վերստին հարձակվեց Պարսկաստանի վրա, որը պարտվեց և 1590 թ. կնքված հաշտությամբ թշնամուն զիջեց Հայաստանը, Անդրկովկասը և Ատրպատականի մեծ մասը:

Աղետահար հայությունը ի վիճակի չլինելով սեփական ուժերով պայքարել իրեն այնքան դժբախտություններ պատճառած երկու հզոր բռնատիրությունների դեմ՝ հայացքն ուղղեց հավատակից Եվրոպային: Պետականությունից զրկված հայ ժողովրդի ազատագրման գործի նախաձեռնողը եղավ հայոց եկեղեցին: Առաջինը նման փորձ կատարեց հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցին (1542–1564 թթ. , որը 1547 թ. Էջմիածնում գումարեց գաղտնի ժողով և որոշեց պատվիրակություն ուղարկել Իտալիա՝ Վենետիկի հանրապետություն և օգնություն խնդրել՝ օտար լծից ազատագրվելու համար: Հայերի պատվիրակությունը 1549 թ. մեկնեց Վենետիկ, եղավ նաև Հռոմում, Գերմանիայում և Լեհաստանում, սակայն խոստումներից բացի ոչինչ չստանալով, վերադարձավ հայրենիք: Հաջորդ փորձը կատարեց Միքայել Սեբաստացի կաթողիկոսը (1567–1576), որը 1562 թ. Սեբաստիա քաղաքում հրավիրեց ժողով, ուր կազմված խնդրագիրը ուղարկվեց Եվրոպա (Աբգար Եվդոկացու միջոցով): Սակայն այս դիմումը նույնպես մնաց անարձագանք:

Մինչդեռ Հայաստանը շարունակում էր ավերվել ու հայաթափ լինել պարսկա–թուրքական պատերազմի հետևանքով: Աբբաս I շահը (1587–1628) անգլիացիների օգնությամբ մարզեց բանակը, այն զինեց հրետանիով: Եվրոպան կողմ էր թուրք–պարսկական պատերազմին, որը թույլ չէր տա, որ Թուրքիան ուժերը նետի Եվրոպայի դեմ: Օգտվելով Թուրքիայում տիրող խառնակ վիճակից՝ Շահ–Աբասը 1603 թ. հարձակման անցավ թուրքերի դեմ, ազատագրեց Ատրպատականը և մտավ Հայաստան, գրավելով Նախիջևան և Ջուղա (Ջուլֆա) քաղաքները:

Ութամսյա պաշարումից հետո, 1604 թ. ամռանը նա գրավեց նաև Երևանը: Սակայն, տեղեկանալով, որ թուրքերը մեծ զորքով հակահարձակման են անցել, շահը զորքին նահանջի հրաման տվեց, Արարատյան դաշտի բնակչությանը բռնի տեղահանեց, ամայացնելով այն վայրերը, որտեղով պետք է անցներ թուրքական զորքը: Արարատյան դաշտից և

Հարևան շրջաններից բռնագաղթվեց 60 հազար հայ ընտանիք, որոնց զգալի մասը ճանապարհին մահացավ կամ վաճառվեց ստրկության: Արաս գետը հայերին գաղթեցրեց Պարսկաստան, ոչ միայն թուրքերին պարենամթերքի աղբյուրներից զրկելու, այլև Իրանի տնտեսությանը հայերի միջոցով զարկ տալու նպատակով: Բռնագաղթված հայերը Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանի մոտ հիմնեցին Նոր-Ջուղա քաղաքը:

1605 թ. պարսիկները վճռական հաղթանակ տարան թուրքերի դեմ: Պատերազմը ընդհատումներով շարունակվեց մինչև 1639 թ., երբ Կ. Պոլսում կնքված հաշտությամբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Նրա մեծ մասն (Արևմտյան Հայաստանը) անցավ Թուրքիային, իսկ արևելյան հատվածը՝ Պարսկաստանին:

Սեֆյանները Արևելյան Հայաստանը ենթարկեցին վարչական բաժանման, այնտեղ ստեղծելով երեք խանություն՝ Երևանի, Նախիջևանի և Մակուի, որոնք բաժանված էին ավելի մանր վարչամիավորների՝ մահալների: Երևանի խանությունը ամենամեծն էր. այն ստեղծվեց 1605 թ. և մինչև XVIII դ. կեսը կոչվում էր բեկլարբեկություն:

Նախիջևանի, Մակուի խանություններն ստեղծվեցին XVIII դ. կեսին: Արևմտյան Հայաստանը տրոհված էր փաշայությունների (Վանի, Կարսի, Էրզրումի, Սեբաստիայի և Դիարբեքիրի), որոնք բաժանված էին սանջակների (գավառների):

Արևելյան Հայաստանում հողերի զգալի մասը պետական էր: Այն տրվում էր ծառայության դիմաց (թիուլական հողեր), և նրա տերերը իրենց օգտին հավաքում էին գյուղերի հարկերը: Կար նաև ժառանգական հողատիրություն՝ մուլքը: Քրիստոնյա բնակչությունը վճարում էր զանազան տեսակի հարկեր, որոնցից ծանր էին հողահարկը և գլխահարկը: Կրոնական հալածանքները վերջ չունեին:

Արևմտահայությունն ենթակա էր կրկնակի կեղեքումների: Դեռևս 1516 թ. Թուրքիան գրավել էր Քրդստանը, ապա քրդական ցեղերին Միջագետքից տեղափոխել Հայաստան՝ նպատակ ունենալով այնտեղ հենարան ստեղծել: Հայ գյուղացիները կախման մեջ դրվեցին նաև քուրդ բեկերից՝ հարկ վճարելով թե՛ նրանց, թե թուրքական պետությանը:

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVII դ. վերջերին հայ ազատագրական պայքարը որոշ աշխուժացում ապրեց: 1677 թ. հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին էջմիածնում գումարեց գաղտնի ժողով՝ հայ մելիքների մասնակցությամբ: Ժողովում

որոշվեց պատվիրակներ ուղարկել Հռոմի պապի մոտ՝ օգնություն խնդրելու: Բայց կաթողիկոսի մահը խափանեց դրա իրագործումը: Պատվիրակներից մեկը՝ 18-ամյա Իսրայել Օրին (սիսիանցի Մելիք Իսրայելի որդին) մեկնեց Եվրոպա, եղավ նաև Գերմանիայում, որտեղ Պֆալցի իշխանության տեր Հովհան Վիլհելմին հորդորեց ազատագրել Հայաստանը և դառնալ նրա թագավորը: Պֆալցը այդ ժամանակ պատերազմում էր Թուրքիայի դեմ, ուստի Հովհան Վիլհելմ իշխանն ընդունեց Օրիի առաջարկը, բայց պահանջեց, որ դրա վերաբերյալ իրենց համաձայնությունը տան Հայ մեծամեծները: 1699 թ. 20-ամյա բացակայությունից հետո Օրին ծպտված, եվրոպացու անվան տակ Թուրքիայով վերադարձավ Հայրենիք, բերելով Հովհան Վիլհելմի խոստումնալից նամակները՝ ուղղված Հայ մելիքներին, Վրաստանի թագավորին, Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներին: 1699 թ. Սիսիանի Անգեղակոթ ավանում հրավիրվեց մելիքների ժողով, որը նամակ հղեց Հովհան Վիլհելմին՝ հաղորդելով Հայ մելիքների համաձայնությունը Օրիի ծրագրերին: 1699 թ. Օրին վերադարձավ Պֆալց և Հովհան Վիլհելմին ներկայացրեց Հայաստանի ազատագրման իր ծրագիրը, որի համաձայն Պֆալցի զորքը Եվրոպայի դաշնակից ուժերի հետ Ռուսաստանի վրայով մտնելով Անդրկովկաս և միանալով Հայ-վրացական զորքերին (որոնց թիվը ուռճացված էր), պետք է ազատագրեր Հայաստանը: Բայց նույն ժամանակ (1699 թ.) եվրոպական պետությունները հաշտություն կնքեցին Թուրքերի հետ, ուստի պատերազմը չէին վերսկսի Հայերի համար:

Թուրքիայի դեմ պատերազմը շարունակեց միայն Ռուսաստանը: 1701 թ. Օրին Հովհան Վիլհելմի լիազորագրերով մեկնեց Մոսկվա, եղավ Պետրոս I ցարի մոտ, նրան ներկայացրեց Հայաստանի ազատագրման իր ծրագիրը, որը ավելի իրատեսական էր: Թեև այդ պահին Ռուսաստանը պատերազմի մեջ էր Շվեդիայի դեմ և չէր կարող հարավում երկրորդ ճակատ բացել, բայց ցարը խոստացավ հյուսիսային պատերազմը ավարտելուց հետո արշավել Անդրկովկաս: Այդ արշավանքի նախապատրաստման համար հետախուզական տվյալներ ձեռք բերելու նպատակով Պետրոս I-ը 1708 թ. Օրիին շնորհեց գնդապետի կոչում և մեծ շքախմբով ուղարկեց Պարսկաստան: Օրին պետք է պարզեր նաև, թե որքան է հայերի թիվը, և որքանով են նրանք հակված Ռուսաստանի կողմը: Օրին եղավ Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանում, մինչև 1711 թ. մնաց Հայաստանում, աշխատանք տանելով Հայ մելիքների մեջ: 1711 թ. Ռուսաստան վերադառնալիս նա անսպասելիորեն վախճանվեց Աստրախանում:

Հայ ազատագրական շարժումը մեծ վերելք ապրեց 1720-ական թվականներին, երբ Կասպից ծովի ափերին երևաց ռուսական զորքը: Այդ ժամանակ Պարսկաստանը խիստ թուլացել էր, որից օգտվելով, Թուրքիան

ծրագրեց նվաճել նրան ենթակա Անդրկովկասը և այլ երկրամասեր: Թուրքերին դաշնակցում էին լեզգի ֆեոդալները*, որոնք 1722 թ. ներխուժեցին Անդրկովկաս, Շամախիում թալանեցին ռուս վաճառականներին՝ սպանելով նրանց մի մասին: Դա Պետրոս I-ին առիթ տվեց 1722 թ. արշավելու Անդրկովկաս: Ռուսական զորքը օգոստոսին գրավեց Դերբենդը և Կասպից ծովի ափերով շարժվեց դեպի Գանձակ (Գյանջա):

Հայ-վրացական զինված ջոկատները ռուսներին միանալու համար շարժվեցին դեպի Գանձակ և նրա մերձակայքում՝ Զոլակ վայրում, սպասեցին նրանց: Բայց ռուսական զորքերը ետ դարձան առջևում եղած ճահճուտների պատճառով: Հայերը չհուսալքվեցին և ամրացան Հայրենի լեռներում: Դեռևս 1713 թ. լեռնական ցեղերին հակահարված տալու նպատակով Արցախի Մռավ լեռան անտառներում ստեղծվել էր ամրացված զորաճամբար, որը հայտնի է Մեծ սղնախ անունով (բառացի՝ «ամրացված վայր»): Այստեղ հայերն ունեին մոտ 10 հազարանոց զորք, որը հաջողությամբ ետ էր մղում լեզգիների հարձակումները: Սղնախներ ստեղծվեցին նաև Արցախի մյուս մասերում: Ցուրաքանչյուր մելիքություն ուներ իր սղնախը:

Ազատագրական շարժումը ծավալվեց նաև Սյունիքում, որտեղ ստեղծվեց հայկական իշխանություն՝ Դավիթ Բեկի գլխավորությամբ: Դավիթ Բեկը նշանավոր զորապետ էր վրացական բանակում, բայց երբ զգաց, որ Հայրենիքն իր կարիքն ունի (ինքն էլ ծագումով սյունեցի էր), ընդառաջեց Սյունիքից Թիֆլիս մեկնած Ստեփանոս Շահումյանի դիմումին և նրա հետ իր 30 զինակիցներով 1722 թ. մեկնեց Սյունիք: Ի տարբերություն Արցախի՝ Սյունիքի բնակչությունը միատարր չէր. այնտեղ բուն էին դրել թուրքական ցեղերը, ուստի Դավիթ Բեկն իր առաջնահերթ խնդիրը դարձրեց երկրամասը նրանցից մաքրելը: Նա առաջին հարվածը ուղղեց Որոտան գետի ձորահովտում հաստատված թուրքական քոչվոր Կարաչորլու ցեղի դեմ՝ նրանից լիովին մաքրելով այդ շրջանը: Այս հաղթանակը ոգևորեց սյունեցի մելիքներին, որոնք համախմբվեցին Դավիթ Բեկի շուրջը: Այնուհետև Շնհեր (Շինուհայր) գյուղում բերդ կառուցելով, Դավիթ Բեկն այն դարձրեց իր նստավայրը և սկսեց Ղափանը մաքրել օտար ցեղերից, պատժեց մահմեդականություն ընդունած երկու հայ մելիքների՝ Տաթև ու Երիցվանիկ գյուղերի տերերին: Թուրք խաները (Նախիջևանի, Օրդուբադի, Ղափանի, Բարգուշատի) թշնամաբար ընդունեցին Դավիթ Բեկի ձեռնարկումները, բայց նա ջախջախեց խանական ուժերին: 1724 թ. գարնանը Արցախից երկու հազարանոց մի ջոկատ օգնության եկավ Դավիթ Բեկին: Դավիթ Բեկը գրավեց Սյունիքի ամրացած կետերը և զորքը տեղաբաշխեց այդ վայրերում: Վտանգի պահին զորքը հավաքվում էր, բռունցք կազմում: Ղափանի կենտրոնում կառուցելով Հալիձորի բերդը,

Դավիթ Բեկը հաստատվեց այնտեղ և հաջողությամբ շարունակեց մարտերը թուրք խանների դեմ: Նա ուներ արդեն 7 հազարանոց զորք և կարողացավ ստեղծել Սյունիքի անկախ հայկական իշխանությունը:

1723 թ. հուլիսին, օգտվելով Պարսկաստանի ծանր վիճակից, Օսմանյան Թուրքիան ներխուժեց Անդրկովկաս: 1724 թ-ի ապրիլի 7-ից մինչև Հունիսի 7-ը Երևանի բնակիչները հերոսաբար դիմադրեցին թուրքական գերակշիռ ուժերին: Երևանը գրավելուց հետո թուրքերը շարժվեցին առաջ: Հյուսիսային երկարատև պատերազմից հոգնած Ռուսաստանը ի վիճակի չէր պատերազմի մեջ մտնել այն ժամանակ դեռ հզոր Թուրքիայի դեմ: 1724 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում ռուսները թուրքերի հետ կնքեցին պայմանագիր, որով Ռուսաստանին էին մնում նրա գրաված մերձկասպյան շրջանները, իսկ Թուրքիային էին անցնում Անդրկովկասը և Հյուսիսային Պարսկաստանը:

Թուրքական զորքերը 1725 թ. գարնանը մոտեցան Սյունիքին և Արցախին, սակայն նրանց չհաջողվեց ծնկի բերել հայերին: 1726 թ. արցախցիները ջախջախեցին Մեծ սղնախի վրա հարձակված թուրքական քառասուն հազարանոց զորքը: Բայց Սյունիքում ստեղծվեց ծանր կացություն. ապատամբների մի մասը լքեց Դավիթ Բեկին, հնազանդվելով թուրքերին: 1727 թ. գարնանը Դավիթ Բեկն ստիպված նահանջեց թուրքական գերակշիռ ուժերից և ամրացավ Հալիձորում, որի պարիսպների տակ նրա զինակիցներ Մխիթար Սպարապետը և Տեր Ավետիքը ջախջախեցին թուրքերին, Ղափանը մաքրելով նրանցից: Նույն ժամանակ թուրքերի դեմ կռիվներ էին մղում նաև պարսիկները՝ շահ Թահմազի գլխավորությամբ: Այդպիսով հայերն ու պարսիկները դարձան դաշնակիցներ: Միմյանց զորակցելով՝ նրանք Սյունիքի զգալի մասը մաքրեցին թուրքերից: 1727 թ. շահը հատուկ հրովարտակով ճանաչեց Դավիթ Բեկի իշխանությունը՝ նրան տալով նաև դրամ կտրելու իրավունք: Հայ և պարսից զորքերը միասին շարունակեցին կռիվները թուրքերի դեմ: Սակայն 1728 թ. վախճանվեց Դավիթ Բեկը: Նրա գործը շարունակեց Մխիթար Սպարապետը: Նույն թվականին թուրքերը մեծ զորքով հարձակվեցին և գրավեցին Հալիձորը: Մխիթար Սպարապետը մի քանի հաղթանակներ տարավ նրանց դեմ, սակայն 1730 թ. դավադրաբար սպանվեց իր նստավայր Խնձորեսկ գյուղում:

1729–1730 թթ. Պարսկաստանի Նադիր զորապետը աֆղաններից մաքրեց երկիրը, 1732 թ. հռչակվեց շահ և սկսեց հաղթական կռիվները թուրքերի դեմ, նրանց ծանր պարտության մատնելով Եղվարդի (1735 թ. հուլիսի 8) մոտ և այլուր մղած մարտերում: Նա վերանվաճեց նաև Արևելյան Հայաստանը: Նադիրին օգնում էին հայկական վեց զորաջոկատներ, ուստի նա ճանաչեց Արցախի հայ մելիքների ինքնավար իրավունքները, հո-

վանավորեց սյունյաց մելիքներին, Էջմիածնի Աբրահամ Կրետացի կաթողիկոսին, վերադարձրեց Էջմիածնի վանքից խլված կալվածքները:

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ: ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀՆԴԿԱՀԱՅ ԿԵՆՏՐՈՆԸ

1760-ական թթ. հայ ազատագրական շարժում սկսվեց Հնդկահայ գաղութում, որի հայ առևտրական բուրժուազիան նեղվելով անգլիացիների մրցակցությունից, երազում էր ազատագրել Հայաստանը, ստեղծել հայկական անկախ պետություն և իր հարստությունը ներդնել այնտեղ՝ ազատվելով օտար մրցակցությունից. Հնդկահայ ազատագրական շարժման ակնավոր ներկայացուցիչ էր Հովսեփ Էմինը, որը ձգտում էր ձեռք բերել զինվորական կրթություն և ազատագրել Հայաստանը: 1751 թ. 25-ամյա Էմինը Հնդկաստանի Կալկաթա քաղաքից նավով մեկնեց Անգլիա, Լոնդոնում ծանոթացավ գրող Է. Բյորքին, որի միջոցով կապեր հաստատեց անգլիական բարձր շրջանների հետ: Նա ընդունվեց Լոնդոնի ռազմական ակադեմիա, որը սակայն չավարտեց, վերահաս անգլո-ֆրանսիական պատերազմին մասնակցելու պատճառով: 1758 թ. Էմինը եղավ Անգլիայի վարչապետի մոտ, խնդրեց օգնել՝ ազատագրելու Հայաստանը, սակայն վարչապետը չընդառաջեց նրան: Ուստի Էմինը 1759 թ. մեկնեց Հայաստան՝ ժողովրդին ոտքի հանելու: Նրա հորդորով Մուշի Ս. Կարապետ վանքի վանահայր Հովնան եպիսկոպոսը կազմակերպեց արևմտահայերի ղինված ջոկատներ:

Համոզվելով, որ միայն Ռուսաստանը կարող է ազատագրել Հայաստանը, Էմինը 1760 թ. վերադարձավ Լոնդոն, ապա 1761 թ. մեկնեց Ռուսաստան: Պետերբուրգում նրան ընդունեց կանցլեր Վորոնցովը, որի հանձնարարականով Էմինը մեկնեց Վրաստանի Հերակլ II թագավորի մոտ: 1763 թ. նա հասավ Թբիլիսի և Հերակլին ներկայացրեց իր ծրագիրը, որով պետք է ստեղծվեր հայ-վրացական միացյալ բանակ և ռուսների օգնությամբ ազատագրվեր Հայաստանը, կազմվեր հայ-վրացական պետություն՝ Հերակլի գլխավորությամբ: Սակայն Հերակլը չէր կարող պատերազմել Պարսկաստանի և Թուրքիայի դեմ, ուստի չընդունեց Էմինի ծրագիրը: Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին թեև կողմ էր Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելուն (1766 թ. նա դիմեց Եկատերինա II-ին, խնդրելով Հայերին վերցնել իր հովանավորության տակ, ինչը ընդունվեց կայսրուհու կողմից), բայց դեմ ելավ Էմինի ծրագրին և Հերակլին հորդորեց նրան հեռացնել Վրաստանից: Էմինը եղավ նաև Արցախում, բայց այդտեղ ևս հաջողության չհասավ, քանի որ Արցախի մելիքները այլևս չունեին նախկին միասնությունը: Վարանդայի մելիք Շահնազարի օգնությամբ թուրք խա-

ներից մեկը՝ Փանահը, տիրանալով Շուշիին, բուն էր դրել Վարանդայի սրտում, պառակտելով մելիքների ուժերը: 1768 թ. Էմինն ստիպված վերադարձավ Հնդկաստան:

1771 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում Հայտնի վաճառական Շահամիր Շահամիրյանի և ուրիշների կողմից ստեղծվեց Հնդկահայ հայրենասերների խմբակ, որի անդամները Հայաստանն ազատագրելու համար անհրաժեշտ էին համարում նախ լուսավորել ժողովրդին: Այդ նպատակով 1771 թ. Շահամիրյանը Մադրաս քաղաքում հիմնեց տպարան և 1773 թ. հրատարակեց իր որդու՝ Հակոբի ուսուցիչ, արցախահայ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գիրքը, որտեղ հայ երիտասարդությանը կոչ էր արվում ոտքի ելնել և զինված պայքարով ազատագրել Հայաստանը, ստեղծել անկախ հայկական պետություն (սահմանադրական միապետության ձևով): 1789 թ. լույս տեսած՝ Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունը Հայաստանի առաջին սահմանադրությունն էր: Այն նախատեսում էր բուրժուական հանրապետություն ստեղծել Հայաստանում: Գերագույն իշխանությունը պետք է իրականացներ «Հայոց տունը» ՝ պառլամենտը: Սակայն Հայաստանում ստեղծված պայմաններում հնարավոր չէր բուրժուական առաջադիմական գաղափարների իրագործումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Բռնությունների, պատերազմների հետևանքով Հայաստանում ստեղծված դառնաղետ իրավիճակից հայերը ելք էին գտնում արտագաղթի մեջ: Հայ բնակչության արտահոսքը մեծ չափերի հասավ Հայոց Բագրատունիների թագավորության անկումից (1045 թ.) հետո, սելջուկ-թյուրքական արշավանքների ժամանակ:

Հայկական հնագույն գաղթավայրերից էր Կոստանդնուպոլսի գաղութը, որտեղ հայերը հաստատվել էին սկսած V դարից: XIII դարից այստեղ արդեն կար հոծ հայություն, որն ուներ եկեղեցի, եպիսկոպոսներ: 1461 թ. թուրքական սուլթանի հրամանով ստեղծվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, որը տնօրինում էր արևմտահայության հոգևոր կյանքը, սուլթանի օգտին նրանից հավաքում էր հարկերը: XVI դարում Կ. Պոլսում 200 հազար հայ կար: XVII դարից Պոլսի հայ առևտրականներն ունեին շատ խանութներ, իջևանատներ, կրում էին «խոջա» (պարսկերեն՝ «հարուստ», «վաճառական»), իսկ XVIII դարից՝ «ամիրա» (արաբերեն՝ «իշխան») պատվանունները: Ամիրայությունն ազդեցիկ դեր էր խաղում հայոց ազգային կյանքում: Որոշ հայ ամիրայական տների ներկայացուցիչներ բարձր դիր-

քերի հասան թուրքական պետության համակարգում: 1567 թ. հայերից Աբգար Դպիրը Կ. Պոլսում ստեղծեց առաջին տպարանը: XI դարից հայեր են հաստատվել նաև Զմյուռնիայում, XV դ.՝ Անկարայում և այլուր:

Հայկական գաղութներ կային նաև Եգիպտոսում, Սիրիայում: VII–X դարերում Եգիպտոսի հայերը վարում էին պետական և զինվորական բարձր պաշտոններ: X դարից Եգիպտոսի հայերի թիվն ավելացավ՝ հասնելով մոտ 30 հազարի: XI–XII դարերում Եգիպտոսի վեզիրների մեծ մասը հայեր էին: XVII դ. Լիբանանի քրիստոնյա ֆեոդալները ապաստան տվեցին հայերին, որպեսզի ամրապնդեն իրենց դիրքերը:

Պարսկաստանում հայերը բնակվել են սկսած III դարից: 369 թ. պարսից Շապուհ II արքան Հայաստանի քաղաքների բնակչության զգալի մասը գաղթեցրեց Պարսկաստան: 1604 թ. բռնագաղթի ժամանակ Աբբաս I–ը Պարսկաստան քշեց մոտ 300 հազար հայերի: Նրանց մի մասը Սպահանի մոտ հիմնեց քաղաք՝ այն կոչելով հայրենի Ջուղա քաղաքի անունով՝ Նոր Ջուղա: Վերջինս XVII դարում ուներ 30 հազար բնակիչ, ինքնավարություն: Նոր Ջուղայի հայ վաճառականները (խոջաները) XVII դ. 2–րդ կեսին կազմակերպեցին առևտրական ընկերություններ: 1667 թ. նրանք Ռուսաստանի հետ կնքեցին առևտրական պայմանագիր, որով հայերը կարող էին ազատ առևտուր անել Ռուսաստանի և նրա վրայով՝ Եվրոպայի հետ: Նոր Ջուղան դարձավ հայ մշակույթի, գրչության կենտրոն: Նրա Ամենափրկիչ վանքին կից կար դպրոց և մատենադարան: 1638 թ. Նոր Ջուղայում հիմնվեց տպարան, որն առաջինն էր Պարսկաստանում:

Հայության կյանքում ազդեցիկ դեր խաղաց նաև Հնդկահայ գաղութը: XVII դ. վերջերից Իրանում ստեղծված տնտեսական ծանր վիճակի, կրոնական հալածանքների պատճառով նորջուղայեցիների մի մասը ստիպված հեռացավ Հնդկաստան՝ բնակություն հաստատելով Մադրաս, Կալկաթա, Ագրա, Բոմբեյ և այլ քաղաքներում: Հայերին սիրաշահում էին Հնդկաստանի տիրակալները, որոնցից մեկի՝ Աքբար արքայի (1556–1605) կինը՝ Մարիամ թագուհին, հայուհի էր: Հնդկաստանի և Եվրոպայի միջև կատարվող առևտուրը հայերի ձեռքին էր: Հայերն ունեին նաև սեփական նավեր: Սակայն XVII դ. վերջից Հնդկաստանում ուժեղացավ անգլիացիների ազդեցությունը: Հնդկահայ առևտրական բուրժուազիան չդիմացավ զորք և հզոր նավատորմ ունեցող անգլիացիների մրցակցությանը և հետզհետե կորցրեց շուկաներում ունեցած ազդեցությունը: Ուստի հայերը միացան անգլիացիների դեմ հնդիկների 1762 թ. ապստամբությանը: Հայազգի Գրիգոր Հարությունյանը (Գորգին խան) գլխավորեց հնդիկ ապստամբների զորքը:

1794 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում սկսեց լույս տեսնել հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:

XI դ. կեսերից, երբ Բագրատունյաց թագավորությունն անկում ապ-

րեց, բազմահազար հայեր (մեծ մասը Անիից) գաղթեցին Ղրիմ, որտեղ հայության թիվը մեծացավ XVI–XVII դարերում (նրանք թվով երկրորդ տարին էին թաթարներից հետո): Ղրիմի հայերն ունեին ներքին ինքնավարություն, սեփական զորք, զբաղվում էին այգեգործությամբ, արհեստներով և առևտրով: Ղրիմում զարգացում ապրեց հայ մշակույթը, ստեղծվեց ուրույն մանրանկարչական դպրոց: Մշակույթի կենտրոններ էին հայաշատ քաղաքները՝ Կաֆան (այժմ՝ Թեոդոսիա), ուր XV դ. կեսին 50 հազար հայեր էին բնակվում և Սուրխաթը (այժմ՝ Ստարի Կրիմ):

XI դ. կեսերից հայերը հանդիպանել են նաև Արևմտյան Եվրոպայում: XI դ. հիմնվեց Վենետիկի հայ գաղութը, որը ստվարացավ XIII դ.: 1512 թ. այնտեղ ստեղծվեց առաջին հայ տպարանը: XVI–XVII դդ. շատ հայեր կային նաև Հոլանդիայի Ամստերդամ, Իտալիայի Հռոմ, Ջենովա, Ֆրանսիայի Մարսել քաղաքներում:

Ստվարաթիվ հայություն կար նաև Ուկրաինայում և Լեհաստանում, ուր XVII դ. մոտ կես միլիոն հայեր էին բնակվում: Կիևում XI դ. ստեղծվեց հայկական գաղութ, որը մեծացավ XVI–XVII դդ.: Հայերն ստեղծեցին իրենց զորքը, ինքնավար մարմինները (դատարան, խորհուրդ և այլն), հիմնեցին եկեղեցիներ, դպրոցներ, որոշ քաղաքներում (Լվով և այլն) նաև՝ տպարան ու թատրոն: XVIII դ. Լեհաստանի հայ գաղութը չդիմանալով կաթոլիկության դավերին, ոսկեղված ընդունեց կաթոլիկություն և գրեթե լիովին կորցրեց իր ազգային դիմագիծը, լեզուն: 1596 թ. Բրեստի ունիայով Ուկրաինական եկեղեցին միացավ կաթոլիկ եկեղեցուն, ուստի հայերը հեռացան Կիևից, տպավիններով Մոսկվային, որի կենտրոնում տակավին XV դ. ստեղծվել էր հայկական գաղութ: XVII դ. սկզբին Մոսկվայի Պրեսնյա թաղում կառուցվեց հայկական եկեղեցի և հայոց ազգային գերեզմանոց («Վաղանովյան»), որի այժմյան եկեղեցին կառուցվել է 1801 թ.:

XVI դարից սավարաշատ հայ գաղթավայր էր նաև Աստրախանը, որտեղ հայերն ունեին սեփական դատարան, ուստի XVIII դ. ստեղծեցին հայերեն դատաստանագիրք:

XVIII դ. հայկական գաղթավայրեր հիմնվեցին նաև Նոր Նախիջևանում (Դոնի Ռոստովի մերձակայքում), Գրիգորիոպոլում (Դնեստրի ավազանում), Պետերբուրգում, Հյուսիսային Կովկասում: Դաղստանի Ղզլար քաղաքում հայերը հաստատվել են նրա հիմնադրման ժամանակ՝ 1735 թվականից: XVIII դ. 2-րդ կեսին այնտեղ բնակվում էին մոտ 2800 հայեր, որոնք ունեին իրենց դատարանը, դպրոցները:

XV դ. 2-րդ կեսից Ղրիմից, հետագայում նաև Հայաստանից հայերը գաղթել են Չերքեզիա: Չերքեզահայերն ունեին ներքին ինքնավարություն: 1839 թ. նրանք հիմնեցին Արմավիր ավանը (1914-ից՝ քաղաք): 1763 թ. Օսեթիայում ռուսների հիմնած Մոզդոկ ավան Եկատերինա II-ի հրա-

մանով տեղափոխվեցին ավելի քան 2000 հայեր (Ղզլարից և այլ վայրերից), որոնք ունեին իրենց դատարանը, առևտրական արտոնություններ, երկու եկեղեցի, ուսումնարան: 1799 թ. հայերը հիմնեցին Սուրբ խաչ ավանը (այժմ՝ Ստավրոպոլի մարզի Բուդյոնովսկ քաղաք), որն ուներ հայկական դատարան, եկեղեցի:

Հայերը Պետերբուրգում հաստատվել են XVIII դ. սկզբներին: 1779 թ. այնտեղ հիմնվեց հայկական եկեղեցի: Նույն դարում պետերբուրգցի հայերը հիմնեցին մետաքսի ֆաբրիկաներ: XVIII դ. 2-րդ կեսից Պետերբուրգում լայն գործունեություն ծավալեց Հայազգի Լազարյան տոհմը, որի ներկայացուցիչները հայտնի էին որպես խոշոր կալվածատերեր և արդյունաբերողներ: Նրանք 1815 թ. Մոսկվայում հիմնեցին Լազարյան ճեմարանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XV–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XV–XVIII դդ. Հայաստանում ստեղծված օրհասական պայմաններում հայ մշակույթի զարգացումը չընդհատվեց: Աշխուժացում ապրեց կրթական գործը, գիտությունը: XV դ. սկզբին շարունակում էր գործել Տաթևի համալսարանը: Նշանավոր կրթօջախներ էին XVI դ. վերջին Բաղեշի (Բիթլիս) Ամրդոլու վանքի դպրոցը և Սյունյաց Մեծ անապատի դպրոցը (Տաթևի մոտ), Մեծոփա վանքի դպրոցը Վանա լճի մոտ:

Հայ մշակույթի զարգացման համար ավելի բարենպաստ պայմաններ կային հայկական գաղթավայրերում: 1717 թ. Վենետիկի մոտ, Ս. Ղազար կղզում Մխիթար Սեբաստացին հիմնեց կրոնական միաբանություն, որը հետագայում կոչվեց նրա անունով: Մխիթարյան միաբանության մի ճյուղավորումը 1811 թ. հաստատվեց Վիեննայում: Մխիթարյանները մեծապես զարգացրին հայագիտությունը՝ Մ. Սեբաստացու, Մ. Զամչյանի, Ղ. Ինճիճյանի, Ղ. Ալիշանի, Մ. Ավգերյանի, Ա. Այտընյանի և ուրիշների ներդրած ջանքերի շնորհիվ: 1719 թ. հայկական դպրոց հիմնվեց Կ. Պոլսում, 1730-ական թվերին՝ Նոր Ջուղայում:

Առաջընթաց ապրեց նաև գիտությունը, հատկապես պատմագրությունը: XVII դ. պատմագիրներ Առաքել Դավրիժեցին, Գրիգոր Դարանաղցին, Զաքարիա Քանաքեռցին, XVIII դ. պատմիչներ Աբրահամ Կրետացին, Աբրահամ Երևանցին ստեղծեցին մեծարժեք երկեր: Հայ նոր պատմագրության հիմքը դրեց Մ. Զամչյանը, որի եռահատոր «Հայոց պատմություն» գործում դեպքերի շարադրանքը սկսվում է վաղ ժամանակներից հասցնելով 1784 թ.: Բառարանագրության ասպարեզում մեծ ներդրում էր 1749 թ. Վենետիկում լույս տեսած «Հայկազյան բառարանը» (2 հատորով):

Որոշակի զարգացում ապրեցին նաև բնական գիտությունները: XV դ

բժիշկ–բնագետ Ամիրդովլաթ Ամասեցու «Օգուտ բժշկության» գրքում տրված են 209 հիվանդությունների ախտորոշումը, բուժման եղանակները: Նրա մեկ այլ գրքում՝ «Ախրապատին»–ում, բերված են 3700 անուն բուժիչ դեղանյութեր, նշված են դրանց կիրառման եղանակները: XVII դ. հայ կենդանաբան Աբրահամ Կոստանդնուպոլսեցին գրել է մեզ հասած հայերեն ամենահին կենդանաբանական ձեռնարկը:

Հայ գրականությունը ևս առաջընթաց ապրեց: XVI դ. բանաստեղծ Նահապետ Քուչակը իր տաղերում երգել է սերը, կանացի գեղեցկությունը: XVIII դ. քնարաշունչ գործեր ստեղծեց Սայաթ–Նովան, որից մեզ հասած ավելի քան 200 երգերում (հայերեն, վրացերեն և թուրքերեն) գովերգվում է սերը, կանացի գեղեցկությունը: Հայ նկարիչների նշանավոր գերդաստանի նախնին՝ Հովնաթանը (1661–1722), որ հայտնի էր Նաղաշ («Նկարիչ») անունով, գրել է սիրային և խրատական տաղեր: Նա նաև երաժիշտ էր, նկարիչ: Մնվել է Գողթն գավառի Շոռոթ գյուղում: Նրա գործը շարունակեցին որդիները՝ Հարությունը, Հակոբը և վերջինիս որդին՝ Հովնաթանը, որը նկարազարդեց Էջմիածնի մայր տաճարը: XVII դ. նշանավոր նկարիչ էր նաև Մինաս Ջուղայեցին:

Հայ ճարտարապետության զարգացումը XV–XVII դարերում սահմանափակվեց փոքր եկեղեցիների (մատուռների) կառուցմամբ, խաչքարերի, շենքերի փորագիր զարդանախշերի ստեղծմամբ: Հայազգի ճարտարապետ Սինանյանը (Սինան (1490–1588 թթ.) ստեղծեց թուրքական ճարտարապետության գլուխգործոցները՝ Ադրիանապոլսի Սելիմիե մզկիթը, Կ. Պոլսի Կապույտ մզկիթը, ուր տեղավորվում է 25 հազար մարդ, և հարյուրավոր այլ շինություններ:

XVI դ. սկզբնավորվեց հայ տպագրությունը: 1512 թ. Հակոբ Մեղապարտը Վենետիկում ստեղծեց հայկական առաջին տպարանը, որտեղ նույն թվին տպագրեց հայերեն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը» ապա «Պարզատումարը», «Տաղարանը» և այլն: XVII դ. հայկական տպարաններ հիմնվեցին Նոր Ջուղայում, Ամստերդամում, Մարսելում, Կ. Պոլսում, XVIII դ.՝ Մադրասում, Պետերբուրգում և այլուր: 1771 թ. հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին Էջմիածնում հիմնեց տպարան, որն առաջինն էր Հայաստանում: 1776 թ. Էջմիածնում նա հիմնեց նաև թղթի գործարան:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

XIX դ. սկզբներին Արևելյան Հայաստանը շարունակում էր մնալ Պարսկաստանի կազմում, ընդգրկելով Երևանի, Նախիջևանի, Մակուի և Ղարաբաղի խանությունները: 1801 թ. սեպտեմբերի 18-ին Արևելյան Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Դա ազատագրվելու հույս ներշնչեց հայերին: Նույն թվին Վրաստանի հետ Լոռին ևս միացվեց Ռուսաստանին: Օրակարգում դրվեց Արևելյան Հայաստանի մյուս մասերի ազատագրումը: Թուրքական տիրապետության տակ մնացին նաև Ախալքալաքի և Ախալցխայի շրջանները, Արևմտյան Վրաստանը: Սև ծովի ափերին ամրանալու համար Ռուսաստանը պիտի տիրեր Կովկասին: Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը համընկնում էր հայ ժողովրդի ազգային շահերին: Հայերը ռուսների օգնությամբ հույս ունեին ազատագրվել պարսկա-թուրքական բռնապետությունից, ուստի ամեն կերպ աջակցում էին նրանց: 1804 թ. ռուսական զորքը գեներալ Ցիցիանովի գլխավորությամբ առաջին անգամ արշավեց Երևանի վրա, որով սկսվեց 1804–1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Ռուսական զորքին չհաջողվեց Երևանը գրավել պարենի, զինամթերքի պակասության պատճառով: Բայց 1805 թ. ռուսները գրավեցին Շիրակն ու Ղարաբաղը:

1806 թ. դեկտեմբերին սկսված ռուս-թուրքական պատերազմը (1806–1812) ռուսներին ստիպեց նոր ճակատ բացել Կովկասում: 1807 թ. թուրքական զորքը հարձակվեց Գյումրիի վրա, բայց հունիսի 18-ին Ախուրյանի ափին ծանր պարտություն կրեց:

1808 թ. սեպտեմբերին ռուսական բանակը գեներալ Գուդովիչի գլխավորությամբ երկրորդ անգամ հարձակվեց Երևանի վրա, գրավեց Էջմիածինը, Նախիջևանը, սակայն Երևանի անառիկ բերդն այս անգամ ևս գրավել չհաջողվեց՝ դարձյալ զինամթերքի ապառման պատճառով: 1812 թ.

ոգեկոչվելով Ռուսաստանի դեմ Նապոլեոնի արշավանքից, պարսից զորքը հարձակման անցավ ռուսների դեմ: Պարսից թագաժառանգ Աբաս Միրզան 20 հազարանոց բանակով փորձեց մտնել Ղարաբաղ, բայց Արաքսի ափին պարտություն կրեց: 1813 թ. հոկտեմբերի 24-ին Արցախի Գյուլիստան բերդավանում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրով Պարսկաստանը ճանաչեց Արևելյան Վրաստանի, Լոռիի, Շիրակի, Ղարաբաղի, Զանգեզուրի, ինչպես և Գյանջայի, Շիրվանի, Բաքվի և Հարևան խանությունների միացումը Ռուսաստանին:

Պարսիկները դժգոհ էին Գյուլիստանի պայմանագրից և հարմար առիթի էին սպասում այն չեղյալ համարելու համար: Դեկաբրիստների ապստամբության լուրն ստանալով, նրանք կարծեցին, թե Ռուսաստանում հեղաշրջում է կատարվել, և 1826 թ. հուլիսի 17-ին խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժեցին Ղարաբաղ, Շիրակ և Լոռի, որով սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը (1826–1828): Հայերը ռուսական զորքի հետ կողք-կողքի կռվում էին պարսից զորքի դեմ: Հուլիսի 26-ին պարսից 60 հազարանոց բանակը պաշարեց Շուշին, որի ռուսական կայազորը հայերի զորակցությամբ հերոսաբար դիմադրավեց հակառակորդի գերակշիռ ուժերին: Պարսկական մեկ այլ բանակ մտավ Շիրակ և շարժվեց Գյումրիի վրա, սակայն Խլի Ղարաքիլիսա (այժմ՝ Ախուրյանի շրջանի Ազատան) գյուղի հայ բնակիչները հերոսաբար պաշտպանվեցին, ետ մղելով պարսից զորքի բազմաթիվ գրոհները (այդ կռիվները նկարագրել է Խ. Աբովյանը՝ «Վերք Հայաստանի» վեպում): Պարսից զորքին հերոսաբար դիմադրություն ցույց տվեցին նաև լոռեցիների կամավորական ջոկատները, որոնցից հատկապես աչքի ընկավ Գրիգոր Մանուչարյանի 500 մարտիկներից բաղկացած հեծյալ ջոկատը: 1826 թ. սեպտեմբերի 3-ին Հայազգի գեներալ Մադաթովը Շամխորի մոտ փայլուն հաղթանակ տարավ պարսիկների դեմ: Տասը օր հետո գեներալ Պասկևիչը Գյանջայի մոտ պարտության մատնեց պարսկական մեկ այլ բանակի: 1827 թ. սկզբին ռուսական զորքը շարժվեց Երևանի վրա: Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին հայերին կոչ արեց զորավիգել ռուսական զորքերին: Հայերը կազմակերպեցին կամավորական երեք ջոկատ: 1827 թ. ապրիլի 13-ին ռուսական զորքը գրավեց Էջմիածինը:

1827 թ. ապրիլի 27-ին ռուսական բանակը գեներալ Պասկևիչի գլխավորությամբ պաշարեց Երևանի բերդը, իսկ հունիսի 26-ին գրավեց Նախիջևանը: Հուլիսի 7-ին ռուսական բանակը Արաքսի ափին ջախջախեց պարսից զորքը, գրավելով Աբբասաբադի բերդը: Թվում էր, թե պարսիկները միառժամանակ ձեռնպահ կմնան հարձակումներից, ուստի Կրասովսկու դիվիզիան հանգստի մեկնեց Ապարան: Սակայն պարսկական զորքը

Աբբաս Միրզայի գլխավորությամբ անսպասելիորեն հարձակման անցավ և օգոստոսի 6-ին գրավեց Աշտարակը, նույն ամսի 15-ին պաշարեց Էջմիածինը, որի հայ պաշտպանները հերոսաբար դիմակայեցին նրան: Ներսես Աշտարակեցին Կրասովսկուց խնդրեց օգնության հասնել, ինչը չուշացավ: Ռուսների երեք հազարանոց զորքը 1827 թ. օգոստոսի 17-ին Օշականի մոտ բախվեց պարսիկների 30 հազարանոց բանակի հետ: Մարտի թեժ պահին պարսկական բանակի հայ թնդանոթաձիգ Հակոբ Հարությունյանը հրանոթի կրակն ուղղեց պարսից զորքի դեմ՝ խուճապի մատնելով նրան: Դրանից օգտվեցին ռուսները և ճեղքելով պաշարումը, հասան Էջմիածին՝ կանխելով պարսիկների կողմից նրա գրավումը: Պարսից հրամանատարությունը հանել տվեց խիզախ հրանոթաձիգի աչքերը, կտրել տվեց լեզուն, ականջները, քիթը, ձեռքերը: Մի կերպ ուշքի գալով, Հակոբը հասավ Էջմիածին: Ռուսական կառավարությունը նրան ցմահ ռոճիկ նշանակեց: Օշականում հերոսաբար զոհված ավելի քան 1000 ռուս զորայինների պատվին Էջմիածնի վանքի միջոցներով 1834 թ. կառուցվեց հուշարձան, որը մնում է նաև այժմ:

1827 թ. սեպտեմբերին ռուսական զորքը վճռական հարձակման անցավ, գրավեց Սարդարապատի բերդը (Արմավիրի շրջան), վեց օր հետո՝ սեպտեմբերի 25-ին վերստին պաշարեց Երևանի բերդը, որը հույժ անառիկ էր: Նրա մի կողմում Հրազդանի դժվարամատչելի կիրճն էր, մյուս կողմերից այն պատած էր լայնանիստ կրկնակի պարիսպներով: Երևանի Հասան խանը բերդում ուներ վեց հազար զինվոր և 53 հրանոթ: Հինգ օր տևած ռմբակոծությունից հետո, 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի բերդի հարավարևելյան պարսպի մեջ բացված անցքով ռուսները ներս մտան բերդ և գրավեցին այն՝ տալով ընդամենը 52 վիրավոր ու սպանված: Գերի վերցվեցին բազմաթիվ պարսիկ զինվորներ և Հասան խանը:

1828 թ. փետրվարի 10-ին, Թավրիզից Թեհրան տանող ճանապարհին՝ Թուրքմենչայ գյուղում կնքվեց ռուս-պարսկական հաշտության պայմանագիր, որով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Պարսկահայերին իրավունք տրվեց մեկ տարվա ընթացքում իրենց ունեցվածքով վերաբնակվել Արևելյան Հայաստանում: Ռուսաստանը կամենում էր հայերին, որպես հուսալի և նվիրված ժողովրդի, բնակեցնել իր հարավային սահմաններում: 1828–1829 թթ. Արևելյան Հայաստան գաղթեցին մոտ 50 հազար պարսկահայեր, որոնք վեց տարի ազատվեցին հարկերից: Հայերի գաղթը կազմակերպելու գործում մեծ օգնություն ցուցաբերեց Պարսկաստանում ռուսական դեսպան, գրող Ա. Ս. Գրիբոյեդովը:

Սակայն հայ ժողովրդի արևմտահայ հատվածը մնաց Օսմանյան Թուրքիայի բռնատիրության տակ: 1828 թ. ապրիլին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, որը ազատագրվելու հույսեր ներշնչեց արևմտահայերին:

Այդ պատերազմը ընթանում էր Բալկանյան և Կովկասյան ճակատներում: 1828 թ. Հունիսին Կովկասյան բանակի հրամանատար Պասկևիչը գրավեց Կարսի անառիկ բերդը: Օգոստոսին ռուսները տիրացան Բայազետին, Ալաշկերտի դաշտին: Բայազետի և մյուս շրջանների հայերը ստեղծեցին կամավորական ջոկատներ, զորակցեցին ռուսական բանակին: 1829 թ. մարտին թուրքական զորքը հարձակման անցավ Կարսում, Ախալցխայում ամրացած ռուսական զորքերի դեմ: Ախալցխայի ռուսական զորաբաժինը, Հայազդի գեներալ Վ. Բեհբութովի գլխավորությամբ, տեղացի հայերի, վրացիների օգնությամբ, հերոսաբար դիմադրեց, մինչև օժանդակ ուժերի ժամանումը, որից հետո թշնամին նահանջեց: 1829 թ. Հունիսին ռուսները գրավեցին նաև Էրզրումը:

Բալկանյան ճակատում ռուսները նույնպես տարան մի շարք հաղթանակներ: 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլիս քաղաքում կնքվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիր, որով Թուրքիան ճանաչեց Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերով Անդրկովկասի միացումը Ռուսաստանին: Ռուսաստանին էին անցնում Դանուբի գետաբերանը և Սև ծովի կովկասյան ափերը՝ Կուբան գետից մինչև Փոթի ընկած տարածքը, ինչպես նաև Ախալցխայի և Ախալքալաքի շրջանները: Թուրքիան ճանաչեց Հունաստանի, Սերբիայի և Մոլդավիայի ինքնավարությունը:

Արևմտյան Հայաստանի գրավված շրջանները եվրոպական պետությունների հարկադրանքով Ռուսաստանը վերադարձրեց Թուրքիային: Ադրիանապոլսի պայմանագրով արևմտահայերին թույլ տրվեց գաղթել ռուսական սահմաններ: 1829–1830 թթ. ընթացքում Արևելյան Հայաստան գաղթեցին մոտ 100 հազար հայեր: Էրզրումի փաշայությունից հայերը գաղթեցին Ախալցխայի, Ախալքալաքի, Ծալկայի շրջաններ և Լոռիի այլ բնակավայրեր: Կարսից հայերը տեղափոխվեցին Շիրակ, Ապարան, Թալին, Բայազետից՝ Սևանի ավազան, Դարաչիչակ (Ծաղկաձոր) և Սուրմալու:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու շնորհիվ ապահովվեց հայերի հավաքական ազգային գոյատևումը Ռուսաստանի հովանու ներքո: Հայերի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսական առաջընթացի, մշակույթի զարգացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830–1850-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1828 թ. մարտի 28-ին Նիկոլայ I ցարի հրամանով նախկին Երևանի ու Նախիջևանի խանությունների տարածքում ստեղծվեց Հայկական մարզը, որի կառավարիչը 1830 թ. դարձավ Վ. Բեհբութովը: 1840 թ. Հայկական մարզը վերացվեց: 1844 թ. հիմնվեց Կովկասի փոխարքայությունը:

1846 թ. Անդրկովկասը բաժանվեց նահանգների: 1849 թ. ստեղծված Երևանի նահանգն ընդգրկում էր Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները: 1836 թ. հրատարակված եկեղեցական կանոնադրությամբ հայ ժողովուրդն իրավունք ստացավ, որպես առանձին համայնք, պահպանել իր լեզուն, կրոնը, բացել դպրոցներ: Կաթողիկոսին ընտրելու էին հայերը, հաստատելու էր ցարը:

Ծանր էր արևմտահայերի վիճակը: Թուրքիայում նրանք զրկված էին տարրական իրավունքներից: Հայերի բնական աճը կանգ էր առել հալածանքների, բռնությունների, կեղեքումների պատճառով:

Հայերի մեջ ազատագրական հույսեր ծնեց 1853 թ. հոկտեմբերի 4-ին սկսված Ղրիմի պատերազմը, մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից Թուրքիայի ու նրան զորակցող Անգլիայի, Ֆրանսիայի միջև: Բայց այս անգամ ևս արևմտահայերի հույսերը չիրականացան: 1856 թ. մարտի 30-ին Փարիզում կնքված պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Կարսը և Արևմտյան Հայաստանի գրավված շրջանները:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1840-ական թթ. պոլսահայությունը եռանդուն պայքար տարավ հայ մեծահարուստների՝ ամիրաների դեմ, կամենալով նրանց զրկել ազգային գործերը տնօրինելու մենաշնորհից: 1857 թ. մի խումբ հայ մտավորականներ (Ն. Ռուսինյան, Գ. Օտյան և ուրիշներ) մշակեցին արևմտահայերի ազգային կանոնադրությունը, որը հաստատվեց 1860 թ. Կ. Պոլսի հայոց Ազգային ընդհանուր ժողովի, իսկ 1863 թ.՝ սուլթանի կողմից: Ըստ այդ կանոնադրության՝ պահպանվեց Ազգային ընդհանուր ժողովը, ստեղծվեցին Ազգային կենտրոնական վարչություն (գործադիր մարմին), Ազգային ժողով (օրենսդիր մարմին), ազգային-կրոնական ժողով (հոգևոր գործերի) մարմինները, որոնք ներկայացուցչական էին, ընտրովի: Ազգային ընդհանուր ժողովը բաղկացած էր 220 երեսփոխաններից (պատգամավորներից): Հիմնվեցին նաև տնտեսական, ուսումնական, դատաստանական, վանքերի և թաղական խորհուրդներ: Սակայն այդ կանոնադրությունը Ազգային սահմանադրություն չէր (որպիսին անգամ Թուրքիան չուներ այդ ժամանակ) և որևէ կերպ չէր կարող արևմտահայությանը զերծ պահել թուրքական պետության կամայականություններից: Բայց ազգային սահմանադրությունը հայ ամիրաներին զրկեց ազգային գործերը լիիշխան կերպով տնօրինելու իրավունքից:

ԶԵՅԹՈՒՆԻ 1862 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքական պետությունը 1860–ական թթ. ավելի ուժեղացրեց Հայերի հանդեպ կիրառվող բռնությունները, որոնց կարելի էր դիմակայել միայն զենքով: Այդ ճշմարտությունը լավ էին ըմբռնել քաջակորով զեյթունցիները: Զեյթունը (Ուլնիա) Կիլիկիայում էր, Տավրոս լեռներում, Մարաշի փաշայությունում: Շրջակա գյուղերով Զեյթունն ուներ 40 հազար Հայ բնակիչ, պահպանում էր կիսանկախ վիճակը: Սակայն սուլթանը չհանդուրժեց դա: 1862 թ. Մարաշի փաշան մեծաթիվ զորքով (մոտ 50 հազար) հարձակվեց Զեյթունի վրա, ավերեց տասը գյուղ, սակայն զեյթունցիները հակահարված տվեցին նրան: Հայերն ունեին 5000 զինվոր և վճռեցին կռվել մինչև վերջ: 1862 թ. օգոստոսին 2–ին Ջերմուկի դաշտում նրանք ջախջախեցին թուրք զորքին, որը խուճապահար փախավ, մարտադաշտում թողնելով 2000–ից ավելի սպանվածներ, երկու թնդանոթ: Այդ մարտում աչքի ընկավ երիտասարդ Մարկոս Թաշճյանը, որը լռեցրեց թշնամու հրանոթը և հերոսաբար զոհվեց: Զեյթունը պաշարվեց: Սուլթանը նոր ուժեր ուղարկեց նրա դեմ: Կ. Պոլսի Հայոց պատրիարքի և Թուրքիայում ֆրանսիական դեսպանի միջամտությամբ կասեցվեց թուրքական նոր հարձակումը: Սակայն Զեյթունը զրկվեց նախկին կիսանկախ վիճակից: Այնտեղ առաջին անգամ թուրքական զորք տեղակայվեց, զեյթունցիները պարտավորվեցին հարկ վճարել: 1865 թվականից Զեյթունում նշանակվեց թուրք կառավարիչ:

Թուրքական կառավարության բռնությունները շարունակվեցին նոր ուժով: 1850–1860–ական թվականներից իրեն ղգալ տվեց նաև թուրք բուրժուազիան՝ իր ծայրահեղ ազգայնամոլական ծրագրերով: 1868 թ. նա հիմնեց «Իթթիհաթ» կազմակերպությունը, որի նշանաբանն էր՝ «Թուրքիան թուրքերի համար» լոզունգը: Հետևաբար Թուրքիայի մյուս ազգերը պետք է ձուլվեին, կամ ոչնչացվեին, արտաքսվեին:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 1850–1860–ԱԿԱՆ ԹԹ.

1850–1860–ական թվականներին կապիտալիստական հարաբերությունների զարգացման, ֆեոդալիզմի վերացման պայմաններում սրվեց պայքարը Հնի ու նորի միջև: Հայ գործիչները յուրովի ընկալելով Հասարակության կապիտալիստական զարգացումը, ուղիներ էին որոնում Հայաստանի ապագա կացության, զարգացման հեռանկարների համար: 1850–ական թթ. ձևավորվեցին երեք գլխավոր հոսանքներ՝ կղերաֆեոդալական, լիբերալ–բուրժուական և հեղափոխական–դեմոկրատական:

Կղերաֆեոդալական հոսանքը կամենում էր պահպանել ֆեոդալական հարաբերությունները, ցարական միապետությունը, հայ ազգի գոյութ-

յան միակ հենարանն էր համարում Հայոց եկեղեցին, գրաբար լեզուն: Այս ուղղության պարագլուխներն էին՝ Ներսես Աշտարակեցին, Լազարյանները, Մսեր Մսերյանը, Գաբրիել Այվազովսկին, Հ. Զամուռճյանը:

Բուրժուական հարաբերությունների զարգացման պայմաններում հույժ մեծացավ ազգային դպրոցների, գրականության, տպագրության կարիքը, հատկապես կարևորվեց գրական նոր լեզվի մշակումը, որի ջատագովներն էին լիբերալ–բուրժուական հոսանքի ներկայացուցիչները: Սրանց պարագլուխներն էին՝ Գր. Արծրունին, Ստ. Նազարյանը, Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, որոնք կամենում էին ռեֆորմների միջոցով բարեփոխել հասարակական հարաբերությունները, երկրում հաստատել բուրժուական կարգեր: Ստ. Նազարյանը գտնում էր, որ լուսավորությունը հոգի և զորություն կտա Հայ ազգին, որպեսզի նա դիմանա օտարի կլանող բռնությանը: Մոսկվայում նա հրատարակեց «Հյուսիսափայլ» ամսագիրը (1858–1864): Այս հոսանքը մերժում էր հեղափոխությունը որպես հասարակությունը բարենորոգելու միջոց, կողմ էր խաղաղ վերափոխումների (ռեֆորմների):

Հեղափոխական–դեմոկրատական հոսանքը կողմ էր երկրում հեղափոխության միջոցով դեմոկրատական կարգերի հաստատմանը: Հոսանքի պարագլուխ Միքայել Նալբանդյանը (1829–1866) ժխտում էր Հայ վերնախավի ազգասիրությունը, գտնում էր, որ նրան պետք է հեռու պահել ժողովրդին լուսավորելու գործից, ինչը անհրաժեշտ է սկսել հասարակ ժողովրդից: Բայց լուսավորությունը կարող է տարածվել միայն ազատության պայմաններում: Նալբանդյանը օտարի լծից Հայ ժողովրդի ազատագրման ուղիղ ճանապարհ էր համարում երկրագործությունը, գտնում էր, որ հողը պետք է հանձնել այն մշակողին: Իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքում նա գրում է, որ արևմտահայությունը պետք է ստեղծի «ազգային վաճառականություն», որպեսզի պաշտպանվի թե ֆեոդալական կամայականություններից և թե կապիտալից: Մերժում էր կապիտալիզմը, այն դիտելով որպես չարիք, որից փրկվելու միակ ուղին համարում էր համայնական հողատիրությունը: Արևմտահայերից Նալբանդյանի հետևորդն էր Հարություն Սվաճյանը (1831–1874), որն իր հրատարակած «Մեղու» թերթում սուր քննադատության էր ենթարկում ժողովրդի հարստահարիչներին, թուրքական պաշտոնյաներին: Նա նաև քաղաքական պայքարի կոչ էր անում:

1870 Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1870 թ. Անդրկովկասում անցկացվեց գյուղացիական ռեֆորմ: Արևելյան Հայաստանում այն տարածվեց միայն կալվածատիրական (մուլքադարական) գյուղացիների վրա, որոնք առավել ծանր վիճակում էին: Բայց նրանք կազմում էին ամբողջ գյուղացիության սոսկ 25 տոկոսը: Ռեֆորմը չտարածվեց մյուս (պետական և վանքապատկան) գյուղացիների վրա: 1874 թ. մայիսի 14-ին ցարը հաստատեց ռեֆորմի նախագիծը, որը օրենքի ուժ ստացավ: Համաձայն այդ օրենքի՝ արական մեկ շնչին (15 տարեկանից սկսած) տրվում էր հինգ դեսյատին հող (մեկ դեսյատինը հավասար էր 1,09 հեկտարի), իսկ հողատերը կարող էր իրեն վերցնել հողի 1/3-ը, մնացած մասը պետք է փրկագնվեր գյուղացիների կողմից: Սակայն գյուղացիներն ի վիճակի չէին հողը ետ գնել, ուստի մնում էին ժամանակավոր կախյալ վիճակում: 1879 թ. Արևելյան Հայաստանում անցկացվեց նաև քաղաքային ռեֆորմ: Չնայած գյուղացիական ռեֆորմի կիսատ-պռատությանը, այն նպաստեց Արևելյան Հայաստանում կապիտալիզմի զարգացմանը:

ՀԱՑԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

XIX դարի առաջին կեսին հայ մշակույթի հիմնական կենտրոնները հայկական գաղթավայրերում էին՝ Վենետիկում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կալկաթայում, Մադրասում, Երուսաղեմում և այլուր: Հայ մշակույթի խոշոր կենտրոններ էին Թիֆլիսը, Էջմիածնի վանքը: Արևմտյան Հայաստանում մշակույթի օջախներ էին Վարագավանքը (Վասպուրականում) և Մուշ քաղաքի Ս. Կարապետ վանքը Տարոնում: Այս վանքերում կային հայերեն բազմաթիվ ձեռագրեր: Վանքերին կից գործում էին դպրոցներ: 1810 թ. Աստրախանում հիմնվեց Աղաբաբյան դպրոցը: 1815 թ. Մոսկվայում բացվեց Լազարյան ճեմարանը (Լազարյանների միջոցներով), որը 1827-ից կոչվեց Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ: Այն դարձավ Ռուսաստանում արևելագիտական միակ կենտրոնը, որը միաժամանակ նաև Հայկական դպրոց էր, ուսուցիչներ և ուրիշ մասնագետներ էր պատրաստում Հայաստանում աշխատելու համար: 1824 թ. Թիֆլիսում Ներսես Աշտարակեցին բացեց դպրոց, որը կոչվեց նրա անունով: 1836 թ. Մխիթարյանները Վենետիկում բացեցին Ռափայելյան վարժարանը (1870թ. այն վերակոչվեց Մուրատ-Ռափայելյան անունով): 1837 թ. Երևանում, 1838 թ. Շուշիում բացվեցին թեմական դպրոցներ:

Լույս ընծայած հայերեն պարբերականներից նշանավորներն էին՝ «Եղանակ բյուզանդյան» տարեգիրքը (Վենետիկ, 1803–1820), «Բազմա-

վեպ» (Վենետիկ, 1843. շարունակվում է նաև այժմ), արևելահայ առաջին թերթը՝ «Կովկաս» շաբաթաթերթը՝ (Թիֆլիս, 1846–1849), Կալկաթայի «Ազգասեր» (1845–1848), «Ազգասեր Արարատյան» (1848–1851), Կ. Պոլսի «Լրագիր» (1832–1849), Զմյուռնիայի «Արշալույս Արարատյան» (1840–1887) թերթերը:

Գիտության մեջ արժեքավոր ավանդ ներդրեցին Մխիթարյաններ Ղ. Ինճիճյանը (աշխարհագրություն), Մ. Ավգերյանը (լեզվաբանություն):

1830–1840-ական թթ. ձևավորվեց հայ նոր գրականությունը, որի զարգացման գործում էական դեր խաղացին գրողներ Հ. Ալամդարյանը և Մ. Թաղիադյանը: Բայց հայ նոր գրականության հիմնադիրը Խ. Աբովյանն էր, որը գրեց ժողովրդի լեզվով՝ աշխարհաբար: 1840 թ. նա գրեց հայերեն առաջին՝ «Վերք Հայաստանի» վեպը, որով հեղինակը կամենում էր ցույց տալ հայ ժողովրդի հերոսական ոգին, գոյատևելու իրավունքը:

1877–1878 ԹԹ. ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1877 թ. ապրիլի 24-ին սկսված ռուս–թուրքական պատերազմը մղվում էր երկու՝ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Կովկասում ռուսները հարձակման անցան երեք ուղղությամբ: Ալեքսանդրապոլ–Կարս ռազմուղու զորքը գլխավորում էր Լորիս–Մելիքովը: Իգդիր–Բայազետ ուղղությամբ հարձակվող երևանյան ջոկատը Ա. Տեր–Ղուկասովի գլխավորությամբ 1877 թ. ապրիլի 30-ին գրավեց Բայազետը, մտավ Ալաշկերտի դաշտ, ջախջախեց թուրքական զորքերին, որոնք օգտվելով ռուսական մյուս զորախմբի նահանջից, պաշարեցին Բայազետը, որի ռուսական կայազորը 23 օր հերոսաբար դիմադրեց թշնամիներին: Հայ կամավորներից մեկը՝ Սամսոն Տեր–Պողոսյանը (Բաֆֆու «Խենթ» վեպի հերոս Վարդանը) Բայազետի պաշարման լուրը հասցրեց Տեր–Ղուկասովին, որի զորքերն անցան հարձակման և փրկեցին Բայազետի պաշտպաններին: 1877 թ. աշնանը հայազգի մեկ այլ գեներալ՝ Հ. Լազարևը գրավեց Կարս քաղաքը: 1878 թ. փետրվարի 8-ին ռուսական զորքերը գրավեցին նաև Էրզրում քաղաքը: Այս պատերազմում ևս հայերը կազմակերպեցին կամավորական ջոկատներ՝ ռուսներին օգնելու համար:

1878 թ. փետրվարի 19-ին Սան Ստեֆանո ավանում (Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա) ռուսների և թուրքերի միջև կնքված հաշտության պայմանագրով Արևմտյան Հայաստանից մոտ 36 հազար քառակուսի կմ տարածություն՝ Կարսի, Արդահանի, Բայազետի և այլ շրջաններ անցան Ռուսաստանին: Պայմանագրի 16-րդ կետով նախատեսվում էր Թուրքիա-

յի «Հայաբնակ մարզերում անհապաղ գործադրել տեղական պայմաններից բխող բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»:

Սան Ստեֆանոյի պայմանագրով միջազգային դիվանագիտության մեջ մտավ Հայկական հարցը, որը հայերի համար Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրն էր: Սակայն եվրոպական պետությունները (հատկապես Անգլիան) դեմ էին դեպի հարավ Ռուսաստանի ծավալմանը, ուստի պահանջեցին վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը:

1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում գումարված կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական կառավարությունը հայաբնակ մարզերում պետք է բարենորոգումներ անցկացներ, ապահովեր հայերի անվտանգությունը, որի հսկողությունը դրվում էր եվրոպական մեծ տերությունների վրա: Պահանջվում էր գրավված շրջաններից անհապաղ դուրս բերել ռուսական զորքերը: Մինչդեռ Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսվել էր հայաբնակ մարզերում բարեփոխումներն անցկացնել մինչև ռուսական զորքերի հեռանալը: Դրանով իրական ու հաստատուն երաշխիք էր ստեղծվում բարեփոխումների համար, որոնք ռուսական զորքերի բացակայության պայմաններում ոչ միայն չանցկացվեցին, այլև ավելի ուժեղացվեցին արևմտահայերի հանդեպ կիրառվող հալածանքները:

Հայերը Մ. Խրիմյանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեցին Բեռլինի կոնգրես, սակայն հայերին թույլ չտվեցին մասնակցել նրա նիստերին:

Բեռլինի կոնգրեսում ընդունած 61-րդ հոդվածը չարիք դարձավ արևմտահայ ժողովրդի համար: Այն սուլթանին հիմք տվեց ոչնչացնելու արևմտահայ ժողովրդին, որպեսզի այդ կերպ վերացվի նաև Հայկական հարցը: Այդ նպատակով Աբդուլ Համիդ սուլթանը սկսեց քրդական ցեղերին հրահրել հայերի դեմ, գործադրել վայրագ բռնություններ: Արևմտահայության վիճակը խիստ ծանրացավ:

ՀԱՑ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1870-1890-ԱԿԱՆ ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ: ՖԻԴԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ:

1870-1880 թթ. արևմտահայերի հանդեպ գործադրվող բռնություններն ավելի ուժեղացան: 1880-ական թվականներին Թուրքիայում սկզբնավորվեց կրոնաքաղաքական հետադիմական գաղափարախոսություն՝ պանիսլամիզմ, որը կոչ էր անում բոլոր մահմեդական ժողովուրդնե-

ին միավորվել, համադաշն պայքար տանել քրիստոնյա պետությունների դեմ: 1890–ական թթ. ձևավորվեց թուրքական նոր կազմավորվող բուրժուազիայի ծայրահեղ ազգայնամոլական գաղափարախոսությունը՝ պանթյուրքիզմը, որը բոլոր թուրքալեզու ժողովուրդներին համարում էր մեկ ազգ և կամենում էր նրանց համախմբել մեկ պետության մեջ: Թուրք բուրժուազիան 1894 թ. ստեղծեց «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական (այդպես էր կոչվում երիտասարդներից կազմված լինելու պատճառով) կուսակցությունը: 1880 թ. Աբդուլ Համիդ սուլթանը արգելեց «Հայաստան» անվան գործածումը պաշտոնական գրություններում: Հայերի ընդդիմության ամեն մի փորձ խեղդվում էր արյան մեջ:

Սուլթանական կառավարության հարաճուն բռնություններին հայ ժողովուրդը արձագանքեց ազատագրական պայքարով, որին ուղղություն էին տալիս Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթը, գրող Րաֆֆին և ուրիշներ:

Արևմտահայ ժողովրդի ազատագրման համար մղվող պայքարի կազմակերպումը դառնում է օրակարգի հարց: Այդ նպատակով 1872 թ. Վան քաղաքում կազմակերպվեց «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերությունը, որի անդամները արևելահայերի միջոցով դիմեցին ռուսական կառավարությանը՝ խնդրելով օգնել արևմտահայությանը՝ ազատագրվելու թուրքական բռնատիրությունից: Ընկերությունը երկու տարի հետո ինքնալուծարվեց: 1881 թ. Էրզրումում Խաչատուր Կերեքցյանի հիմնած «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի ընկերությունը իր առջև նպատակ էր դրել զինված պայքարով ազատագրել արևմտահայությանը: Այն կազմակերպեց զինված խմբեր, տպագրեց և տարածեց հայրենասիրական կոչեր: Սակայն 1882 թ. ընկերությունը հայտնաբերվեց: Նրա անդամներից 76 հոգու ձերբակալեցին:

1880–ական թթ. արևելահայ ազատամարտիկները («ազատության զինվորները») հաճախակի անցնում էին «Երկիր», այսինքն՝ Արևմտյան Հայաստան, ստեղծում կամավորական խմբեր՝ արևմտահայերին օգնելու համար: 1881 թ. Մոսկվայի հայ ուսանողները հիմնեցին «Հայրենասերների միություն» գաղտնի կազմակերպությունը, որի նպատակը արևմտահայ ժողովրդի ազատագրումն էր: Այն գործեց մինչև 1884 թ.: Խմբակը տպագրեց «Ազատության ավետաբեր» թերթը, որի էջերում պայքարի կոչ էր անում:

«Հայրենասերների միությունը» 1883 թ. հայ ժողովրդին հորդորեց հույսը չդնել Եվրոպայի վրա և հույների պես զինված պայքարով ազատագրել Հայաստանը:

1881 թվականից Երևանում գործունեություն ծավալեց «Հայասեր» խմբակը, որը պայքարում էր հայոց լեզվի ու գպրոցի պահպանման, Հայաստանը օտար լծից ազատագրելու համար: 1882 թվականից Թիֆլիսում գործում էր մի գաղտնի խմբակ՝ Գր. Արծրունու գլխավորությամբ: Նրա աշխա-

տանքներին մասնակցում էին դրող Բաֆֆին, Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (հիմնվեց 1881 թ. Թիֆլիսում) ստեղծող Բագրատ Նավասարդյանը, դրամատուրգ Գ. Սունդուկյանը և ուրիշներ: Խմբակի հիմնական նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Խմբակը զինված պայքարի էր կոչում: Այն գործեց մինչև 1886 թվականը:

1880-ական թթ. կեսերից Արևմտյան Հայաստանում վերելք ապրեց ֆիդայական շարժումը, որը ծագեց տարերայնորեն, որպես Հայ ազատագրական պայքարի, ժողովրդական ինքնապաշտպանության միջոց, ցասումնալից բողոք տիրող բռնատիրության դեմ: «Ֆիդայի» բառը պարսկերենում ունի «անձնազոհ» իմաստը: Հալածվելով թուրքական իշխանություններից, ֆիդայիները հեռանում էին Հայրենի լեռները, կազմում խմբեր և պարտիզանական կռիվներ մղում: Առաջին Հայ ֆիդային Արաբոն էր (Առաքելը), որը ծնվել է 1863 թ. Սասունի Կոռբերդ գյուղում, սովորել Մուշի Առաքելոց վանքի դպրոցում: Արաբոյի խումբը (որին միացավ նաև Գևորգ Չաուշը) արագ ու աներևույթ կերպով քրդի տարազով հարձակումներ էր գործում թշնամիների վրա: 1890-ական թթ. սկզբին թուրքերը Արաբոյին բանտ նետեցին, բայց փախստյամբ ազատվեց, շարունակեց պայքարը: 1893 թ. Մուշի մոտ Արաբոն ընկավ հերոսի մահով:

1890-ական թթ. կեսերից ֆիդայական շարժումը վերելք ապրեց: Ֆիդայական պայքարի առաջամարտիկները արևմտահայերն էին՝ Սերոբ Վարդանյանը, Արմենակ Ղազարյանը (Հրայր), Անդրանիկը, Գևորգ Չաուշը (Ադամյան) և ուրիշներ: 1895 թվականից աչքի ընկավ Սերոբ Վարդանյանը, որին կոչեցին Աղբյուր Սերոբ, այսինքն՝ կյանքի աղբյուր, կյանք պարգևող: Նա ծնվել է 1864 թ. , Խլաթի գավառի Սղորդ գյուղում: Անվրեպ նշանառու էր, իր խմբով Խլաթը պաշտպանեց թուրքական հարձակումներից, ապա շարունակեց պայքարը Վանա լճի հարավ-արևմտյան շրջաններում, Բիթլիսի մոտ: 1899 թ. Սասունի Անդոք լեռան վրա տեղի ունեցած մարտում Սերոբը դիմադրեց մինչև վերջին փամփուշտը և հերոսի մահով ընկավ: Նրա կողքին մարտնչում էր կինը՝ Սոսեն, Հայ առաջին ֆիդայուհին: Այնուհետև ֆիդայական շարժումը գլխավորեց Հրայրը, որը ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Մշո Ս. Կարապետ վանքի դպրոցում: 1900-1904 թթ. նա Բիթլիսի և Վանի վիլայեթների ժողովրդին կազմակերպեց զինված ելույթների: Սակայն 1904 թ. գարնանը Հրայրը զոհվեց Սասունի պաշտպանական մարտերում: Հրայրից հետո ֆիդայական շարժման գլուխ անցավ Անդրանիկ Թորոսի Օզանյանը, որը ծնվել է 1865 թ. Սեբաստիայի վիլայեթի (Փոքր Հայք) Շապինգարահիսար քաղաքում: Մի շարք խիզախ հարձակումներով նա ահ ու սարսափի մեջ գցեց թուրքական իշխանություններին, վաստակելով ժողովրդական հերոսի պատվանունը: 1900 թ. հոկտեմբերին Անդրանիկն իր խմբով դարա-

նակալեց և Սասունի կիրճերից մեկում ոչնչացրեց Աղբյուր Սերոբին սպանող Խալիլ բեկին, ապա շարունակեց պայքարը Տարոնում և Մուշում:

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՑՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արևմտահայերի ազատագրական պայքարը տարերային բնույթ ուներ: Այն կազմակերպելու համար ստեղծվեցին հայ քաղաքական կուսակցությունները: 1885 թ. Ցրանսիայի Մարսել քաղաքում վանեցի Մկրտիչ Փորթուգալյանը հիմնեց «Արմենիա» հայերեն թերթը: Նրա աշակերտներ Մ. Ավետիսյանը, Գ. Օտյանը, Ղ. Խանջյանը և ուրիշներ նույն թվին Վանում հիմնեցին Արմենական կուսակցությունը, որը հետևում էր «Արմենիա» թերթի ուղղվածությանը, քարոզում նրա գաղափարները: 1894 թ. արմենականներն ընդունեցին իրենց ծրագիրը, որը նախատեսում էր հեղափոխությամբ ազատագրել արևմտահայերին, այդ նպատակով ստեղծել զինված խմբեր, ժողովրդին զինավարժել և պատրաստել պայքարի: Կուսակցությունն իր մասնաճյուղերն ստեղծեց նաև Պարսկաստանում: Բայց այն հիմնականում գործում էր Վան–Վասպուրականում, մասամբ նաև Մուշում: Արմենականների ղեկավար Մ. Ավետիսյանը 1896 թ, գլխավորեց Վանի ինքնապաշտպանությունը:

1887 թ. Թիֆլիսահայ ուսանող ամուսիններ Ավետիս և Մարո Նազարբեկյանները, Ռուբեն Խանազատը և ուրիշներ Շվեյցարիայի Ժնև քաղաքում հիմնեցին Հնչակյան կուսակցությունը: Այն հրատարակում էր «Հնչակ» (զանգակ) թերթը, որն իր «զողանջով» պետք է պայքարի կոչեր արևմտահայերին: Հնչակյաններն իրենց կոչում էին «Հայ սոցիալիստ հեղափոխականներ»: Նրանց հիմնական նպատակը զինված պայքարով արևմտահայերի ազատագրումն էր, հեռավոր նպատակը՝ սոցիալիզմը: Հայ քաղաքական կուսակցություններից առաջինը Հնչակյաններն իրենց ծրագրում մտցրեցին Արևմտյան Հայաստանի քաղաքական անկախության և պատմական Հայաստանի երեք հատվածներից անկախ, «ծովից ծով Հայաստան» ստեղծելու պահանջը: 1890 թ. Հուլիսի 15–ին Կ. Պոլսի Գում–Գափու թաղում (այդտեղ էր Հայոց պատրիարքարանը) Ռ. Խանազատը և ուրիշ Հնչակյաններ ցույց կազմակերպեցին և Աբդուլ Համիդ սուլթանից պահանջեցին կատարել 1878 թ. Բեռլինի կոնգրեսի 61–րդ հոդվածի դրույթները, վերջ տալ կամայականություններին արևմտահայերի հանդեպ: Դա առիթ դարձնելով՝ սուլթանը կոտորել տվեց հայերին:

1896 թ. Լոնդոնում գումարվեց Հնչակյանների ժողով, որտեղ արևմտահայ պատգամավորների մեծ մասը հեռացավ Հնչակյան կուսակցությունից և 1897 թ. ստեղծեց «Վերակազմյալ» Հնչակյանների կուսակցությունը:

1908 թ. Արմենական կուսակցությունը և վերակազմյալ Հնչակյանների մի մասը միավորվելով ստեղծեցին Սահմանադրական ռամկավար կուսակցություն: Հետագայում՝ 1921 թ. հոկտեմբերի 1-ին, Կ. Պոլսի ժողովում Սահմանադրական ռամկավար կուսակցության հետ միավորվեց նաև վերակազմյալ Հնչակյանների դեռ ինքնուրույն գործող մասը, որով և ստեղծվեց Ռամկավար ազատական կուսակցությունը: (Վերջինիս ծրագրային սկզբունքներից են՝ Հայաստանին աջակցելը, Արևմտյան Հայաստանի ազատագրումը և միավորումը Հայաստանի Հանրապետության հետ):

Հայ ազատագրական պայքարի շահերը պահանջում էին, որ բոլոր Հայ հեղափոխական խմբակները միավորվեն և ստեղծեն մի կուսակցություն՝ դաշնակցային հիմունքներով: Ուստի 1890 թ. օգոստոսի վերջին Թիֆլիսում մոսկվացի ուսանող Ստեփան Զորյանը (Ռոստոմ), ուսուցիչներ Քրիստափոր Միքայելյանը և Սիմոն Զավարյանը հիմնեցին Հայ հեղափոխականների դաշնակցություն կուսակցությունը, որի օրգանն էր «Դրոշակ» թերթը: 1892 և 1907 թթ. Դաշնակցության ընդունած ծրագրերում նշվում է, որ զինված ապստամբության միջոցով Արևմտյան Հայաստանում պետք է ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություններ: Նրանց ծրագրերում խոսք չկար Արևմտյան Հայաստանը ազատագրելու, թուրքական պետությունից անջատելու մասին: Մինչև 1918 թ. Դաշնակցությունը Հայաստանի անկախությունը համարում էր հեռավոր նպատակ: Նրա ծրագրերում քաղաքական պահանջները հանգում էին, Բեռլինի 1878 թ. կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածի համաձայն, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելուն կամ Ռուսաստանի և Թուրքիայի կազմում ինքնավարություն ձեռք բերելուն: Դրանով էին թելադրված նրանց ելույթները 1890-ական թթ.: Այդ ելույթներով դաշնակցականները կամենում էին օտար պետությունների և Թուրքիայի ուշադրությունը սևեռել Հայկական խնդրի վրա: 1903 թ. ցարական կառավարության կողմից Հայոց եկեղեցու կալվածքները բռնագրավելուց և Հայկական դպրոցները փակելուց հետո դաշնակցության համար առաջացավ նաև «ռուսահայ խնդիր», և այդ կուսակցությունն սկսեց պայքարել երկու ճակատում՝ ցարական ինքնակալության և թուրքական բռնապետության դեմ:

Դաշնակցության մեջ ընդգրկված էին ժողովրդի բոլոր խավերից (գյուղացիներ, բանվորներ, մտավորականներ): Այն ժխտում էր սոցիալիզմի անհրաժեշտությունը արևմտահայության համար: Գտնում էր, որ հողը պետք է տալ գյուղացիներին: 1905 թ. կուսակցությունը իրեն կոչեց «սոցիալիստական», բայց շարունակեց գերադասությունը տալ Հայ ազգի ինքնապաշտպանության, ազգապահպանման գործին: Այն ինքնապաշտպանական խմբեր էր կազմակերպում, զինում և ուղարկում Արևմտյան Հայաստան:

1894–1896 ԹԹ. ՀԱՑԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

1890–ական թթ. Արևմտահայության գլխին կախված էր բնաջնջման սպառնալիքը: Աբդուլ–Համիդ սուլթանը սարսափում էր հայերի և քրդերի հնարավոր դաշինքից, ուստի ամեն կերպ խոչընդոտում էր դրան: 1891 թ. Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին «Համիդիե» (սուլթանի անունով) կոչված քրդական հեծելազորային գնդեր, որոնք պետք է բնաջնջեին հայերին, պատերազմի դեպքում կռվեին ռուսների դեմ: Քուրդ ցեղապետներն ասում էին, թե իրենց հանձնարարված է կոտորել հայերին: Արևմտահայությունը անհավասար պայքարի մեջ մտավ, որի արյունոտ էջերից մեկը Սասունի 1894 թ. ինքնապաշտպանությունն էր՝ Մուրադի (Բոյաջյան) և Տամատյանի գլխավորությամբ: Սասունի ինքնապաշտպանության կենտրոնը Տալվորիկ գյուղն էր: Թուրքերը Սասունի դեմ նետեցին ստվարաթիվ զորք, Համիդիե գնդեր՝ հրանոթներով: Բայց քաջարի հարձակումներով սասունցիները ետ շպրտեցին թուրք և քուրդ հրոսակներին: Մեծաթիվ զոհեր տալով, թշնամին կարողացավ մտնել Սասուն, որի պաշտպանները բարձրացան Անդոք լեռը, ապա ծանր մարտեր մղելով անցան Տալվորիկի ձորը, Քեփին լեռան բարձունքը: Սակայն նրանց շրջապատեցին թշնամիների գերակշիռ ուժերը: Սասունցի քաջերի մեծ մասը (այդ թվում նաև նրանց կողքին մարտնչող կանայք) զոհվեցին: Թուրք կառավարության հրամանով Սասունի 40 գյուղեր ավերվեցին, տաս հազարից ավելի հայ կոտորվեց: Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները սուլթանից պահանջեցին քննել Սասունի կոտորածների պատճառները: 1895 թ. հունվարին Սասուն ուղարկված հանձնաժողովը (որի մեջ կային հիշյալ երեք երկրների ներկայացուցիչները) մերկացրեց սուլթանի հրամանով կատարված վայրագությունները: 1895 թ. մայիսին երեք պետությունների դեսպանները սուլթանին ներկայացրին Արևմտյան Հայաստանում բարեփոխությունների ծրագիր (Հայտնի է «Մայիսյան» անունով), որի համաձայն Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթներում պետք է կուսակալներ նշանակվեին առանց կրոնական խտրության: Եթե որևէ գավառում քրիստոնյաները մեծամասնություն էին կազմում, գավառապետը նրանցից պետք է լիներ, իսկ բնակչությունը՝ ազատվեր զորքին, պաշտոնյաներին ձրի սնունդ, բնակարան տալուց և այլն: Սակայն սուլթանը դրանք չկատարեց և շարունակեց կոտորել հայերին: Ջարդերը կանխելու համար 1896 թ. հունվարին ապստամբեց նաև Վան քաղաքը: Բայց թշնամու ուժերը մի քանի անգամ շատ էին, ուստի ապստամբությունը պարտվեց, Վանում և շրջակա գյուղերում 20 հազար հայեր կոտորվեցին: Մոկք նահանգում քրդերը պաշտպանեցին հայերին:

1895 թ. աշնանը ծայր առան հայերի զանգվածային կոտորածներ,

որոնք սկսվեցին Տրապիզոնից, որտեղ 1895 թ. հոկտեմբերի 5-ին հայերի սոսկալի ջարդ եղավ (այն պատկերել է հայ ծովանկարիչ Հ. Այվազովսկին): Ջարդերը տարածվեցին ամբողջ Արևմտյան Հայաստանում: Միայն Բիթլիսի վիլայեթում 102 հայկական գյուղ ոչնչացվեց: Ջարդեր եղան Ուրֆայում, Շապինգարահիսարում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Սեբաստիայում, Մուշում և այլուր: 1896 թ. դաշնակցության անդամները ռումբերով մտան Կ. Պոլսի թուրքական բանկը, այն 12 ժամ դրաված պահեցին, եվրոպական պետություններից պահանջեցին բարենորոգումներն իրագործել: Սկսվեց Կ. Պոլսի հայերի ջարդը, որը տևեց երեք օր: Ջարդերը դադարեցին մեծ տերությունների (հատկապես Ռուսաստանի) պահանջով: 1895–1896 թթ. ջարդերի հետևանքով 300 հազար հայ կոտորվեց, գրեթե այդքան հայեր ստիպված հեռացան օտար երկրներ: Մոտ 200 արևմտահայ գյուղերի բնակիչներ հարկադրված մահմեդականություն ընդունեցին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Այս ժամանակաշրջանում հայ մշակույթը մեծ առաջընթաց ապրեց, որը պայմանավորված էր աշխարհաբար լեզվի հաղթանակով: Հայոց եկեղեցին օգտվելով կրթական գործը տնօրինելու իր ավանդական իրավունքից, կազմակերպեց դպրոցական գործը: 1867 թ. կաթողիկոս Գևորգ IV-ի կարգադրությամբ յուրաքանչյուր հայկական գյուղում պետք է դպրոց բացվեր: Ժողովրդի կրթության հիմնական օղակները դարձան եկեղեցական (ծխական) տարրական դպրոցները, որտեղ ուսուցումը 2–3 տարի էր: Կրթական կյանքի օջախներ էին նաև միջնակարգ թեմական դպրոցները (հոգևոր սեմինարիաները): Նման դպրոցներ կային Թիֆլիսում, Էջմիածնում, Շուշիում, Երևանում: 1874 թ. Էջմիածնում բացվեց Գևորգյան ճեմարանը (Գևորգ IV կաթողիկոսի կողմից): 1885 թ. Անդրկովկասում գործում էին 270 հայկական դպրոցներ, որոնցից 41-ը իգական էին (չկար երկսեռ ոչ մի դպրոց): Ռուսաստանի բարձրագույն դպրոցներում սովորում էին մոտ 300, Եվրոպայում՝ 200 հայ ուսանողներ: Դպրոցներ էին բացում նաև կրթասիրական ընկերությունները, անհատները: Պետական միջնակարգ դպրոցներ բացվեցին Երևանում (1881 թ.), Շուշիում (1881 թ.), Նոր Նախիջևանում (1882 թ.), Կարսում (1890 թ.): 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Երևանի նահանգի բնակչության միայն 6,4%-ն էր գրագետ: XX դ. սկզբին այդ թիվն աճեց: 1915 թ. Արևելյան Հայաստանում եղած տարրական (ծխական) դպրոցների թիվը քառապատկվեց:

1870-ական թթ. Թուրքիայում գործում էին մոտ 400 հայկական

դպրոցներ, որոնց մեծ մասը տարրական վարժարաններ էին՝ 2–4 ամյա ուսուցմամբ: Կային նաև միջնակարգ դպրոցներ (Կ. Պոլսում և այլուր): 1886 թ. Կ. Պոլսում հիմնվեց բարձրագույն դպրոց՝ կեդրոնական վարժարանը, իսկ 1889 թ. Կ. Պոլսի մոտ՝ Արմաշի վանքում, հիմնվեց եկեղեցական բարձրագույն դպրոց՝ դպրեվանք: Պետերբուրգցի մեծահարուստ Մ. Սանասարյանը 1881 թ. Էրզրումում հիմնեց միջնակարգ դպրոց («Սանասարյան» կոչված): 1870 թ. Վանում հիմնվեց առաջին իգական դպրոցը, 1883 թ. կենտրոնական վարժարանը: 1890-ական թթ. Վարագա վանքում բացվեց դպրոց-որբանոց: 1878 թ. Մուշում հիմնվեց կենտրոնական վարժարան: Խարբերդում գործում էր բարձր տիպի վարժարան (1875-ից):

Հայ դրականության մեջ անանց արժեքներ ստեղծվեցին՝ ի դեմս Ռաֆֆու, Հ. Պարոնյանի, Պ. Պռոշյանի, Գ. Սունդուկյանի՝, Ղ. Աղայանի, Վ. Տերյանի, Մուրացանի, Հ. Թումանյանի և ուրիշների երկերի:

1861 թ. Կ. Պոլսում հիմնվեց նոր ժամանակների հայկական առաջին պրոֆեսիոնալ թատրոնը: Երաժշտության մեջ մեծարժեք գործեր ստեղծեցին Տ. Զուխաջյանը, Ք. Կարա-Մուրզան, Կոմիտասը, Մ. Եկմալյանը և ուրիշներ: Զարդացավ նաև հայ կերպարվեստը: Հայ հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին (1817–1900) ստեղծեց շուրջ 6000 կտավ, որոնցից հիշարժան են նաև «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թ.», «Թուրքական նավերը Մարմարա ծովն են թափում հայերին», «Հայ ժողովրդի մկրտությունը» գործերը: Մնայուն նկարներ ստեղծեցին նաև Գ. Բաշինջաղյանը, Վ. Սուրենյանցը, Փ. Թերլեմեզյանը և ուրիշներ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ նշանավոր պարբերականներն էին՝ «Մշակը» (1872–1921), «Մուրճը» (1889–1907), «Նոր դարը» (1883–1916), «Արևելյան մամուլը» (1871–1909, 1919–1922) և այլն:

Հայագիտության մեջ հիմնարար գործեր ստեղծեցին Ղ. Ալիշանը, Մ. Էմինը. Ք. Պատկանյանը, Գ. Խալաթյանը, Ա. Գարագաշյանը և ուրիշներ: Բնական գիտությունների մեջ կարևոր ներդրումներ կատարեցին երկրաբան-քիմիկոս Ա. Արծրունին, ֆիզիկոս Հ. Ադամյանը, կենսաբան Ն. Տաղավարյանը:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐՈՒՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XX Դ. ՍԿԶԲԻՆ

XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում թեև դանդաղ, բայց հաստատուն կերպով զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները: Դրան մեծապես խրախուսում էր Ռուսական պետությունը, կամենալով Կովկասի տնտեսությունը շաղկապել բուն Ռուսաստանի հետ, ի սպաս դնել նրա շահերին: Դա իրականացնելու համար նախ անհրաժեշտ էր ընդլայնել ճանապարհային ցանցը: 1899 թ. գործարկվեց Թիֆլիս–Ալեքսանդրապոլ (Գյումրի) երկաթգիծը, որը 1902 թ. հասավ Երևան, 1908 թ.՝ Ջուլֆա, 1913 թ.՝ Կարս և Սարիղամիշ: Ռուսաստանից Հայաստան էին ներմուծվում արդյունաբերական ապրանքներ, արտահանվում էին Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքը, հանքանյութերը: Հետզհետե հայ խոշոր առևտրականները վերածվեցին բուրժուաների: Հայ դրամատերերը՝ Մանթաշյանը, Արամյանցը, Միրզոյանը, Ավան Ցուզբաշևը և ուրիշներ իրենց հարստությունը ներդրեցին Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում: Բաքվում հայերը ավելի շատ նավթահորեր (մոտ 160) ունեին, քան եվրոպացիները, ռուսները և մյուս ազգերը միասին վերցրած: XX դ. սկզբին Մանթաշյանի կապիտալը (23 միլիոն) ավելին էր քան եվրոպական արդյունաբերողներ Նոբելինն ու Ռոտշիլդինը միասին վերցրած: Մանթաշյանի դրամադլուխը դերազանցում էր նաև մնացած բոլոր Հայ կապիտալիստների կապիտալը: Հայ և օտար դրամատերերը իրենց կապիտալները ներդրեցին նաև Հայաստանում: Տակավին 1897 թ. հայ արդյունաբերող Մելիք–Ազարյանցը Ղափանում կառուցեց «Սյունիք» պղնձաձուլական գործարանը: Նույն թվին Ալավերդիում հաստատվեցին ֆրանսիացիները: Նրանք զարկ տվեցին պղնձի արտադրությանը, որին էներգիա էր մատակարարում Դեբեդ գետի վրա նրանց կառուցած հիդրոէլեկտրակայանը: Զգալիորեն աճեց նաև աղի արդյունահանումը, ոդելից խմիչքների

արտադրությունը: Ռուս արդյունաբերող Շուստովը Երևանում Թաիրովից գնեց գինու–կոնյակի գործարանը: Կոնյակի և օղու արտադրությամբ Հայաստանը բռնեց առաջին տեղը: Արևելյան Հայաստանը բամբակի արտադրությամբ բռնում էր երկրորդ տեղը՝ Միջին Ասիայից հետո: 1905 թ. Երևանում հիմնվեց մետաղամշակման դործարան:

Գյուղացիությունը շերտավորված էր երեք խավի.

ա) աղքատներ, այսինքն մեկ դեսյատին (մեկ հեկտարից քիչ ավելի) հող ունեցողներ,

բ) միջակներ՝ 1–3 դեսյատին հողաբաժնի տերեր: Միջակները կազմում էին գյուղացիության 60%–ը:

գ) հարուստ գյուղացիներ էին համարվում երեք դեսյատինից ավելի հող ունեցողները:

Սրանց մոտ հինդ տոկոսը կուլակներ (բուրժուաներ) ՝ վարձու աշխատանք օդտագործողներն էին:

1910 թ. Երևանն ուներ մոտ 30 հազար, Ալեքսանդրապոլը՝ 32 հազար, Կարսը՝ 21 հազար, Շուշին՝ 31 հաղար, Ախալքալաքը՝ 5 հազար, Նոր Բայազետը՝ 8500 բնակիչ:

XX դ սկզբին Կովկասի կառավարչապետ Գոլիցինի հրամանով փակվեցին հայկական դպրոցները: 1903 թ. հունիսի 12–ին ցարը հաստատեց Հայոց եկեղեցու հողերը, ունեցվածքը բռնագրավելու մասին օրենքը, որը բողոքի հզոր ալիք առաջացրեց հայ ժողովրդի մեջ: Ամենուրեք ցույցեր եղան, երբեմն նաև ընդհարումներ: Թիֆլիսում, Բաքվում, Գյանջայում հայերը դիմադրություն ցույց տվեցին ցարական իշխանություններին: Ցարը ստիպված 1905 թ. օդոստոսի 1–ին վերականդնեց Հայոց եկեղեցու իրավունքները: Բայց նույն թվին կառավարության հրահրմամբ կովկասահայությունը ներքաշվեց ազերիների հետ արյունոտ ընդհարումների մեջ: Վերջիններիս օդնում էին թուրքական զինված ջոկատները: 1905–1906 թթ. այդ ընդհարումների ժամանակ երկուստեք սպանվեցին տասը հազար մարդ, ավերվեցին շատ բնակավայրեր:

ԱՐԵՎՄՏՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԻ ՇԵՄԻՆ

XX դ. սկզբին արևմտահայության հանդեպ բռնություններն ավելի ուժեղացան, ուստի վերստին բորբոքվեց հայ ազատագրական պայքարը՝ հիմնականում ֆիդայական շարժման ձևով: Նշանավոր էին Անդրանիկի մղած հերոսական կռիվները Մուշի Առաքելոց վանքում (1901 թ. նոյեմբերի 6–27) և Սասունում:

1904 թ. փետրվարի 5–ին թուրք–քրդական զորքերը հանկարծակի հար-

ձակվեցին Սասունի վրա՝ սրի քաշելով նրա գյուղերից մեկի բնակիչներին: Նույն թվի ապրիլ ամսին թշնամիները նոր և վճռական հարձակման անցան սասունցիների դեմ, որոնց 1200 ռազմիկները Անդրանիկի գլխավորությամբ դիմակայեցին 15 հազարանոց թուրք-քրդական ուժերին: Կայծքարե հրացաններով զինված 200 ֆիդայիները և սասունցի 1000 ռազմիկները հերոսաբար ետ մղեցին թշնամու հարձակումները: Ապրիլի 11-ին թուրք-քրդական հրոսակները հիմնական հարվածն ուղղեցին Սասունի Շատախ շրջանի Շենիկ գյուղի դեմ, բայց ետ շպրտվեցին: Այնուհետև թշնամին ջախջախվեց նույն շրջանի Մերկեր գյուղի մոտ՝ Գևորգ Չաուշի մարտիկների կողմից: Չկարողանալով կոտրել Սասունի հերոս պաշտպանների կամքը, թուրքական հրամանատարությունը նրանց առաջարկեց դադարեցնել դիմադրությունը: Թուրքերը ապրիլի 13-ին դրոհեցին Ալիանցիք և Սեմալ գյուղերի վրա, որոնք գտնվում էին Շատախից դեպի Սասունի մյուս շրջանները տանող ճանապարհի վրա: Այդտեղով Գելիեգուզան գյուղ էին նահանջում սասունցի խաղաղ բնակիչները: Թուրքերը փորձեցին կտրել նրանց առջևը, բայց Հրայրի զինվորները պարտության մատնեցին թուրք գորքին՝ փրկելով հայ բնակիչների կյանքը: Այդ մարտում զոհվեց Հրայրը: Թշնամիներին հակահարված տվեցին նաև Մուրադի, Գևորգ Չաուշի, Հ. Կոտոյանի, Մակարի խմբերը: Բայց Սասունի պաշտպանների փոքրաթիվ ուժերը ի զորու չէին երկար ժամանակ պահպանել պաշտպանության բոլոր գծերը, ուստի որոշեցին կենտրոնանալ Գելիեգուզան գյուղում: Ապրիլի 17-ին և 20-ին թուրք-քրդական ուժերը դրոհեցին այդ գյուղի վրա, բայց դարձյալ ետ շպրտվեցին: Ապրիլի 22-ին սասունցի ազատամարտիկները բարձրացան Անդոք լեռը, պայքարը շարունակելու համար: Նրանք մոտ տասօր հերոսաբար կռվեցին թշնամու դեմ, պաշտպանելով Մշո դաշտ անցնող խաղաղ բնակչությանը, իսկ իրենք մարտնչեցին մինչև հուլիսի կեսերը: Բայց ուժերն անհավասար էին: Թշնամուն հաջողվեց դրավել Սասունը, կոտորել տեղում մնացած 8000 բնակիչների, ավերել 42 գյուղ: Սուլթանը կամենում էր Սասունը լրիվ մաքրել հայերից, նրա բնակչությանը վերաբնակեցնել Մշո դաշտում: Եվրոպական դիվանագետների միջնորդությամբ նա չիրագործեց այդ մտահղացումը: Թուրքական պատժիչ ջոկատները մոլեգնում էին Սասունում և Մշո դաշտում: Ֆիդայիների մի մասը Գևորգ Չաուշի գլխավորությամբ Սասունում շարունակեց մաքառումները թուրքերի դեմ: Նրանց հեծյալ ջոկատը 1905–1907 թթ. պաշտպանում էր նաև Մշո դաշտի հայկական գյուղերը՝ ահի մեջ պահելով ջարդարարներին: 1907 թ. մայիսի 27-ին՝ Մշո դաշտի Սուլուխ գյուղի պաշտպանության ժամանակ, հերոսի մահով ընկավ Գևորգ Չաուշը:

1908 թ. երիտթուրքերը տապալեցին Աբդուլ Համիդ սուլթանին: Տիրա-

նալով իշխանությանը՝ նրանք հռչակեցին Թուրքիայի բոլոր ժողովուրդների ազատություն, իրավահավասարություն, եղբայրություն: 1909 թ. նոյեմբերից նրանք զինվորագրեցին նաև հայերին և թուրքահպատակ մյուս քրիստոնյաներին: Հայկական կուսակցությունները հույս ունեին, թե հեղաշրջումից հետո արևմտահայ ժողովրդի համար կստեղծվեն փոքրիշատե տանելի պայմաններ, ուստի սկզբում համագործակցեցին երիտթուրքերին: Սակայն շուտով վերջիններս ցույց տվեցին իրենց իսկական դեմքը: Ժխտելով ազգային հարցի գոյությունը Թուրքիայում՝ նրանք որդեգրեցին ծայրահեղ ազգայնամոլական, ոչ թուրք ժողովուրդներին ճուլելու, պանթուրքիստական քաղաքականություն, որի հետևանքով 1909 թ. ապրիլին Ադանա քաղաքում և Կիլիկիայի այլ վայրերում մահմեդական ամբոխի կողմից կոտորվեցին մոտ 30 հազար հայեր: Թուրքիայի բոլոր դժբախտությունների պատճառը համարելով այնտեղ ոչ թուրք ժողովուրդների գոյությունը, երիտթուրքերը ձեռնամուխ եղան Թուրքիան միատարր դարձնելու հրեշավոր ծրագրի իրականացմանը: Նրանք քրդերին թշնամացրին հայերի դեմ, որպեսզի նրանց ձեռքով կոտորեն հայերին, ազատվեն Հայկական հարցից, որը առիթ էր տալիս եվրոպական պետություններին՝ միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Հայ քաղաքական կուսակցություններն ստիպված վերստին բռնեցին ինքնապաշտպանության ուղին:

ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912–1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Առաջին բալկանյան պատերազմում (1912 թ. հոկտեմբեր – 1913 թ. մայիս) Թուրքիան պարտվեց Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չեռնոգորիայի միացյալ ուժերից: Դրա շնորհիվ բալկանյան ժողովուրդները լիովին ազատագրվեցին թուրքական լծից: Այդ պատերազմը գործեղ ազդակ հանդիսացավ Հայկական հարցը վերստին դնելու համար: 1912 թ. հոկտեմբերի վերջին Թիֆլիսում կայացած համահայկական խորհրդակցական ժողովում ստեղծվեց Հայ Ազգային բյուրո՝ կազմված յոթ հոգուց (Ա. Խատիսյան, Հ, Թումանյան, Ն. Ադբալյան և ուրիշներ): Ազգային բյուրոն դաշնակցության ղեկավարությամբ կազմակերպեց արևմտահայության զինումը: Ազգային բյուրոյի առաջարկով Հայոց կաթողիկոս Գևորգ V–ը դիմեց Կովկասի փոխարքային՝ խնդրելով ցարին համոզել պաշտպանելու արևմտահայերի շահերը: Ռուսական կառավարությունը Հայոց կաթողիկոսին խոստացավ օգնել արևմտահայությանը և ձեռնամուխ եղավ նրա դատը պաշտպանելու: Բայց որովհետև նա մենակ չէր լուծելու Հայկական հարցը (որը նաև միջազգային խնդիր էր), ուստի 1912 թ. հոկտեմ-

բերին Կ. Պոլսի Հայոց պատրիարքը դիմեց Փարիզում գտնվող եգիպտահայ նշանավոր գործիչ Պողոս Նուբարին, որպեսզի նա դիմումներ հղի 1912 թ. դեկտեմբերին բալկանյան առաջին պատերազմի առթիվ Լոնդոնում բացվելիք կոնֆերանսին՝ Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ կատարելու համար: Կաթողիկոսը Պողոս Նուբարին նշանակեց ազգային պատվիրակության նախագահ (որպիսին նա մնաց նաև հետագա տարիներին): Առաջին բալկանյան պատերազմում պարտվող Թուրքիան ամեն կերպ աշխատեց խոչընդոտել Հայկական հարցի վերաբացմանը:

1913 թ. ապրիլին արևմտահայերը Կ. Պոլսի ռուս դեսպանին հանձնեցին բարենորոգումների նախագիծ, որով Թուրքահայ վեց վիլայեթները միավորվելու էին մեկ նահանգի մեջ: Արևմտահայ հարցի շուրջ համաձայնություն կար Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Կազմվեց բարենորոգումների ռուսական նախագիծ, որին խոչընդոտեցին Թուրքիան և նրան դաշնակցող Գերմանիան: Քաշքշուկներից հետո, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում կնքվեց հայկական բարեփոխությունների մասին ռուս-թուրքական համաձայնագիր, որով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու՝ հարավային և հյուսիսային մասերի՝ օտարերկրյա (քրիստոնյա) երկու տեսուչների ղեկավարությամբ: Բոլորը պաշտոնյաները կարող էին լինել նաև քրիստոնյաներ: Հայերն իրավունք էին ստանում զենք կրելու, դատարաններում, վարչական մարմիններում արտահայտվելու մայրենի լեզվով: Համիդիե զորքը մնալու էր լոկ որպես պահեստի ուժ: Բայց վերահաս պատերազմը կասեցրեց այդ համաձայնագրի կենսագործումը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914–1918 ԹԹ.)

1914 թ. օգոստոսի 1-ին սկսված առաջին համաշխարհային պատերազմի մեջ 1914 թ. հոկտեմբերի 29-ին մտավ նաև Թուրքիան, որը հույս ուներ տիրանալ Անդրկովկասին: Նոյեմբերի սկզբին Թուրքերը խուժեցին Բաթումի մարզ, բայց ռուսները ետ շպրտեցին նրանց, ապա խոշոր հաղթանակներ տարան Սարիղամիշի մոտ մղված մարտերում (1914 թ. դեկտեմբերի 26-ից 1915 թ. հունվարի 4-ը): 1915 թ. հուլիսին ռուսները հասան մինչև Խլաթ և Մանազկերտ, ազատագրելով նաև Վանը, որի հայ պաշտպանները կենաց և մահու կռիվ էին մղում թուրքական զորքերի դեմ: Սակայն Թուրքերը խոշոր ուժեր նետեցին ռուսների դեմ, սպառնալով շրջապատել նրանց: Հուլիսի 9-ին նրանք Մուշի ուղղությամբ հարձակման անցան, ուստի ռուսները ստիպված ետ քաշվեցին Ալաշկերտի դաշտ, որտեղ 1915 թ. օգոստոսին հակահարձակման անցնելով, Թուրքե-

ին քշեցին մինչև Վանա լիճ, իսկ դեկտեմբերի վերջին գրոհեցին Էրզրումի վրա և 1916 թ. փետրվարի 3-ին դրավեցին այն, ապա՝ Երզնկան, Տրապիզոնը, Բիթլիսը: 1916 թ. ընթացքում ռուսներն ազատագրեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

1914 թ. հուլիսի 23-ին ռուսական կառավարությունը որոշում էր ընդունել ռուսական բանակը կամավորներով համալրելու մասին: Հայոց Ազգային բյուրոն Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ պայմանավորվեց հայկական կամավորական ջոկատներ ստեղծելու շուրջ: Ռուսական բանակի կազմում կային 250 հազար հայ զինվորներ: Կամավորական խմբերի ստեղծմամբ՝ հայությունը հույս ուներ օգնել Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին: Սկզբում կազմակերպվեցին կամավորական չորս խմբեր, որոնցից առաջինի հրամանատար նշանակվեց Անդրանիկը, երկրորդինը՝ Դ. Կանայանը (Դրո), երրորդինը՝ Համազասպը, չորրորդինը՝ Քեռին (Արշակ Գավաֆյան): Այս խմբերը 1914 թ. նոյեմբերից սկսեցին մեկնել ռազմաճակատ: Անդրանիկի ջոկատը գեներալ Զեռնոզուբովի զորաբաժնի կազմում նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մասնակցեց Ղոթուրի և այլ վայրերի գրավման համար մղված մարտերին, իսկ 1915 թ. ապրիլին Դիլման քաղաքի համար մղված արյունահեղ կռիվներին, Վասպուրականի ազատագրմանը: 1916 թ. ապրիլին այս ջոկատն առաջինը մտավ Բիթլիս և ռուսական զորքի հետ միասին ազատագրեց այն: Կամավորական երկրորդ ջոկատը գործում էր Իգդիր-Բայազետ-Բերկրի-Վան ուղղությամբ, գեներալ Նիկոլաևի զորքերի կազմում: Այն հատկապես աչքի ընկավ Ալաշկերտի դաշտում մղված կռիվների ընթացքում, մեծապես նպաստեց հայ դաղթականների փրկությանը: 1915 թ. մայիս-հունիս ամիսներին ջոկատը հերոսաբար մարտնչեց Շատախում և Մոկսում: Կամավորական երրորդ ջոկատը գեներալ Պրժեվալսկու զորախմբի կազմում աչքի ընկավ Սարիղամիշի համար մղված մարտերի ժամանակ՝ քաջաբար պաշտպանելով ռուսական զորքերի սարիղամիշյան խմբավորման ձախ թևը: Այդ ջոկատը մասնակցեց նաև Բասենի, Վանի և Վասպուրականի մյուս շրջանների ազատագրման համար մղված մարտերին, փրկեց հազարավոր հայ փախստականների կյանքեր: Կամավորական չորրորդ ջոկատը գործում էր Սարիղամիշ-Էրզրում դծում: 1914 թ. դեկտեմբերի 22-ին ջոկատը խիզախ դրոհով ճեղքեց թշնամու պաշտպանական գիծը և դուրս եկավ Սարիղամիշի մատույցներ, ապա 1915 թ. մայիս-հունիսին մասնակցեց Ոստանի, Զևան գյուղի (Վանա լճի հարավային ափին) և այլ բնակավայրերի ազատագրմանը: Մարտերից մեկում հերոսաբար նահատակվեց ջոկատի հրամանատար Քեռին:

1915 թ. կազմակերպվեցին ևս չորս ջոկատներ: Նույն թվականի ապրիլին Հայոց ազգային խորհրդի որոշմամբ Վարդանի ջոկատին միացան կա-

մավորական 2-րդ, 3-րդ և 4-րդ ջոկատները, որով ստեղծվեց «Արարատյան զորախումբը» ՝ Վարդանի ղեկավարությամբ: Այդ զորաբաժինը ապրիլին շարժվեց դեպի Բայազետ և միացավ այդ ուղղությամբ գործող գեներալ Նիկոլաևի զորախմբին: Վերջինս Վարդանին առաջադրանք տվեց՝ հարձակվել Վան քաղաքի ուղղությամբ: «Արարատյան զորախումբը» հերոսական մարտեր մղեց Բերկրի քաղաքի և Վանա լճի մերձակայքի այլ բնակավայրերի ազատագրման համար: Այն համառ մարտեր մղեց Ջանիկ ավանի մոտ, որտեղ 8000 հայ փախստականներ էին ապաստանել, և ամեն րոպե սպասվում էր նրանց կոտորածը: Վարդանի մարտիկները ջախջախեցին թուրքերին և փրկեցին փախստականներին: Մայիսի 5-ին այդ ջոկատը գեներալ Նիկոլաևի զորաբաժնի կազմում մասնակցեց Վանի ազատագրմանը:

Աշխարհի բոլոր ծայրամասերից հայ կամավորներ էին գալիս Կովկաս: Ռուսական իշխանություններն ստիպված հատուկ հայտարարությամբ դադարեցրին օտար երկրներից հայ կամավորների ընդունումը: 1915 թ. դեկտեմբերին ցարական գլխավոր հրամանատարությունը հայ կամավորական ջոկատները վերածեց ռուսական բանակի կազմում գործող հայկական հրաձգային վեց գումարտակների: Դրանք ռուսական զորքերի հետ 1916–1917 թթ. շարունակեցին հերոսական կռիվները թուրքական հրոսակների դեմ:

1916 թ. հոկտեմբերի 27-ին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի և Անգլիայի ու Ֆրանսիայի իշխանությունների միջև Լոնդոնում կնքված համաձայնագրով ստեղծվեց Արևելյան լեգեոնը, որը ֆրանսիական զորքերի կազմում պետք է պատերազմեր թուրքերի դեմ Սիրիայում և Պաղեստինում: Ֆրանսիան խոստանում էր պատերազմից հետո Կիլիկյան Հայաստանին ինքնավարություն տալ: Լեգեոնի կազմում ընդգրկվում էին միայն հայեր և արաբներ, հրամանատարները պետք է լինեին ֆրանսիացիները: 1918 թ. սեպտեմբերի 19-ին Արևելյան լեգեոնը առաջին անգամ մարտի մեջ մտավ Պաղեստինում, արիաբար կռվելով Արաբայի ճակատամարտում, ապա մասնակցեց Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին: 1918 թ. հոկտեմբերի 15-ին Բեյրութում կազմավորվեց նաև 4-րդ գումարտակը, որով Արևելյան լեգեոնի հայ զինվորների թվակազմը հասավ հինգ հազարի: Այդ ժամանակվանից այն վերակոչվեց Հայկական լեգեոն անվամբ և մասնակցեց Կիլիկիայի համար մղված մարտերին: Բայց 1920 թ. օգոստոսին այն ցրվեց, քանի որ Ֆրանսիան այլևս չէր կամենում շարունակել պատերազմը քեմալական Թուրքիայի դեմ:

ՀԱՑԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԳԵՆՈՑԻԴԸ) ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Օգտվելով պատերազմական իրավիճակից՝ 1915 թ. երիտթուրքական վերնախավը՝ Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Նազիմը և ուրիշներ, իրագործեցին արևմտահայության զանգվածային ոչնչացումը, որը մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունն (գենոցիդ) էր: Հայաստանը սեպի պես կանգնած էր դեպի Ռուսական կայսրության թուրքալեզու ժողովուրդները տանող ճանապարհին և խանգարում էր թուրքական կառավարողներին՝ իրագործելու իրենց պանթուրքիստական ծրագրերը: Դեռևս 1911 թ. Սալոնիկ քաղաքում կայացած իրենց համագումարում երիտթուրքերի ղեկավարությունը նշեց, որ Ռուսաստանի թուրքալեզու ցեղակիցներին միանալու համար պետք է վերացնել հիմնական խոչընդոտը՝ հայությունը: Հայերին բնաջնջելու համար 1915 թ. տրված կառավարական հրահանգում ասվում էր, որ «... չնայած հայկական տարրի բնաջնջումը վաղուց վճռված էր, բայց հանգամանքները խոչընդոտել են այդ սրբազան գործի իրագործմանը»: Նույն հրահանգում նշվում էր նաև, որ «... վրա է հասել այդ վտանգավոր տարրից ազատվելու պահը... պետք է ոչնչացնել նրանց բոլորին և ամեն կերպ ջանալ վերացնելու «Հայաստան» անունը Թուրքիայում:

Թուրքիայի զորեղ դաշնակիցը՝ Գերմանիան ոչնչով չկանխեց հայերի կոտորածը, որպեսզի չգժտվի թուրքական կառավարության հետ և կարողանա իրագործել իր նվաճողական քաղաքականությունն Արևելքում: Բայց հայկական Մեծ եղեռնը զարհուրելի իրողություն էր, որի առջև աչք չէին կարող փակել գերմանացիները: 1915 թ. հուլիսի 7-ին Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը պաշտոնապես հայտնեց իր կառավարությանը, որ «թուրքական կառավարությունը իրականում իր առջև նպատակ է դրել թուրքական պետության մեջ ոչնչացնել հայ ազգը»: Երիտթուրքական կուսակցության ղեկավար գործիչներ Մեվլանզադե Ռիֆաթը և Նայիմ բեյը մասնակցել են երիտթուրքական կառավարության գաղտնի նիստերին և նշում են, որ տակավին 1915 թ. սկզբին Իթթիհատական կուսակցությունն իր գաղտնի նիստում որոշեց բնաջնջել հայերին: Այդ նիստում կոչ արվեց մինչև վերջին մարդը ոչնչացնել հայությանը՝ չխնայելով անդամ կրծքի երեխաներին: Հայերի բնաջնջումը պետք է կատարվեր տեղահանության քողի տակ: Նրանց քշելու էին Դեր-Զորի (Սիրիա) անապատները՝ ճանապարհին կոտորելով վայրենաբարո ցեղերի, բանտից ազատ արձակված մարդասպանների ձեռքով: Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթը գրում էր, որ «... թուրքական հողի վրա ապ-

րելու և աշխատելու հայերի բոլոր իրավունքները լիովին վերացված են, դրա պատասխանատվությունը կառավարությունը ամբողջապես վերցրել է իր վրա և հրաման է տվել չխնայել նույնիսկ օրորոցի երեխաներին»:

Հայերին մարտունակ ուժից զրկելու համար թուրքերն առաջին հերթին կոտորեցին թուրքական բանակում ծառայող մոտ 60 հազար հայ զինվորների, ապա հայերի հնարավոր ապստամբությունները կանխելու համար ոչնչացրին հայ մտավորականության ծաղիկը: Միայն Կ. Պոլսում 1915 թ. ապրիլի 24-ի գիշերը ձերբակալեցին 235 հայ անվանի մտավորականների (քիչ հետո նրանց թիվը հասավ 800-ի), որոնց աքսորեցին Անատոլիայի հեռավոր շրջաններ և վայրագ ձևով սպանեցին: Այդպես կյանքից զրկվեցին գրողներ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը և ուրիշներ: Աքսորվածների մեջ էր նաև Կոմիտասը, որը դաժան կոտորածների պատճառով ընկավ ծանր հոգեվիճակի մեջ և խելագարվեց:

1915 թ. ապրիլ–մայիս ամիսներին տեղահանվեցին և ոչնչացվեցին Կիլիկիայի, Հունիս–Հուլիսին՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի (Սվազի) վիլայեթների, իսկ նույն թվականի օգոստոսին՝ Դիարբեքիրի վիլայեթի հայ բնակիչները: Տեղահանելուց առաջ հայ տղամարդկանց առանձնացնում և կոտորում էին: Սպանում էին ամենավայրագ եղանակներով, երեխաներին կոտորում էին ծնողների, ծնողներին՝ զավակների առջև: Թուրքական և քրդական հրոսակախմբերը անգթորեն սրի քաշեցին այդ վիլայեթների բազմահազար հայերի՝ չխնայելով կանանց, ծերերին ու երեխաներին: Կոտորվողների արյունից Եփրատ գետի ջուրը կարմրել էր, որոշ տեղերում գետի առջևը փակում էին դիակների հսկայական կույտերը: Վանի և շրջակա գյուղերի բնակչությունը մասամբ փրկվեց ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ: Էրզրումի վիլայեթի հայությունը տեղահանվեց և ճանապարհին բնաջնջվեց: Տրապիզոնի վիլայեթի մոտ 100 հազարի հասնող հայ բնակչության մեծ մասը ոչնչացվեց աքսորի ճանապարհին: Վեց հարյուր երեխաներ ծովը նետվեցին կամ թունավորվեցին: Տարոնի (Մուշի գավառի) 125 հայկական գյուղերը հիմնահատակ ավերվեցին, բնակչության մեծ մասը սրի քաշվեց: Մարդկանց լցնում էին մարագները և ողջակիզում, երեխաներին ողջ-ողջ թաղում էին, գեղեցիկ աղջիկներին առևանգում: Նույն ժամանակ տեղահանվեց և բիրտ եղանակներով բնաջնջվեց նաև Սեբաստիայի վիլայեթի 215 հազար հայությունը: 1915 թ. հունիսից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում բնաջնջվեց նաև Խարբերդի վիլայեթի հայությունը (204 հազար մարդ): Տեղահանելու քողի տակ հայերին քշում էին Միջագետքի անապատները և ճանապարհին բարբարոսաբար կոտորում: Դիարբեքիրի (Տիգրանակերտի) վիլայեթի 124 հազար հայությունը հիմնակա-

նում սրի քաշվեց տեղում 1915 թ. օգոստոսին: Նույն ամսին տեղահանվեցին Անկարայի, Ուրֆայի, Այնթափի, Բրուսայի, Հոկտեմբեր–նոյեմբերին՝ Ադրիանապոլսի, Կեսարիայի Հայերը:

Հայությունը լիովին չտեղահանվեց միայն Կ. Պոլսից և Զմյուռնիայից, քանի որ այդ քաղաքների տնտեսական կյանքում Հայերը էական դեր էին խաղում, նրանց տարագրությունը ծանր հարված կհասցներ երկրի տնտեսությանը: Բացի այդ, հիշյալ քաղաքներում օտար դիվանագետների, թղթակիցների առկայությունը ևս զսպեց թուրքերին: Աքսորավայր (Դեր–Զոր և այլն) հասած Հայության մնացորդների մեծ մասը թալեաթի հրամանով ոչնչացվեց տեղում:

Այդպիսով Օսմանյան Թուրքիայում ապրող մոտ երեք միլիոն Հայերից ավելի քան մեկ ու կես միլիոնը բնաջնջվեց, մնացածները դաղթեցին Անդրկովկաս, Ռուսաստան, Իրաք, Սիրիա, Եգիպտոս, Լիբանան, ամերիկյան և եվրոպական երկրներ: Շատ արևմտահայեր բռնությամբ մահմեդականացվեցին: Արևմտահայությանը պատճառեցին հսկայական նյութական վնասներ, որոնք ազդարարվեցին 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Վերջինիս հրապարակած տվյալների համաձայն, արևմտահայերին հասցվել է 14 միլիարդ 598 միլիոն 510 հազար ֆրանկի վնաս: Ավերվեցին հազարավոր արևմտահայ գյուղեր, մշակութային արժեքներ, վանքեր, եկեղեցիներ: Ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը իր բողոքի ձայնը բարձրացրեց թուրքական ջարդարարների դեմ: Լույս տեսան Հայկական կոտորածների սահմռկեցուցիչ փաստերը լուսաբանող բազմաթիվ հոդվածներ, գրքեր: Կոտորածների հետևանքով Հայությունը տարասփռվեց աշխարհի բազմաթիվ երկրներում: Եղեռնապուրծ Հայությունը այդ երկրներում կազմեց Հայկական սփյուռքը:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋԱՐԴԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունների կազմակերպած զանգվածային ջարդերին, տեղահանությանը դիմադրավելու համար որոշ շրջաններում Հայերը կազմակերպեցին ինքնապաշտպանություն՝ հերոսաբար դիմադրելով թշնամու գերակշիռ ուժերին: Ինքնապաշտպանական կռիվները չունեին ծրագիր, մղվում էին միմյանցից անկախ՝ որպես պատասխան ջարդարար հրոսակախմբերի հարձակումներին: Դրանցից առավել նշանավորը Վանի հերոսական ինքնապաշտպանությունն էր, որը տևեց 1915 թ. ապրիլի 7–ից մինչև մայիսի 6–ը: Ապրիլի սկզբին Վանի վիլայեթի կուսա-

կալ Ջեվդեթ բեյը զորքը նետեց Վանի և Հարակից շրջանների դեմ՝ Հայերին բռնությամբ տեղահանելու, բնաջնջելու համար: Վանի 50 հազար բնակչությունից մոտ 32 հազարը հայեր էին: Ջարդերից խուսափելով՝ շրջակա գյուղի բնակիչներն ապաստանեցին Վանում, որի հայ բնակչությունը հասավ մոտ 80 հազարի: Ապրիլի սկզբին թուրքերը պաշարեցին Վանի Այգեստան թաղամասը, որը բնակեցված էր միայն հայերով: Ստեղծվեց ինքնապաշտպանության ղեկավար մարմին՝ Արմենակ Եկարյանի գլխավորությամբ: Այգեստանը բաժանվեց հինգ պաշտպանական գծերի, որոնց 73 դիրքերում ամրացել էին 1053 ռազմիկներ: Վանի պաշտպանները կազմակերպեցին զենքի արտադրություն, ձուլեցին նաև երեք թնդանոթ (պղնձից): Ապրիլի 20-ին թուրք զորքը գրոհեց Այգեստանի վրա, բայց հայերը ետ շպրտեցին նրան: Անհաջող անցան նաև Վանի քաղաքամիջում դիրքավորված հայերի դեմ թուրքերի ձեռնարկած հարձակումները: 1915 թ. մայիսի 6-ին ռուսական զորքը և հայ կամավորները ազատագրեցին Վանը, որի նահանգապետ նշանակվեց Արամ Մանուկյանը: Հուլիսի 16-ին թուրքերի ճնշման տակ ռուսները նահանջեցին Ալաշկերտի դաշտ, բայց մեկ ամիս հետո անցան հակահարձակման, վերագրավեցին Վանը և այլ վայրեր:

Ջարդարար հրոսակախմբերին հերոսական դիմադրություն ցույց տվեցին նաև Վասպուրականի Շատախ լեռնագավառի 52 հայաբնակ գյուղերը, որոնք 1915 թ. ապրիլի 4-ից մինչև ռուսների մոտենալը (մայիսի 13) հերոսաբար դիմակայեցին թշնամուն:

1915 թ. մայիսին Տարոնը (Մշո դաշտ) ևս դիմեց ինքնապաշտպանության: Ստացած հրահանգի համաձայն, Բիթլիսի վիլայեթի թուրք կուսակալը ձեռնամուխ եղավ Մշո դաշտի հայության բնաջնջմանը: Ջարդարարներին հակահարված տալու համար հայերը Հ. Կոտոյանի և ուրիշների գլխավորությամբ դիմեցին ինքնապաշտպանության: 1915 թ. մայիսի սկզբին ռուս զորքը մոտեցավ Մուշին: Դա ոգեշնչեց Տարոնի հայությանը: Սակայն հունիսին ռուս զորքը թուրքական գերակշիռ ուժերի ճնշման տակ նահանջեց: Թուրք և քուրդ հրոսակախմբերն օգտվեցին դրանից և հարձակման անցան հայերի դեմ՝ սրի քաշելով նրանց: Հայերը կազմակերպեցին մարտական ջոկատներ: Հունիսի 26-ից մինչև 30-ը արյունոտ մարտեր բորբոքվեցին Մուշի հայաբնակ թաղերում, որոնք հիմնովին ավերվեցին, բնակիչները սրի քաշվեցին: Միայն 700 հոգու հաջողվեց ճեղքել պաշարումը և հեռանալ լեռները: Լավ զինված և մի քանի անգամ հայերի զորուժը գերազանցող հրոսակախմբերը գրոհեցին Մշո դաշտի հայկական գյուղերը՝ սրի քաշելով նրանց բնակիչներին: Տարոնի 70 հազար հայությունից փրկվեց միայն ինը հազարը՝ ապաստանելով Սասունում:

1915 թ. գարնանը թուրքական և քրդական ուժերը հարձակվեցին Սա-

սունի վրա, որի 60 հազարանոց բնակչությունը ջարդերից փրկվելու համար դիմեց կենաց և մահու կռիվների: 1915 թ. մարտին թշնամու ուժերը ներխուժեցին Սասուն՝ Հյուսիսից և Հարավից աքցանի մեջ առնելով այն: Ապրիլից կատաղի կռիվներ սկսվեցին Սասունի Խիանք և Խուլփ գավառակներում: Հայ մարտիկներն ստիպված բարձրացան Անդոք լեռը և շարունակեցին դիմադրությունը: Հունիսին թեժ մարտեր ծավալվեցին Փսանք (Փսանաց) գավառակում, որի ազատամարտիկներին օգնության հասան Տալվորիկ գյուղի ռազմիկները: Ոսոխի գերազանց ուժերի առջև տեղի տալով, այս գավառակի պաշտպանները ստիպված հեռացան Անդոք լեռը՝ շարունակելով օրհասական մաքառումները: Հուլիսի 20-ին սասունցիները ջախջախեցին թշնամուն՝ խլելով ռազմավար (նաև 3 թնդանոթ): Սակայն երեք օր հետո թշնամին մեծ ուժեր նետեց սասունցիների դեմ, գրավեց մի քանի գյուղ՝ սրածելով բնակչությանը: Թշնամուն հաջողվեց գրավել Անդոքը և նրա հարավակողմում գտնվող կենտրոնական Սասունի մյուս անմատչելի լեռը՝ Քեփինը: Սասունցիները հարկադրված եղան թաքնվել լեռների ծերպերում, անտառներում, առանձին խմբերով վարեցին պարտիզանական կռիվներ, մինչև որ օգոստոսին ռուսական զորքը գրավեց Սասունը, որի 60 հազար բնակչությունից փրկվեց միայն 5000-ը:

Ողբերգական վախճան ունեցավ Անդրանիկ զորավարի ծննդավայր Շապին-Գարահիսար քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը: 1915 թ. հունիսի 2-ին թուրքական զորքը օղակի մեջ առավ քաղաքի հայկական թաղը: Հայերը հրաժարվեցին տեղահանվելուց և ամրացնելով իրենց թաղը, դիմադրեցին թշնամուն, որին հաջողվեց հրանոթային կրակով հրդեհել հայերի գրեթե բոլոր տները (փայտաշեն էին): Հայերն ստիպված նահանջեցին քաղաքի բերդը, ամրացրին նրա պարիսպները և հերոսաբար դիմադրեցին թուրքական 20 հազարանոց զորքին: Հունիսի 25-ին բերդի պաշտպանների մեծ մասը ճեղքեց պաշարման օղակը և հեռացավ՝ հույս ունենալով օգնություն ստանալ և փրկել բերդում մնացած իրենց ընկերներին: Դա նրանց չհաջողվեց: Բերդի փոքրաթիվ պաշտպանները շարունակեցին դիմադրությունը, ապա թուրքերին դերի չհանձնվելու համար թույն ընդունեցին: Հունիսի 27-ին թուրքերին հաջողվեց գրավել բերդը՝ կոտորելով այնտեղ պատսպարված կանանց ու երեխաներին:

Հաջող ելք ունեցավ մուսալեռցիների ինքնապաշտպանությունը: Հալեպի վիլայեթի Անտիոքի գավառում եղած հայկական վեց գյուղերի բնակիչները 1915 թ. հուլիսի 13-ին մերժեցին թուրքերի կողմից իրենց արված տեղահանության առաջարկը և բարձրացան մոտակա Մուսա լեռան գագաթը: 1355 մետր բարձրությամբ այդ լեռը գտնվում էր Միջերկրական ծովի ափին: Հայերը Եսայի Ցաղուբյանի և ուրիշների գլխավորությամբ ամրացան լեռան գագաթին և հերոսաբար դիմադրեցին թուրքերին: Հա-

յերն ունեին 600 ռազմիկ, որոնց օգնում էին նաև կանայք: Հուլիսի 21-ին թուրքական յոթ հազարանոց զորքը հարձակման անցավ, բայց մուսալեռցիներին հաջողվեց դիշերը լեռան անտառապատ ստորոտում շրջապատել նրանց և ոչնչացնել 200 հոգու, մնացածը խուճապահար փախան: Թուրքերը շարունակեցին հարձակումները ավելի մեծ ուժերով, սակայն ետ շպրտվեցին, տալով մոտ 1000 սպանված: Անհաջողությամբ վերջացան նաև թշնամու հաջորդ հարձակումները: Մուսալեռցիների հերոսական մաքառման 53-րդ օրը Մուսա լեռը ողողող ծովափին մոտեցան ֆրանսիական մի ռազմանավ, մի քանի օր հետո ուրիշ նավեր, որոնք իրենց վրա վերցրին 4000 մուսալեռցիներին և տեղափոխեցին Եգիպտոսի Պորտ Սաիդ նավահանգիստ:

Մուսալեռցիների ինքնապաշտպանությանն է նվիրված ավստրիացի գրող (ազգությամբ հրեա) Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը:

Աննկուն քաջությամբ էին պայքարում նաև Ուրֆայի գոյամարտի մասնակիցները: Միջագետքի Ուրֆա (Եդեսիա, Ուռհա) քաղաքը 1915 թ. ուներ 35 հազար հայ բնակիչ: Ուրֆացիները ստեղծեցին զինվորական խորհուրդ՝ Մկրտիչ Ցոթնեղբայրյանի գլխավորությամբ, ամրացրին քաղաքի հայկական թաղը և մոտակա բլուրը: Ուրֆացիներն ունեին 800 ռազմիկ, որոնց միացան նաև կանանց երեք ջոկատները: Սեպտեմբերի վերջին թուրքական զորքը անցավ հարձակման: Ինքնաշեն զենքերով զինված ուրֆացիները ջարդեցին թուրքերին, որոնք տալով 400 սպանված, նահանջեցին: Հոկտեմբերի 1-ին թուրքերը մեծ ուժերով գրոհեցին հայերի դիրքերի վրա, գրավեցին հայ կաթոլիկների եկեղեցին, խուժեցին հայկական թաղ, բայց ետ շպրտվեցին: Թուրքերը հայերի դեմ նետեցին վեց հազար զինվոր, որոնց միացավ 12 հազար հոգուց բաղկացած խաժամուժը: Նրանց հաջողվեց մտնել հայոց թաղ, բայց հայերը վերստին դուրս շպրտեցին թշնամիներին: Առավել կատաղի մարտեր բռնկվեցին հոկտեմբերի 8-ին և 9-ին, երբ թուրքերին հաջողվեց շրջապատել հայկական թաղը: Հայերը քաջաբար դիմադրեցին թշնամու գերազանց ուժերին: Հաջորդ օրը հրետանային տեղատարափ կրակի տակ առնելով հայերի դիրքերը, թշնամին ավերեց հայկական թաղը, սակայն այս անգամ ևս նա բախվեց հայերի ամրակուռ պաշտպանությանը: Հոկտեմբերի 23-ին թուրքերին հաջողվեց գրավել հայկական թաղը և սրի քաշել նրա բնակիչների մեծ մասին: Մեծ զոհերի գնով թուրքերին (նրանք կորցրին 2000 սպանված և բազմաթիվ վիրավորներ) հաջողվեց ճնշել հերոս ուրֆացիների 25 օրյա դիմադրությունը:

ՀԱՑԱՍՏԱՆԸ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

1917 թ. փետրվարի 27-ին Ռուսաստանում հաղթանակեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը, որը տապալեց ցարին և մարտի 2-ին ստեղծեց բուրժուական ժամանակավոր կառավարություն: Վերջինիս կառավարող մարմինը Անդրկովկասում 1917 թ. մարտի 9-ին ստեղծված Անդրկովկասյան հատուկ կոմիտեն էր (Օղակոմ)՝ Վ. Խալաթովի գլխավորությամբ: Այն կառավարում էր նաև ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանը (գերագույն կոմիսարի միջոցով), որը դիտվում էր Ռուսաստանի բաղկացուցիչ մաս:

1917 թ. մայիսի 2-ից մինչև 11-ը Թիֆլիսում գումարվեց արևմտահայերի առաջին համագումարը, որտեղ քննարկվեցին Արևմտյան Հայաստանի տնտեսության, մշակույթի զարգացման, եղեռնապուրծ հայերին հայրենիք վերադարձնելու հետ կապված խնդիրները: Ընտրվեց Արևմտահայ ազգային խորհուրդ (նախագահ՝ Վահան Փափազյան): Շուտով 140 հազար արևմտահայեր վերադարձան հայրենիք: Նույն ժամանակ Արևմտյան Հայաստանը նրա գերագույն կոմիսար Պ. Ավերյանովի հրամանով բաժանվեց երեք վարչամիավորի՝ Էրզրումի, Խնուսի և Վանի: Աշխատանքներ տարվեցին երկրի վերաշինության ուղղությամբ:

1917 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համախորհրդակցության մասնակիցները բացարձակ վստահություն հայտնեցին Ռուսաստանի ժամանակավոր կառավարությանը և որոշեցին օգնել նրան՝ պատերազմը հաղթական վախճանի հասցնելու համար: Ընտրվեցին Հայոց Ազգային ժողով (օրենսդրական իրավունքներով) և նրա գերագույն գործադիր մարմինը՝ Ազգային խորհուրդ՝ գրող Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Ազգային խորհուրդը պետք է իրականացներ արևելահայությանն առնչվող քաղաքականությունը և լուծեր ընթացիկ զանազան խնդիրներ:

Ժամանակավոր կառավարությունը հռչակեց ազգերի ինքնորոշման իրավունքը: Ռուսական բանակում 1917 թ. հունիսից ստեղծվեցին ազգային զորամասեր (այդ թվում նաև հայկական): Հայ զինվորներին սկսեցին եվրոպական ճակատներից տեղափոխել կովկասյան ռազմաթեմ (այս գործընթացը կասեցվեց 1917 թ. հոկտեմբերին բոլշևիկների կողմից): Բոլշևիկները գերմանական գլխավոր շտաբի ֆինանսական լայն աջակցությամբ քայքայեցին ռուսական բանակը, քարոզելով թշնամի զինվորների «եղբայրացում», որը վերաճեց դասալքության:

1917 թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումը փրկեց աղետի եզրին կանգնած թուրքական բանակին: Անդրկովկասը

1917 թ. նոյեմբերի 15-ին անջատվեց բոլշևիկյան Ռուսաստանից և ստեղծեց նոր իշխանություն՝ Անդրկովկասի կոմիսարիատը՝ մենշևիկ Գեգեչկորու գլխավորությամբ: Անջատման նախաձեռնողը վրացի մենշևիկներն էին: Այն չէր համապատասխանում հայերի քաղաքական շահերին: Բայց հայ ժողովուրդն ստիպված համակերպվեց դրան, որպեսզի այդ բախտորոշ պահին չմեկուսանա հարևաններից: Նոյեմբերի 15-ին թուրքերը զինադադար առաջարկեցին: Դեկտեմբերի 5-ին Երզնկայում զինադադար կնքվեց: Մեկ շաբաթ հետո Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը Բրեստ-Լիտովսկում բանակցություններ սկսեց Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ, որոնց պահանջով Արևմտյան Հայաստանից հանվելու էր ռուսական զորքը՝ ծանր հարվածի տակ դնելով հայերին:. Բոլշևիկյան իշխանության կողմը հայերի համակրանքը գրավելու նպատակով Լենինի կառավարությունը (Ժողկոմսովետը) 1917 թ. դեկտեմբերի 31-ին ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը (որոշումը), որով թղթի վրա ճանաչվում էին հայ ժողովրդի օրինական իրավունքներն Արևմտյան Հայաստանում, արևմտահայերի ազատ ինքնորոշումը: Դեկրետը դրա կենսագործման երաշխիք էր համարում Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրս բերումը և նրան փոխարինող «Հայկական ժողովրդական միլիցիայի» ստեղծումը: Բայց, Արևմտյան Հայաստանից դուրս բերելով ռուսական զորքերը, բոլշևիկներն այն ընծայեցին թուրքերին: Ստեղծված պայմաններում հայերը մնացին մենակ ընդդեմ թուրքերի, որոնց դիմակայեցին 1917 թ. նոյեմբերին ստեղծված հայկական կորպուսը և Անդրանիկի երկրապահ զորամասը: Մեծ աշխատանք ծավալեց Երևանի ազգային խորհուրդը, որը վերածվեց պետական ամբակուռ իշխանության՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ:

1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված պայմանագրով՝ ռուսական զորքերը դուրս էին բերվելու Արևմտյան Հայաստանից: Դեռևս 1917 թ. դեկտեմբերի վերջից, թուրքերը խախտելով զինադադարը, գրավեցին Արևմտյան Հայաստանի գավառները: 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան կոմիսարիատին փոխարինած Սեյմը (պառլամենտը) մերժեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և ձեռնամուխ եղավ թուրքերի հետ հաշտություն կնքելուն: 1918 թ. մարտի 12-ին թուրքերը գրավեցին Էրզրումը: Մարտի 18-ին Սեյմի պատվիրակությունը բանակցություններ սկսեց թուրքերի հետ՝ Տրապիզոնում: Թուրքերը վերջնագրով պահանջեցին իրենց զիջել Կարսը, Արդահանը և Բաթումը՝ ելնելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրից: Սեյմը մերժեց վերջնագիրը, ապրիլի 1-ին ետ կանչեց իր պատվիրակությանը և պատերազմ հայտարարեց Թուրքիային: Բայց պատերազմի հենց հաջորդ օրը թուրքերը գրավեցին Բաթումը: Վրացիների համար թուրքերի դեմ կռվելը կորցրեց իր իմաստը: Նրանց

չէր հուզում Կարսի խնդիրը: Վրացիների հետ իրենց գործը վերջացրած համարելով, թուրքերը ամբողջ ուժով նետվեցին հայերի վրա: Ապրիլի 9-ին Սեյմը Անդրկովկասը հռչակեց Ռուսաստանից անկախ հանրապետություն, իսկ հաջորդ օրը կարգադրեց Կարսը զիջել թուրքերին, որոնց դա էլ չբավարարեց և շարունակեցին առաջ շարժվել: Մայիսի 15-ին Սեյմի կարգադրությամբ թուրքերին հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը, որից հետո նրանց առջև բացվեց Երևան տանող ճանապարհը:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ, ԲԱՇ ԱՊԱՐԱՆԻ ԵՎ ՂԱՐԱՔԻԼԻՍԻԱՑԻ 1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Կարսի գրավումից հետո թուրքերը ձեռնամուխ եղան Անդրկովկասի, առաջին հերթին, իհարկե, Արևելյան Հայաստանի նվաճմանը: Նրանք Սարդարապատի և Աշտարակի կողմերից կամենում էին հարձակվել Երևանի վրա և գրավել այն: Բնաջնջման սպառնալիքն այժմ կախվեց նաև արևելահայության վրա:

Մայիսի 21-ին թուրքական զորքը գրավեց Սարդարապատ գյուղը (այժմ՝ Արմավիրի մարզի Հոկտեմբեր գյուղ): Նրա նպատակն էր գրավել Երևանը: Ստեղծվեց տագնապալի վիճակ, բնակչությունը խուճապի մատնվեց: Հայկական բանակի հրամանատարությունը դիմեց եռանդուն միջոցների: Հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկյանը 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ Սիլիկյանին հրամայեց մարտական ուժերը դասավորել Էջմիածնի մոտ և թուրքերին թույլ չտալ Երևանին մոտենալու:

Սիլիկյանի տրամադրության տակ, բացի 2-րդ հրաձգային դիվիզիայից, դրվեցին ևս չորս գնդեր և այլ զորամասեր: Քանի որ թուրքերը կամենում էին Երևանի վրա հարձակվել նաև Սուրմալուից, ուստի Սիլիկյանը հրամայեց պայթեցնել Սուրմալուից դեպի Արաքսի ձախ ափ տանող Մարգարայի ու Ղարաղալայի կամուրջները (այժմյան Արմավիրի մարզում), դիրքավորվել գետի ափին և թույլ չտալ թուրքերին Արաքսը գետանցել: Բայց Երևանին թուրքերն սպառնում էին նաև Նախիջևանի կողմից, ուստի Սիլիկյանը գնդապետ Բաղդասարովի հետևակային բրիգադին առաջադրանք տվեց կանխել թուրքերի առաջխաղացումն այդ ուղղությամբ: Մայիսի 22-ին գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորած զորամասերը, գնդապետ Պերևկրեստովի պարտիզանական հետևակային գունդը, Ջեյթունի հեծյալ գունդը, Իգդիրի հետևակային գունդը և կամավորական աշխարհազորային խմբերը Ղուրդուղուլի (այժմ՝ Արմավիր) և

Քյորփալու (այժմ Արշալույս) գյուղերից գրոհեցին թուրք զորքի վրա, ջախջախեցին նրան Ղամշլուի (այժմ՝ Ջարթոնք գյուղը Արմավիրի մարզում) մոտ, ապա առաջ շարժվելով, նույն օրվա վերջին գրավեցին Սարդարապատը: Թուրք զորքը, խուճապի մատնվելով, մայիսի 26-ին ետ քաշվեց, բայց քանի որ հայկական զորախումբը Սարդարապատը գրավելուց հետո թուլացրեց ճնշումը թուրքերի վրա, ուստի վերջիններս ամրացան Արաքս կայարանի մոտակա բարձունքներում: Սակայն հայկական զորամասերը մայիսի 27-ին խիզախ գրոհներով ջախջախեցին թուրքերին, որոնք մեծ կորուստներ կրելով նահանջեցին Ալեքսանդրապոլ: Այդպես կանխվեց Երևանը գրավելու նրանց փորձը:

Սարդարապատի հերոսամարտը օրհասական գոյամարտ էր: Այն ցույց տվեց, որ անհնար է ծնկի բերել հայ ժողովրդին, որը փոքրաթիվ ուժերով կենաց և մահու կռիվներ մղեց դարավոր ոսոխի մինչև ատամները զինված զորքերի դեմ, հաղթեց նրանց՝ նվաճելով որպես ազգ պետականորեն գոյատևելու իրավունքը:

Թուրքական հրամանատարությունը փորձեց Երևանին հարվածել նաև Բաշ Ապարանի կողմից, ուստի Սիլիկյանը զորամասեր կենտրոնացրեց նաև այդ ուղղության վրա: Դրոյի գլխավորած զորամասերը մայիսի 24-ին մտան Ալիքուչակ (այժմ՝ Քուչակ) գյուղը և ամրացան այնտեղ: Դրոն հետախույզների միջոցով պարզեց թշնամու նպատակը: Մայիսի 27-ին թեժ մարտեր բորբոքվեցին Բաշ Ապարանի մոտ: Թշնամուն սկզբում հաջողվեց հրետանային կրակով ճնշում գործադրել հայերի վրա: Սակայն հայկական զորամասերը, Դրոյի հմուտ ղեկավարությամբ երկու օր տևած կռիվներում, մայիսի 29-ին ծանր պարտության մատնեցին թշնամուն, որը տալով ավելի քան 200 սպանված, նահանջեց:

Մայիսի վերջերին հայ ժողովուրդը հերոսական կռիվներ մղեց նաև Ղարաքիլիսա (այժմ Վանաձոր) քաղաքի մոտ: Մայիսի 20-ին Ալեքսանդրապոլից թուրքերը ուղղվեցին դեպի Ղարաքիլիսա, գրավեցին Ջաջուռը և այլ բնակավայրեր, շարժվեցին Համամլու (այժմ՝ Սպիտակ), ապա՝ դեպի Ղարաքիլիսա, որտեղ մայիսի 24-ից հայկական բանակի չորս զորագնդեր (վեց հազար զինվոր) գնդապետ Ն. Ղորղանյանի, պորուչիկ Գարեգին Նժդեհի և ուրիշ սպաների հրամանատարությամբ մարտի բռնվեցին: Նրանց օգնում էին Լոռու հայ աշխարհազորայինները: Ուժեղ մարտեր ընթացան մայիսի 25-ին, երբ Ն. Ղորղանյանի գունդը ոչնչացրեց ավելի քան 200 թուրք զինվորի: Այդ օրը թուրքերը մեծ կորուստներ կրեցին նաև հայկական մյուս զորամասերից: Քաջաբար էին մարտնչում նաև շրջակա գյուղերի բնակիչները: Բայց թուրքերը, համալրելով իրենց ուժերը, մայիսի 27-ին հակահարձակման անցան և հասան որոշ հաջողության: Հայկական զորամասերը թեև ոչ մի համալրում չէին ստանում, սակայն կռվում

էին անօրինակ քաջությամբ: Մայիսի 28-ին թուրքերն ավելի ուժեղացրին ճնշումը և հայկական զորքերին ստիպեցին նահանջել: Թուրքական բանակը կտրեց Դիլիջան տանող ճանապարհը և աջցանի մեջ առավ Ղարաքիլիսան, որի դրությունը խիստ ծանրացել էր նաև Համամլուն թուրքերի կողմից գրավելուց հետո: Մայիսի 30-ին թուրքական տասհազարանոց զորքը գրավեց Ղարաքիլիսան: Ղարաքիլիսայի ճակատամարտում հայերը կորցրին 1500 սպանված ու վիրավոր, մոտ 1000 գերի: Թուրքերը ևս մեծ կորուստներ ունեցան: Թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան (ծագումով ալբանացի) ստիպված էր խոստովանել, որ «Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:

Ղարաքիլիսայից թուրքերը շարժվեցին դեպի Շուլավեր, նպատակ ունենալով գրավել Թիֆլիսը, որի քաղաքապետը կոչով դիմեց բնակչությանը՝ պաշտպանել քաղաքը: Բայց վրաց մենշևիկները կարողացան համաձայնության մեջ մտնել գերմանացիների հետ, որոնք զորք մտցրին Վրաստան, կանխելով այնտեղ թուրքերի մուտքը: Հայերը նույնպես դիմեցին գերմանացիներին, որպեսզի Հայաստան զորք մտցնեն, սակայն հայերի խնդրանքը անտես առնվեց: Գերմանացիները չկամեցան նեղացնել դաշնակից թուրքերին:

Թուրքական զորքերը հունիսի 4-ին Լոռիից տեղափոխվեցին Գյանջա՝ Բաքվի վրա գրոհելու համար: Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի սովետական իշխանությունն այդ ժամանակ ուներ 18 հազար զինվոր, որի մոտ 70%-ը հայեր էին (հիմնականում արևմտյան ռազմաճակատներից եկած): Ադրբեջանի մուսավաթական կառավարությունն իր զորքերը դրեց թուրքերի տրամադրության տակ: Հունիսի 17-ից սկսվեցին ընդհարումները Բաքվի կոմունայի և թուրք-թաթարական ուժերի միջև: Հուլիսի 31-ին Ստ. Շահումյանի կառավարությունը հրաժարվեց իր լիազորություններից: Բաքվի կուսակցությունները՝ էսեռները, մենշևիկները և դաշնակցությունը Բաքու հրավիրեցին Պարսկաստանում (Էնզելի քաղաքում) գտնվող անգլիացիներին: Բաքվի կոմունային փոխարինած Ցենտրոկասպիի կառավարությունը շարունակեց դիմադրությունը հարձակվող թուրքերին: Հայկական զորամասերը շարունակում էին արիաբար մարտնչել թշնամու դեմ: Մարտերից մեկում հերոսաբար զոհվեց նշանավոր ֆիդայի, սեբաստացի Մուրադը: Օգոստոսի 5-ին Բաքվի պաշտպանները ջախջախեցին թուրքերին, որոնք մարտի դաշտում թողնելով 2000 դիակ, նահանջեցին: Հաջորդ օրը Բաքու ժամանեց անգլիական ջոկատը (600 զինվոր): Համալրելով իրենց ուժերը, թուրքերը սեպտեմբերի 14-ից վճռական հարձակման անցան Բաքվի դեմ: Անգլիացիներն ստիպված հեռացան Բաքվից: Ցենտրոկասպիի զորքերը և հայկական զորամասերը նահանջեցին: Թուրքական

գերակշիռ ուժերը սեպտեմբերի 15-ին գրավեցին Բաքուն, երեք օր թուրք-թաթարական ամբոխին թույլ տվեցին հայերին կոտորել, թալանել: Այդ օրերին նրանք Բաքվում կոտորեցին 30 հազար հայերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1918 թ. ամռանը Անդրկովկասում տեր ու տնօրինություն էին անում գերմանացիներն ու թուրքերը: Վերջիններս Բաթումում 1918 թ. մայիսին հրավիրված կոնֆերանսում խիստ թշնամական դիրք բռնեցին հայերի հանդեպ: Էնվերը և Թալեաթը գտնում էին, որ հայերին ոչ մի տարածք չպետք է զիջել, նրանց պետք է իսպառ բնաջնջել: Բայց, երբ թուրքերը լսեցին Սարդարապատում, Բաշ Ապարանում հայերի տարած հաղթանակների մասին, համաձայնվեցին հայկական հանրապետության ստեղծմանը: Թուրքիան Բաթումի կոնֆերանսում առաջ քաշեց Անդրկովկասը երեք հանրապետությունների բաժանելու նախագիծ, որն ընդունվեց Սեյմի կողմից: Հայերի մեծ մասը դեմ էր այդ ծանր պահին Հայաստանի անկախությանը, ինչը մեկուսացնում էր նրան հարևաններից: Բայց մայիսի 26-ին Վրաստանը, 27-ին Ադրբեջանը, հռչակեցին իրենց անկախությունը, ուստի մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը ընդունեց հռչակագիր՝ Հայաստանի անկախ հանրապետություն ստեղծելու մասին, որպեսզի տեր կանգնի հայ ժողովրդին:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումի կոնֆերանսում կնքված թուրք-հայկական հաշտության պայմանագրով Հայաստանին էր մնում 12 հազար քառակուսի կմ. տարածք (Երևանի շրջակայքը և Սևանի ավազանի մի մասը): Բաթումի պայմանագրով Ախալքալաքի ու Ախալցխայի շրջաններն անցան Թուրքիային, Արցախը, Զանգեզուրը՝ Ադրբեջանին: Նախիջևանի գավառը գրավեցին թուրքերը:

1918 թ. հուլիսի 19-ին Թիֆլիսից Երևան տեղափոխվեց Հայոց ազգային խորհուրդը, որը հուլիսի 24-ին հրապարակեց Հայաստանի կառավարության կազմը՝ Հ. Քաջազնունու գլխավորությամբ (ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, արտաքին գործերինը՝ Ալ. Խատիսյան և այլն): Օգոստոսի 1-ից սկսեց գործել Հայաստանի խորհրդարանը (պառլամենտը): Մինչև 1919 թ. հունիսը կառավարությունը կազմված էր դաշնակցություն և այլ (էսեռներ և այլն) կուսակցությունների անդամներից, ապա բացարձակ գերակշռություն ստացան դաշնակցականները: 1919 թ. օգոստոսի 7-ին վարչապետ ընտրվեց Ա. Խատիսյանը, 1920 թ. մայիսի 5-ին՝ Հ. Օհանջանյանը, նույն թվի նոյեմբերի 23-ին՝ Ս. Վրացյանը:

Դրոշը եռագույն էր՝ կարմիր, կապույտ և դեղին: Սահմանվեցին ազգա-

յին, պետական տոներ (Մնունդ և Մկրտություն, Մեռելոց, Վարդանանց, Համբարձման, Թարգմանչաց և այլն):

Մանր էր երկրի վիճակը: Հանրապետության փոքր տարածքը չէր կարող սնել այնտեղ փրկություն գտած բազմահազար հայերին: 1918 թ. սովից ու հիվանդությունից ամեն օր 2000-ից ավելի մարդ էր մահանում: Զկային միջոցներ: Միայն 1919 թ. կեսերից մթերքներ ուղարկեցին ԱՄՆ-ից ու Եվրոպայից: Հետզհետե երկրի վիճակը բարելավվեց: 1920 թ. Հայաստանը կարողացավ արտահանել որոշ ապրանքներ (աղ, փայտ, խմիչքներ, բուրդ, բամբակի մանվածք և այլն), գնել հացահատիկ, վառելանյութ: Թողարկվեցին հայկական դրամանիշեր («Ճախարակ» անվամբ), որոնք տպագրվում էին Լոնդոնում: Պետականացվեցին բոլոր մասնատիրական, վանքապատկան հողերը, որոնք բաժանվեցին հողազուրկներին:

1920 թ. մայիսի 10-ին հայ բոլշևիկները փորձեցին զինված հեղաշրջում կատարել: Բայց ռուս բոլշևիկներից օգնություն չստանալու պատճառով ապստամբությունը մայիսի 14-ին ճնշվեց: Նույն ամսին, կատարված վարչատարածքային նոր բաժանմամբ, Հայաստանի Հանրապետության նախկին տասը գավառների փոխարեն ստեղծվեցին չորս նահանգապետություններ՝ Արարատյան (Երևանի), Վանանդի (Կարսի), Շիրակի (Ալեքսանդրապոլի) և Սյունիք-Ղարաբաղի, որոնք բաժանվում էին գավառների:

Հայաստանի պետության դեմ թշնամական դիրքավորում ունեին տեղացի թաթարները (այժմ՝ ադրբեջանցիներ), որոնք 1919 թ. հունիսին ապստամբեցին: Նախիջևանում նրանք դուրս մղեցին հայկական զորամասերին, բնաջնջելով հայերին: Բայց հայոց զորքը պատշաճ դասեր տվեց ապստամբներին:

Արտաքին հարաբերությունների բնագավառում մեծ ջանքեր ներդրվեցին: 1918 թ. Հայաստանի կառավարությունը փորձեց բանակցությունների միջոցով նորմալ հարաբերություններ հաստատել Թուրքիայի և Գերմանիայի հետ՝ հույս ունենալով վերացնել Բաթումի պայմանագիրը, պահպանել գոնե Բրեստ-Լիտովսկի դաշնադրի պայմանները: Կովկասին, Բաքվի նավթին տիրանալու պատճառով թուրք-գերմանական հակասությունները հայերին նման հույս էին ներշնչում: 1918 թ. ապրիլին Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը մեկնեց Գերմանիա, իսկ հուլիսի 30-ին Հայաստան այցելեց գերմանական պատվիրակությունը: Բաքվի նավթին տիրանալու համար գերմանացիները փորձում էին հենվել Վրաստանի և Հայաստանի վրա: Նրանք թուրքերից պահանջեցին ետ քաշվել Կովկասից, իրենց զորքերը թողնել միայն Կարսի մարզում: 1918 թ. մայիսին Հայաստանից մեկ այլ պատվիրակություն Ա. Ահարոնյանի գլխավորությամբ մեկնեց Կ. Պոլիս: Պատվիրակությանն ընդունեցին Թալեաթը,

Էնվերը, սուլթանը: Սակայն հնարավոր չեղավ որևէ շոշափելի արդյունքի հասնել: 1918 թ. հոկտեմբերի 5-ին թուրքերը, ապա գերմանացիները, որ պարտվել էին անգլո-ֆրանսիական և ամերիկյան ուժերից, հեռացան Կովկասից: Նրանց փոխարինեցին անգլիացիներն ու ֆրանսիացիները, ապա նաև ամերիկացիները: Բաթումի և Բրեստ-Լիտովսկի պայմանագրերը չեղյալ համարվեցին: 1919 թ. մայիսին Հայաստանին միացվեցին Նախիջևանի գավառը, Կարսի մարզը: Հայաստանի Հանրապետության տարածքը հասավ 58 հազար քառակուսի կիլոմետրի: Սակայն Ախալքալաքի, Բորչալուի շրջանները թուրքերի հեռանալուց հետո գրավեց Վրաստանը: Դա հանգեցրեց 1918 թ. դեկտեմբերի 13-ին բռնկված հայ-վրացական պատերազմին: Դրոյի զորքը 17 օրվա ընթացքում գրավեց Լոռին, սակայն Ախալքալաքը մնաց Վրաստանի կազմում: 1919 թ. հունվարին կայացած հայ-վրացական կոնֆերանսը (անգլիացիների մասնակցությամբ) որոշեց Լոռին դարձնել չեզոք գոտի՝ անգլիացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ:

Հայաստանն իր ներկայացուցիչները, հյուպատոսություններն ուներ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բուլղարիայում, Շվեյցարիայում, Ֆինլանդիայում, Ռումինիայում, Բրազիլիայում, Հաբեշստանում և այլ երկրներում:

1920 թ. հունվարի 23-ին Անտանտի պետությունները դե-ֆակտո (փաստորեն գոյություն ունեցող) ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը: Նույն թվի ապրիլին Հայաստանի անկախությունը ճանաչեց նաև ԱՄՆ-ը: Հայաստանի Հանրապետությունը դեռ 1918 թ. կեսերից փորձեց հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ: Բայց այդ փորձերը հաջողություն չունեցան, քանի որ Ռուսաստանը Անդրկովկասի անջատմանը դեմ էր:

ԱՐՑԱԽԻ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՑՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1918–1920 ԹԹ.

Արցախի հայ բնակչությունը դեմ ելավ Բաթումի պայմանագրով Արցախը Ադրբեջանին հանձնելու վճռին: 1918 թ. հուլիսին Շուշիում կայացավ արցախահայերի առաջին համագումարը, որը որոշեց չընդունել Ադրբեջանի իշխանությունը և քայլեր ձեռնարկել Հայաստանին միանալու համար: Ադրբեջանի խնդրանքով թուրքական զորքը Բաքուն դրավելուց հետո 1918 թ. սեպտեմբերի 15-ին շարժվեց Արցախի դեմ, բայց ետ շպրտվեց: 1918 թ. հոկտեմբերին, երբ թուրքերն ու գերմանացիները հեռացան Կովկասից, նրանց փոխարինած անգլիացիները Բաքվի նավթին

տիրանալու նկատառումներով Արցախը հանձնեցին Ադրբեջանին: Բայց 1919 թ. ապրիլին արցախահայերի համագումարը մերժեց այդ որոշումը: Անգլիացիների կողմից Արցախի նահանգապետ նշանակված Սուլթանովը զորքը շարժեց Արցախի վրա, բնաջնջելով նրա վեց դյուղերի բնակչությանը: Բայց դա չկոտրեց արցախցիներին: 1920 թ. մարտի 23-ին Սուլթանովը մեծ զորքով կրկին հարձակվեց Արցախի վրա, կոտորեց Շուշիի հայ բնակչությանը, որի մի մասը հեռացավ Խանքենդ (մինչև 1847 թ. Վարարակն, այժմ՝ Ստեփանակերտ) ավանը: Արցախցիները շարունակեցին դիմադրությունը, Հայաստանի Հանրապետությունից խնդրելով օգնել իրենց: 1920 թ. ապրիլի 14-ին Դրոյի զորքը գրավեց Արցախը, որի բնակչությունը ապրիլի 28-ին կայացած 9-րդ համագումարում որոշեց Արցախը միավորել Հայաստանի հետ: Բայց հենց նույն օրը XI Կարմիր բանակը մտավ Ադրբեջան և խորհրդայնացրեց այն: Մայիսին XI բանակի պատվիրակությունը Դրոյից պահանջեց զորքը հանել Արցախից: Դրոն ստիպված տեղի տվեց: Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: 1921 թ. հուլիսի 5-ին Ռուսաստանի կոմկուսի կովկասյան բյուրոյի պլենումը որոշեց Լեռնային Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին՝ նրան ընձեռելով մարզային ինքնավարություն: 1923 թ. հուլիսին կազմվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): Արցախահայերը շարունակեցին պայքարը իրենց ոտնահարված իրավունքների համար:

Զանգեզուրի հայ բնակչությունը ևս չհաշտվեց Բաթումի պայմանագրով Զանգեզուրը Ադրբեջանին զիջելու որոշման հետ և շարունակեց պայքարը թուրք-թաթարական հրոսակախմբերի դեմ: Այդ պայքարը 1918 թ. օգոստոսին 3-ից մինչև 1919 թ. ապրիլի 3-ը կազմակերպեց Անդրանիկը, որը թուրքական ուժերի ճնշման տակ իր գրաված Նախիջևանի գավառից՝ հեռացավ Զանգեզուր և հուլիսի 26-ին ժամանեց Ղափան, իսկ օգոստոսի 2-ին՝ Գորիս: Նույն ամսին նա եղավ Սիսիանում, կազմակերպեց դիմադրություն: Սեպտեմբերի 29-ին Անդրանիկը վերադարձավ Գորիս: Հոկտեմբերի 6-ին, որպես Զանգեզուրի բոլոր զինված ուժերի հրամանատար, նա կարգադրություններ արեց պաշտպանությունը կազմակերպելու վերաբերյալ: Գյանջայում նստող Նուրի փաշայի զորքի գրոհները ետ շպրտվեցին զանգեզուրցիների կողմից: Նոյեմբերի վերջերին Անդրանիկը Զաբուղ գյուղի (Լաչինի շրջան) մերձակայքում ջախջախեց թուրք-թաթարական ուժերին: Ղարաբաղի պատվիրակների խնդրանքին ընդառաջելով՝ նա որոշեց արշավել Շուշի և ազատագրել նաև Ղարաբաղը: Սակայն նույն ժամանակ Անդրանիկի մոտ եկան անգլիացիները և հորդորեցին չմեկնել Ղարաբաղ: Դաշնակիցների հետ հարաբերությունները չբարդացնելու համար Անդրանիկը հրաժարվեց ոչ միայն Արցախ արշավելուց, այլև 1919 թ. ապրիլի 2-ին իր ջոկատով դուրս եկավ Զանգեզուրից: Գարեգին

Նժդեհը (Տեր–Հարությունյան) 1919 թ. հոկտեմբերի 15–ից գլխավորեց Զանգեզուրի ինքնապաշտպանությունը:

1919 թ. սեպտեմբերի վերջին ադրբեջանցիները ուժեղ հարձակման անցան Գորիսի ուղղությամբ, բայց հանդիպեցին համառ դիմադրության և ետ շպրտվեցին՝ կրելով ծանր կորուստներ: Նոյեմբերի սկզբին նրանք վերսկսեցին հարձակումները: Սակայն այս անգամ ևս նրանք գլխովին ջախջախվեցին և խուճապահար փախան՝ հայերին թողնելով շատ զենքեր և պարենամթերք: 1920 թ. ապրիլի սկզբին թշնամին հարձակում ձեռնարկեց Ղափանի դեմ, բայց Որոտանի կիրճում ջախջախվեց հայերի կողմից: Նույն ամսին Դրոյի և Նժդեհի գլխավորած զորքերը Զանգեզուրի և Արցախի սահմանագլխին քանիցս ետ մղեցին թշնամիներին:

Սակայն Ադրբեջանը խորհրդայնացվելուց հետո ընդդեմ Հայաստանի ձեռք բերեց նոր և զորեղ դաշնակցի, հանձին Խորհրդային Ռուսաստանի: Այնուհետև զանգեզուրցիները հարկադրված եղան մարտնչել XI Կարմիր բանակի և Թուրք–թաթարական զորքերի դեմ:

Կարմիր բանակի հրամանատարությունը 1920 թ. հուլիսին Նժդեհից պահանջեց Մեղրիով Կարմիր բանակի զորքին ճանապարհ տալ՝ Նախիջևանի գավառ անցնելու համար: Նժդեհը կտրուկ մերժեց այդ առաջարկը և պահանջեց հեռանալ Զանգեզուրից: Թուրք–թաթարական և բոլշևիկյան զորքերը հարձակման անցան Զանգեզուրի դեմ, որը ավելի քան երկու ամիս հերոսաբար պաշտպանվեց, սակայն ուժերը խիստ անհավասար էին, ուստի Նժդեհն ստիպված նահանջեց՝ դիրքեր գրավելով Խուստուփ լեռան ստորոտում: Հակառակորդին հաջողվեց Նժդեհին հետ մղել դեպի Հարավ՝ Արաքսի ձախափնյակ: 1920 թ. աշնանը զանգեզուրցիները մանր մարտեր մղելով Կարմիր բանակի զորամասերի դեմ, տարան մի քանի հաղթանակ: Մեղրին գրավելու համար բոլշևիկյան և Թուրք–թաթարական զորքերի բոլոր հարձակումները ետ մղվեցին: Հոկտեմբերի 10–ին զանգեզուրցիներն ազատագրեցին Ղափանի շրջանը: Հոկտեմբերի 16–ին Կարմիր բանակի հեծյալ մի դիվիզիա և Թուրքական զորագունդը (կազմված 1915–1916 թթ. գերի ընկած Թուրք զինվորներից) վերստին հարձակման անցան Զանգեզուրի դեմ: Նրանց հրամայված էր չխնայել ոչ ոքի, հիմնիվեր ավերել դիմադրող գյուղերը: Նոյեմբերի առաջին կեսին Նժդեհի զորականները սիսիանցի ազատամարտիկների հետ ջախջախեցին թշնամուն: Թուրք–բոլշևիկյան զորքը ստիպված հեռացավ Գորիս, որի բնակչությունը ապստամբեց և նոյեմբերի 21–ին քաղաքն ազատագրեց նրանցից: Հաջորդ օրը Գորիս հասած Նժդեհի զորքը քաղաքից հեռու քշեց թշնամիներին: Այդպես հաջողվեց Զանգեզուրը լրիվ մաքրել բոլշևիկյան և Թուրք–թաթարական ուժերից:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայաստանի Հեղկոմը Նժդեհից պահանջեց դադարեցնել դիմադրությունը (Կարմիր բանակի հրամա-

նատար դարձած Դրոյի և Ավիս Նուրիջանյանի անուններից) և ենթարկվել Հայաստանի խորհրդային իշխանությանը: Սակայն Նժդեհին վստահություն չներշնչեց այդ առաջարկը: Ուստի 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում դումարված զանգեզուրցիների 1-ին համագումարը հռչակեց Ինքնավար Սյունիքի Հանրապետություն (Գորիս կենտրոնով), որի սպարապետ նշանակվեց Նժդեհը: 1921 թ. ապրիլի 27-ին նույն վանքում հրավիրված զանգեզուրցիների 2-րդ համագումարում Ինքնավար Սյունիքի Հանրապետությունը վերակոչվեց Լեռնահայաստանի Հանրապետություն: Ընտրվեց կառավարություն՝ Նժդեհի գլխավորությամբ: 1921 թ. հունիսի 1-ից Լեռնահայաստանի Հանրապետությունը կոչվեց Հայաստանի Հանրապետություն, որի վարչապետ դարձավ 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո Սյունիք անցած Ս. Վրացյանը: Նժդեհը մնաց որպես զինվորական նախարար և սպարապետ:

Բոլշևիկները շարունակեցին Նժդեհից պահանջել հեռանալ Զանգեզուրից, որը պետք է միացվեր Հայաստանին: Այդպիսի առաջարկ եղավ 1921 թ. մայիսի 12-ին: Ս. Վրացյանը, որ այդ պահին Թավրիզում էր, համաձայնվեց այդ առաջարկին: Հունիսի 3-ին բոլշևիկները որոշեցին վերսկսել հարձակումները Զանգեզուրի դեմ, որը պետք է բոլոր կողմերից առնվեր աքցանի մեջ: Հունիսի 13-ին Խորհրդային Հայաստանի Հեղկոմը դիմեց զանգեզուրցիներին՝ կոչ անելով դադարեցնել դիմադրությունը, ճանաչել Խորհրդային Հայաստանի կառավարությունը և խոստացավ բավարարել ապստամբների պահանջները: Այս անգամ Նժդեհը որոշեց դադարեցնել դիմադրությունը, պայմանով, որ կշարունակի պայքարը, եթե Զանգեզուրը տրվի Ադրբեջանին: Հուլիսի 7-ին իր 400 զինակիցներով նա հեռացավ Զանգեզուրից, որը միացվեց Խորհրդային Հայաստանին: Այդպիսով զանգեզուրցիների հերոսական պայքարի շնորհիվ Զանգեզուրը մնաց Հայաստանի կազմում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ: ՆՈՐԱՆՈՐ ԴԱՎԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիայի, նրա դաշնակիցների և հաղթող պետությունների միջև հաշտություն կնքելու համար 1919 թ. հունվարի 19-ին Փարիզում հրավիրվեց խաղաղության կոնֆերանս, որը տևեց մեկ տարի՝ մինչև 1920 թ. հունվարի 21-ը: Թեև Հայաստանի Հանրապետությունը, պաշտոնապես չհրավիրվեց կոնֆերանս, բայց նա պատվիրակություն ուղարկեց Փարիզ Ա. Ահարոնյանի

գլխավորությամբ: Փարիզ էր ժամանել նաև Հայոց ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ: Այս երկու պատվիրակությունները միասին կազմեցին մի հուշագիր, որով առաջադրվում էր ստեղծել Հայկական անկախ պետություն՝ կազմված թուրքահայ յոթ վիլայեթներից, Կիլիկիայից և Արևելյան Հայաստանից: Դաշնակից պետություններից մեկը 20 տարով պետք է ստանձներ Հայաստանի մանդատը (հովանավորությունը): Բայց դաշնակիցները հուշագրին ընթացք չտվեցին: Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը բազմիցս դիմեցին դաշնակիցներին՝ օկուպացնելու Արևմտյան Հայաստանը, բայց նրանք հրաժարվեցին նման քայլից, քանի որ շահեր չունեին այնտեղ: 1920 թ. ապրիլին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ղեկավարները ԱՄՆ-ի ու Ճապոնիայի պատվիրակների հետ միասին պաշտպանեցին անկախ և միասնական Հայաստան ստեղծելու գաղափարը և որոշեցին Հայաստանի մանդատը պաշտոնապես հանձնել ԱՄՆ-ին: Ապրիլի 27-ին ԱՄՆ-ը դե ֆակտո ճանաչեց Հայաստանի անկախությունը: Բայց նույն թվականի հունիսի 1-ին ԱՄՆ-ի կոնգրեսը մերժեց Հայաստանի մանդատը ընդունելու վերաբերյալ պրեզիդենտ Վիլսոնի առաջարկը, նշելով, որ «այդ շրջանի ժողովուրդները հանձնվել են բոլշևիկներին»: Կոնգրեսականները շեշտեցին, որ եթե Հայաստանում ամերիկյան զորք լինի, կընդհարվի բոլշևիկյան ուժերի հետ:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Հարավարևմտյան արվարձան Սևրում ուշացումով Թուրքիայի հետ կնքվեց հաշտության պայմանագիր, որի տակ ստորագրեց նաև Ա. Ահարոնյանը: Օսմանյան Թուրքիան այդ պայմանագրով ճանաչեց Հայաստանը «որպես ազատ և անկախ պետություն»: Կողմերը համաձայնվեցին նաև, որ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմաններն անցնելու են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով, որոնք տրվելու էին Հայաստանին: Վերջնական սահմանազատումը վերապահվում էր ԱՄՆ-ին: Ընդունվելու էին նաև վերջինիս «այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»: Տրապիզոնի շրջանում Հայաստանը ազատ ելք էր ունենալու Սև ծովում: Սևրի պայմանագրով ստեղծվելու էր նաև անկախ Քրդստան: Սակայն Սևրի պայմանագրի տակ ստորագրեց սուլթանի ներկայացուցիչը, մինչդեռ այդ ժամանակ փոքր Ասիայում ծավալվում էր քեմալական շարժումը, որն առաջին հերթին ուղղված էր փոքր ազգերի դեմ: Քեմալականները բուռն պայքար ծավալեցին Սևրի պայմանագիրը ոչնչացնելու համար: Պարտված Թուրքիան բոլշևիկյան Ռուսաստանի աջակցությամբ ոչնչացրեց Սևրում իրեն պարտադրված պայմանները: Դեռևս 1920 թ. ապրիլի 26-ին Մուստաֆա

Քեմալը՝ Թուրքական ազգայնական շարժման պարագլուխը, Լենինին ուղարկած նամակում նշեց, որ Թուրքիան պատերազմ կսկսի «իմպերիալիստական Հայաստանի» դեմ:

1920 թ. մայիսին Հայաստանի և Ռուսաստանի միջև նույնպես բանակցություններ սկսվեցին, որոնց մեծապես խանգարում էր Ադրբեջանի Հեղկոմը: Բանակցություններն ընդհատվեցին: Որոշվեց դրանք շարունակել Երևանում: 1920 թ. հուլիսի 28-ին ռուսական Կարմիր բանակի զորամասերը ներխուժեցին Նախիջևանի շրջան և միացան Թուրքական զորքերին: 1920 թ. օգոստոսի 10-ին (Սևրի պայմանագրի կնքման օրը) Թիֆլիսում Հայաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչների միջև ձեռք բերվեց համաձայնություն ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ: Ռուսական զորքերը մնալու էին Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում (վիճելի շրջաններ էին դիտվում), որպեսզի իբր թե պայմաններ ստեղծվեին Հայ-ադրբեջանական սահմանային վեճերը խաղաղությամբ լուծելու համար: Բայց ռուս բոլշևիկների իրական նպատակը այդ շրջանների վրայով Թուրքիայի հետ միանալն էր:

Սևրի պայմանագիրը ավելի մերձեցրեց բոլշևիկյան Ռուսաստանին ու Թուրքիային:

Հակահայկական ուղղվածություն ուներ 1920 թ. սեպտեմբերի 1-ից 7-ը Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը, որտեղ ելույթ ունեցավ նաև Հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան: Համագումարում ստեղծվեց Արևելքում հեղափոխական դործը կազմակերպող խորհուրդ, որի նախագահության կազմած փաստաթղթերում նշվում էր, որ Արևելքում հեղափոխական շարժումը հաջողությամբ ծավալելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հարձակվել Հայաստանի վրա: Հայաստանի ոչնչացման պարտականությունը դրվեց Թուրքիայի վրա, որը մի քանի օր հետո հարձակվեց Հայաստանի վրա:

Ողբերգականորեն դասավորվեց նաև Կիլիկիահայության ճակատագիրը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ անգլո-ֆրանսիական համաձայնությամբ Կիլիկիան պետք է տրվեր Ֆրանսիային: 1915 թ. Կիլիկիահայերը տեղահանվեցին: Նրանց մեծ մասը ոչնչացվեց: Պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո նրանք վերադարձան Կիլիկիա և փորձեցին ֆրանսիացիների օգնությամբ ստեղծել Հայկական ինքնուրույն պետություն: Նրանք երկու տարի զինակցեցին քեմալական զորքերի դեմ պատերազմող ֆրանսիացիներին:

1920 թ. ամռանից քեմալականները ուժեղացրին իրենց հարձակումները Կիլիկիայի դեմ: Հայերը համառորեն դիմադրում էին: Զուտ հայաբնակ Հաճընն քաղաքը յոթ ամիս հերոսաբար դիմադրեց: Ֆրանսիացիները չկարողացան օգնել նրան: Հաճընը դրավվեց, նրա 10 հազար բնակչությունը

գրեթե գլխովին սրի քաշվեց (փրկվեցին միայն 480 մարդ): Բնաջնջվեցին նաև Մարաշի և այլ վայրերի հայերը: Ֆրանսիացիները Կիլիկիայում զորք քիչ ունեին, ուստի որոշեցին հաշտվել քեմալականների հետ, հեռանալ Կիլիկիայից: Նրանք ցրեցին նաև հայկական լեգեոնը: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի և քեմալական կառավարության միջև կնքված պայմանագրով Կիլիկիան թողնվեց Թուրքիային: Կիլիկիայի հայ բնակչության մնացորդները հեռացան Մերձավոր Արևելքի երկրներ և այլուր:

1920 Թ. ԹՈՒՐՔ–ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920 թ. աշնանը Հայաստանը գտնվում էր թուրքական հարձակման սպառնալիքի տակ: Մի կողմից դաշնակիցների (Անտանտի պետությունների) թողտվությունը, մյուս կողմից Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև պայմանագրի բացակայությունը և թուրք–բոլշևիկյան դաշինքը աղատ արձակեցին թուրքերի ձեռքերը: Անգլիան ևս շահագրգռված էր թուրք–հայկական պատերազմի բռնկմամբ: Նա կամենում էր քեմալական շարժումը ճնշել Հունաստանի միջոցով, ուստի կամենում էր պատերազմի մեջ ներքաշել նաև Հայաստանը:

Թուրքերն սպասում էին Փարիզի կոնֆերանսի ավարտին, որպեսզի հաղթող պետությունները Հայաստանի պատճառով Թուրքիայի դեմ վճիռներ չընդունեին: Համաձայն կարմիր Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքված գաղտնի համաձայնության, թուրքերը պետք է հարձակվեին Հայաստանի վրա և դրավեին մինչև Սարիղամիշ և Շահթախթի գյուղ (Նախիջևանի գավառ) ընկած շրջանները:

1920 թ. սեպտեմբերի 23-ին Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա: Բոլշևիկյան կուսակցությունը թուրքական հարձակումը դիտում էր որպես լավագույն միջոց Հայաստանը խորհրդայնացնելու համար: Հոկտեմբերի 5-ին Բաքվից հայ բոլշևիկները հայ աշխատավորներին կոչ արեցին տապալել «իմպերիալիզմի դաշնակից դաշնակցականների լուծը»: Բոլշևիկ ագիտատորները հայ զինվորներին կոչ էին անում եղբայրանալ թուրք զինվորների հետ, ճախողում էին զենքի, զինամթերքի մատակարարումը կռվող հայ մարտիկներին: Հայ զինվորներին բարոյալքեց նաև այն, որ Ռուսաստանը դաշնակցում էր Թուրքիային: Թուրքական զորքի թիվը հասնում էր 50 հազարի, հայոց բանակինը՝ 35 հազարի: Թուրքերն ունեին 306 հրանոթ, հայերը՝ 56: Սեպտեմբերի 29-ին թուրք զորքը գրավեց Սարիղամիշն ու Կաղզվանը: Հայկական զորքերի հրամանատարը թ.

Նազարբեկյանն էր: Հյուսիսարևմտյան ճակատի հրամանատարն էր Մ. Սիլիկյանը, Արևմտյանինը՝ Դրոն: Հոկտեմբերի 28-ին Թուրքերը 25 հազարանոց զորք նետեցին Կարսի դեմ և փորձեցին կտրել հայկական զինվորների նահանջի ճանապարհը, բայց հայկական ուժերը զրահագնացքի միջոցով ետ շպրտեցին թշնամուն: Հոկտեմբերի 29-ին հայկական զորքերը ստիպված քաշվեցին Կարսի ներքին ամրությունները՝ համառ դիմադրություն ցույց տալով: Հայաստանի կառավարությունը դաշնակիցներից խնդրեց դեսանտ իջեցնել և արագ օգնություն ցույց տալ Հայաստանին: Բայց Անգլիայի ներկայացուցիչը՝ գնդապետ Ստոքսը Հայաստանի վարչապետին հայտնեց, որ Անգլիան չի կարող օգնել Հայաստանին: Հոկտեմբերի 29-ին Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի ներկայացուցչի միջև Թիֆլիսում ստորագրվեց արձանագրություն, որով Նախիջևանի և Զանգեզուրի գավառը թողնվելու էին Հայաստանին: Թուրքիան պետք է իր զորքերը հետ քաշեր մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը, հրաժարվեր Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերից, ճանաչեր Հայաստանի անկախությունը: Բայց պայմանագրի այս նախագիծն ուժի մեջ չմտավ, քանի որ մինչև որ այն կհաստատվեր երկու կառավարությունների կողմից, Թուրքերը առաջ շարժվեցին և Հոկտեմբերի 31-ին դրավեցին Կարսը, ապա նետվեցին Ալեքսանդրապոլի վրա: Բոլշևիկյան Ռուսաստանը չէր շտապում զորք մտցնել Հայաստան, որպեսզի այն թուլացվեր և ընդուներ խորհրդային իշխանությունը: Բոլշևիկները Հայաստանը համարում էին Անտանտի պետությունների դաշնակիցն ու հենարանը Մերձավոր Արևելքում: Բայց դաշնակիցներն օգնության չհասան Հայաստանին, ամենածանր պահին լքեցին նրան: Բոլշևիկները աշխատեցին կանխել Թուրքերի հետագա առաջխաղացումը: Նոյեմբերի 19-ին Երևանում Հայաստանի վարչապետը և զինվորական նախարարը հանդիպեցին Բ. Լեգրանի հետ: Վերջինս այն միտքը հայտնեց, որ անհրաժեշտ է ռուսական զորքը մտցնել Հայաստան, որպեսզի Թուրքերի առաջխաղացումը դադարեցվի: Լեգրանը խոստացավ վերականգնել 1914 թ. սահմանները: Նոյեմբերի 7-ին Թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, ապա զորքը երկու ուղղությամբ շարժեցին դեպի Երևան: Հայաստանի Հանրապետությունը նոյեմբերի 18-ին ստիպված ընդունեց զինադադարի Թուրքական պահանջները: Ադրբեջանում ստեղծված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն 1920 թ. նոյեմբերի 29-ին Ս. Կասյանի ղեկավարությամբ 11-րդ Կարմիր բանակի հետ մտավ Իջևան և Հայաստանը հռչակեց Խորհրդային Հանրապետություն: Դեկտեմբերի 2-ին Բ. Լեգրանի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ Դրոյի և Հ. Տերտերյանի միջև ստորագրված համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվեց իշխանությունից: Դեկտեմբերի 2-ի լույս

3-ի գիշերը, երբ արդեն Հայաստանի կառավարությունը իշխանությունը զիջել էր բոլշևիկներին, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը (նախագահ՝ Ա. Խատիսյան) Ալեքսանդրապոլում Թուրքերի հետ կնքեց հաշտության պայմանագիր, որով փաստորեն որոշվեց Հայաստանի ու Թուրքիայի միջև այժմյան սահմանը (այն անցնում է Արաքս և Ախուրյան գետերով): Արևմտյան Հայաստանը ճանաչվեց որպես թուրքական տարածք: Թուրքիային հանձնվեցին նաև Կարսի մարզը, Արդահանի շրջանը և Սուրմալուն: Նախիջևան և Շարուր գավառները ժամանակավորապես մնալու էին «Թուրքիայի պաշտպանության տակ»: Հայաստանը կարող էր ունենալ 1500 զինվորից կազմված բանակ՝ 8 թնդանոթով և 20 գնդացիրով: Հայաստանի կառավարությունը հրաժարվում էր Սևրի պայմանագրից: Սակայն Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրավական ուժ չէր կարող ունենալ, քանի որ այն կնքելուց առաջ արդեն Հայաստանում իշխանությունն անցել էր բոլշևիկներին:

Հայոց Առաջին հանրապետությանը փոխարինած խորհրդային Հայաստանի գերագույն իշխանությունը Ռազմահեղափոխական կոմիտեն էր (Հեղկոմը), որը 1920 թ. դեկտեմբերի 6-ին Բաքվից ժամանեց Երևան (Հայ-հեղկոմի նախագահն էր Ս. Կասյանը):

Հայաստանում հաստատվեց կոմունիստական բռնապետություն, մտցվեցին բոլշևիկյան Ռուսաստանի օրենքները:

1921 թ. փետրվարի 12-ին Խորհրդային Հայաստանին միացվեց Լոռին, որին տակավին 1920 թ. նոյեմբերի 13-ին տիրացել էր Վրաստանը՝ օգտվելով Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումից:

1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բռնությամբ Հայաստանին պարտադրված խորհրդային իշխանությունը հայ ժողովրդի մեջ չուներ սոցիալական հենարան, ուստի պատժիչ մարմինների միջոցով նա սկսեց իրականացնել կոմունիստական կուսակցության դիկտատուրան: Սկսվեցին զանգվածային բռնարարքները: Բանտարկվեցին 1200 հայ սպաներ, գեներալներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, նշանավոր ֆիդայապետ Համազասպը, Հայաստանի նախկին հանրապետության վարչապետներ, նախարարներ և ուրիշներ: Զինվորական գործերի ժողկոմ Ա. Նուրիջանյանը, Գ. Աթաբեկովը հետամուտ էին դաժան բռնությունների: Հայ սպաներին աքսորեցին Ադրբեջան և Ռուսաստան: Նրանցից շատերը ճանապարհին ոչնչացվեցին: Սպաների մի զգալի մասը (այդ թվում նաև Համազասպը) սպանվեցին Երևանի բանտում:

Զանգվածային բռնությունները տարածվեցին Հայաստանով մեկ: Սկսեցին տնտեսության մեջ կիրառել ռազմական կոմունիզմ՝ բռնագրավելով գյուղացու ողջ ունեցվածքը, նրան թողնելով միայն սնվելու չափավոր մթերապաշար: Բռնագրավվեցին ու պետականացվեցին գյուղացիների հացահատիկը, անասունները, բնակարանները, հագուստեղենը և այլն: Բռնագրավումներն ուղեկցվում էին խուզարկությամբ, երբեմն նաև գնդակահարություններով: Հայաստանի արտակարգ հանձնաժողովը (ՋԵԿԱ) առանց խորության ահաբեկման էր ենթարկում բնակչության բոլոր խավերին: Բռնությունները խորը դժգոհություն առաջացրին ժողովրդի ամենալայն խավերում: 1921 թ. փետրվարին երկրում բռնկվեց ապստամբության հրդեհը: Այն տարածվեց Կոտայքում, Բաշ Գյառնիում (Գառնի), Դարալագյազում (Վայոց ձոր), Բաշ Ապարանում (Ապարան), Էջմիածնի շրջանում և այլուր: Փետրվարի 17-ին Սմբատ զորավարը գրավեց Էջմիածնի ու Աշտարակի շրջանները: Հաջորդ օրը ապստամբ զորքը մտավ Երևան: Ապստամբներն ստեղծեցին Հայրենիքի փրկության կոմիտե՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ: Այն իր ձեռքը վերցրեց երկրի ամբողջ իշխանությունը: Հրաման արձակվեց ձերբակալել բոլոր կոմունիստներին, բանտերից ազատվեցին քաղաքական բանտարկյալները:

Հայաստանի Հեղկոմը, կոմկուսի Կենտկոմը Հայաստանի Կարմիր բանակի զորամասով, 2 զրահագնացքով ամրացան Ղամարլուի (Արտաշատ) և Վեդի-Բասարի (այժմ՝ Արարատ) շրջանում, Խորհրդային Նախիջևանի կողքին: Ապստամբների ղեկավարությունը հեռագրեց Մոսկվայի կառավարությանը և շեշտեց, որ ապստամբները, հայ ժողովուրդը դեմ են ոչ թե Ռուսաստանին, այլ պայքարում են կեղեքիչների, բռնադատողների դեմ: Նաև հույս էր հայտնում, որ Ռուսաստանը բարեկամական հարաբերություններ կստեղծի Հայաստանի հետ:

Ապստամբները զորակոչեցին 20–32 տարեկան տղամարդկանց: Ստեղծվեցին կամավորական ջոկատներ: Նրանք մարտեր էին մղում երեք ճակատում՝ Ղամարլուի, Ելենովկայի (Սևան) և Համամլուի (Սպիտակ): Վրաստանի խորհրդայնացումից հետո 11-րդ Կարմիր բանակի երեք դիվիզիաներ մտան Ղազախ-Դիլիջանի շրջան: Երևանի գրավման խնդիրը դրվեց հատուկ զորախմբի վրա, որը պետք է ճնշեր ապստամբությունը և ազատեր Ղամարլուի մոտ շրջապատված խորհրդային զորամասերին: Ապստամբները Քանաքեռի մոտ գլխովին ջախջախեցին կարմիրների զորամասը: Փետրվարի 24–28-ին թեժ մարտեր մղվեցին Ղամարլուի շրջանում:

Երևանի վրա հարձակվելու համար խորհրդային զորքերը կենտրոնացան Ելենովկայում և մարտի 27-ին Բաշ Ապարանի վրայով շարժվեցին դեպի Երևան: Դեռևս մարտի 21-ին Կովկասում բոլշևիկների ղեկավար Գ. Օրջոնիկիձեն Երևան ուղարկեց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը կա-

մենում էր կանխել քաղաքացիական պատերազմը Հայաստանում: Նա հասավ Երևան, տեսավ, որ ամբողջ ժողովուրդն է ոտքի ելել և ամեն կերպ աշխատեց վերջ դնել կռվին: Դեռևս մարտի 21-ին Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Թումանյանը շեշտեց ապստամբության համաժողովրդական բնույթը, նշելով նաև, որ հակադիր կողմերը անիմաստ պատերազմ են մղում, խնդրեց միջամտել և արագ վերջ տալ արյունահեղությանը:

Մարտի 25-ին խորհրդային զորքերը վճռական հարձակման անցան Երևանի վրա, մարտի վերջին հասան Էջմիածին, իսկ ապրիլի 2-ին մտան Երևան: Ապստամբները անիմաստ համարեցին կարմիրների մեծաթիվ ուժերին դիմադրելը և Բաշ Գյառնիով անցան Զանգեզուր, միացան Նժդեհի ազատամարտիկներին:

Ապստամբության ճնշմամբ Հայաստանի մեծ մասում վերահաստատվեց խորհրդային իշխանությունը (բացառությամբ Զանգեզուրի):

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ 1921 Թ. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո հայ կոմունիստները հույս ունեին բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ և այդ հիման վրա չեղյալ համարել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: 1920 թ. դեկտեմբերի 10-ին Թուրքական կառավարությանը Հայաստանի Հեղկոմի ուղարկած նոտայում հույս էր հայտնվում, որ Թուրքիան չեղյալ կհամարի Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Բայց Թուրքերը իրենց զորքերը չէին հանում Ալեքսանդրապոլից: Նրանք հրաժարվեցին Հայաստանի Հեղկոմի հետ բանակցելուց և պնդեցին, որպեսզի Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների հարցը լուծվի Մոսկվայում ռուս-Թուրքական կոնֆերանսում: Այդպիսի առաջարկով Թուրքերը դիմեցին Լենինին, որը տվեց իր համաձայնությունը՝ Մոսկվայում ռուս-Թուրքական կոնֆերանս գումարելու վերաբերյալ: Որպեսզի չվերանայվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Թուրքերի պահանջով արգելվեց հայերի մասնակցությունը այդ կոնֆերանսին: Լենինի կառավարությունը ճանաչել էր դեռևս 1920 թ. հունվարին Ստամբուլում քեմալականների ընդունած «ազգային ուխտը», որը Արևմտյան Հայաստանը համարում էր բնիկ Թուրքական տարածք (այն բուն Թուրքական հողեր էր համարում նաև Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները): Ուստի Մոսկվայի կոնֆերանսի որոշումները կանխավճռված էին: Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի նախագահ Ն. Նարիմանովը կոնֆերանսի ժամանակ երկու նամակ ուղարկեց Լենինին՝ համոզելով Վանը, Բիթլիսը, Մուշը չպահանջել Թուրքերից: Ստալինը և Օրջոնիկիձեն պաշտպանեցին Նարիմանովին: Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ

Գ. Չիչերինը փորձեց պաշտպանել Հայաստանի շահերը կոնֆերանսում, բայց Լենինի հրահանգով Ստալինը չեզոքացրեց Չիչերինին:

1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց «բարեկամության և եղբայրության» պայմանագիր, որով Հայաստանին թողնվեց մոտ 30 հազար քառ. կմ տարածք: Այն հաստատեց Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը, որը ձգվում է Ախուրյան և Արաքս գետերով: Թուրքիային անցան Կարսի մարզը, Արդահանի օկրուգը, նաև Սուրմալուի գավառը, որը երբեք նրան չէր պատկանել: Պայմանագրի երրորդ հոդվածում ասվում էր, որ Նախիջևանի գավառը կազմում է «ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի դիջի մի երրորդ պետության», այսինքն՝ Հայաստանին: Պայմանագիրը ճանաչեց քեմալականների «ազգային ուխտը», վիժեցնելով Սևրի պայմանագիրը:

1921 թ. ապրիլի 22-ին Խորհրդային Ռուսաստանի պահանջով թուրքերը Ալեքսանդրապոլից հանեցին իրենց զորքերը:

Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը Անդրկովկասի երեք հանրապետությունների վրա տարածելու նպատակով 1921 թ. սեպտեմբերի 26-ին Կարսում հրավիրվեց կոնֆերանս, որին բացի Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից, մասնակցում էր նաև Ռուսաստանի պատվիրակությունը: Կոնֆերանսն ավարտվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի հետ կնքված պայմանագրով, որն ըստ էության Մոսկվայի պայմանագրի կրկնությունն էր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1921 թ. ապրիլից Հայաստանում մտցվեց նոր տնտեսական քաղաքականություն (նէպ), որը թույլատրում էր շուկայական հարաբերությունների զարգացում և գների ազատականացում: Զարգացում ապրեցին անհատական տնտեսությունները, որի շնորհիվ երկրում ստեղծվեց առատություն: 1928 թ. Հայաստանի տնտեսությունը հասավ 1913 թ. մակարդակին, վերականգնվեց արդյունաբերությունը: Բայց Ստալինը նէպը վերացրեց (1928 թ.) գտնելով, որ այն խոչընդոտում է սոցիալիզմի կառուցմանը, որի նյութատեխնիկական հիմքերն ստեղծելու համար դեռևս 1925թ. դեկտեմբերից որոշվեց ինդուստրացնել երկիրը, այսինքն՝ արագորեն զարգացնել նրա արդյունաբերությունը: Բայց դա հույժ ծանր խնդիր էր տնտեսապես հետամնաց երկրի համար: Պետությունը դրա համար չուներ միջոցներ, ուստի սկսեց ժողովրդից բռնությամբ խլել նրա ունեցվածքը, ծանրացնել հարկերը: Հազարավոր գործարանների կառուցումը քայ-

քայում էր գյուղը, որից շատերը հեռացան քաղաքներ: Նվազեց գյուղում աշխատողների թիվը, խիստ պակասեց պարենի արտադրությունը:

Քանի որ ինդուստրացումը մեկ կամ երկու տարվա գործ չէր, ուստի այն պլանավորեցին մի քանի տարիների համար, որով և ծնվեցին հնգամյա պլանները: Առաջին հնգամյակում (1928–1932) Հայաստանում կառուցվեցին 18 նոր գործարաններ (քիմիական, շինանյութերի և այլն), գործարկվեցին հիդրոէլեկտրակայաններ:

Հայաստանում միակողմանիորեն զարկ տրվեց քիմիական արդյունաբերությանը: Վերակառուցվեցին Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերական ձեռնարկությունները: 1933 թ. Երևանում սկսվեց արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը (ավարտվեց 1940 թ.): Հայաստանը դարձավ արդյունաբերական տեսակետից զարգացած երկիր:

Ջանգվածային ինդուստրացման հետևանքով խիստ սրվեց հաց մատակարարելու խնդիրը: Ուստի 1929 թ. սկսվեց գյուղատնտեսության համայնացումը, որը պետք է ավարտվեր 1933 թ.: Հողի համայնացման պատճառով երկրում սաստիկ սով սկսվեց: 1930 թ. հունվարից սկսեցին աշխատասեր գյուղացիներին կուլակի անվան տակ աքսորել: Միայն 1930 թ. երեք ամսում Հայաստանում կուլակաթափ արվեցին և աքսորվեցին 1000-ից ավելի ընտանիքներ: Որոշ շրջաններում (Տավուշ, Ջանգեզուր, Վեդի, Վայք, Թալին և այլուր) գյուղացիները զենքի դիմեցին, ցրեցին կոլխոզների մի մասը, քշեցին կոմունիստներին, բայց ճնշվեցին զորքի կողմից: Հայաստանի գյուղացիության մեծ մասը կոլտնտեսությունների մեջ ընդգրկվեց 1935–1937 թթ.: Հողի հանրայնացումն իրեն չարդարացրեց: Նվազեց գյուղատնտեսական արտադրանքը, անկում ապրեց անասնապահությունը: Գյուղացին օտարվեց մայր հողից:

Հայաստանը որպես հանրապետություն, հետզհետե կորցրեց իր ինքնուրույնության մնացորդները: 1922 թ. մարտին նա մտավ Անդրկովկասի դաշնակցային (ֆեդերատիվ) միության (Անդրֆեդերացիայի) մեջ, որը գոյություն ունեցավ մինչև 1936 թ. վերջը: Հայաստանի ինքնիշխանության վերջին մնացորդները վերացան ԽՍՀՄ կազմավորումից հետո, որը կատարվեց 1922 թ. դեկտեմբերի 30-ին, ԽՍՀՄ սովետների առաջին համագումարում, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրֆեդերացիայի ընդունած հռչակագրով: Հայաստանի կոմկուսը նույնիրավ էր մարզային կոմկուսների հետ, այն չունեցավ ինքնուրույն ծրագիր, բայց կոմկուսի բռնատիրության պայմաններում այն ևս դարձավ իշխող կուսակցություն և փոխարինեց իշխանություններին: Արգելվեցին մյուս կուսակցությունները:

Անլուր հալածանքներ սկսվեցին Հայոց եկեղեցու դեմ, որը մինչև 1926 թ. շարունակում էր նշել 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշա-

տակի օրը, ինչը պետականորեն արգելված էր: Եկեղեցուն ևս հարկադրեցին մոռացության տալ այդ եղեռնագործությունը: 1930-ական թվերին աքսորվեցին 283 հոգևորականներ, որոնք գրեթե լրիվ ոչնչացվեցին: 1938 թ. ապրիլի 5-ին վախճանվեց Հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը (1932–1938 թթ.), որից հետո ընդհուպ մինչև 1945 թ. Էջմիածնի Մայր աթոռը զրկվեց իր հովվապետից: 1945–1954 թթ. գահակալեց Գևորգ VI Զորեքչյանը, ապա Վազգեն I Պալճյանը (1955–1994 թթ.):

1924 թ. ԽՍՀՄ կառավարության որոշմամբ «Հասարակության համար վտանգավոր» համարվող մարդկանց պետք է աքսորեին առանց դատ ու դատաստանի: Դաժան հալածանքներ սկսվեցին կոմկուսի այն անդամների նկատմամբ, ում տեսակետները չէին համընկնում ստալինյան կենտկոմի որոշումներին: Ստալինի և նրա կողմնակիցների դեմ 1924 թվականից պայքար ծավալեց հոկտեմբերյան հեղափոխության գործիչ Լ. Տրոցկին: Հայաստանում նրա հետևորդների թիվը մեծ չէր (238 հոգի), բայց շատ անմեղ մարդկանց «տրոցկիստի» պիտակ կպցրեցին և ոչնչացրին:

1929 թվականից ծնունդ առավ Ստալինի անձի պաշտամունքը, որը ծանր և անուղղելի վնասներ հասցրեց երկրին: Թեև կոմկուսի կանոնադրության մեջ գլխավոր սկզբունք էր դիտվում քննադատությունը, բայց մարդկանց առանց դատի ոչնչացնում էին մի խոսքի համար: Տանում էին տանից, աշխատավայրից, թատրոնից, նույնիսկ հարսանյաց հանդեսից՝ միմյանցից բաժանելով պսակվողներին: Նացիոնալիզմի դեմ պայքարի պատրվակով Ստալինն ավելի սահմանափակեց հանրապետությունների իրավունքները: Անդրկովկասում մոլեգնում էր Լ. Բերիայի գլխավորած խմբավորումը:

1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում Լ. Բերիան սպանեց Հայաստանի կոմկուսի ղեկավար Ա. Խանջյանին: Հաջորդ ամսից Հայաստանում սկսվեցին զանգվածային տեռորը, աքսորը, բանտարկություններն ու գնդակահարությունները, որոնց զոհ գնացին գրողներ Ե. Չարենցը, Ա. Բակունցը և շատ ուրիշներ: Միայն 1937 թ. Հայաստանում ձերբակալվեցին մոտ 5000 հոգի, որոնցից 3221-ը գնդակահարվեցին: Ստալինյան բռնապետության տարիներին Հայաստանում բռնադատվեցին մոտ քառասուն հազար մարդ, որոնց մեծ մասը ոչնչացվեց:

ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 1941–1945 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

1941 թ. հունիսի 22-ին Հիտլերյան Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա: Հայրենական պատերազմում Գերմանիայի դեմ տա-

բած հաղթանակում իր ներդրումը կատարեց նաև հայ ժողովուրդը: 1941 թ. վերջից Հայաստանում սկսվեց հայկական դիվիզիաների ստեղծումը: Դեռևս 1937 թվականին Երևանում կազմավորված 76-րդ դիվիզիան 1942 թ. մեկնեց Ստալինգրադյան ռազմաճակատ: 1941 թ. դեկտեմբերին կազմավորված հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան (1943-ից՝ Թամանյան կոչված) հերոսական մարտեր մղելով Գրոզնիից հասավ մինչև Բեռլին և մասնակցեց նրա գրավմանը (հրամանատար՝ գեներալ-մայոր Ն. Սաֆարյան): 1942 թ. հունվարին ձևավորված 390-րդ հայկական դիվիզիան ապրիլին ափ հանվեց Կերչ քաղաքի (Ղրիմ) մոտ և արյունահեղ մարտերում գրեթե լրիվ ոչնչացվեց: Զոհվեց նաև նրա հրամանատար գնդապետ Ս. Զաքյանը: 1942 թ. Հայաստանում ստեղծվեց դարձյալ երեք դիվիզիա: Նույն թվի աշնանը Նովոռոսիյսկ և Տուապսե քաղաքների մատույցներում մղված մարտերին մասնակցեց հայկական 408-րդ դիվիզիան: Իսկ հայկական 409-րդ դիվիզիան մարտերի մեջ մտավ 1942 թ. նոյեմբերի վերջին և անցավ փառավոր մարտական ուղի: Այն աչքի ընկավ Մոզդոկ քաղաքի (Հյուսիսային Կովկաս) համար մղված պաշտպանական մարտերում, մասնակցեց Կուբանի, Ուկրաինայի ազատագրմանը, մարտերով հասավ մինչև Չեխոսլովակիա: Ընդհանուր առմամբ Հայրենական պատերազմի ժամանակ կային հայկական վեց դիվիզիաներ՝ 76-րդ, 89-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ և 261-րդ: Անդրկովկասյան ռազմաճակատի երեք դիվիզաների կազմի կեսից ավելին նույնպես հայեր էին: Հարյուր հազարավոր հայ մարտիկներ թշնամու դեմ մարտնչում էին ուրիշ զորամիավորումներում: Նրանցից մոտ 200 հազարը զոհվեցին:

Հայրենական պատերազմում աչքի ընկան շատ հայ զորապետներ, որոնցից 65-ը դարձան գեներալներ, ծովակալներ և մարշալներ: Փառաբանված զորավար, Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանն իր մարտական ուղին սկսեց 1941 թ. Կիևի պաշտպանական մարտերում, իսկ այնուհետև որպես Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետ, մասնակցեց Ռոստովի ազատագրմանը, ապա Մոսկվայի համար մղված մարտերին: 1943 թ. նա, որպես գվարդիական բանակի հրամանատար, Կուրսկի ճակատամարտում ջախջախեց թշնամու խմբավորումը Օրյոլ քաղաքի մոտ: 1943 թ. նոյեմբերից որպես Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի հրամանատար, Հ. Բաղրամյանը այլ զորախմբերի հետ ազատագրեց Բելոռուսիան, Մերձբալթիկան, ջախջախեց թշնամու խմբավորումը Արևելյան Պրուսիայում: Նավատորմի ծովակալ Հ. Իսակովը 1942 թ. ղեկավարում էր Սևծովյան նավատորմի մարտական գործողությունները՝ պաշտպանելով Կովկասյան ափամերձ գոտին: 1942 թ. Տուապսեի մատույցներում նա ծանր վիրավորվեց՝ կորցնելով ոտքը: Հ. Բաբաջանյանը 1941 թ. մասնակցել է Սմոլենսկ, Վիտեբսկ

և Բրյանսկ քաղաքների համար մղվող մարտերին, իսկ 1942 թ. սեպտեմբերից որպես տանկային բրիգադի, ապա կորպուսի հրամանատար՝ Բելոռուսիայի ազատագրմանը, նաև Բեռլինի գրավմանը: 1975 թ. նրան շնորհվեց զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում:

Ավիացիայի մարշալ Ա. Խանփերյանցը (Ս. Խուդյակով) մասնակցեց Մոսկվայի և այլ քաղաքների համար մղված մարտերին, Բեռլինի գրոհին, Ճապոնիայի ջախջախմանը: Հայ նշանավոր զորապետներ էին գեներալներ Բ. Առուշանյանը, Ս. Մարտիրոսյանը, Հ. Մարտիրոսյանը, Ի. Գասպարյանը, Ա. Կարապետյանը և ուրիշներ: Հայ ժողովրդի 103 որդիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Հերոս օդաչու, փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը դարձավ Խորհրդային Միության կրկնակի հերոս: Հայ ժողովրդի զավակները մասնակցեցին նաև Եվրոպայի դիմադրական շարժմանը և պարտիզանական մարտերին:

1942 թ. Գերմանիայում կազմակերպվեց հայկական լեգեոն: Նրա ղեկավարներն էին Դ. Կանայանը (Դրո), Գարեգին Նժդեհը և ուրիշներ, որոնք կամենում էին լեգեոնի միջոցով ապահովել հայ ժողովրդի պաշտպանությունը, եթե, իհարկե, Գերմանիան հաղթանակ տաներ: Ցաշիստները չէին վստահում հայերին: Դեռևս մինչև պատերազմը Հիտլերը մի առիթով ասել է, որ «գերմանական արյունը ապականող կարող են լինել ոչ միայն հրեաները, այլև հայերը»: Հայկական լեգեոնը դեռ մարտի մեջ չմտած՝ զինաթափվեց:

Հայրենական պատերազմն ավարտվեց 1945 թ. մայիսի 9-ին: Այդ օրը ամեն տարի նախկին ԽՍՀՄ ժողովուրդները նշում են որպես Հաղթանակի տոն: Բայց Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց 1945 թ. սեպտեմբերի 2-ին, Ճապոնիայի անձնատրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1946–1985 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1946 թ. հուլիսին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած 4-րդ հնգամյա պլանով նախատեսվեց վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը: 1950 թ. գործարկվեց Երևանի ալյումինի գործարանը («Կանաչ»), 1951 թ.՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը: Հնգամյակի ընթացքում Հայաստանում կառուցվեցին 50 նոր գործարան ու ֆաբրիկա: 1950–60-ական թվականներին զարգացան էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, հանքարդյունաբերությունը: Միակողմանիորեն զարկ տրվեց քիմիական արդյունաբերությանը: Այդ նպատակով 1950-ական թթ. Հայաստանում հիմնվեցին 11 գիտահետազոտական կենտրոններ: Արդյունաբերությունը

խիստ ետ էր մնում որակական ցուցանիշներով: Արտադրության մեքենայացման և ավտոմատացման ցածր մակարդակը հանգեցրեց արդյունաբերության լճացմանը: 1959 թ. ընդունված յոթնամյա պլանով (1959–65) Հայաստանի տնտեսության մեջ պետք է ներդրվեր 12 մլրդ ռուբլի: Յոթնամյակում Հայաստանում կառուցվեցին 300 արդյունաբերական նոր ձեռնարկություններ, ստեղծվեցին էլեկտրոնային, գործիքաշինական, սարքաշինական, հաշվիչ և հաշվիչ–մաթեմատիկական մեքենաների, արհեստական սինթետիկ թելերի, սինթետիկ և պլաստիկ առարկաների նոր արտադրաճյուղեր: Այդ գործում որոշակի ավանդ ներդրեցին Հայաստանի կոմկուսի ղեկավարներ Յա. Զարոբյանը և Ա. Քոչինյանը:

1961 թ. սկսվեց Արփա–Սևան ստորգետնյա ջրատարի կառուցումը (48 կմ երկարությամբ), որն ավարտվեց 1981 թ. և նպաստեց Սևանա լճի ջրի մակարդակի պահպանմանը: 1976 թ. գործարկվեց Մեծամորի ատոմակայանի առաջին էներգաբլոկը, իսկ երկրորդը՝ 1979 թ. վերջին: 1981 թ. գործարկվեց Երևանի մետրոպոլիտենը:

Սակայն արդյունաբերությունը որակական չափանիշներով շարունակում էր ետ մնալ: Քիմիական արդյունաբերության զարգացումը խտաբնակ Հայաստանում խիստ բացասաբար անդրադարձավ նրա բնապահպանության վրա: Արդյունաբերական հումքը հիմնականում ներմուծվում էր:

Խիստ ցածր էր գյուղատնտեսության զարգացման մակարդակը: Թեև 1950–ական թթ. գյուղն էլեկտրիֆիկացվեց, ընդլայնվեց ոռոգման ցանցը, բայց պետությունը կամայականորեն, առանց հաշվի առնելու գյուղացիների իրական շահերն ու հնարավորությունները, սահմանում էր մթերվող ապրանքների գները, որոնք խիստ ցածր էին: Ի. Ստալինի մահվանից (1953 թ.) հետո դրանք բարձրացվեցին, թեթևացվեցին հարկերը, գյուղում մտցվեց ամենամսյա վարձատրություն: Բայց դա էլ չփրկեց դրությունը: Ճիշտ է, կոմունիստական կուսակցության ղեկավար Ն. Խրուշչովը (1954–1964) անցկացրեց տնտեսական որոշ բարեփոխություններ, սակայն նրան փոխարինած Լ. Բրեժնևի օրոք (1964–1982) կասեցվեց տնտեսության աճը, որը հանգեցրեց լճացման, սոցիալական ճգնաժամի: Արմատավորվեցին կաշառակերությունը, հավելագրումները: Հայաստանում ձևավորված մաֆիան վայելում էր կուսակցական ղեկավարության հովանավորությունը:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1915 թ. հայոց ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանի եղեռնապուրծ հայությունը սփռվեց աշխարհի տարբեր երկրներում, որի հետևանքով ձևավորվեց հայկական սփյուռքը: 1920–ական թթ. սփյուռ-

քահայության թիվը շուրջ 920 հազար էր: Նրանք հիմնականում բնակվում էին քաղաքներում: Նրանց աշխատանքով ապահովելու, կրթամշակութային գործերը կազմակերպելու տեսակետից կարևոր դեր խաղացին հայ հայրենակցական ու բարեգործական միությունները, կուսակցությունները: Մեծ էր Հայկական բարեգործական ընդհանուր միության դերը (այն ստեղծվել էր 1900 թ. Կահիրեում, Պողոս Նուբարի կողմից: 1922 թ. միության կենտրոնը տեղափոխվեց Փարիզ, 1942 թ.՝ Նյու Յորք):

Սփյուռքի հայությունը հույս ուներ, որ մեծ տերությունները կօգնեն հայերին հայրենիք (Արևմտյան Հայաստան) վերադառնալու, և գործունեություն ծավալեց այդ ուղղությամբ: Սակայն Լոզանի (Շվեյցարիա) միջազգային կոնֆերանսում (1922 թ. նոյեմբերի 20–1923 թ. հուլիսի 24) թեև քննարկվեց արևմտահայերին ազգային օջախ տրամադրելու հարցը, բայց Թուրքերը կտրուկ մերժեցին այն: Ապա Հայկական հարցը դարձավ սոսկ հայ գաղթականության հարց և դրվեց միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի տնօրինության տակ: Վերջինս որոշեց սփյուռքի առավել ծանր վիճակում գտնվող հայերին տեղափոխել Խորհրդային Հայաստան: Այդ գործը հանձնարարվեց Նորվեգացի հայտնի բևեռախույզ Ֆ. Նանսենին, որը 1925 թ. հունիսին ժամանեց Երևան՝ գաղթականների տեղափոխության հարցն ուսումնասիրելու համար: Նա օգնեց 7000 հայերի հայրենադարձությանը, իսկ 320 հազար սփյուռքահայերի տվեց անձնագրին փոխարինող վկայականներ («Նանսենյան անձնագրեր»):

Սփյուռքահայության հետ Խորհրդային Հայաստանի կապերը ընդլայնելու նպատակով 1921 թ. Երևանում ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), որի առաջին նախագահը դարձավ բանաստեղծ Հ. Թումանյանը: ՀՕԿ-ը մեծ ներդրում ունեցավ Հայաստանի տնտեսության վերականգնման, սփյուռքահայերին մայր հայրենիքի հետ կապելու, նրանց հայրենադարձությունը կազմակերպելու գործում: 1921 թ. դեկտեմբերից սկսվեց հայ գաղթականների հայրենադարձությունը: Սփյուռքահայ 300 հայրենակցական միություններ օգնում էին՝ նրանց համար Հայաստանում բնակավայրեր կառուցելու գործին:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1943–1944 թթ., սփյուռքահայերի հանգանակած միջոցներով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: 1945 թ. Երևանում հիմնվեց արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը, որը նպաստեց հայրենիք–սփյուռք կապերի զարգացմանը: Հայաստանի կառավարության միջնորդությամբ ԽՍՀՄ կառավարությունը 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում կայացրեց սփյուռքահայերի ներգաղթ կատարելու մասին: 1946 թ. Իրանից, Սիրիայից, Հունաստանից, Լիբանանից, Բուլղարիայից, Ռումինիայից Հայաստան ներգաղթեցին 51 հազար հայեր, 1947 թ.

ԱՄՆ–ից Ֆրանսիայից և այլ երկրներից Հայաստան եկան 35401, 1948 թ.՝ 10000 հայեր: Հայկական հարցը արծարծող միակ ազդեցիկ ուժը սփյուռքահայությունն էր, որը մեծ ջանքեր ներդրեց հայերի 1915 թ. ցեղասպանությունը ճանաչել տալու ուղղությամբ: 1987 թ. միջազգային հեղինակավոր կազմակերպությունը՝ եվրոպական պառլամենտը դատապարտեց հայերի ցեղասպանությունը և Թուրք կառավարությանը կոչ արեց ճանաչել այն:

1964 թ. Հայաստանում հիմնվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե, որը սփյուռք ուղարկեց դասագրքեր, գրականություն: 1958 թ–ից Հայաստանի բուհերում սովորում են սփյուռքահայ ուսանողներ: Հայաստանում հրատարակվեցին սփյուռքահայ գրողների երկերը: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան սերտ կապերի մեջ է սփյուռքահայ գիտնականների հետ: Սփյուռքահայությունը նյութական ու բարոյական մեծ աջակցություն է ցույց տալիս Հայաստանին, մշտապես ուղարկելով սննդամթերք, դրամ, դեղորայք և այլն: Գործարար կապեր են ստեղծվում թե արտաքին և թե ներքին (ԽՍՀՄ նախկին հանրապետություններում) սփյուռքի և մայր Հայաստանի միջև:

Սփյուռքահայերի թիվն այժմ (առանց ներքին սփյուռքի) հասնում է 2 մլն 200 հազարի, որից մոտ 1 մլնը բնակվում է ԱՄՆ–ում, 400 հազարը՝ Ֆրանսիայում, 150 հազարը՝ Իրանում, 130 հազարը՝ Լիբանանում, 70 հազարը՝ Սիրիայում, 100 հազարը՝ Արգենտինայում, 45 հազարը՝ Կանադայում, 40 հազարը՝ Ավստրալիայում, 10 հազարը՝ Հունաստանում և այլն:

ՀԱՑԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1980–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային իշխանության տարիներին խախտվեցին հայ մշակույթի ավանդական հիմքերը, մերժվեց անցյալի մշակութային ժառանգությունը, վերջ տրվեց խոսքի, մամուլի ազատությանը, փակվեցին բոլոր թերթերը, և սկսեցին հրատարակվել կոմունիստական սնամեջ գաղափարախոսության շեփորահար պարբերականները: Անլուր հալածանքների ենթարկվեց հայ մտավորականությունը: Դպրոցներում ևս արմատավորվեց կոմունիստական գաղափարախոսությունը: 1933 թ. Հայաստանում կային 1096 դպրոցներ (782 տարրական, 302 յոթնամյա և 12 միջնակարգ): 1932 թ. սկսվեց յոթնամյա, իսկ 1966 թ. պարտադիր միջնակարգ կրթության իրականացումը, ինչը խիստ դցեց ուսուցման որակը: Դպրոցը կտրված էր կյանքից: Երևանի վերափոխման ենթարկված համալսարանի ֆակուլտետների հիման վրա 1930 թ. բացվեցին առանձին ինստիտուտներ:

Գիտահետազոտական աշխատանքներին ուղղություն տալու նպատակով 1921 թ. Էջմիածնում հիմնվեց կուլտուր-պատմական ինստիտուտը, իսկ 1925 թ. հունվարից Երևանում սկսեց գործել Հայաստանի առաջին խոշոր գիտական կենտրոնը՝ Գիտության և արվեստի ինստիտուտը: Գիտական բեղուն գործունեությունը շարունակեցին հայագետներ Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Մ. Աբեղյանը, Գ. Ղափանցյանը, ճարտարապետներ Թ. Թորամանյանը, Ա. Թամանյանը և ուրիշներ: 1935 թ. հունիսի 19-ին Երևանում բացվեց Հայաստանի պետական պատմական թանգարանը: Նույն թվին հիմնվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղը (Արմֆան): 1930-ական թթ. վերջերին Հայաստանում սկզբնավորվեցին գիտական նոր ճյուղեր՝ մաթեմատիկան, ֆիզիկան, աստղագիտությունը, ընդլայնվեցին քիմիական, կենսաբանական, հայագիտական հետազոտությունների շրջանակները: 1943 թ. նոյեմբերի 29-ին բացվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի առաջին նախագահ ընտրվեց Հ. Օրբելին, 1947 թ. նրան փոխարինեց Վ. Հ. Համբարձումյանը (1908–1996), այդ պաշտոնը վարելով մինչև 1993 թ. ապրիլի 8-ը: Համաշխարհային գիտության մեջ մեծ ավանդ ներդրեցին Բյուրականի աստղադիտարանի (հիմնվեց 1946 թ.) աշխատողները՝ Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ: Ակադեմիկոս-ֆիզիկոսներ Ա. Ի. Ալիխանով և Ա. Ի. Ալիխանյան եղբայրները 1942 թ. Արագածի վրա իրենց ստեղծած՝ տիեզերական ճառագայթների հետազոտման կայանում կատարեցին արժեքավոր հայտնագործություններ: Քիմիական և կենսաբանական գիտությունների բնագավառում կարևոր ներդրում կատարեցին ակադեմիկոսներ Ա. Մնջոյանը, Ա. Թախտաջյանը, լեզվագիտության բնագավառում Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ:

Գրական մեծարժեք երկեր ստեղծեցին Ավ. Իսահակյանը, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ա. Բակունցը, Հ. Շիրազը, Պ. Սևակը և ուրիշներ: 1932 թ. ստեղծվեց Հայաստանի գրողների միությունը:

Կերպարվեստի բնագավառում մնայուն գործեր ստեղծեցին Մ. Սարյանը, Ս. Առաքելյանը, Հ. Կոջոյանը, Ե. Թադևոսյանը, քանդակագործներ Գ. Գյուրջյանը, Ե. Քոչարը և ուրիշներ: Բարձր զարգացման հասավ երաժշտական արվեստը, ի դեմս երգահաններ Ա. Սպենդիարյանի, Ա. Տիգրանյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի և ուրիշների:

1932 թ. հունվարին Երևանում հիմնվեց Հայաստանի առաջին մշտական պետական դրամատիկական թատրոնը (1937 թվականից՝ Գ. Սունդուկյանի անվան), որտեղ աշխատանքի անցան հայ բեմարվեստի ականավոր ներկայացուցիչներ Հ. Աբելյանը, Հասմիկը, Վ. Փափազյանը, Հ. Ներսիսյանը և ուրիշներ: 1933 թ. իր գործունեությունն սկսեց Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը: 1924 թվականից սկսած՝ Հայաս-

տանում նկարահանվեցին կինոնկարներ (սկզբում համր): 1935 թ. մայիսին ստեղծվեց հայկական առաջին հնչուն կինոնկարը՝ «Պեպո»:

Զարգացավ նաև հայ ճարտարապետությունը: Ա. Թամանյանը 1924 թ. ստեղծեց Երևանի կառուցապատման գլխավոր հատակագիծը: 1930-ական թթ. վերջերից հանդես եկան ականավոր ճարտարապետներ՝ Մ. Գրիգորյանը, Կ. Հալաբյանը, Ռ. Իսրայելյանը և ուրիշներ:

Հայաստանն այժմ իր համեստ նպաստն է բերում համաշխարհային գիտության, գրականության և արվեստի գանձարանին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1985–1990-ԱԿԱՆ ԹԹ. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Ներքին ճգնաժամ ապրող ԽՍՀՄ-ի վիճակը բարելավելու համար կոմկուսի ղեկավար Մ. Գորբաչովը 1985 թ. ապրիլին առաջ քաշեց վերակառուցման քաղաքականությունը, որը մի անարդյունավետ փորձ էր և ավելի խորացրեց երկրի տնտեսական անկումը, հանգեցրեց ազգամիջյան հարաբերությունների սրմանը և ԽՍՀՄ-ի քայքայմանը: Այն ցույց տվեց կոմունիստական վերնախավի ղեկավարության վերակառուցման անհնարինությունը: Այս պայմաններում վերստին սրվեց Արցախի խնդիրը: 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց դիմել Ադրբեջանի, Հայաստանի և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորելու համար: Մեկ շաբաթ հետո Բաքվից ոչ հեռու, Սումգայիթ քաղաքում երեք օր տեղի ունեցավ հայերի ջարդ:

Հայերի ջարդեր եղան նաև Կիրովաբադում (Գյանջա), Շամխորում, Բաքվում (1990 թ. հունվար)) և այլուր: ԽՍՀՄ կոմկուսի ղեկավարությունը վարում էր հակահայկական քաղաքականություն: Ժողովրդի ճնշման ներքո 1988 թ. հունիսի 15-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Արցախը Հայաստանի կազմի մեջ ընդունելու վերաբերյալ և դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ դրական լուծում տալու այդ խնդրին: Սակայն վերջինս 1988 թ. հուլիսի 18-ի որոշմամբ մերժեց այդ դիմումը: Այդուհանդերձ հայ ժողովուրդը շարունակեց պայքարը Արցախի ազատագրման համար: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն (ստեղծվեց 1988 թ. մայիսին) և Արցախում գործող «Կռունկ» կոմիտեն (ստեղծվել էր 1988 թ. մարտին) լայն աշխատանքներ տարան ժողովրդի մեջ:

1988 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ պաշտպանության մինիստրի հրամանով

հատուկ դրություն և պարետային ժամ մտցվեց Արցախում, իսկ նոյեմբերին՝ Երևանում: 1988 թ. վերջին Ադրբեջանի կառավարությունը սկսեց տեղահանել հայերին: Նույն թվին Ադրբեջանից հեռացան մոտ 400 հազար հայեր, իսկ Հայաստանից՝ 150 հազար ազերիներ:

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժից ավերվեցին Գյումրին, Սպիտակը, մասամբ նաև Վանաձորը, Ստեփանավանը և հարյուրավոր այլ բնակավայրեր, զոհվեց մոտ 25 հազար բնակիչ: Հայաստանի տնտեսությունը կրեց 13 մլրդ ռուբլու վնաս: Երկրի դրությունը էլ ավելի ծանրացավ: Աշխարհի շատ երկրներ օգնության ձեռք մեկնեցին աղետի մատնված Հայաստանին: Մեծ օգնություն ցույց տվեց նաև սփյուռքահայությունը:

1989 թ. նոյեմբերին ստեղծվեց Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) հասարակական կազմակերպությունը, որն անցավ ժողովրդական շարժման գլուխ և ձեռնամուխ եղավ խորհրդային իշխանության տապալմանը և անկախ պետության ստեղծմանը: Անհեռատես տնտեսական քաղաքականության հետևանքով փակվեցին Հայաստանի համար կենսականորեն կարևոր «Նաիրիտ» արտադրական միավորումը, Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը, Մեծամորի ատոմակայանը (1988 թ. մարտ), բազմաթիվ գործարաններ ու ֆաբրիկաներ: Հայաստանի վիճակը ավելի վատթարացավ 1989 թ. հուլիսի 21-ից, երբ այն տնտեսական շրջափակման ենթարկվեց Ադրբեջանի կողմից, որի տարածքով էին բերվում Հայաստան առաքվող բեռների 85%-ը:

1990 թ. սկզբներին ՀՀՇ-ն դարձավ Հայաստանի կոմկուսի մրցակիցը իշխանության համար մղվող պայքարում: Թեև 1990 թ. մայիսի 20-ին Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդում մեծամասնություն էին կազմում կոմունիստները, սակայն նրանք միասնաբար հանդես չեկան և կամովին իշխանությունը զիջեցին ՀՀՇ-ին: Եվ 1990 թ. օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀՇ վարչության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: Իսկ նույն թվի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով սկիզբ դրվեց Հայոց անկախ պետականությանը, ստեղծվեց Հայաստանի Հանրապետություն: Անցկացվեցին բարեփոխումներ, որոնց նպատակն էր առողջացնել երկրի տնտեսությունը, բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը: 1991 թ. հունվարի 29-ին անկանխահոդ հապշտապությամբ ընդունվեց հողի մասնավոր սեփականության մասին. օրենքը, որով փլուզվեց կոլտնտեսային համակարգը: 1991 թ. փետրվարի 26-ին ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որով Հայաստանում հիմք դրվեց բազմակուսակցականությանը:

Հայաստանը շարունակեց օգնությունը Արցախի մարտնչող ժողովրդին: Ադրբեջանի հետ ձեռք ձեռքի տված՝ ԽՍՀՄ ներքին զորքերը 1990 թ. ոչնչացրին Արցախի ավելի քան 20 գյուղեր: 1991 թ. գարնանը Ադրբեջանի զորքերը խորհրդային զորամասերի օգնությամբ հարձակվեցին Գետաշենի և Շահումյանի վրա, որի հետևանքով ավերվեցին Խանլարի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն հայաբնակ գյուղերը: Այդ հաղթանակից արբեցած ադրբեջանցիները 1991 թ. մայիսից հարձակվեցին Արցախի վրա, կամենալով ոչնչացնել նրա հայ բնակչությանը: Այդ պայմաններում 1991 թ. սեպտեմբերի 2-ին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Արցախցիները շարունակեցին ետ շպրտել Ադրբեջանի և նրան օգնող խորհրդային բանակի զորամասերի հարձակումները:

1991 թ. դեկտեմբերի 8-ին Մինսկ քաղաքի մոտ՝ Բելովեժսկ ավանում Ռուսաստանը, Ուկրաինան և Բելոռուսիան ստորագրեցին համաձայնագիր՝ ԽՍՀՄ-ի, որպես պետության վերացման և անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին, որին միացան նաև մյուս հանրապետությունները: 1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ: Բայց հետզհետե տնտեսապես մեկուսացված Հայաստանի դրությունը խիստ վատացավ: Երկրի արդյունաբերությունը կաթվածահար եղավ: Փակվեցին դպրոցները, բուհերը, դադարեցվեց շենքերի ջեռուցումը, լուսավորությունը: Մինչդեռ Ադրբեջանը շարունակում էր հարձակումները ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի հանրապետության վրա: Օրհասական էր Արցախի վիճակը: Շուշիում, Խոջալուում ամրացած ադրբեջանական զորքերը թուրք հրահանգիչների օգնությամբ զոր ու գիշեր ռմբակոծում էին Ստեփանակերտը՝ պատճառելով մեծ ավերածություն և մարդկային կորուստներ: Դրան վերջ տալու համար արցախցիները 1992 թ. փետրվարին ազատագրեցին Խոջալուն, իսկ մայիսի 9-ին՝ Շուշին: Մի քանի օր հետո Արցախի զորքը գրավեց Լաչին շրջանային կենտրոնը և հասավ Հայաստանի սահմաններին, որով վերջ տրվեց Արցախի 5-ամյա շրջափակմանը: Բայց մեկ ամիս հետո ադրբեջանի զորքը Թուրքիայի աջակցությամբ գրավեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը: Արցախում մտցվեց ռազմական դրություն: 1992 թ. հունիսին ստեղծվեց Արցախի պաշտպանության պետական կոմիտե: 1993 թ. գարնանը արցախցիները ազատագրեցին Մարտակերտի շրջանի մեծ մասը: Այդ մարտերում հերոսի մահով ընկան Մոնթե Մելքոնյանը, Շահեն Մեղրյանը, Աշոտ Ղուլյանը և ուրիշներ:

Ադրբեջանը շարունակում էր Արցախի խնդիրը միայն պատերազմով լուծելու քաղաքականությունը: Նա չընդունեց 1993 թ. դեկտեմբերի 18-ին Ռուսաստանի առաջարկը՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ և ամ-

բողջ ճակատով հարձակման անցավ Արցախի դեմ, բայց 200 կմ ձգվող ռազմաճակատում հանդիպեց արցախցիների հերոսական դիմադրությանը և ոչ մի քայլ չկարողացավ առաջ խաղալ: Ադրբեջանը շարունակում էր հարձակումները նաև Հայաստանի վրա: 1992 թ. օգոստոսին նա գրավեց Կրասնոսելսկի շրջանի Արծվաշեն հայկական գյուղը, որը գտնվում էր Ադրբեջանի սահմաններում, ուստի մեկուսացված էր: Նրա երեք հազարից ավելի բնակչությունը ստիպված հեռացավ հայրենի հողից:

Հայաստանի վիճակը գնալով ավելի էր ծանրանում: Ադրբեջանի դաշնակից Թուրքիան փակել էր Հայաստանի հետ իր սահմանները և արգելել ամեն տեսակ (այդ թվում նաև մարդասիրական) ուղեբեռների ներկրումը Հայաստան: Վրաստանում տիրող խառնաշփոթության պատճառով անապահով էին նաև այնտեղով Հայաստանից ԱՊՀ և այլ երկրներ տանող ճանապարհները: Պարբերաբար (միայն 1994 թ. 37 անգամ) պայթեցվում էր Վրաստանի Մառնեուլի շրջանի թուրքաբնակ գյուղերով Հայաստան ձգվող գազատարը: Էներգետիկ ճգնաժամի հետևանքով 1993 թ. Հայաստանի արդյունաբերությունը 1987 թ. համեմատ վեց անգամ պակաս արտադրանք տվեց: Գների ազատ արձակման պայմաններում տեղի ունեցավ կենսամթերքների և մյուս ապրանքների հարաճուն թանկացում, որի պայմաններում բնակչությանը տրվող աշխատավարձը, կենսաթոշակները խիստ արժեզրկվեցին: Աճում էր գործազրկությունը: 1994 թ. Հայաստանում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվն անցավ 170 հազարից: Տեղի էր ունենում բնակչության արտահոսք: Չնայած կառավարության ներդրած ջանքերին, հնարավոր չեղավ Հայաստանը մտցնել ռուսական ռուբլու գոտու մեջ, ուստի 1993 թ. նոյեմբերին Հայաստանի կառավարությունը թողարկեց հայկական ազգային դրամանիշ՝ Դրամը: Բայց դա էլ չփրկեց դրությունը: 1994 թ. դեկտեմբերից 11 անգամ թանկացան հացի գները, և էլ ավելի անկում ապրեց բնակչության կենսամակարդակը:

Սակայն, չնայած անցման ժամանակաշրջանի ծանր պայմաններին, հայ ժողովուրդը հերոսական ճիգերով շարունակեց գոյատևել: Հայաստանը հետզհետե ձեռք բերեց իր սոցիալ–տնտեսական զարգացման ուրույն կորագիծը: 1994 թ. մայիսի 12–ին Ռուսաստանի միջնորդությամբ հրադադար հաստատվեց Արցախի և Ադրբեջանի միջև: 1994 թ. հոկտեմբերին ստորագրվեց հայ–ռուսական ռազմական համագործակցության համաձայնագիր: Ընդլայնվեցին կապերը արտասահմանյան երկրների հետ: Իրանը Հայաստանին տրամադրեց իր ճանապարհները: Դրանցով ԱՊՀ երկրներից բեռներ են տեղափոխում Հայաստան, որը կարող է նաև դուրս գալ Պարսից ծոց, Միջին ու Հեռավոր Արևելքի երկրներ:

1995 թ. հուլիսի 5–ին կայացան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները և սահմանադրու-

թյան նախագծի հանրաքվեն, որի ժամանակ ժողովուրդը կողմ քվեարկեց սահմանադրությանը: Հայաստանի էներգետիկ ճգնաժամի վերացմանն էր նպատակաուղղված 1995 թ. դեկտեմբերին հայկական ատոմակայանի վերագործարկումը: 1996 թ. փետրվարի 19-ին Հայաստանը բաժանվեց տասը մարզի (Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Լոռիի, Արմավիրի և Գեղարքունիքի)՝ մարզպետների ղեկավարությամբ: Նպատակն էր ավելի ճկուն ու արդյունավետ վարչակառույցների ստեղծումը, երկրի տնտեսության զարգացումը:

1997 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի դաշնության միջև ստորագրած՝ «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը էապես նպաստեց երկու երկրների միջև տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների զարգացմանը:

1998 թ. ապրիլի 30-ին կայացան նախագահական արտահերթ ընտրություններ, որի ժամանակ ժողովուրդը արտահայտեց իր քաղաքական դիրքորոշումը՝ Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրելով Ռ. Քոչարյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բնաշխարհը 3
Հայկական լեռնաշխարհը նախնադարյան ժամանակաշրջանում 4

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ
Հայ ժողովրդի կազմավորումը: Հայկական Հնագույն
պետական միավորումները 5
Երվանդունիների թագավորությունը Մեծ Հայքում 9
Հայաստանի միասնական թագավորության ստեղծումը Արտաշես I-ի կողմից . . . 11
Հայաստանի հզորացումը Տիգրան Մեծի ժամանակ 12
Հայաստանը Արտավազդ II-ի և նրա հաջորդների օրոք 15
Հայաստանի հասարակական-տնտեսական և պետական կարգերը մ. թ. ա. VI–I դդ. . . 16
Արշակունիների թագավորության հաստատումը Հայաստանում 18
Հայաստանի հին մշակույթը (մ. թ. ա. VI– մ. թ. IV դդ.) 20
Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Հայաստանում (III–IV դդ.) . . . 21
Պայքար անկախ պետականության պահպանման համար 23
Արշակունյաց թագավորության անկումը 26
450–451 թվականների ժողովրդական ապստամբությունը Սասանյան
Պարսկաստանի դեմ 28
Հայերի 481–484 թթ. ապստամբությունը 30
Հայերի 539–548 թթ. ապստամբությունները բյուզանդական տիրապետության դեմ . 31
571–572 թթ. ապստամբությունը Սասանյան Պարսկաստանի դեմ 32
Հայաստանը արաբական տիրապետության ժամանակ 33
Ժողովրդական ապստամբություններն արաբական տիրապետության դեմ 34
Հայկական մշակույթը V–VIII դարերում 35
Բագրատունիների Հայոց թագավորությունը 38
Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և պետական կարգերը IX–XI դարերում . . 41
Սելջուկ-թուրքական տիրապետությունը Հայաստանում 43
Զաքարյանների Հայկական իշխանությունը 45
Կիլիկիայի Հայոց պետությունը 45
Հայկական մշակույթը IX–XIV դարերում 49
Հայաստանը մոնղոլների և թուրքմենական ցեղախմբերի տիրապետության տակ . . . 50
Հայաստանը թուրք-պարսկական պատերազմների ասպարեզ 52
Հայ ազատագրական շարժումները XVII–XVIII դարերում 54
Հովսեփ Էմին: Հայ ազատագրական շարժման Հնդկահայ կենտրոնը 58
Հայկական գաղթավայրերը 59
Հայկական մշակույթը XV–XVIII դարերում 62

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐՈՒՄ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 64
Հայաստանը 1830–1850–ական թվականներին 67
Արևմտահայերի ազգային սահմանադրությունը 68
Զեյթունի 1862 թ. ապստամբությունը 69
Հայ հասարակական–քաղաքական հոսանքները 1850–1860–ական թթ. 69
1870 թ. գյուղացիական ռեֆորմն Անդրկովկասում 71
Հայկական մշակույթը XIX դ. առաջին կեսին 71
1877–78 թթ. ռուս–թուրքական պատերազմը և Հայկական հարցը 72
Հայ ազգային–ազատագրական շարժումները 1870–1890–ական թթ.:
Ազգային–ազատագրական խմբակները: Ֆիդայական շարժման սկզբնավորումը . 73
Հայ քաղաքական կուսակցությունների ստեղծումը 76
1894–1896 թթ. հայկական կոտորածները 78
Հայկական մշակույթը XIX դ. 2–րդ կեսին և XX դ. սկզբին 79

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐՈՒՄ

Արևելյան Հայաստանը XX դ. սկզբին 81
Արևմտյան Հայաստանը XX դ. շեմին 82
Հայկական հարցը 1912–1914 թվականներին 84
Հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին
(1914–1918 թթ.) 85
Հայերի ցեղասպանությունը (դենոցիդը) Առաջին համաշխարհային
պատերազմի ժամանակ 88
Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները թուրքական ջարդարարների դեմ . 90
Հայաստանը 1917 թ. փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխություններից հետո . 94
Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի 1918 թ. մայիսյան
հերոսամարտերը 96
Հայաստանի Առաջին հանրապետությունը 99
Արցախի և Զանգեզուրի հայության գոյամարտը (1918–1920 թթ.) 101
Հայկական հարցը Փարիզի հաշտության կոնֆերանսում: Նորանոր դավեր
Հայաստանի դեմ 104
1920 թ. թուրք–հայկական պատերազմը և խորհրդային կարգերի
հաստատումը Հայաստանում 107
1921 թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում 109
Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերը 111
Հայաստանը 1920–1930–ական թվականներին 112
Հայ ժողովուրդը 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ 114
Հայաստանը 1946–1985 թվականներին 116
Սփյուռքահայությունը և Հայաստանը 117
Հայկական մշակույթը 1920–1980–ական թվականներին 119
Հայաստանը 1985–1990–ական թվականներին: Արցախյան շարժումը և
Հայաստանի Հանրապետության առաջացումը 121

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ա. Պ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ *(սկզբից մինչև մեր օրերը)*

ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌՆԱՐԿ

•

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնօրեն՝ ՍԱՇԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ
Համակարգչային շարվածքը՝ ՍԱՐԻԱՄ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ
Կազմի ձևավորումը՝ ԵՓՐԵՄ ՍԱՎԱՅԱՆԻ
Սրբագրիչ՝ ՍԵՐԺ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 8 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 400 օրինակ
Գինը՝ պայմանագրային

«Զանգակ–97» հրատարակչություն
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8
Հեռ. 54–89–32, 54–05–17: E–mail: zangak@arminco.com
Տպագրվել է «Զանգակ–97» հրատարակչության տպարանում